



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Н. Б. САРУХАНЯН

**ПРОБЛЕМА ПРИСОЕДИНЕНИЯ
ВОСТОЧНОЙ АРМЕНИИ К РОССИИ
В ДОРЕВОЛЮЦИОННОЙ
АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԱՐԵՎԵԼՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ
ՄԻՆԶՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ի Վ Ա Ն 1971

Աշխատության մեջ հեղինակը քննադատության ենթարկելով Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման դերի գնահատման հարցում հայ բուրժուական պատմագրության ներդրությունը, միաժամանակ քննության է առնում և բարձր գնահատում նախահեղափոխական հայ պատմահասարակագիտական մտքի բոլոր այն ներկայացուցիչների ուղեգիծը, որոնք անհյուսիսադարձային այդ իրողությունը դիտում էին իբրև առաջադիմություն և ընդհանրապես Ռուսաստանի հետ էին կապում հայ ժողովրդի բախտը:

Պատասխանատու խմբագիր

Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ե Ն

Մինչհեղափոխական Հայաստանի վերջին հարյուրամյակների ընթացքում ոչ մի իրադարձություն այնքան մեծ նշանակություն չի ունեցել հայ ժողովրդի կյանքում, որքան 1828 թվականի փետրվարի 10-ին, Պարսկաստանի փոփոխության անհաջողություն, Թուրքմենչայում կնքած դաշնագրությունը։ Այդ դաշնագրով մի կողմից՝ Հայաստանի մի մասը, այն է՝ Երևանի և Նախիջևանի խանությունները ազատագրվեցին պարսկական դարավոր լծից և անցան ռուսական տիրապետության ներքո, մյուս կողմից՝ պարսկահայերի մի խոշոր զանգված՝ մոտ 45 հազար հայեր, բողևելով առանձին տեղ, զաղթեցին ռուսական նահանգներ, մասնավորապես՝ Արաքսի ձախ ափը, այդպիսով ստվարացնելով հայ տարրը այն երկրամասում, որն այսօր հայ ժողովրդի ազգային վերածնունդի բնօրրանն է, աշխարհով մեկ ավելի մասնագիր հայության լուսատուն և հայրենիք։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոբլեմի մարտնչական լուսաբանման ուղղությամբ սովետահայ պատմագրությունը հսկայական նվաճումների է հասել։ Այն մեծ տեղաշարժերը, որ կատարվում են այդ ուղղությամբ, ոչ միայն արխիվային նյութերի գիտական վերամշակման, այլև անցյալի պատմագրության բոլոր ժառանգության բնահաղաթական շտապման արդյունք են։

Նախահեղափոխական շրջանի հեղինակները չեն կարողացել իր ամբողջության մեջ լուծել Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացնելու պրոբլեմը՝ չնայած նրանցից ոմանք արել են շատ արժեքավոր դիտողություններ և ընդհանրա-

ցումներ, որոնք ցայսօր էլ պահպանում են իրենց անուրանալի արժեքը:

Առկա ուսումնասիրությունը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմի փնտրությունն է՝ սկսած անցյալ դարի 20-ական թվականներից մինչև ներկա հարյուրամյակի 10-ական թվականները: Այն բաղկացած է երեք գլխից: Նրա կենտրոնական հարցը նշված պրոբլեմի հետազոտությունն է, իսկ Արևելյան Հայաստանի տնտեսական և ֆաղափական կացության վերաբերող գլուխը, որով սկսվում է մեր ուսումնասիրությունը՝ նպատակ ունի անդրադառնալու պարսկական տիրապետությունից ռուսականին անցնելու անհրաժեշտության մասին ժամանակի գործիչների և հետագա պատմաբանների ու հասարակական-ֆաղափական մտքի ներկայացուցիչների ունեցած տեսակետներին:

Նրկորդ գլխում փնտրվում և լուսաբանվում է հատկապես ժամանակի հայ գործիչների այն մտայնությունը, որ ի հայտ եկավ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում և դրան հաջորդող տարիներին: Այստեղ ցույց է տրվում ռուսական զենքի օգնությամբ պարսկական տիրապետության դեմ պայքարի ելած՝ հայության արևելյան հատվածի ազգային-ֆաղափական և ներքին-մշակութային հեռանկարների մասին նրա մտածող զավակների՝ խանդավառությունը՝ մի կողմից, Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում ցարիզմի գաղութային ֆաղափականությունից նրանց հիասթափությունը՝ մյուս կողմից:

Եվ, վերջապես, երրորդ գլուխը նվիրված է պրոբլեմի լուսաբանությանը՝ մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ: Այստեղ առաջնահերթ գրականություն է ծառայել պատմաբանների աշխատությունները: Օգտագործվել են նաև հայ հասարակական-ֆաղափական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների երկերն ու հրապարակախոսական հոդվածները, ժամանակի գեղարվեստական գրականությունը:

Օգտագործված աշխատությունների զգալի մասը գերծ չէ ակնհայտ քերություններից և սխալ տեսակետներից: Արևել-

յան Հայաստանը Ռուսաստանին միացնելու իրողությունը
ծայրանեղ դիրքերից գնահատելու միտում են ունեցել հայ
բուրժուական պատմագրության ոչ միայն լիբերալ, այլև
պահպանողական ուղղությունների ներկայացուցիչները։ Այդ
պատճառով էլ անցյալի գրականության մեջ եղած սխալ
տեսակետների լուսաբանությունը հիմնավոր և փոքր ի շատե
առարկայական դարձնելու համար տեղ-տեղ դիմել ենք
արխիվային նյութերի օգնությանը։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՅՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ԴՅՈՒՐԻՆ շէ գերագնահատել պատմական այն մեծ շրջա-
դարձի նշանակութիւնը, որ կատարվեց հայ ժողովրդի
կյանքում անցած դարի 20-ական թվականներին: Դարեր
շարունակ պարսկա-թուրքական բռնատիրոջ հեթակա
Արեւելյան Հայաստանի ազատագրմամբ և Ռուսաստանին
միացմամբ՝ հայ ժողովրդի կովկասյան հատվածը հնարա-
վորութիւն ստացավ դուրս գալ տնտեսական ու մշակութային
վերելքի և ազգային համախմբման անհամեմատ նպաստա-
վոր ասպարեղ, խուսափել ֆիզիկական ոչնչացման կամ
սոցիալ-տնտեսական դեղրագացիայի վտանգից:

Պարսկա-թուրքական զորքերի մշտական արշավանքներն
ու պատերազմները ի վերջո հասցրին այն բանին, որ Անդրը-
կովկասը բաժանվեց Արեւելքի երկու բռնապետութիւնների
միջև: 1639 թվականին Պարսկաստանի Սեֆի շահը և Թուր-
քիայի Սուլթան Մուրադ 4-րդը կնքեցին այսպես կոչված
Կասրի-Շիրիների հաշտութիւն պայմանագիրը, որի համաձայն
Ատրպատականը, Հյուսիս-արեւելյան Հայաստանը և Արեւելյան
Վրաստանի մի մասը ընկան Պարսկաստանի, իսկ Արեւմտյան
Հայաստանը և Հարավ-արեւմտյան Վրաստանը՝ Թուրքիայի
տիրապետութիւն տակ: Անդրկովկասի բաժանումը այն ձևով,
ինչ ձևով կատարվեց Կասրի-Շիրիների պայմանագրի համա-
ձայն, պահպանվեց, հիմնականում, մինչև 19-րդ դարը, եթե

շհաշվենք պայմանագրի մի շարք կարճատև խախտումները 18-րդ դարում: Դրանով տեսապես երկատվեց հայ հայրենիքը: Մեր ժողովրդի համար սկսվեց ծանր ու մղձավանջային մի նոր ժամանակաշրջան: Նորագրավ երկրներում պարսիկներն ու թուրքերը հաստատեցին կամայականության ու բռնության, հարստահարումների ու ճնշումների ռեժիմ: Նրանք հրով ու սրով հայ ժողովրդին պարտադրեցին իրենց բռնատիրական վարչակարգի բոլոր ինստիտուտները, շրջանառության մեջ դրին կառավարման այնպիսի հնարներ ու եղանակներ, որոնք թաթար-մոնղոլներից ոչ պակաս հալ ու մաշ էին անում ժողովրդի մշակույթն ու նկարագիրը: Պարսկա-թուրքական տիրապետությունը հայ ժողովրդին բերեց ռազմաֆեոդալական դաժան շահագործում, սոցիալական անասելի թալան ու հարստահարում, արտատնտեսական ճնշման վայրագ ձևեր, ազգային-կրոնական բարբարոսական հալածանքներ:

Վարչական բաժանման և կառավարման այն իրավիճակը, որ ստեղծվել էր Հայաստանում այն երկատվելուց հետո, հետագայում էական փոփոխություններ չկրեց և պահպանվեց ընդհուպ մինչև ռուսական տիրապետության տարիները:

Պարսկաստանի, ինչպես կենտրոնական, այնպես էլ ծայրամասային՝ անդրկովկասյան տիրույթներում կար վարչական բաժանման երկաստիճան սիստեմ՝ խանություն և մահալ:

Արևելյան Հայաստանը կամ Պարսկահայաստանը (ինչպես քաղաքացիական ճանաչողություն է ստացել նախահեղափոխական հայ պատմագրության մեջ) բաղկացած էր Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի խանություններից և Օրդուբադի կամ Աղաջիրանի (այսպես էին կոչում պարսիկները) օկրուգից:

Վերջին սարգարների ժամանակ Երևանի խանությունը բաժանված էր 15 մահալների, որոնք անվանակոչվում էին հիմնականում ըստ գետային ցանցի՝ հլնելով վերջինիս հետ կապված այս կամ այն շրջանի ոռոգման հնարավորություններից: Այդ է պատճառը, որ մահալների մի զգալի մասը կը-

յում էր այն գետի անունը, որով ոռոգւում էր՝ Վեդիբասար-
Գառնիբասար, Զանգիբասար և այլն, այսինքն՝ Զանգվի-
Գառնիի և Վեդիի ջրերով ոռոգւող:

Երեւանի խանութջան 15 մահալները հետեւյալ հաջորդա-
կանությունն ունեին՝ Կրրիսբուլաղ, Զանգիբասար, Գառնիբա-
սար, Վեդիբասար, Շարուր, Սուրմալու, Դարաքենդ-Փարչե-
նիս, Սառթլին, Թալին, Սեիդլի-Ախսախլի, Սարգարապատ,
Կարբիբասար, Ապարան, Դարաշիշակ և Գյոկչա:

Նախիջևանի խանությունը Աղաջիրանի կամ Օրգուբագի
օկրուգի հետ միասին բաղկացած էր 10 մահալներից: Նախի-
ջևանի խանությունը Երեւանից շատ ավելի հին էր. այն
կազմվել էր առաջին Սեֆեյանների օրոք:

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացման շըր-
ջանում այստեղ խանական պաշտոնը տրւում էր վարձակա-
լությամբ՝ պարսկական այս կամ այն ազնւականին կամ
զորապետին:

Երեւանի խանությունը առանձնահատուկ տեղ էր գրւում
Պարսկաստանի անդրկովկասյան վարչա-տնտեսութեալ բաժա-
նումների սիստեմում: Ինչպես հաղորդում են ժամանակի
օտարերկրյա ճանապարհորդները, Երեւանի խանը հասարակ
խան չէր, այլ կոչւում էր «բեկլերբեկ» կամ «սարգար»
(զորագլուխ, զորահրամանատար): Մինչև 18-րդ դարի երկ-
րորդ կեսը նա Անդրկովկասում մի տեսակ փոխարքա էր և
նրան էին ենթարկւում հարեան շատ խանություններ: Զնայած
դարի երրորդ քառորդից երկրում գլուխ բարձրացրած անիշ-
խանության հետեւեքով Անդրկովկասի խանությունները ան-
կախ հայտարարեցին իրենց և գոյութիւն ունեցող կարգը
փոխվեց, այնուամենայնիվ Երեւանի խանը պահպանեց իր
«սարգար» հորջորջումը՝ ընդհուպ մինչև սուսական տիրապե-
տությունը: Հիւսովի, շատ հարցերում նա անկախ էր և չէր են-
թարկւում կենտրոնական կառավարութեանը: Սահմանային
զրությունը՝ մի կողմից, պարսկական տիրապետութեան նը-
կատմամբ հայ բնակչության թշնամաբար տրամադրվածու-
թյունը՝ մյուս կողմից, հարկադրում էին պարսից շահերին Ե-

քեանի խանության ղուլս կանգնեցնել առավել գործունյա և նվիրված մարդկանց։ Սակայն դա բնավ չի նշանակում, թե երևանյան սարգարները հլու հնազանդությամբ կատարում էին շահերի ցուցումները և ենթարկվում նրանց։

Շահական Պարսկաստանի մյուս խանությունների նման, Երևանի խանությունը ևս ապրում էր առանձնացված տընտեսական կյանքով՝ ձևականորեն քաղաքական կախվածության մեջ մնալով շահի կենտրոնական կառավարությունից։ Երևանը դիտելով իբրև սահմանային շրջան, որ Պարսկաստանը միջնորմում էր Ռուսաստանից ու հնարավոր պատերազմի դեպքում պիտի ենթարկվեր առաջին գրոհին, շահը լիակատար վստահությամբ էր վերաբերվում Երևանի խանին և չէր միջամտում նրա ներքին գործերին։

Փոքր-ինչ այլ էր Նախիջևանի խանության վիճակը։ 19-րդ դարի մինչցարական շրջանում նա ենթարկվում էր Ատրպատականի նաիր-ուլ սալթանա¹ Աբբաս Միրզային։ Եթե շահի կենտրոնական կառավարությունը ոչնչով չէր սահմանափակում Երևանի Հուսեյն խանի իրավունքները և իբրև սահմանապահ՝ մեծ կարեւորություն տալով նրան, բացի նովրուզ բայրամին (նոր տարի) ստանալիք նվերները ոչինչ չէր վերցրնում և նույնիսկ միջոցներ էր տրամադրում նրան սահմանային զորքերի պահպանման համար, ապա Նախիջևանի խանությունում ժողովված հարկերի առյուծի բաժինը հոսում էր Թավրիզ՝ թաղաժառանգ Աբբաս Միրզայի նստավայրը²։

Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա պիտի ասել, որ այստեղ հայերի ինքնուրույնության վերջին հետքերը դարաշեմին արդեն ջնջված էին։

Տակավին 15-րդ դարում, բարձրացող Օսմանյան պետությանը հաջողությամբ դիմակայելու համար, Կարակոյունլու

¹ Նաիր-ուլ սալթանա նշանակում է շահի փոխանորդ։

² См. И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1952, էջ 459։

Զհանշահը ծայրամասային երկիր հանդիսացող Հայաստանում, մասնավորապես Սյունիքում և Արցախում, կաղմակերպեց հայկական մեղիքություններ, որոնցում մեղիքներ առաջադրեց նախորթաց շրջանի հայկական իշխանական տներին մնացորդներին:

16-րդ դարում, Արևելյան Հայաստանին տիրապետելուց հետո, սեֆյան շահերը սկզբնական շրջանում ոչ միայն արհամարհեցին հայկական մեղիքությունների ուժերը, այլև մեծ հարված հասցրին դրանց: Սակայն 17-րդ դարի երկրորդ տասնամյակից սկսած՝ նրանք հայկական մեղիքությունների նկատմամբ նույնպես սկսեցին վարել Զհանշահի գործելակերպը հիշեցնող քաղաքականություն:

Նույն դարի երկրորդ կեսից Ղարաբաղի մեղիքները պարսկական շահերի կողմից բաւականաչափ ներքին լայն իրավունքներ ստացան: Նրանք համարվում էին մեղիքությունների կատարյալ տերերը՝ իրենց ներքին գործերի տնօրինության մեջ ունենալով բացարձակ ազատություն: Ոչ թե նշանակովի, այլ ժառանգական էր մեղիքի իշխանությունը: 17-րդ դարի սկզբներից անկախության նշաններ հանդես բերելով և ձգտելով լիովին անկախ դառնալ պարսկական շահերի գերիշխանությունից և ապահովել թուրքական ասպատակությունների վտանգից, հայկական մեղիքությունները խոշոր գեր խաղացին թուրքական ու պարսկական լծի դեմ ուղղված՝ 17—18-րդ դարերի ազատագրական շարժումների մեջ: Արևելյան Հայաստանի՝ խամուսյի (հինգ) մեղիքությունները գրտնըլում էին ներկայիս Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի: Ինքնավար Մարզի և հարևան ադրբեջանական շրջաններին միացված Գաշտաշին Ղարաբաղում: Ղարաբաղի հինգ մեղիքությունների էթնիկական կազմը գերազանցապես հայկական էր ոչ միայն Արևելյան Հայաստանը Ռուսաստանի՝ միացման նախօրեին, այլև հետագա մեկուկես հարյուրամյակում:

Խամուսյի մեղիքությունները իրար դեմ մղած ներքին միջֆեոդալական կռիվների և պարսկական շահերի ու խանե-

րի բռնությունների հետևանքով 18-րդ դարի երկրորդ կեսին աստիճանաբար թուլացան և վերացան:

Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության վերջին շրջանում գոյություն ունեցող վարչատնտեսական կարգը լիովին համապատասխանում էր մայր երկրի տնտեսական-քաղաքական հետամնացությանը, իսկ ժամանակի Պարսկաստանը արևելյան տիպիկ ֆեոդալական երկիր էր, ուր հաստատուն ոչինչ չկար: Այսօրվա խանը վաղը կարող էր աչքերը փակել փալախայի³ միջոցով կամ կյանքի մնացորդն անցկացնել անհայտության մեջ, ուստի զարմանալի չէ, որ խաներն ու նրա աստիճանավորները պաշտոնավարության շրջանում գանձ և հարստություն կուտակելն էին դարձնում առաջնահերթ հոգսերի առարկա: Պարսկաստանում կառավարման տիրող վարչաձևը ռազմական դեսպոտիզմն էր: Պետության մեջ՝ շահի, իսկ խանություններում անսահմանափակ էին խաների իրավունքները: Հպատակների կյանքի ու կայքի ապահովությունը կախված էր սրանց քմահաճույքից: «Թե Թուրքիան և թե Պարսկաստանը,— գրում էր Լեոն,— ընդգրկած ունեին վարչական այն կարգը, որ մշակել էր Արևելքի բռնապետությունը հնագույն ժամանակներից...

Պետության գլուխը, մի շահ, մի սուլթան, ամենաբարձր էակն էր, իսկ մնացած ամբողջ ազդաբնակչությունը նրա ստրուկն էր, որի կյանքն էլ, գույքն էլ պատկանում էին նրան: Մի թեթև ակնարկով, մի հատ մատի շարժումով հազարավոր ու տասնյակ հազարավոր գլուխներ կարող էին կտրվել, առանց որեւէ պատճառաբանության»⁴:

Շահը վաճառում էր առանձին պաշտոններն ու կոչումները, երբեմն աճուրդի հանում դրանք: Սեփականացնե-

³ Թուկ՝ երկու ծայրը մի ձողի վրա ամրացված, որի մեջ հանցագործի դույզ ոտքերը կաշկանդելով՝ վեր էին բարձրացնում զավազանի կամ ճիւղառների հարվածներ տալու համար: Այս պատիժը Արևելյան Հայաստանում ամենատարածվածներից էր:

⁴ Առ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, ձեռագրի իրավունքով, պետական համալսարանի ապակետիպ, մասն Ա, Երևան, 1926, էջ 27:

չով պաշտոնները, խաներն ու մահալների կառավարիչները իրենց հանձնված երկրների վրա նայում էին իբրեւ ժամանակավոր կալվածքների: Հիշյալ ժամանակաշրջանում, Նյուեյի սարդարը՝ իր հայեցողությամբ, առանց հաշվետու լինելու շահի առաջ, որոշում էր հարկերի չափը, դրամ էր կտրում, դատապարտում հանցագործներին: Կամայական հրամաններով մահապատժի էր ենթարկվում հազարավոր անմեղներ: Սարդարի հատուկ գործակալները՝ ֆառաշները նրա հրամանով կտրում էին հանցագործ դիտված մարդկանց ոտքերն ու ձեռքերը, ականջներն ու քիթը, հանում աչքերը⁵: Ամեն տեսակի նենգություններն ու հանցագործությունները կարելի էր մաքրազարդել «փեշքեշներ» ու նվերներ հատկացնելով:

Անսահմանափակ իրավունքներով օժտված և չափ ու սահման չճանաչող սարդարի կատարած կամայականություններն ու բռնությունները աներևակայելի չափերի էին հասնում: Այդ նկատի ունեւ Պ. Օգորոդնիկովը, երբ 19-րդ դարի սկզբի Պարսկաստանի մասին գրում էր, թե միամտություն կլինեւ դատել օրինականության մասին անօրինականության երկրում, ուր խաների կամքն ու քմահաճույքն օրենք էր և ոչ ոք ի վիճակի չէր հակառակել դրանց⁶:

Կամայականությունը հասնում էր այն աստիճանի, որ ինչպես հաղորդում է Զեմս Մորիերը, սարդար Հուսեյն Ղուլի խանը հրաձգության մեջ իր վարպետությունը փորձում էր խանական պալատի լուսամուտից դեղակոծելով Զանգլիի աջ կողմի ճանապարհով անցնող գյուղացիներին ու նրանց էջերին⁷:

Իսկ ռուսական ծառայության մեջ գտնվող գերմանացի դիվանագետ և խոհրդական Մ. Ֆրեյզանը, որ 1811 թվականին հատուկ միսիայով մեկնում էր Պարսկաստան, Հուսեյն

⁵ Տե՛ս Н. Шонен, նշված աշխ., էջ 449:

⁶ Տե՛ս П. Огородников, На пути в Персию и прикаспийские провинции ее, СПб., 1878, էջ 194:

⁷ Տե՛ս Հովն. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. 2, Երևան, 1934, էջ 323:

խանի պաշտոնի կարևորութեան և արքունիքում նրա ունեցած դիրքի մասին հաղորդում է հետևյալը. «Նա այն մարդն է, որի հանդիմությունը իշխող շահին զահ բարձրացրեց. նա պարսկական ուժերի գլուխն է և վաչկիւմ է իր տիրոջ կատարյալ վստահությունը»⁸: Անդրկովկասի ու Հայաստանի վարչաքաղաքական և տնտեսական վիճակին լավատեղյակ Ալ. Գրիբոյեդովը գրում է, որ Երևանի սարգար Հուսեյնը իր տիրապետության սահմաններում «աստուծոց հետո առաջին» մարդն է և որ «Նրա իշխանությունն ավելի հաստատ է, քան թուրքական փաշաների իշխանությունը»⁹: Նկարագրելով էջմիածնի վանքի նկատմամբ Երևանի սարգարի կամայականություններն ու բռնությունները, Մորից Ֆոն Կոցերուն նրան կոչում էր հրեշ: Էջմիածինը «վաղուց մի ծաղկյալ քաղաք պիտի դառնար, — գրում էր նա, — եթե պարսկական կառավարությունը թույլ չտար Երևանի նահանգի կառավարչին ըստ կամս կողոպտելու վանքը: Նա համոզված եմ, որ թագավորը, որ մեծ ու պատվավոր մտքի տեր է, անտեղյակ է այս հրեշի (Երևանի սարգարի) արարքներին, եթե ոչ մինչև հիմա նա այս շրջանի խեղճ բնակիչներին ազատած էր նրա կամակոր բռնություններից»¹⁰:

Միանգամայն ճիշտ նկարագրելով Հուսեյն խանի զազանություններն ու կամայականությունները, Մ. Կոցերուն սխալ պատկերացում ուներ սակայն Ֆաթ-Ալի շահի մասին, իբր միամտորեն հնթադրում էր, որ կառավարությունն իբր անտեղյակ էր սարգարի գործադրած բռնություններին ու զաժանություններին, և եթե այդ մասին նա իմանար, ապա կշտկեր գրությունը:

Պարսից խաների ու նրանց գլխավորած աստիճանավորների կատարած վայրենությունների ամենատպալորիչ նկարագրությունը տվել է հայ ժողովրդի վերքի երգիչ Խ. Աբով-

⁸ Նույն տեղում, էջ 406:

⁹ А. С. Гривоедов, ПСС, том I, СПб., 1889, էջ 42:

¹⁰ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. 2, էջ 529:

յանը: Երևանի բերդը նրա «Վերք Հայաստանի» վեպում մի կատարյալ դժոխք է, հաղաբալոր մարդկանց բանտն ու զոհարանը, շատ երիտասարդների, բազմամեկուս ընտանիքների միակ խնամողների տանջարանն ու գլխատման վայրը: Նա Երևանի բերդը ուղղակի անվանում է «մարդակեր բերդ», «գողի ու ավազակի բնակարան»¹¹: Բաղում չարիքներ էր դործում սարդար Հուսեյն Ղուլի եղբայր Հասան խանը, որ Երևանի խանության ռազմական գործի գլուխն էր: «Ազահ և անգութ», «ահարկու» մի մարդ էր, ժողովրդի համար իսկական մի պատուհաս¹²:

«Օր չէր ըլնում՝ որ սարից, չուից մարդ չբռնեն ու Հասան խանի առաջը չբերեն: Ամեն գլուխ բերող՝ նրա աջու ձեռն էր դառնում, — գրում է Աբովյանը, — փեշքեշի տուփը Ղաթս էր հասել: Առանց մարդ սպանելու մեկ օր աչքը չէր կպցնում: Տեղիցը վեր կենարիս՝ նամազը պրծածին պես՝ առաջին գործն էն էր՝ որ ջրատար, մոլորած երեսների՝ որ էստեղ էնտեղ ճանկում, բերում էին՝ կամ աչքըները հանի, քիթ ու պոռնկը կտրի կամ ոտն ու ձեռները կտրիլ տա, կամ կտրատած ձեռները դադած եղի պղնձի մեջը կոխել տա, որ արինը կտրվի, կամ իրանց սաղսաղ փարչալամիշ անի»¹³:]

[Խանի անձնական օրինակով էին առաջնորդվում նրա վարչական ստորադրյալները՝ մահալների կառավարիչները, որոնք նշանակվում էին խանի կողմից և կոչվում էին միրբուլյուքներ: Սակավ չէր պատահում, երբ մի քանի մահալների կառավարումը հանձնարարվում էր մեկ միրբուլյուքի¹⁴ Մահալների կառավարիչների իրավունքները բազմազան էին: Նրանք սարդարի կողմից սահմանված կոռն ու բահրան բաշխում էին ըստ գյուղերի, հսկում որպեսզի հարկերն ու տուրքերը ժամանակին հավաքվեն ու հանձնվեն խանական դան-

11 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. III, Երևան, 1948, էջ 53—54:

12 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 308:

13 Խ. Աբովյան, Ելժ, հտ. III, էջ 90:

14 Տե՛ս Ի. Մուրադ, Նշված աշխ., էջ 448:



ձարան. միաժամանակ պարտավոր էին սահմանային մահալ-
ները պաշտպանել թալանի ու կողոպուտի նպատակներով
կազմակերպվող հարձակումներից, քննում էին գյուղացիների
միջև ծագած վեճերը և «համապատասխան վճիռ» կայացնում:

Երևանի խանը ճանապարհորդների վրա թողնում էր
ավելի շատ տիրակալի, քան տեղապահի տպավորություն:
Սարգսրի հայելադարձ պալատը իր շքեղությամբ ու փար-
թամուխյամբ ոչնչով չէր զիջում շահի պալատին: Նա ուներ
բոլոր այն պաշտոնյաները, ինչ որ շահը: Եվ քանի որ քաղա-
քական ու վարչական ղեկավարման մենաշնորհը մահմեդա-
կանների ձեռքում էր գտնվում, ուստի բնական է, որ այս
սկզբունքի վրա էլ պիտի խառնալիք շահի ու խաների կողմից
բոլոր կարգի պաշտոնյաների նշանակման գործը: Գոյություն
ունեցող խտրական սիստեմի պայմաններում հայ ժողովրդի
բարեմասնություններն ու վաղեմի դերը դարձել էր չնչին:

Երևանի խանը պահում էր հարյուրից ավելի մահմեդա-
կան աստիճանավորներ, որոնց միջոցով նա վարում էր խա-
նության տնտեսական ու զինվորական գլխավոր գործերը,
հետախուզությունը, ներքին ու արտաքին գրագրությունները:
Խանական պաշտոնյաների մի ղգալի մասը ղբաղված էր
հարկահավաքմամբ: Սրանք իրենց ծառայության դիմաց
սահմանված հատուկ վարձ չէին ստանում, այլ խանի թույլ-
տվությամբ սեփականացնում էին իրենց հավաքած եկամուտ-
ների մի մասը: Մնացած բոլոր կարգի ընծայումները կատար-
վում էր հատուկ հրովարտակներով, շահը՝ ֆերմաններով,
խսկ խանը՝ թաղալներով: Արևելյան ֆեոդալիզմի պետական
քաղաքականությունն իրագործող կառավարություններն ողջ
Արևելքում, գրում է Մարքսը, ունեին երեք վարչություն.
ֆինանսական՝ սեփական բնակչությանը կողոպտելը, ռազմա-
կան՝ սեփական և օտար երկրները կողոպտելը և հասարա-
կական աշխատանքի վարչություն՝ վերարտադրության մասին
ունենալիք հոգատարությունը¹⁵:

¹⁵ См. у К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том XXI, էջ 494:

Երևանի սարգարի դիվանը բաղկացած էր վեզիրից կամ ղլխավոր մինիստրից (զլխավոր միրզայից) և մի քանի սովորական միրզաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ մասը կառավարության մեջ: Երևանի ու Նախիջևանի խանութայններում, — գրում է Շոպենը, — ֆինանսական բաժինը գերիշխում էր մյուս բոլոր բաժիններին... ֆինանսական մասը ռազմականի հետ իր վրա էր սեեռում կառավարողների ուշադրությանն ու հոգացողությանը¹⁶: Ֆինանսական բաժինը գտնվում էր խանի ուշադրության կենտրոնում: Այս բաժանմունքի հիմնական դերը հարկերի ու տուրքերի նշանակումն ու դրանց հավաքումն էր: Ֆինանսականի հետ համարյա ձուլված կատարողական կամ ոստիկանական բաժանմունքը հարկահավաքման հետ միասին «պարտավոր էր նաև ի կատար ածել հոգևոր դատարանի վճիռները»¹⁷:

Ռուսաստանին միացման նախօրյակին Արևելյան Հայաստանում օրենսդրական մարմին ըստ էության չկար, քանի որ իբրև մահմեդական երկիր, այստեղ ևս բոլոր հիմնական օրենքները համարվում էին Մուհամեդի կողմից արդեն տրված, ուստի ոչինչ չէր մնում դրանց վրա ավելացնելու¹⁸: Լավագույն դեպքում դրանք կարող էին ենթարկվել մեկնությունների, որոնք, որպես կանոն, տարբեր տեղերում ու տարբեր պայմաններում միանգամայն տարբեր խմաստով էին հասկացվում:

Դատարաններում տիրում էր շարիաթը՝ մահմեդական այն օրենսդրությունը, որ ծայրեծայր լցված էր Ղուրանի սկզբունքներով և մոլեռանդությամբ ու անհամբերողության ծայրահեղություններ էր սնուցանում իր տգետ հոտի մեջ: Բավական է ասել, որ հպատակների սոցիալ-քաղաքական վիճակը որոշվում էր Ղուրանի սկզբունքներով. դիմադրող կամ անհավատ քրիստոնյաները պարտավոր էին ենթարկվել ու

16 Տե՛ս Մ. Շոպեն, նշված աշխ., էջ 966:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 452:

18 Նույն տեղում:

ծառայել մահմեդականներին: Շարիաթը զրկում էր քրիստոնյաներին դատարանում մահմեդականների դեմ վկայություն տալու իրավունքից: Հանգիստ ապրելու միակ միջոցը քրիստոնյաների համար հավատափոխությունն էր, որ բարեբախտաբար հայերի մոտ զանգվածային չափեր չընդունեց: Թե ինչ աստիճանի կարող է հասնել կրոնական մոլեռանգությունը պետական քաղաքականության մեջ, երևում է տակավին 17-րդ դարից շրջանառություն մտած իմամ Ջաֆարի օրենքից, համաձայն որի, եթե քրիստոնյա ընտանիքի որեէ անդամ ընդունում էր մահմեդականություն, ապա վերջինս այդ օրենքի ուժով դառնում էր տվյալ ընտանիքի շարժական ու անշարժ կաթողություն միակ ժառանգորդը, մինչդեռ քրիստոնեությունը հավատարիմ մնացած գերդաստանի մյուս անդամները զրկվում էին ժառանգության իրավունքից: Հայերի նկատմամբ կրոնական խտրականությունն ու հալածանքներն ուժեղացնելու նպատակով լույս աշխարհ եկած «օրենսդրական» այս վիժվածքը Պարսկաստանում իր գոյությունը պահպանեց երկու հարյուրամյակից ավելի՝ ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջին քառորդը: Այդ օրենքը մի կողմից խրախուսում էր հայերի մահմեդականացումը, մյուս կողմից՝ լայն ասպարեզ բացում կեղծիքների և շարաշահումների համար¹⁹: Անցյալ հարյուրամյակի Պարսկաստանի պատմությունը սակավ արտակնդեք հիշատակություններ չի թողել այն մասին, երբ քրիստոնյա ծնողները իրենց շարժական ու անշարժ կալքը հետամհու իրենց ժառանգներին հանձնելու մտայնությամբ՝ կտակում էին հավատարիմ զիտված մահմեդականներին: Եվ քիչ չէին պատահում դեպքեր, որ այս եղանակով սնանկանում էին բազմաթիվ հայ ընտանիքներ:

Մահմեդականների գերիշխանության ժամանակ գոյություն ունեցող կրոնափոխությունը, որ մեծ մասամբ հալածանքներից խուսափելու և տնտեսական արտոնություններ ձեռք

19 Տե՛ս Լեռ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն Ա, էջ 33

բերելուն էր հետամուտ, Հայաստանի որոշ շրջաններում սովորության ուժով փոխադրվեց նույնիսկ ուսական տիրապետության առաջին տասնամյակները, երբ հպատակների կյանքն ու սեփականությունը երաշխավորված էր օրենքով²⁰։

Մահմեդական աշխարհում հայ ժողովրդի մասին ելունդավոր պատկերացում է տալիս Խ. Աբովյանը։ Պարսկաստանում, ասում է նա, «...քրիստոնյայի փրկությունը կախված է նրա խոնարհ լինելուց, նվիրվածությունից ու համբերատարությունից երկնից արքայությանը արժանանալու համար, իսկ մահմեդականինը՝ ամբարտաւանությունից ու տիրապետելուց, հալածելուց և ավերելուց այն բոլորը, ինչ որ չի վերաբերում նրա ջեննաթին, ինչ որ չի ճանաչվում նրա Կուրանի, նրա օրենսդրի կողմից, որտեղ ոչ մի մարդկային իրավունք գոյություն չունի, գոնե քրիստոնյաների նկատմամբ, ո՛չ մի կարգ, ո՛չ մի օրենք, այլ միայն կամայականություն, տիրապետելու տենչ և շահամոլություն, ատելություն այն բոլորի նկատմամբ, ինչ վերաբերում է կուլտուրային, գիտություն, վայելչաբարոյությունը...» որտեղ մոլեռանդության և անհանդուրժողականության մի մութ գիշեր ընդգրկել է ամեն ինչ։ Այն բոլորից հետո կարո՞ղ է այնտեղ համերաշխություն, արդարադատություն, բարոյական անաղարտություն գոյություն ունենալ»²¹։ Հարկավ, պարսկական ֆեոդալիզմի պետական քաղաքականությունից բազմապատիկ տուժում էր հատկապես հայ ժողովուրդը, քանզի վերջինիս տնտեսական ու իրավական դրության որոշողը, ինչպես տեսանք փոքր-ինչ առաջ, նրա դավանանքն էր։ Նույնիսկ էջմիածինն ու նրա միաբանությունը շահագործման առարկա էր պարսկական արքունիքի և Երևանի խանի համար։

Հայտնի է, որ քաղաքական իշխանության և խոշոր կալվածատիրական տարրի չքայմամբ՝ կանգուն մնալով կյանքի

20 Տե՛ս «Свод Материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», том II, Тифлис, 1887, էջ 36։

21 Խ. Աբովյան, ԵԺԺ, հտ. VIII, Երևան, 1953, էջ 35։

համայնական հրապարակի վրա, հայ եկեղեցին տակավին թաթար մոնղոլների կողմից ճանաչվել էր իբրև ժողովրդի սլաշտոնական ներկայացուցիչ, իսկ հոգևորականությունը՝ որպես պատմա-իրավական արտոնյալ դաս: Դեպի զինական հակամարտություն գնացող 18-րդ դարի ռուս-պարսկական դիվանագիտական մարզանքների ժամանակաշրջանում ևս՝ գրգված այն բանից, որ հայ հոգևոր դասի, մասնավորապես Ամենայն Հայոց կաթողիկոսի ծանրակշիռ խոսքը էական նշանակություն կունենա իր հպատակների բռնած քաղաքական կողմնորոշման խնդրում, պարսից շահերը, հատուկ ֆերմաններով նվերներ ու արտոնություններ էին տալիս կաթողիկոսին և հայ հոգևորականությանը, նրանք ազատ էին հարկերից: Սակայն այդ արտոնություններից հայ եկեղեցին և կղերը շատ քիչ էր օգտվում: «Հայտնի է, — գրում է աղանձիկոս Աշ. Հովհաննիսյանը, — որ պարսից տիրապետության վերջին շրջանում խանական ճնշումներից ու կեղեքումներից տուժում էին ոչ միայն հայ ժողովրդական զանգվածները, այլև հայ տիրող դասերը, կղերի ու մեծատունների, մելիքների ու յուզբաշիների, ինչպես նաև հայ խոջայական վերնախավերի ներկայացուցիչները»²²: Հանդիսավոր ֆերմաններով տրված խոստումները կյանքում ամենակոպիտ ձևով ոտնահարվում էին: Այնպես որ, ռուսական տիրապետության նախօրյակին, անցյալում հարկերից ազատ հայ եկեղեցու և հոգևոր դասի վիճակը բնավ մխիթարական չէր: Նրա բոլոր թանկարժեք անոթները, աջերը, խաչերը, մասունքները կամ կողոպտված էին և կամ գրավ դրված: Կաթողիկոսները օր ու գիշեր դադար չունեին պարսից հարկահանների, պարտքատերերի ու ամեն կարգի տղրուկների հերքից: Այդ աղներ և դեթ այն նկարագրությունից, որ մեղ է թողել «Ճանապարհորդութիւն ի Հայս» գրքի հեղինակը: «Հրուէր արգարև իշխանա-

²² Աշ. Հովհաննիսյան, 19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 57:

կան,— գրում է Թադիադյանը,— բայց էջմիածինն զայսու ժամանակաւ հեծելով ընդ ծանր հարկապահանջութեամբք նոցին իսկ պարսից, որպէս և ընդ պարտութիւն 40 հազար թումանաց նոցա՝ ոչ իշխէր առնել զայս մեծագործութիւն ի ձեռն այսպիսի ճարտարապետի, որոյ օրէնք էին կամք, և հանապաղորդեան ջանք՝ կեղեքանք Հայոց»²³:

Ժամանակի կաթողիկոս Նիքիեմը այսպես էր նկարագրում էջմիածնի կացութիւնը. «Ըստ առաջնոյն չէ այժմոյս կեցութիւն սրբոյ աթոռոյս. յառաջ եկուց կաթողիկոսաց ժամանակըն, որ մեք ներկայ եղեալ գիտակ հմք. գինին, բրինձն, բամբակն, ցորեանն, գարին և այլ արմտիք այնքան առաւել գայր, և դեռ ևս ի նոցունց ծախիւր դրամօք...»²⁴: Ըստ Աբովյանի, պարսկական տիրապետութիւնը մի իսկական գերութիւն էր հայ ժողովրդի համար, և ավելի դաժան ու անողորք, քան եգիպտական ստրկութիւնը: Նրանից հուսահատ ու զզված էին բոլոր հասարակախավերը, առանց դիրքի, տարիքի ու սեռի խտրութեան: Դժգոհների շարքում էր և էջմիածնի միաբանութիւնը: Նա, որ ստրկական հնազանդութեան և բրիստոնեական համբերութեան մարմնացումն էր ու շարունակ ոչխարային համակերպութիւն էր քարոզել ժողովրդին, հոգնել էր պարսկական տիրապետութիւնից:

Աբովյանը անհուն դառնութեամբ և ատելութեամբ էր լցված գեպի իր ժողովրդի դահիճները և նրանց անսաստ բռնակալութիւնը: Նա տեսնում էր այն բարոյական նվաստացուցիչ վիճակը, որի մեջ տառապում էր հայ ժողովուրդը իր դարավոր հայրենիքում: Պարսիկը, թուրքը, քուրդը և առհասարակ տիրող մահմեդականութիւնը նրա վրա նայում էր բարձրից, նայում էր ոչ միայն անսահման ատելութեամբ ու թշնամանքով, այլև սպանիչ արհամարհանքով: Եւ այդ ոչ միայն այն պատճառով, որ ինքը տեր էր, արտոնյալ և հրա-

23 Մ. Թադիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 29:

24 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վավ. 161:

մայրոջ, այլև որ հայր քրիստոնյա էր, «անհավատ»: Հայի կրոնը, եկեղեցին, սրբությունները ծաղրի ու անարդանքի առարկաներ էին մահմեդական մոլեռանդ խուժանի համար: Մահմեդի որդիները հաճույք էին զգում և կրոնական սրբազան պարտականություն համարում այդ ամենը ծաղրելով, հայհույելով, անգամ սրբապղծելով: Իսկ հայ ժողովրդի համար դրանից էլ ծանր վիրավորանք չէր կարող լինել, մանավանդ այն ժամանակվա պայմաններում, երբ կրոնը ժողովրդի ինքնապահպանման ազդակներից մեկն էր: Հատկանշական է, որ պարսկական կառավարության կողմից կաթողիկոս հաստատված Եփրեմը կարճ ժամանակ անց կախման մեջ ընկավ Երևանի խանից, նորընտիր կաթողիկոսին ծանրաբեռնում են ուժից վեր հարկերով, վերցնում չափազանց շատ «նվերներ», ենթարկում բանտալին կալանքի և այլ հալածանքների²⁵: Եվ երբ պարտքերի չափը նվազեցնելու համար հայ եկեղեցու պետը ներկայացավ Հուսեյն խանին, վերջինս ոչ միայն մերժեց նրա խնդրանքը, այլև գոռաց նրա վրա ու ավելացրեց, որ երկրորդ անգամ ռուսական շքանշաններով իրեն ներկայանալու դեպքում՝ կկախվի հենց այդ շքանշանների ժապավեններով²⁶: 1821 թվականին 80-ամյա կաթողիկոսը անհավատ նեղիչներից փրկվելու համար հրաժեշտ ավելց էջմիածնին և ապաստան գտավ Հաղպատի վանքում, որտեղից 1826 թվականին սկսված ռուս-պարսկական պատերազմի խառը պայմաններում միայն կարողացավ նահանջող ռուսական զորքերի հետ փոխադրվել Թիֆլիս²⁷:

«Ես տեսել եմ հիշում եմ, — գրում է Խ. Աբովյանը, — էջմիածնի վիճակը գեռես քսան տարի սրանից առաջ, երբ ո՛չ միայն Երևանի սարդարը, այլև նրա բազմաթիվ շնչին խաներն ու բեկերը հենց որ ցանկանային՝ վանքի հաշվին քեֆ էին անում

²⁵ См. Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, т. I, 11.

²⁶ См. АКАК, том IV, ч. I, т. 620.

²⁷ См. «Тифлисские ведомости», 11 июля 1828 г., № 2.

և գրպանները լցնում: Յուրաքանչյուր անգամ նրանց բնգունելը, հյուրասիրելը և ուղևորելը աղմկալի, հանդիսավոր և բազմամարդ էր լինում: Նրանց դիմավորում էին քրիստոնեական դրոշակներով, խաչերով և սրբապատկերներով, զանգահարությամբ, եկեղեցական երգերով և հարուստ նվերներով, այնուամենայնիվ, շատ անգամ էր պատահում, որ այդ դեերի ներկայությամբ արցունք ու արյուն էր թափվում»²⁸:

Հայերի կրոնական ու ազգային սովորությունների ոտնահարման մասին բազում փաստեր են արձանագրել Պարսկաստան ու Անդրկովկաս այցելած օտարերկրացիները: «Ես ցանկանում էի ուղիղ դեպի եկեղեցի գնալ, — վկայում է անգլիացի ձանապարհորդ Ռոբերտ Լուալը, — բայց դիտավորյալ չկատարեցի, որպեսզի խուսափեմ ինձ ուղեկցող պարսիկ զանգվածից, որն, ի դեպ, բացահայտ ատելությամբ էր լցված դեպի մեր սուրբ տաճարները: Ես միաժամանակ նկատում էի, որ պատրիարքի գործողություններին և նրա հետ ունեցած մեր զրույցներին հետևելու համար շատ լրտեսներ էին եկել այստեղ: ...Ես վիրավորված զգացի, երբ տեսա, որ պատարագի ժամանակ պարսիկ աստիճանավորները բազմեցին նստարաններին, հաշվի չնստելով անգամ այն փաստի հետ, որ բազկաթոռին ես ոչ միայն չնստեցի, այլև ոտք չդրի ինձ համար նախատեսված գորգի վրա»²⁹:

Երևանի խաները հաճախ էին հարկադրում կաթողիկոսին ու միաբաններին ղգեստավորվել և արարողություններ կատարել իրենց հաճելի ժամանցի՝ «թամաշայի» համար: Լեոն պատմում է, թե ինչպես մի օր մի խան էջմիածնում ճաշի ժամանակ պահանջեց մի շարական երգել, որի մեջ լինեք «խան» բառը: Եվ եպիսկոպոսներից մեկը երգեց մի կտոր, որի մեջ կար «իշխան» բառը, որի երկրորդ կեսի վրա առանձնահատուկ շեշտելով՝ խաբեցին խանին: Մի ուրիշ խան

28 Խ. Արովյան, ԵԼԺ, հտ. VII, Երևան, 1956, էջ 173:

29 Robert Lyall, Travels in Russia, the Crimea, the Caucasus and Georgia, London, 1825, էջ 95:

պահանջեց, որ երգված շարականի մեջ Ալի անունը լինի և երգվեց, դարձյալ նույն շեշտադրությամբ մի կտոր, որի մեջ կար «իմանալի» բառը, որ և խանն ընդունեց «Իմամ Ալի» բառի տեղ³⁰:

Կրոնական հալածանքներով և աղգային ղգացմունքների ոտնահարմամբ ընալ չէր վերջանում հայ ժողովրդի տառապանքը: Պարսից դժոխային տիրապետության հետևանքները տեսանելի էին ամենուր: Հատկանշական է, որ Երևանի ու Նախիջևանի խանությունների 1111 բնակավայրերից 559 ամայի և անմարդաբնակ էին³¹: Յուրաքանչյուր քայլափոխին, վկայում է մի այլ սկզբնաղբյուր, այստեղ երևում էին պարսկական կառավարման ծանր հետևանքները, ամենուրեք հանդիպում էին ավերակ գյուղեր ու փոքրիկ բնակավայրեր, դաշտերի ոռոգման խանգարված ջրանցքներ ու փշրված ջրատարներ³²:

Եթե մի ժամանակ Նախիջևանի գինին լավագույնն էր Հայաստանում, վկայում է ճանապարհորդ Քեր-Փորթերը, ապա այսօր միանգամայն մեռել է գինեգործությունը: Վաղերի մնացուկներով մի քանի այգիները սոսկ ցուցադրում են այս շրջանում գինեգործության երբեմնի առկայության մասին³³:

Օրավուր փոխվում էր հայ ժողովրդի պատմական օրրանի՝ Արարատյան աշխարհի աղգային նկարագիրը:

Անդրադառնալով վաղիատուն ցեղերի՝ դեպի Հայաստան կատարած ասպատակություններին, Շոպենը գրում էր, որ այդ արշավանքներից յուրաքանչյուրի ժամանակ բռնակալի սուրն անխնա ոչնչացնում էր բոլոր նրանց, ովքեր չէին կարողանում «փախուստով փրկել իրենց կյանքը», իսկ քոչվոր հաղթողները տեղավորվում էին քանդված ու ավերված բնակավայրերում³⁴:

30 Տե՛ս Ան, Մեսրոպ Թադիսդյան, «Գործ», 1917, № 4, էջ 22:

31 Տե՛ս Н. Шопен, նշված աշխ., էջ 509:

32 Տե՛ս АКАК, том VII, էջ 8:

33 Տե՛ս Ker-Porter, Travels in Persia, Georgia, Armenia, v. I, էջ 412:

34 Տե՛ս Н. Шопен, նշված աշխ., էջ 530:

Հայ բնակչությունը նվազում էր ոչ միայն վայրենի հոր-դաների ներխուժումներին ուղեկցած կոտորածներով:

Պարսկական տիրապետության վերջին շրջանում շարունակվում էր հայ ժողովրդի գլխին ծանրացած դարավոր աղետը՝ զաղթը Հայաստանից դեպի օտար երկրներ: Հայրենիքը դատարկվում էր իր հարազատ ղավակներից, թուլանում բնիկ հայ տարրը՝ օրեցօր աճող ու զորեղացող մահմեդականի հանդեպ:

Թեև ռուս-պարսկական պատերազմներին նախորդած տեղահանությունները իրենց ծավալով շատ ու շատ փոքր էին Շահ Աբբասի տեղահանությունից, սակայն իրենց սոսկումներով ու դաժանությամբ նրանից ոչ միայն ետ չէին մնում, այլև գերազանցում էին: Առաքել Դավրիժեցու սրտաձմլիկ նկարագրությունը, հարկավ, նսեմանում է Խ. Աբովյանի սրտակեղեք պատկերների հանդեպ: «Տեսնողի սիրտը կրակ էր ընկնում,— վկայում է Աբովյանը,— բայց անողորմ Ղզըլբաշի թուրն ու արինաթաթախ ձեռքը՝ ո՛չ հեր էր հարցնում, ո՛չ հիվանդ, ո՛չ ծեր, ո՛չ տղա, ո՛չ մեր, ո՛չ աղջիկ: Որին քարով էին սպանում, որին թրով, որի ոտիցը քաշում, ջուրը քցում, որին բանհոգի անում, որ մնացողները ձեռք վերցնեն, դնան»:

«Շատ հղի մեր՝ հենց ճանապարհին՝ կամ մեռած էր ծնում իր ինն ամիս դառը ցավով արգանդումը պահած, հասցրած մանուկը, կամ թե չէ՝ սաղ էլ որ ըլում էր, մերը բարուրում, ուղում էր, որ կամ ինքն էլ հետը մեռնի, կամ մանուկը շթողա, տանի, բայց ա՛խ՝ անաստված Ղզլբաշի թրի բերանը՝ կամ երկսին էլ միասին էր կտրատում, կամ բարուրը մոր ձեռիցն առնում, կամ սաանում, կամ ջուրը քցում, կամ քարին տալիս փչացնում...»³⁵:

Երևանի և Նախիջևանի խանություններում հայերի թիվը նվազագույն չափերի էր հասել: Ըստ Ղուկաս Խնձիճյանի, մահմեդականների թիվը Հայաստանում նույնքան էր, որքան

35 Խ. Աբովյան, Եժ, հտ. III, Երևան, 1948, էջ 86—87:

հայերի թիվը³⁶։ Ի. Շոպենը բարեխղճությամբ արձանագրել է Հուսեյն սալդարի գործունեության շատ քննորոշ մի կողմը։ Վերջինս Երևանի խանության սահմանները ռուսական և թուրքական հնարավոր հարձակումներից պաշտպանելու նպատակով, մերձսահմանային մահալները բնակեցնում էր քոչվոր և ռազմունակ թուրք-ադրբեջանական ցեղերով։ Հայկական բնաշխարհի այս մահմեդականացումը՝ պարսկական կառավարությունը տանում էր ծրագրված կարգով և հետևողականորեն։ Թալինի մահալում նա բնակեցրել էր այրումլի և թաղանլի քոչվոր ցեղերին, պատմական Արագածոտնում և Ապարանի հարավում տեղավորել էր սեյիդլի և ախսախլի ցեղերին³⁷ և այլն։

Երկրում սահղծված անտանելի պայմանները հարկադրում էին հայերին, ինչպես առանձին բնտանիքներով, այնպես էլ զանգվածային եղանակով, արտագաղթել Վրաստան և Ռուսաստանի տիրապետության տակ անցած այլ շրջաններ։ Այսպես, Յիցիանովի 1804 թվականի Երևանյան արշավանքի ժամանակ ավելի քան երկու հազար հայեր լքեցին հայրենիքը և բնակություն հաստատեցին Թիֆլիսում՝ հիմք դնելով հետագա «Հավլաբար» թաղին³⁸։ «Կամավոր» արտագաղթերով դատարկվում էր երկիրը։ Բավական է ասել, որ Արևելյան Հայաստանի երկու խանություններում, դրանք Ռուսաստանին միացման նախօրյակին, ապրում էր ընդամենը 119650 մարդ, որից հայեր էին 24952-ը։ Նախիջևան քաղաքի 5470 բնակիչներից հայերի թիվը հասնում էր 1829-ի, իսկ պատմական Գողթանի նոր կենտրոն Օրդուբադ քաղաքում հայ բնակչություն համարյա չկար³⁹։ Մյուս կողմից է առանց վարանման ասել, որ եթե մի երկու տասնամյակ էլ ռուսական տիրապետությունը ուշանար,

36 Ղ. Իսենկյան, Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, էջ 14։

37 Խ. Ավդալբեկյան, Հոգային հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1959, էջ 12—13։

38 Տե՛ս Խ. Մոսեև, նշված աշխ., էջ 706։

39 Նույն տեղում, էջ 463—482։

ապա Արևելյան Հայաստանի պարսկական մասում հայության գոյութիւն ունեցող ողորմելի բեկորներն իսկ չէին լինի։ Ռուսական տիրապետութեան գալստյան հուշում էլ նրանք մնում էին հայրենիքում, հարկադրւած տանում գործող կարգերի դաժանութիւններն ու եղեռնագործութիւնները։

Պարսկական տիրապետութեան ներքո Արևելյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական կացութեան մինչհեղափոխական հետազոտողները (Ի. Շոպեն, Ն. Դուբրովին, Ի. Կուլակ, Վ. Իվանենկո, Ալ. Երիցյան, Ֆ. Մարկով, Ս. Զելինսկի և ուրիշներ) այստեղ հաշիւել են շուրջ 35 տեսակի հարկեր, որոնց զգալի մասը պահպանվեցին մինչև ուսական տիրապետութեան ժամանակները։ Հայկական մարզի վարչութեան անդամ, մայր Մեդուսի տեղեկութիւնները համաձայն, որ հետագայում նշանակվեց հարկահավաքման մարդային հանձնաժողովի նախագահ, պարսկական տիրապետութեան վերջին շրջանում, Երևանի ու Նախիջևանի խանութիւններում գոյութիւն ունեին 40 տեսակի հարկեր, տուրքեր ու պարհակներ։ Այդ հարկերը կարելի է որակել իբրև մինչկապիտալիստական ռենտա՝ իր երեք տեսակներով։ 19-րդ դարի առաջին տասնամյակներին Արևելյան Հայաստանում տակավին գերիշխող էր հողային ռենտայի բնատուրքային ձևը, որն ինչպես նկատում է Մարքսը, ասիական երկրների նկատմամբ կազմում էր միաժամանակ նաև պետական տուրքերի գլխավոր տարրը։ Այստեղ «հողային ռենտան նորմալ ձևն է հալիւլալ արժեքի և ուրեմն հալիւլալ աշխատանքի, այսինքն՝ այն ամբողջ հալիւլութային աշխատանքի, որ անմիջական արտադրողը պետք է իր աշխատանքի ամենաէական պայմանի սեփականատիրոջ՝ հողի սեփականատիրոջ համար կատարի ձրի, իսկապես ուրեմն հարկադրւած լինելով, չնայած որ այս հարկադրանքը այլևս հին բիրտ ձևով չի ելնում նրա հանդեպ»⁴⁰։ Գերադաւնցապես այս ձևն էր հենց կազմում արևելյան ֆեոդալիզմի գոյութիւնն ապահովող խորհրդավոր միջոցներից մեկը։

⁴⁰ См'у К. Маркс, Капитал, том III, М., 1955, էջ 809։

Թաղիադյանն առաջինն էր հայ ժամանակակիցներից, որ ուշադրություն հրավիրեց արևելյան ֆեոդալիզմով ապրող ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի, տնտեսական քայքայման փաստին: Նկարագրելով 19-րդ դարի 20-ական թվականների արևելահայությունը, Թաղիադյանը ցույց էր տալիս, որ խանական բռնություններն ու ծանր հարկերը նրան հասցնում էին տնտեսական քայքայման և ունեղրման:

«Վասնզի Յուսէին խան բղեշխն Երևանայ,— գրում էր Թաղիադյանը,— որպէս ամենայն զիւղօրէից աշխարհին, նոյնպէս և ողորմելի բնակչաց սորուն բաժանորդ լինէր ամենայն հերկոյ: Տայր իւրաքանչիւր տան լուծն մի եղանց, և սերմանիս որիդոյ, բամբակի, և այլ ևս շահաբեր արդեանց և արգասեաց: Յանէին չեքա, և ի ժամանակի հնձոցն առաքէր նախ ընդ մէջ կիսէր զկալ նոցա ի բաժին, ապա ի մնացորդացն հատանէր և զհասան արքունի, մինչ զի, չմնայր ինչ նոցա և ծախուցն բաւական: Եթէ դէպ լինէր երբեմն երկնառաք պատուհասիւք ստերջանալ անդորէից, և զլանալ ի բերսն, սա զվնասն զանցառութեամբք ժողովրդեանն արկեալ, բռնանայր նոցա անպատմելի խժոժութեամբ, առնոյր գրաւէր զոր ինչ ի տունս նոցա գտանէր զկահս և զկարասիս, և ի պակասիլ նոցուն զկանայս և զորդիս նոցա՝ առ ի վճար ընկերական բաժնի իւրում: Նա շատ և այն էր՝ զի դերեհալ, յայսցանէ՝ գանիւք ծնուցանէր իւր ոսկիս, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արին յարբումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր, և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս փ Ղադբին, և ճոխացուցանէր զգանձն»⁴¹:

Երկրում առկաւ ին հարատեւում փր ալլադաւլան հպատակների ստրկագրման հինօրյա ինստիտուտի մնացուկները՝ աղջկաժողովների և տղայաժողովների երբեմնի գործադրվող պրակտիկան: «Այսպէս, նույնիսկ 1811 թ. պարսից զահա-

41 Մ. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 226—227:

Ժառանգ Աբրահամ Միրզան Նախիջևանի գավառից պահանջեց 500 «դուլ»։ ամենն փախստական եղեն, — դրում է ժամանակակից մի հիշատակագրող, — և ոչ կարեցին զերծանիլ ի ձեռանէ նորա, ըմբռնեալ բերին ամենն։ Եւ մեր հին Զուղայու հինգ մարդ ուզեցին։ Որքան ջահիլ կային քաքուլ բըշամներն թրաշեցին և ի մորուս թողեցին և դարձյալ 50 թուման ըռըշվաթ տւեցին անջախ որ բրձան»⁴²։ Քիչ չէին պատահում նաև, երբ պարտապան հայերը դժվարանալով վճարել բաղմաստիճան ծանր հարկերը՝ հարկադրված էին լինում կանգնել պարտապանների կողմից իրենց դեռահասներին վաճառքի հանելու ողբերգական փաստերի առաջ⁴³։

Գյուղացիության հասցեին Հուսեյն խանի այն խոսքերը, թե ինքը նրանց մինչև այնտեղ կհասցնի, որ «յուրաքանչյուր յոթ քնտանիք կսնվեն մեկ և այն էլ ծախ ամանից»⁴⁴, ինքնին շատ բան էր ասում բնակչության բիրտ ու դաժան շահագործման աստիճանի մասին։

Մորից Ֆոն Կոցեբուռն պատմում է, որ այդ սատրապը իր իշխանության շրջանում այնքան «անսահման հարստություն» էր հավաքել, որ չէր կարող «վայելել իր ծերության պատճառով»⁴⁵։ Ի. Շոպենի մոտավոր տվյալներով, գյուղացիությունը տարեկան միայն 11940 բաթման⁴⁶ յուղ և 10 հազար հավ էր տալիս սարդարին։ Սարդարի եկամուտը տարեկան կազմում էր 180000 թուման (135.000 ֆունտ ստերլինգ⁴⁷)։

Խանական կառավարությունը իր հարկային շահատակությունները սկսում էր վարչական կենտրոնից։ Հարկերի հավաքման համար գյուղեր էին ուղարկվում հատուկ հարկահաններ, որոնք կոչվում էին սարքյարներ։ Սրանք, որպես կանոն,

42 Աշ. Հովհաննիսյան, Դավազներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 140։

43 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22ա, վավ. 41։

44 Տե՛ս Ի. Մոլեն, նշված աշխ., էջ 874։

45 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. 2. էջ 529։

46 Մեկ բաթմանը = 4,5 կգ։

47 Նույն տեղում, էջ 325։

նշանակվում էին միրբուլուքների կողմից, սակայն պատահում էին նաև դեպքեր, երբ խանը սարքյարներ էր ուղարկում իր անունից՝ միրբուլուքների գործունեությունը հսկողության տակ առնելու համար։ Խանական սարքյարների թիվը Երևանի խանության մեջ հասնում էր 50-ի, իսկ մահալականը՝ 150-ի։ Խանական սարքյարներն ստանում էին ամսական 5—8 ոտֆլի՝ նայած գյուղի բնակչության. յուրաքանչյուր կալից երեք բաթման հացահատիկ և մեկ բաթման դարի ձիու համար և այլն։ Գյուղերում նրանք մնում էին վեց ամիս։ Հենց որ բացվում էր գարունը և դաշտերը սկսում էին հազնվել կանաչով, սարքյարները շտապում էին գյուղերը։ Առանձնապես հնձի ժամանակ նրանք պատուհասի նման ծանրանում էին հայ գյուղացիների գլխին։ Սարքյարի հասարակական դիմապատկերը Հաքստհաուզենին այսպես է նկարագրել Խ. Աբովյանը. «Գյուղում (Քանաքեռում) ամեն տարի տեսնում էինք մի աչգալիսի սարքյարի, որն ամառը գալիս էր նահանգին հասնող հացահատիկի տուրքի բաժինը հավաքելու և այս հասարակ, քիչ ժամանակ պահանջող գործի համար գյուղում, քովորաբար, մնում էր 3—4 ամիս։ Նրան պետք է տրամադրեին ամենալավ բնակարանը և սպասարկեին միանգամայն անթերի կերպով, նրա ծառաներին և ձիերին լավ խնամեին, ամեն օր նրա տունը պետք է բերեին ամենալավ ուտելիքները՝ ճուտ, ձու, միս, կարագ և այլն, երբեմն նաև գինի (ոչ բոլոր պարսիկներն են այն արհամարհում)։ Այս ճամփորդության ժամանակ նրա կողքից մեծ մասամբ գնում էր սարքյարի ծառաներից մեկը՝ ձեռքին մի ահռելի խարաղան բռնած, որպեսզի նրան առաջ մղի կամ պատժի, եթե նա այդ ամենը արագ չհավաքի։ Նա գլխին իր առջև զցած խարաղանում ու բշտում էր անլուր հայհոյանքների մի այնպիսի տարափով, որոնցով կարող է հռչակվել միայն թուրքական, բայց ոչ մի այլ լեզու աշխարհում։ Եթե այն տանտերը, որից պահանջվում էր այդ բոլորը, զլանար տալ, և երբ իրենց բավական ուժեղ էին զգում, ապա ծառան անասնական կատաղությանմբ՝ ուժով, մտնում էր տուն, ամեն ինչ ջարդ ու փշուր անում, մտրակում ու անար-

գում բոլոր նրանց, որոնց նա հանդիպում էր տանը՝ առանց տարիքի և սեռի խտրության: Եվ դա դեռ ծառան էր կամ ստրուկը, կարելի է պատկերացնել, թե տերն ինչ կաներ: Եթե սա դուրս էր գալիս, ապա խեղճ գյուղացիները պետք է միշտ, ինչպես արբանյակներ, հետևեին նրան և շարունակ ամենա-ուշադիր կերպով հետևեին նրա հայացքին, որպեսզի ըզ-գուշանային նրան բարկության կամ դժգոհության առիթ տալուց: Գյուղացիները խմբերով հավաքվում ու կանգնում էին ի տների կտուրներին կամ նստում գոմերի առաջ, սովորաբար մեծ քարերի վրա (սեղանն ու աթոռը ծանոթ չեն Հայաստանում) և կամ աղանձ ծամելով մեկնվում էին այգի-ներում, գետնի վրա՝ խորհուրդ տալու համար: Հենց որ տես-նում էին նրա գալը, ձեռքով կամ դդակով նշան էին տալիս և բոլորը դեռ ու դեն էին փախչում: Խորը գլուխ տալով նրանք պետք է նրա ականջը շոյեին ամենակեղծավոր խոսքերով ու հաճոյախոսություններով՝ «հոգու տեր (աղա ջան) իմ տեր, իմ աչքի լուս, բոլորս քո ստրուկներն ենք» և այլն: Վա՛յ նրան, ով նրա բարկությունը շարժեր՝ խարազան, սուր, դաշույն կամ ինչ այդ պահին ձեռքն ընկներ, անխիղճ կերպով գործածության մեջ կմտներ: Սակայն վերևում հիշատակված ծառան անգամ, որ ո՛չ այլ ինչ էր, եթե ոչ՝ մի վաղարար կամ ժխամորճ մատակարարող, պահանջում էր անձամբ ևս նման հպատակություն ցուցաբերելն»⁴⁸: Աբովյանի կերտած սար-քյարի կերպարը տիպական էր բոլոր պարսից հարկահան-ներին, իսկ Քանաքեռի օրինակը՝ այն ժամանակվա Հայաս-տանի բոլոր գյուղերին:

Խաները պարտադիր կարգով ընծաներ էին ստանում ղանաղան հիմնարկություններից և պաշտոնական անձերից, քանզի հին ժամանակներից ի վեր Ասիայի բնակիչները բարձր էին գնահատում իրենց հպատակներից նվերներ վերցնելու սովորությունը⁴⁹: Յուրաքանչյուր ստորագրյալ իր վերադասին

48 Խ. Աբովյան, ԵՎԺ, հտ. X, Երևան, 1961, էջ 344—345:

49 Տե՛ս H. H. H. H. H., նշված աշխ., էջ 968:

զուր դալու և նրան իր հավատարմությունը ցույց տալու համար, զանազան առիթներով (կրոնական տոներ, ծննդյան օր և այլն) տալիս էր նվերներ, իսկ կաշառքները տրվում էր անօրինական գործունեություն սկսելու կամ արդեն գործած հանցանքների համար պատժից խուսափելու նպատակով, ընդ որում կաշառքը հաճախ ներկայացվում էր իբրև փեշքեշ կամ նվեր:

Ուղղակի հարկերի համեմատությամբ անուղղակի հարկերը ավելի բազմազան էին: Անուղղակի հարկման էին ենթարկվում բոլոր օբյեկտները՝ խանութները, թահեստանոցները, այգիները:

Խանական պաշտոնեությունը՝ նրա քարտուղարներից (միրզաներից) և ոստիկանապետից (զարուղա) սկսած և վերջացրած շուկայի պետով (բաղար-բաշի) ու սուրհանդակներով (յասաու), պահվում էր բնակիչներից «զուլուզ փուլի» անվան տակ հավաքվող անուղղակի հարկի հաշվին: Առանց պետական գանձարկդին վնաս հասցնելու և բնակչության հաշվին բազում պետական պաշտոնյաներ պահելու այս շատ «հարմար» ու տարածուն եղանակը բավական լայն կիրառություն ունեւր Պարսկաստանի անդրկովկասյան խանություններում: Պարսկա-թուրքական իշխող տարրը բազում հնարներ ու միջոցներ էր գտնում համընդհանուր արեւելյան ֆեոդալիզմի ու մահմեդական խտրականության ցանցի մեջ կաշկանդված հայ ժողովրդի աշխատանքի պտուղները:

Գոյություն ունեցող կեղերման սիստեմը շատ վատ ներգործություն էր ունենում նորմալ արտադրահարաբերությունների զարգացման վրա: Իրավունքի կայուն նորմերի և օրենքների բացակայությունը ստեղծում էր մի այնպիսի կացություն, որ գոյություն թագավորող հարստահարության ֆեոդալական սիստեմը և քաղաքներում տեղա համքարային կազմակերպությունները ծայր առնող պարզ ապրանքատրեստություն պայմաններում միջոց էին տալիս կապալառուներին՝ իրենց ձեռքը հավաքելու անմիջական արտադրողների հավելյալ արդյունքի ղգալի բաժինը՝ զոհացնելով թե՛ իրենց

և թե՛ ֆեոդալների անկշտում ախորժակը: Մինչև Ռուսաստանի
ախրապետութեան տակ անցնելը, Անդրկովկասի առևտրա-
արդյունաբերական կյանքը ընդհանրապես գտնվում էր շատ
ստորին մակարդակի վրա: Տեղական բնակչության ցածր
պահանջները մի կողմից, ֆեոդալական անջատվածությունը,
պատերազմները և բնատնտեսության պայմաններում իրաց-
ման շուկայի սահմանափակությունը մյուս կողմից, անհաղ-
թահարելի խոչընդոտներ էին ստեղծում առևտրի ու արդյու-
նաբերության առաջադիմության համար: Խանական միջնորմ-
ները բացառում էին կանոնավոր փոխանակության հնարա-
վորությունները: Խանություններն ու մահալները ինքնամփոփ
միավորներ էին և շարունակ ներհակության մեջ՝ միմյանց
նկատմամբ:

Արևելյան Հայաստանում չկար արդյունագործություն՝
գործարանային իմաստով: Ձեռքի աշխատանքի վրա
խաբսիված մի քանի ձեռնարկությունները սոսկ սովորական
արհեստանոցներ էին: Դրանցից մի քանիսը, օրինակ, ապակու,
թնդանոթաձուլական և վառոդի արհեստանոցները, Շոպենը
համարում է արդյունաբերական ձեռնարկություններ: Նա
Նրևանի «գործարանների ու ֆաբրիկաների» շարքն է դասում
սնդամ կաշեգործական արհեստանոցները, ներկատները և
ջրաղացները⁵⁰, որոնք գոյություն ունեին շատ հին ժամանակ-
ներից և իրենց խոշուկությամբ շատ հեռու էին արդյունա-
բերական ձեռնարկություն կոչվելուց:

Պարսից տիրապետության վերջին տարիներին, Շոպենի
վկայությամբ, Արևելյան Հայաստանում կար արհեստի 96
ձյուղ՝ 10124 արհեստավորներով: «Այստեղի կիսավայրենի
երկրում, — գրում է նա, — արհեստն ամեն քաջափոխում հի-
շեցնում է այն ժամանակը, երբ մարդը նոր-նոր հասկանալով
հասարակական կյանքի օգտակարությունը, թողեց անտառ-
ները և քարանձավները և խարխափելով սկսեց, բոլոր
կողմերով տակավին անհաջող, իր փորձերը: Մինչև այժմ էլ

⁵⁰ См. у Н. Ишхан, նշված աշխ., էջ 473—474:

այստեղի արհեստավորը առանց դադգահի, գործիքների, ձեռքերով ու ոտքերով է աշխատում իր անհարմար շինվածքի վրա՝ աննկարագրելի ջանքերով, չգիտակցելով նույնիսկ, որ կարելի է նույնը պատրաստել ավելի քիչ աշխատանքով և անհամեմատ ավելի լավը»⁵¹։ Ակնբախ է, որ ցարական բարձրատիճանն սլաշտոնյան շափաղանց վարկաբեկիչ ձևով է նկարագրում դադութային երկիրը և նրա բնակչությունը։ Սակայն պիտի կարծել նաև, որ Շոպենի մոտ կար ինչ որ թյուրիմացություն և դրա առաջացման պատճառը պետք է որոնել այն բանում, որ նա փակ բնատնտեսության կարիքները բավարարող բոլոր դադգահատեր գյուղացիներին համարում է արհեստավորներ։ Մինչդեռ դադտնիք չէ, որ նրանցից շատերը կտավ էին գործում ոչ թե շուկայի, այլ սեփական բնտանիքի առօրյա պահանջները հոգալու համար՝ նման ռուսական տիրապետության հետագա տասնամյակներում ճախարակ մանող և ապա գործող այն գեղջկուհուն, որի վիշտն ու ցավը երգող հաջ բանաստեղծը ամենեկին նրան չէր դարձնում արհեստավոր։ Ճշմարտությունն այն է, որ Պարսկաստանի անդրկովկասյան երկու խանություններում էլ ռուսական տիրապետության նախօրյակին, արհեստի և ոչ մի ճյուղ փաստորեն չէր հասել մանուֆակտուրային արտադրության մակարդակին, իսկ որոշները տակավին չէին էլ բաժանվել գյուղատնտեսությունից։

Պարսկական բռնատիրությունը բարենպաստ պայմաններ չէր ստեղծում փոխանակության և առևտրի կանոնավոր դարգացման համար։ Ռուսական տիրապետությունից առաջ, Արևելյան Հայաստանի տնտեսության մասին լիովին համապատասխանում է այն դրույթը, որ ձևակերպել է էնգելսը թուրքական և ընդհանրապես «արևելյան» բռնակալության ենթակա երկրների մասին։ «Թուրքական, ինչպես և արևելյան ամեն մի ուրիշ տիրապետություն, — գրում է նա, — անհամատեղելի է կապիտալիստական իրավակարգի հետ։ Հավելյալ արժեքի ստացումը ոչնչով ապահովված չէ սատրապ-

⁵¹ Նույն տեղում, էջ 842։

ների և փաշաների դիշատիչ ձեռքերում: Չկա բուրժուական շահույթի հիմնական պայմանը — վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը⁵²: Առևտրի ծավալմանը կաշկանդում էր ֆեոդալական մաքսային սխտեմը, չափ ու կշիռների անորոշությունն ու բազմազանությունը: Ֆեոդալիզմի փակ բնատնտեսության պայմաններում, շուկա դուրս բերելու համար գյուղացին բավականաչափ ավելցուկ չուներ, իսկ այն աննշան միջերժեքները, որ նա վաճառքի էր հանում՝ կատարում էր որոշ դրամական հարկեր վճարելու հարկադրանքից դրդված:

Իբրև առանձին խանությունների մասնատված ֆեոդալական պետություն, Պարսկաստանում գոյություն չունեին միասնական մաքսային սխտեմ, յուրաքանչյուր խանություն ուներ իր մաքսային ցանկապատերը: Արտաքին առևտրից մաքս էր վերցվում և ընդհանուր համապետական մաքսաշտարով, և առանձին խանությունների շրջանակներում, որոնց վրայով կատարվում էր առևտուրը: Երևանի և Նախիջևանի խաները մաքսային գանձումներ էին կատարում նույնիսկ մանրածախ առևտրից: Երևանի ապրանքներով խանության մահալները ճանապարհվող շարչիները «պարտավոր էին տոմսի համար դարողացին տալու չորսական», իսկ «առանձին ապրանքի» երկուական շահի⁵³: Մանրածախ առևտրով զբաղվող շարչիներից «տոմսի համար» գանձվող այս տուրքը փաստորեն մաքս էր՝ խանության մահալներում առևտուր կատարելու համար:

Երևանի սարգարը ներքին առևտրի հարկադրումից մեծ եկամուտներ էր ստանում: Պետական քարվանսարանները, խանութներն ու կրպակները նա տալիս էր մենավարձով: Խանական մենաշնորհ սահմանելով մի շարք ապրանքների վրա՝ սարգարը դրանով իսկ տնտեսական կերպով խափանում էր ներքին առևտրի ազատ զարգացումը: Սարգարի հատուկ

⁵² К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том XVI, ч. II, էջ 22:

⁵³ Տե՛ս Н. Шопен, նշված աշխ., էջ 986:

կարգադրության համաձայն ամբողջ խանության բամբակն ու չալթուկը՝ որոշված ցածր գներով հոսում էին խանության շտեմարանները: Ինչպես դրանք, այնպես էլ հարկերի ու տուրքերի ձեռով ստացվածները, սարդարը վաճառականների միջոցով ուղարկում էր Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի շուկաները: Լրացուցիչ մի քանի տեղեկություններից լեմանում ենք նաև, որ սարդարը խանական շտեմարաններում կուտակած ասրանքները բարձր գներով վաճառելու համար նույն կարգի ասրանքների վաճառքը կամ միանգամայն արգելում էր, կամ խափանում՝ զանազան պատրվակներով: Նրանի վաճառականները հարկադրված պետք է սպասեին այնքան ժամանակ, քանի դեռ սարդարը չէր վաճառել «յուր բաժինը»: Նա նեղում էր «ոչ միայն ներքին, այլև արտաքին առևտուրը»⁵⁴:

Պարսկական տիրապետության ներքո հայ ժողովրդի, մասնավորապես առևտրական դասի, կյանքի ու կայքի անապահովությունն իր արտահայտությունն է գտել նույնիսկ քաղաքների ճարտարապետության մեջ: Սարդարի, բազում տիպոգրաֆոր ու ժառանգական խանների ու բեկերի մոտիկությունից վտանգված հայ առևտրականները ներքին կահավորմամբ ու զարդարանքներով փալլոդ իրենց տներին տալիս էին վանող արտաքին տեսք, ջանում էին, որքան հնարավոր է աննկատ դարձնել բնակարանը՝ իբրև մուտք թողնելով պարտեզի կողմից բացվող ցածր ու նեղլիկ մի դռնակ⁵⁵: Քաղաքացիական ազատությունը ամենուրեք ասպահովված չէր օրենքով⁵⁶: Հայ առևտրականները ենթարկվում էին պարսիկ մաքսանենդների խարհությունը և շարունակ վնասներ կրում:

Այսպիսով, բնատնտեսության և թույլ զարգացած արդյունադործության առկայությունը մի կողմից, աշխատողի անձի ու կայքի անապահովությունը մյուս կողմից, պայմաններ

⁵⁴ А. С. Грибоседов, ПСС, том I, СПб., 1889, էջ 42:

⁵⁵ Տե՛ս И. Шопен, նշված աշխ., էջ 893:

⁵⁶ Տե՛ս С. Глинка, Описание переселения армян Азербайджанских в пределы России, М., 1831, էջ 13:

չէին ապահովում երկրում ներքին շուկայի ստեղծման համար: Տակաւիին առկա չէին առևտրավաշխառուական կապիտալը արդշունարերականի վերածելու նպաստաբեր պայմաններ: Ապրուստի անապահովության բացակայութիւնը ավելի նպատակահարմար էր դարձնում ազատ կապիտալը տրամադրել հողային սեփականութիւններ ձեռք բերելու և կամ բնակչութիւնից գանձվող հարկերն ու տուրքերը կապալով տալու համար: Ոչ ոք չէր մտահոգւում երկրի բարեկարգման համար: Երևանի խանութիան ավերված ու ամայի գլուղերը մահմեդական փախստականներով ու թափառաշրջիկներով բնակեցնելու և նրանց տնտեսապէս «օժանդակելու» վերջին սարգարի ձեռնարկումները (նա քոչվորներին ու թափառաշրջիկներին սերմացու, անասուններ և արօրներ էր տալիս) բնավ չէր բխում երկրի կյանքի բարգաւաճումն ապահովելու հողսից, այլ այն հաշվառումից, որ դրանով այլափոխեր երկրի էթնիկական վիճակը և «հոգատարութեան» փոխարեն ստանար ողջ բերքի կեսը⁵⁷:

Երկրի տնտեսական կյանքի անկմանը և ժողովրդի սոցիալական ու ազգային ծանր կացութեանը ուղեկից էր նրա մտավոր անկումը: Մի աշխարհ, ուր ամենքի գլխին սուրն էր շողում, ուր մարդն ապահով չէր վաղվա համար և ամենքը տարված էին իրենց ֆիզիկական գոյութիւնը պահպանելու գերագույն հոգսով, բնական է, որ հոգեւոր կյանքն էլ ամլութեան դատադարտվեր: Հայ ժողովուրդը զրկված էր մշակութային հարուստ ժառանգութիւնը պահպանելու ու վարպահելու տարրական հնարավորութիւններից: Ճարտարապետական կոթողների կիսաքանդ ու ավերված մնացորդների վրա թափալորող ստրկութեան խուլ լռութիւնը լցնում էր ճանապարհորդների հոգին տխրութեամբ: Քարերից ավելի ողբալի վիճակի մեջ էին մարդիկ՝ «կենդանի ավերակները»: Արդարեւ, ով կարող էր առանց կաշեկցանքի նայել այդ ճնշված ժողովրդի վրա, երբ ահ ու դողը սրտներում վազում

57 Տե՛ս Ի. Մոսէս, նշված աշխ., էջ 988:

էին իրենց խրճիթները՝ վախենալով նույնիսկ անցնող ճանապարհորդներից: Եւ այս բոլորը կատարւում էր մի երկրում, ուր քարերն անգամ պատմում էին նախնիների ստեղծագործ և բարձր մշակույթի մասին:

Արեւելյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքներ Երևանն ու Նախիջևանը ոչնչով չէին տարբերւում հետամնաց Պարսկաստանի պրովինցիալ մյուս կենտրոններից: Նրանք ամբողջովին սահմանափակւում էին ոչինչ չասող ճարտարապետական մի քանի կառուցանքներով, մզկիթներին ու եկեղեցիներին կից ողորմելի դպրոցներով:

Պատմական իրողութիւնն է, որ հայ մշակույթի և ընդհանրապես լուսավորութեան կենտրոնները հնում եղել են վանքերը, եթէ չասենք բացառապես, բայց գոնէ հաճախ: Հայ դպրոցական գործը առաջ են մղել ժամանակի գիտուն վանականները, որոնք վանքերում ու եկեղեցիներում, իրենց խցերի մենութեան մեջ վառ են պահել միջնադարյան գիտութեան կանթիլը: Պարսից տիրապետութեան շրջանում գիտութեան այդ աղբյուրների մեծ մասը բոլորովին ցամաքել, խոպան էին դարձել: Նույնիսկ աննախանձելի վիճակում էր գտնւում և կանոնավոր չէր գործում էջմիածնում 1813 թվականին Ն. Աշտարակեցու ջանքերով վերաբացւած ժառանգավորաց փոքրիկ դպրոցը, ուր սովորողների թիւը երեք տասնյակի հասնում էր հասնում: Այս շրջանին վերաբերող գրավոր աղբյուրները շատ մոայլ գույներով են նկարագրում ժամանակի բարձր ու ստորին հոգևորականներին: Սրանք շատ աննշան չափով էին տարբերւում անգրագիտութեան ու նախապաշարումների մեջ խաբսափող ժողովրդական դանգվածներից: Զկար այլևս այն գրասիրութիւնը, որ հատուկ էր հայ հին հոգևորականներին, որոնց ձեռքում էր կենտրոնացւած գրականութիւնը և որոնք ինքնուրույն ու թարգմանական երկերով ճոխացնում էին հայրենի դպրութիւնը: Կղերի մեծ մասը ընկղմւած էր խոր տգիտութեան մեջ: «Գրի սեն ու սպիտակը,— գրում է Աբովյանը,— ավետարան կարթալիս՝ հազար անգամ՝ յա-չեշմակը դղում, յա տիրացւի,

մղղսու վրա բարեկամում, յա գրակալը դռշեներին քաշում, յա
զլուվա, երես գրքի միջումը կորցնում, մեկ պատիկ մոմ էլ ձեռ-
ներն առնոմ, յա մոնթի գլխին խփում՝ որ մոմը դուռ բռնի:
Շատ անգամ էլ որդիաց որդի մեկ փիս, անմարս, դժվար-
ատամ, գլուխ կտրող քառ էլ որ չէր ռաստ գալիս, հենց գիտես՝
թե սատանի թամբը կորալ, շատ կռանալուցը, մոմը մոտ բռ-
նելուցը, յա գիրքն էր էրվում, յա նրա միրուքը»⁵⁸:

Ամերիկյան միսիոներներն Սմիտն ու Դուայտը Երևանի
խանության հայկական գյուղերից մեկում դժվարությամբ են
կարողանում բացատրել, թե իրենք որտեղից են եկել, որով-
հետեւ «չնայած այստեղ լսել են նոր Աշխարհի գոյության
մասին, բայց ոչ մի աննշան պատկերացում իսկ չունեն այդ
երկրի, անգամ նրա տեղի մասին: Նրանք կարծում էին, թե
Ամերիկան գտնվում է Կոստանդնուպոլսին մոտ ինչ որ մի
տեղ, որքանով Կոստանդնուպոլիսը՝ նրանց աշխարհագրական
պատկերացմամբ, ամենահեռավոր կետն է. և չգիտեին, այն
քրիստոնեաներով, մահմեդականներով, թե՞ հեթանոսներով
է բնակեցված»⁵⁹: Միսիոներների այն հարցին, թե ինչու
նախիջևանում դպրոցներ չկան ու անսահման ցածր է բնակիչ-
ների մտավոր վիճակը, քահանան պատասխանում է՝ որով-
հետեւ իրենք «մինչև վերջերս պարսկական տիրապետության
տակ» էին⁶⁰: Իսկ պարսկական տիրապետության ժամանակ
Շոպենի վկայությամբ՝ «չի կարելի ենթադրել, թե բոլոր սո-
վորողների ընդհանուր թիվը մարդում (հայկական—Ն. Ս.)
անցներ 1000 հոգուց»⁶¹:

Պարսկական տիրապետության ներքո հեծծող հայ ժողո-
վրդի դպրոցական գործի համար շատ բնորոշ է մի խումբ
հայ անվանի մարդկանց 1828 թվականի օգոստոսի 28-ի

58 Խ. Արուվյան, ելժ, հտ. 111, Երևան, 1948, էջ 10—11:

59 E. Smith and H. Dwiglet, *Missionary Researches in Armenia*.
London, 1834, էջ 109—110:

60 Նույն տեղում, էջ 259:

61 Տե՛ս H. Woner, նշված աշխ., էջ 902—903:

դիմումը էջմիածնի կաթողիկոսին⁶²։ Դիմումի հեղինակները գրում էին, թե քանի իրենք պարսից տիրապետության տակ էին, բացի ինքնապահությանից՝ ուրիշ հոգս չեն ունեցել, որի պատճառով «...մանկունք մեր մինչ ցալսօր անկիրթ են մնացել և զուրկ ուսմանց աստուծայնոյ և բազաքական օրինաց»։ Այժմ, շարունակում են նրանք, ուսական տիրապետության ներքո պայմանները փոխվել են և հնարավորություն կա մտածելու ազգի և նրա մանուկների կրթության մասին։ Երևանի հայ վերնախավի ներկայացուցիչները խնդրում էին կաթողիկոսից մի վարժապետ ուղարկել իրենց մանուկներին կրթելու համար։ Փաստը ինքյան ուշագրավ է։ Եթե խանության կենտրոնի հայ վերնախավի «մանկունք անկիրթ են մնացել», ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ վիճակում է եղել ներքնախավերի մանկանց կրթական վիճակը։

Հայ ժողովրդի մշակութային ոգորումն ընթանում էր ծանր ու մեկուսացված պայմաններում։ Եթե եվրոպական մի շարք ժողովուրդներ արդեն կատարել, իսկ ոմանք էլ խորհրդածում էին բուրժուական հեղափոխությունների ու արդյունաբերական հեղաշրջումների մասին, ապա հայ ժողովուրդը ճիգեր էր կատարում իր գոյության իրավունքը դուրս կորզելու պարսկա-թուրքական բարբարոսության կառնադիմացին։

«Եթե հայ ժողովուրդը կարողանար իր սեփական ուժերով ազատագրվել պարսկական ու թուրքական լծից և ստեղծեր իր ազգային ինքնուրույն պետականությունը, — իրավացիորեն նկատում է Զ. Դրիգորյանը, — անշուշտ այդ իր ժամանակի համար կլիներ հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցի լուծման լավագույն միջոցը։ Սակայն պատմական կոնկրետ իրադրությունը դասավորվել էր այնպես, որ հայ ժողովուրդը չէր կարող իր սեփական ուժերով հասնել հաղթանակի և վերականգնել իր պետական անկախությունը»⁶³։

62 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիման, Թղթ. 50, վավ. 61։

63 Զ. Դրիգորյան, Հայ և ուրա ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1969, էջ 8—9։

Իսկ ո՞րն էր այն ուժը, որ կարողանար իրական օգնության ձեռք մեկնեք բազմատանջ հայ ժողովրդին:

(Մինչև ռուսական կողմնորոշման երևան գալը Հայաստանում իշխում էր այն մտայնությունը, թե հայերն իրենց ստրկական կացությունից դուրս կգան կաթոլիկ Եվրոպայի միջոցով: Միջնադարյան Հայաստանի ազատագրական գաղափարախոսության պատմությունը մինչև 18-րդ դարի սկիզբը գերազանցապես կրում էր պատրանքաշատ այդ մտայնության կնիքը: Որ հայերի ռուսական կողմնորոշումը գործնական ու բանուկ ուղիների վրա դրվեց հենց այդ հարյուրամյակի նախաշեմին՝ որոշակի արտահայտություն է գտել և մինչհեղափոխական հայ պատմագրության էջերում: «Հայերը Ռուսաստանի հետ հաղորդակցություններ ունեին դեռ ժ՛ր դարից առաջ, բայց այս հարաբերությունները միմիայն առևտրական էին: Ամենից առաջ Պետրոս Մեծը ուշադրություն դարձրեց հայերի վրա. նա հասկացավ, որ հայոց ազգի ձեռքով կարելի է ռուսաց իշխանությունը Անդրկովկասում հաստատել»⁶⁴: Այստեղ գերազնահատված է հայերի դերը և թյուր կարծիք վերագրված Պետրոսին, որովհետև դրանից զատ՝ Ռուսաստանը Անդրկովկասի նկատմամբ բռնել էր գործուն «քաղաքականության ուղին և պատրաստ էր օգտագործել առաջին պատեհ հնարավորությունը Սև և Կասպից ծովերի նկատմամբ իր հետամտած նպատակները ղենքի միջոցով իրականացնելու համար»⁶⁵.)

Հայ ազատագրական շարժման գործիչները այն համոզմունքն ունեին արդեն, որ միայն Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ քաղաքականապես բզկտված հայ ժողովուրդը կարող է թոթափել օտարի լուծը:]

Հարկավ, Ֆեոդալական-ձորատափրական հարաբերություններ էր իշխում նաև Ռուսաստանում, բայց ի տարբերու-

64 Ալ. Երիցյան, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի Անդրկովկասում արած տիրապետության մեջ, «Փորձ», 1877—1878, № 2, էջ 390:

65 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 493:

Թյուն Թուրքիայի և Պարսկաստանի, այստեղ ֆեոդալիզմի ընդերքում զարգանում էին նոր արտադրողական ուժեր, որոնք նախապայման պիտի դառնային նոր, առաջավոր արտադրահարաբերությունների առաջացման ու զարգացման համար:

Արդեն այդ պահին Ռուսաստանն իր կուլտուրայի զարգացման մակարդակով անհամեմատ բարձր էր Արևելքի մահմեդական աշխարհից: Նա պատռել էր միջնադարյան սահմանափակությունների վարագույրը և անհրաժեշտ նախադրությաններ էր ստեղծում ռուսական ազգային մշակույթի և գիտության գալիք առաջընթացի համար: Ռուսական պետությունն ստիպված էր ամրակայման և զարգացման այն շրջանը, երբ գնալով ալեկի էր հղորանում կայսրությունը՝ իր հաստատուկայուն օրենքներով: Իր ռազմական հզորությամբ նա ձեռք էր բերել միջազգային լայն ճանաչում:

Ռուսական ղեկի աջակցությամբ հետ կապելով հայ ժողովրդի ազատագրության գործը, հայ ազատագրական շարժման գործիչները ելնում էին նաև Անգրկուլկասի՝ Ռուսաստանին սահմանակից լինելու իրողությունից: Նրանք գտնում էին, որ այդ հանգամանքը ալեկի դյուրին պիտի դարձներ ռուս և հայ ժողովուրդների տնտեսական, մշակութային և ռազմական կապերի բազմակողմանի կոնտակտների զարգացումը:

Ահա սրանք էին այն պատճառները, որի հետևանքով արևելյան բռնատիրության դեմ իր ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի գործիչները հանձին Ռուսաստանի տեսան այն իրական ուժը, որի ռազմական գործունե աջակցությամբ ժողովուրդը պիտի վերականգնի իր քաղաքական ինքնուրույնությունը կամ ձեռք բերեր ինքնավարությունը:

Սակայն ամբողջ մի հարյուրամյակ, Ռուսաստանի համար ստեղծված միջազգային անբարենպաստ հանգամանքների շնորհիվ, Ռուսաստանը չկարողացավ իրականացնել դեպի հարավ առաջխաղացման իր նկրտումները, հետևաբար և անկատար էին մնում հայերի փափագած ակնկալությունները:

Ռուսաստանի կառավարող շրջանների հետաքրքրու-

Թյունները ինչպես ողջ Անդրկովկասի, այնպես էլ նրա մաս
 կազմող Արևելյան Հայաստանի նկատմամբ առավել ուժե-
 ղացալ 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին՝ Դա-
 հեստանք էր ամենից առաջ այն բանի, որ անհամեմատ
 հզորացած ռուսական կայսրությունը տերիտորիալ ընդար-
 ձակման կենսական պահանջ էր զգում։ Հայտնի է, որ հլննելով
 երկրի ռազմա-քաղաքական շահերից, դեպի հարավ առաջ-
 խաղացող ռուսական ցարիզմը պետրոսյան և եկատերինյան
 շրջաններում, երբ ձգտում էր իր ազդեցության ոլորտի մեջ
 ներգրավել Անդրկովկասը, ինչպես առատության եղջյուրից՝
 քաղաքական հորդառատ խոստումներ էր տալիս հայերին։
 Պատմական նոր պայմաններում նա հետամուտ էր Անդր-
 կովկասը ամբողջովին միացնել Ռուսաստանին և իրեն թըշ-
 նամի պետությունների՝ Թուրքիայի ու Պարսկաստանի հետ
 հարավում ունենալ հաստատ ու ամուր պետական սահմանա-
 գիծ՝ բնակեցված Ռուսաստանի նկատմամբ բարյացակամո-
 րեն տրամադրված քրիստոնյա ժողովուրդներով։ Մասնավո-
 րապես ցարիզմը մազաչափ իսկ կասկած չունեւ հայերի
 բարյացակամությանը, ուստի նա այժմ քաղաքական խոս-
 տումների շէր դիմում՝ հայերին իր գործակիցը դարձնելու
 միտումով։ Նախորդ պատմաշրջանում նա այնքան էր վարժ-
 վել ցարական զորքերի հաջողության համար ամեն ինչ զո-
 հելու հայերի պատրաստակամությանը, որ այլևս կարիք չէր
 զգում անհարկի քաղաքական խոստումների տակ մտնելու։
 Հավագույն դեպքում՝ նա խոստանում էր անձնապես վարձա-
 տրել ռուսական զինվորականությանը աջակցող հայ երեւե-
 լիներին, մասնավորապես հոգևորականությանը՝ էջմիածնի
 Ամենայն Հայոց կաթողիկոսին և միաբանությանը։ Ռուսաս-
 տանի հետաքրքրությունը հայ եկեղեցու վիճակով զնալով
 ավելի ու ավելի գործուն բնավորություն է ստանում, իսկ
 մահմեդական հսկայական զանգվածի մեջ խրված մի բուռն
 ժողովրդի նկատմամբ վստահությունը կորցրած հայ հոգևոր
 դասի ճնշող մեծամասնությունը տակավին շարունակում էր
 ունկնդրել պատմության փոխկանչի ձայնին, հավատարիմ

մնալ անցյալի հայ գործիչների քաղաքական ուղեգծին՝ ցարիզմի «ազատագրական միսիայի» հետ ըծորդելով ամբողջ հայ ժողովրդի ազգային-քաղաքական բազմաճյուղերը: Բացառապես այս հոդի վրա էր հենց, որ անցյալ դարի սկզբներին, զուցե և հայ հոգեւորականութեան կամբից անկախ, կաթողիկոսութեանը դարձել էր դիվանագիտական միառամների, խաղերի ու շահագործման առարկա: Ռուսաստանն այլևս չէր բավականանում բանակցութեաններով, խորհուրդներով, խռատումներով ու առաջարկներով, այլ ձգտում էր հայ եկեղեցին լիովին կապել իր քաղաքականութեան հետ: Սա հովանավորում ու խրախուսում էր ակտիվ ու գործունյա կաթողիկոսներին, և ընդհակառակը գործադրում բոլոր միջոցները՝ մի կողմ վանկու թուլիսին ու իր քաղաքականութեան անհամակիրներին: Այսպես, երբ 1799 թ. վախճանվեց Ղուկաս կաթողիկոսը և Կոստանդնուպոլսի պատրիարք Դանիելը ընտրվեց նրա տեղը, ապա վերջինիս չհաջողվեց անմիջապես դա՛հ բարձրանալ, քանզի Ռուսաստանի համար նա ցանկալի թեկնածու չէր: Ռուսաստանը կարողացավ Կ.Պոլսի իր դեսպանի միջոցով Դանիելին արքայադուրս և առաջ քաշել ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղուիսյանի թեկնածութունը, որի մահը միայն խանգարեց նրան կաթողիկոս օծվել: Նրա մահից հետո կաթողիկոսական դավադանը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև դարձավ քաղաքական սուր պայքարի առարկա: Հովսեփի մահվան լուրը ստանալուց հետո էջմիածնի միաբանութեանը շտապեց կաթողիկոս ընտրել արքեպիսկոպոս Դավթին: Սակայն նրա հակառակորդները հին Բագրևանդի Ուշ-Քիլիսա վանքում կաթողիկոս օծեցին Դանիել արքեպիսկոպոսին: Այսպես սկսվեց էջմիածնի կաթողիկոսական աթոռի համար այն երկարատև դավադանակութիւնը, որ պատմութեան մեջ հայտնի է «Դավթի-Դանիելյան» պայքար անունով⁶⁶:

⁶⁶ Տե՛ս Մատենագրարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 18, վավ. 192—193:

Ռուսաստանը, Պարսկաստանն ու Թուրքիան Դավիթ-Դանիելյան հակամարտը օգտագործում էին իրենց քաղաքական նպատակների համար։ Նրանցից ամեն մեկը ջանում էր կաթողիկոս ճանաչել իրեն հարմար թեկնածուին, որպեսզի այդ եղանակով ամրապնդի իր ազդեցությունն ու տիրապետությունը Հայաստանի ու հայ ժողովրդի վրա։

Ռուսաստանը սկզբում պաշտպանում էր Դավիթի թեկնածությունը, սակայն տեսնելով, որ իր դիրքերն ամրացնելու համար ստորաքաղաքություն է անում Երեւանի խանի առաջ և առհասարակ զրսեւորում է պարսկական օրիննտացիա, շուտով թերվեց Դանիելի կողմը։ Դավիթ-Դանիելյան պայքարին վերջ տվեց ռուս-պարսկական առաջին պատերազմը, երբ ի վերջո կաթողիկոսական աթոռի վրա բազմեց ռուսական օրիննտացիա դավանող Դանիելը։ Դրանից հետո հայ եկեղեցին բացարձակ վարում էր ռուսական օրիննտացիա, իսկ ռուսական քաղաքականության կողմն էր հայ հոգեւորականության բացարձակ մեծամասնությունը։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ Ռուսաստանն ավելի հզոր պետություն էր, այլև այն, որ Պարսկաստանից հիասթափված հայ հոգեւորականությունը Ռուսաստանի հետ որոշ քաղաքական հեռանկարներ էր կապում։

1801 թվականին Վրաստանի միացումը Ռուսաստանին էլ ավելի սրեց ռուս-պարսկական հարաբերությունները։ Պարսկաստանը ոչ միայն չէր հաշտվում Անդրկովկասում ռուսական տիրապետության տարածման մտքի հետ, այլև ձգտում էր Վրաստանից դուրս մղել ռուսներին։

Ռուս-պարսկական հակամարտությունն Անդրկովկասում պատճառ դարձավ, որպեսզի Պարսկաստանն ուժեղ դաշնակից որոնե՛ր՝ ըստ ամենայնի հակադրվելու Ռուսաստանին։ Այդ դաշնակիցը պետք է կարողանար հրկու ուղղությամբ օժանդակել Պարսկաստանին, նախ՝ տնտեսապես, որն անհրաժեշտ էր գալիք ռուս-պարսկական ղինաբախման հետ կապված ծախսերը հոգալու համար, երկրորդ՝ ղենքով ու ռազմական կազրերով համարելու և մարզելու պարսկական բանակը։

Պարսկաստանի տերերին այդպիսի ծառայություն կարող էին մատուցել միայն եվրոպական տերությունները, որոնց միջամտությունը Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում Պարսկաստանի ներքին գործերին առավել ուժեղացավ 18-րդ դարի վերջերից, երբ ավատատիրության փլատակների վրա բարձրացած ֆրանսիական բուրժուազիան լուրջ հայտ էր ներկայացրել դառնալու «ծովերի թագուհու» մրցակիցը, իսկ վերջինս իր հզոր արդյունաբերության ու ընդարձակածավայ գաղութային քաղաքականության վրա հենված՝ հակայական ծովային ու ցամաքային ուժեր էր առաջ նետում՝ կասեցնելու ֆրանսիական բուրժուազիայի գաղութային նկրտումները։ Նրանցից ամեն մեկը ձգտում էր քաղաքական ազդեցություն ձեռք բերել նաև Պարսկաստանում։ Ուրեմն, կարելի է ասել, որ Անդրկովկասի լրիվ գրավման Ռուսաստանի ձգտումը և այն իր տիրապետության տակ պահելու (ինչպես նաև Վրաստանի հետգրավման) Պարսկաստանի սլանները չպետք է դիտել միայն ռուս-պարսկական տեսանկյունից։ Զգտելով նվաճել Հյուսիսային Աֆրիկայի ծովահայաց երկրները, Ֆրանսիան միաժամանակ հետամուտ էր իր խնամակալության ոլորտի մեջ ներքաշել Պարսկաստանը, այստեղից հարվածի տակ առնելու Հնդկաստանը՝ «անգլիական թուղի մարգարիտը»։ Բայց Ռուսաստանն արդեն տիրել էր Կովկասի գրեթե ամբողջ տարածքին և հաստատակամորեն որոշել տիրանալ Անդրկովկասին ու իր սահմանները տարածել առնվազն մինչև Արաքսի ժայռուտները։ Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, Նապոլեոնը ձգտում էր թուրք-պարսկական սմուր դաշինք ստեղծել Ռուսաստանի և Անգլիայի դեմ։ Ֆրանսիական դիվանագետները հավաստիացնում էին սուլթանին, որ Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում Ֆրանսիան համակողմանի օգնություն ցույց կտա թուրք-պարսկական բանակներին։

Տակավին 1795 թվականին Պարսկաստան եկան ֆրանսիական զործակալներ Օլիվիեն և Բրյուսերը, որոնք բաղձալիվ ալլ ձեռնարկների հետ միասին նվազ դեր չկատարեցին

օգնելու արյունարբու Աղա Մահմեդ խանին՝ խափանելու Անգրկովկասը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ Ռուսաստանի ջանքերը⁶⁷։ Անգլիան ևս ամեն ինչ անում էր Պարսկաստանն իր ազդեցության տակ առնելու համար։ 1800 թվականի նոյեմբերին պարսից կառավարության հետ բանակցություններ վարելու համար Թեհրան ժամանեց անգլիական միսիան՝ Մալկոլմի գլխավորությամբ։ Բանակցություններն ավարտվեցին 1801 թվականի հունվարին, Անգլիայի ու Պարսկաստանի միջև քաղաքական ու առևտրական դաշնակցային պայմանագրի ստորագրմամբ։

«Ժամանակագրական քաղվածքների Հնդկաստանի պատմության վերաբերյալ» իր աշխատության մեջ Կ. Մարքսը այդ պայմանագրի մասին գրում է. «Նապոլեոնը ինտրիգներ էր վարում նաև Արևելքում։ Կալկաթայի «չարչիները» դողում են Ֆրանսիա, Պարսկաստան, Աղվանստան կոմբինացիայի հանդեպ։ Դրանով է բացատրվում կապիտան Մալկոլմի գլխավորությամբ Պարսկաստան դեսպանության ուղարկելը, (դա) չափազանց շատ փող նստեց, նա «գնում է» ամեն ինչ «սկսած շահից մինչև ուղտապանը»։ Նա հաջողացրեց Թեհրանում կնքել հետևյալ պայմանագիրը՝ պարսկական շահը Պարսկաստանից արտաքսում է բոլոր ֆրանսիացիներին, դադարեցնում է ամեն տեսակ հարձակումները Հնդկաստանի վրա և անհրաժեշտության դեպքում արգելք է հանդիսանում այդպիսի հարձակումներին գնքի ուժով. օտարերկրյա առևտրում հովանավորություն է ապահովում բացառապես անգլիացիներին»⁶⁸։

Ֆրանսիան իր հերթին 1802 թվականից սկսած ուժեղացնում է իր գործակալների աշխատանքը Պարսկաստանում, որպեսզի չեղյալ դարձնի 1801 թվականի անգլո-պարսկական պայմանագիրը և նրան օգտագործի ինչպես Անգլիայի, այն-

67 См. А. Р. Иоаннисян, Борьба Англии и Франции против присоединения Армении к России, *ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտութ.)*, 1953, № 3, էջ 49—50։

68 К. Маркс, Хронологические выписки по истории Индии, М., 1947, էջ 105։

պէս էլ Ռուսաստանի դեմ: 1804 թվականի մայիսի 4-ին ստորագրված Ֆրանս-պարսկական դաշնագրով Նապոլեոնը «երաշխափորում» էր Պարսկաստանի տերիտորիալ անձեռնմխելիությունը գոյություն ունեցող սահմաններում, խոստանում էր ամեն կերպ աջակցել ուսաներին Վրաստանից դուրս մղելու Պարսկաստանի ջանքերին: Բանակը ժամանակակից տեխնիկայի կանոններով վերազինելու համար Պարսկաստանը ստանում էր բավարար բանակութեամբ թնդանոթներ, հրետանավորներ և ռազմական այլ կարգի մասնագետներ: Իբրև փոխհատուցում, Պարսկաստանը պետք է խզեր ամեն կարգի բազաքական ու առևտրական կապերը Անգլիայի հետ, թույլ չտար անգլիական նավերի մուտքը պարսկական նավահանգիստները և արգելեր անգլիական ապրանքների մուտքը պարսկական շուկաները: Պայմանագրի ստորագրումից քիչ անց Պարսկաստան եկան ֆրանսիական մի խումբ սպաներ, որոնք մասնակցություն ունեցան անգամ Երևանի բերդում նոր ամրությունների կառուցման աշխատանքներին⁶⁹:

Շահական կառավարությունը ոգեշնչված մերթ Անգլիայի, մերթ Ֆրանսիայի խոստումնաշատ հուսադրումներից՝ տենդորեն նախապատրաստվում էր արշավանք սկսելու դեպի Վրաստան: Այն ժամանակվա Պարսկաստանի շահ Ֆաթ-Ալին ծրագրել էր այդ արշավանքի ժամանակ թագաժառանգ Աբբաս Միրզայի հրամանատարութեամբ բանակը շարժել դեպի Երևան, իսկ մյուսը՝ Ղարաբաղ, այն հաշվով, որ երկու բանակները տարբեր ուղղություններով ներխուժեն Վրաստան՝ ուսաներին այնտեղից դուրս վռնդելու համար:

Նուանդուն նախապատրաստություններ էր տեսնում նաև Երևանի Մամադ խանը: Շատ լավ գիտենալով հայերի համադրանքը դեպի ուսաները, պատերազմի նախօրյակին նա Արարատյան դաշտավայրից զանգվածային ձևով հայերին տեղահան էր անում Պարսկաստան և Կարսի փառալուծյան սահմանները:

⁶⁹ Sh'v AKAK, TOM III, էջ 254:

1804 թվականի մայիսին Թիֆլիս է գալիս շահի ներկայացուցիչը, որ Յիցիանովին է հանձնում գլխավոր վեզիր Միրզա-Շեֆիի նամակը, որով նրանից պահանջում է Վրաստանից հեռացնել ռուսական զորքը, այլապես սպառնալով, որ այն կկատարվի զենքի ուժով:

Նման պայմաններում ռուսական հրամանատարությունը որոշում է նախահարձակ լինել և այսպես սկսվում է ռուս-պարսկական առաջին պատերազմը:

Պարսկաստանում Նապոլեոնը հասավ դիվանագիտական ակնառու հաջողությունների: Նրա դիվանագետների թափած ջանքերի հետևանքով 1807 թվականի մայիսին Ֆրանսիայի և Պարսկաստանի միջև կնքվեց Ֆինկենշտեյնի դաշնագիրը: Դաշնագրի երկրորդ հոդվածի համաձայն ֆրանսիական կայսրը կրկին երաշխավորում էր Պարսկաստանի «տերիտորիալ անձեռնմխելիությունը», շահին համարում Վրաստանի օրինական տերը և խոստանում, որ Ֆրանսիան ջանք չի խնայի ստիպելու Ռուսաստանին՝ ետ վերագարձնել Վրաստանը և պարսկական մյուս տերիտորիաները⁷⁰: 1807 թվականի դեկտեմբերի 4-ին Թեհրան ժամանեց գեներալ Գարդանի 150 հոգանոց ղեկավանությունը: Նրան հրահանգված էր վերակազմել պարսկական բանակը, իբրև օժանդակ ֆրանսիական զորամասեր՝ Հնդկաստան արշավելու համար: Սակայն շուտով տեղի ունեցավ Տիլզիտի տեսակցությունը, որի ժամանակ Նապոլեոնն ու Ալեքսանդր Առաջինը համաձայնվեցին Արևելքը բաժանել միմյանց միջև: Տիլզիտը հուսախաբ արեց Ֆաթ-Ալի շահին, քանզի ֆրանս-ռուսական համաձայնությունամբ այլևս անհետանում էր Վրաստանի վերանվաճման համար Ֆրանսիայի օգնության հնարավորությունները: Ակընբախ է, որ Տիլզիտը հակասում էր Ֆինկենշտեյնի ոգուն, այդ է պատճառը, որ գեներալ Գարդանը դժվարին կացության մեջ ընկավ: Ավելին, երբ անգլիական ներկայացուցիչ Հարֆորդ

70 См. О. П. Маркова, Восстание в Кахетии в 1812 г., М., 1951, էջ 264—265:

Ջոնսը ժամանեց Պարսկաստան Գարդանն արդեն վարկաբեկ-ված էր: Եվ երբ Ջոնսը շահին իր կառավարութեան անունից տարեկան 160.000 թուման (120.000 ֆունտ ստեռլինգ) նստատ խոստացավ այնքան ժամանակ, ինչքան Պարսկաստանը պատերազմի մեջ կգտնվի Ռուսաստանի հետ և պարսկական բանակը մարդելու համար անգլիական սպաների ծառայութեանը խոստացավ, Ֆաթ-Ալի շահը անմիջապես գեներալ Գարդանին Պարսկաստանից հեռանալու անձնագիր հանձնեց:

Անգլիայի համար նստատավոր նոր իրադրութեան պայմաններում, 1809 թ. մարտին, ստորագրվեց անգլո-պարսկական պայմանագրի նախնական պայմանները, իսկ վերջնականը՝ 1814 թ. նոյեմբերի 25-ին, Ֆրանսիայի վերջնական պարտութեանից հետո:

Այս նոր պայմանագրով Պարսկաստանը պարտավորվում էր՝ ջնջված համարել այն համաձայնագրերն ու պայմանագրերը, որ նա կնքել էր եվրոպական այն կառավարութեանների հետ, որոնք թշնամի են Անգլիային, արդեւել Անգլիային դիմագիր որեւէ բանակի մուտքը Պարսկաստան, իսկ Հնդկաստանի վրա որեւէ տերութեան հարձակման դեպքում՝ մասնակցել պատերազմին՝ Անգլիայի կողմում: Անգլիան պարտավորվում էր դրամական օգնութեան ցույց տալ (150.000 ֆունտ ստեռլինգ) և աջակցել Պարսկաստանին սպառազինութեամբ, եթե նա ենթարկվեր հարձակման: Դա հուշում էր Պարսկաստանի կառավարողներին, որ հարկավոր է վերանայել ռուս-պարսկական առաջին պատերազմից հետո՝ Պարսկաստանի համար աննպաստ Գյուլիստանի պայմանագիրը, որով Պարսկաստանը Ռուսաստանի սեփականութեանն էր ձանաչել Դաղստանը, Վրաստանը, Մենգրելիան, Իմերեթիան, Գուրիան, Աբխազիան, Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Գերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանութեանները, ինչպես նաև Լոռու, Շամշադինի, Շորագյալի (Շիրակ) գավառները: Հիրավի, չնայած հրապարակի վրա էր Գյուլիստանի դաշնագիրը, բայց մթնոլորտը մինչև 1826 թվականն էլ տոգորված

էր ռազմի շշուկներով, իսկ դրա շիկացման համար հսկայական գործ էր կատարում Անգլիան, որ Պարսկաստանում ֆրանսիական անգլիացու լեւրացումից հետո՝ դարձել էր մահմեդական լծից Արեւելյան Հայաստանի ազատագրման գործում Ռուսաստանին դիմակայող հիմնական ուժը: Տակաւին 1809 թվականի վերջերին Անգրիկովկասի սահմանամերձ շրջաններում, առանձնապէս Կարսում, Երևանում, Գիւլանում գործող անգլիական գործակալները ոչ միայն սահմանն ուժեղացնելու և «ոսկու միջոցով» Վրաստանի հարեաններին ռուսական զորքերի դեմ պատերազմի դրդելուն էին հետամուտ⁷¹, այլև այդ վայրերից իրենց գործունեության ցանցերը տարածում էին ընդհուպ մինչև Վրաստան: Միաժամանակ Անգլիան աչքաթող չէր անում և ֆրանսիացիների կողմից նույն նպատակի համար օգտագործվող Վրաստանի վտարանդիներին, որոնք ժամանակին ապաստան էին գտել Պարսկաստանում: Վրաց արքայազն Ալեքսանդրի միջոցով ջանում էին Թիֆլիսում խռովություն բարձրացնել ռուսական իշխանութիւնների դեմ: Նա մեկը մյուսի հետեից նամակներ ու սուրհանդակներ էր ուղարկում «Հերակլ թագավորի ժառանգներին հավատարիմ մնացած իշխաններին, ազնվականներին, հոգևորականներին ու ժողովրդին» և կոչ էր անում ապրտամբել ռուսների դեմ, չվախենալ նրանցից, քանի որ ինքը «իր հետ ունի Պարսկաստանի, Թուրքիայի և Անգլիայի ուժն ու հարստութիւնը», որոնց վրա հենված շուտով արշավելու և ազատելու է Վրաստանը ռուսական տիրապետութիւնից⁷²:

Պարսկաստանում գործող անգլիական գործակալները գիտենալով հանդերձ հայերի ռուսական օրինատացիայի մասին, այնուամենայնիւ չէին զլանում նրանց իրենց հակառուսական որոգայթների ծուղակը քաշելու ջանքերից: Բնորոշ է, որ երբ 1823 թվականին անգլիական կառավարութեան գործակալ Վուլֆը խնդրեց Ն. Աշտարակեցու աջակցութիւնը հայե-

71 Տե՛ս ԱԿԱԿ, ԿՈՄ IV, էջ 1436:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 191:

րի հետ «մտաւոր» կապեր ստեղծելու համար, վերջինս կտրականապէս մերժեց նրա առաջարկութիւնը: Ազգրեւջանական խաներին ռուսները դեմ ակտիւ ու գործունյա պայքարի հանելու համար անգլիացիներն օգտագործում էին իրենց տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները և հայտնի բոլոր ձեերը, նույնիսկ այնպիսի մոմենտ, ինչպիսին է խաների մահմեդական և ռուսների քրիստոնյա լինելու հանգամանքը: Նման հակառուսական պրոպագանդի օրինակ կարող է ծառայել Հարֆորդ Զոնսի գրութիւններից մեկը՝ ուղղված ռուսական օրիենտացիա ունեցող թալիշցի Մուստաֆա խանին: «Դուք պարսիկներ եք, մահմեդական կրօնի հետևողներ և սերված եք մարդարեւից, հետևաբար ձեր շահերը չեն կարող համատեղվել ռուսների շահերի հետ, — գրում էր խորամանկ անգլիացին: — Ռուսները կրօնով ձեր մշտական թշնամին են: Դուք ռուսներին դեռ բոլորովին չեք ճանաչում. նրանք այսպիսի մի կանոն ունեն, որտեղ իրենց շահ կա, այնտեղ առաջարկում են իրենց հովանավորութիւնը: Ահաւասիկ ձեզ օրինակ կարող է ծառայել Վրաստանը: Նա Ռուսաստանի հովանավորութեան տակ անցավ: Ռուսաստանն էլ գրկաբաց ընդունեց, խոստացավ իր լծին շենթարկել: Այժմ դուք ինչ եք տեսնում: Ամենուրեք ռուսներ և Հերակլ թաղավորի մայրաքաղաքը ռուսական բանակների գլխավոր հենարանն է դարձել: Եթե դուք այնքան ամուր սիրտ ունեք, որ առանց ցնցումների կարող եք կարգաւ վրայիների պատմութիւնն սկսած ռուսական նվաճումներից մինչև այժմ, ևս ձեզ կուղարկեմ այն նամակների պատճենները, որ ես ստացել եմ վրայիներից:

Այժմ դատեցեք ինքներդ, եթե նրանք իրենց նման քրիստոնյաներին չկարողացան հաճույք պատճառել հանգստանալու պայմանական ժառանգութեան վրա, այդ ինչպէս է, որ դուք, մահմեդական կրօն դավանելով կարող եք հանգրստութիւն հրադել...»⁷³:

Գլխիստանի պայմանագրի կնքումից հետո էլ անգլիա-

⁷³ Տե՛ս ԱԿԱԿ, ԴՈՄ IV, էջ 867:

կան գործակալները ամեն ինչ անում էին անդրկովկասյան խանութխոններում խռովություններ առաջ բերելու Ռուսաստանի դեմ, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պատերազմ բորբոքելու համար։ Անգլիայի անմիջական մասնակցությամբ Պարսկաստանում Ռուսաստանի դեմ «սրբազան պատերազմի» մեծ պատրաստություններ էին տեսնում։ Հատկանշական է, որ անգլիական դեսպանի դրդմամբ պարսկական շահը 1816 թվականին վերջնականապես պահանջեց վերանայել Գյուլիստանի ոլտյմանագիրը։

Կոստանդնուպոլիս ուղարկած շահի հատուկ ներկայացուցիչը առաջարկում էր սուլթանին՝ ուղղական դաշինք կնքել Ռուսաստանի դեմ միացյալ ուժերով կռիվելու համար։ Կցան եղած բրիտանական քաղաքականության կառքին՝ Պարսկաստանի տերերը չկարողացան ճիշտ գնահատել ուժերի հարաբերակցությունը (19-րդ դարի սկզբին Ռուսաստանը իր ռազմատնտեսական ուժերի քանակով գերազանցում էր Բուրբուալին և Պարսկաստանին) և նշմարել երկիրը գեպի նոր պատերազմ տանող իրենց քաղաքական ուղեգծի տխուր հեռավատկերները։

Յարիզմը իր հերթին ձգտում էր ամրապնդվել Ռուսաստանին միացված անդրկովկասյան մարզերում, վարչական ու տնտեսական տեսակետից դրանք լիովին ենթարկել իրեն և պայմաններ ստեղծել Երևանի ու Նախիջևանի խանութխոնները գրավելու համար։ Միաժամանակ նա ջանում էր խանգարել Անգլիայի տնտեսական ու քաղաքական անշեղ աճին Պարսկաստանում։ Ալեքսանդր Առաջինը 1816 թ. հուլիսի 29-ին, հաջորդ տարվա մայիսին, Թեհրան մեկնող երմոլովի դեսպանությունից պահանջում էր, նուրբ զինանազիտությամբ, ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները Անգլիայի ազդեցությունը թուլացնելու և ի վերջո այն իսպառ ոչնչացնելու համար⁷⁴։ Սակայն երմոլովը ի վիճակի չէր այլևս որևէ դրական արդյունքի հասնելու, որովհետև Անգլիան թելադրող

74 *ՏՆՍ ԱԿԱԿ*, TOM IV, 4. II, էջ 125:

դիրք էր գրավում շահի ապարանքում, պարսկական բանակն ու հրետանին ամբողջությամբ գտնվում էր անգլիական սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո⁷⁵։ Անգլիան «վարպետորեն» փակել էր Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև բարի դրացիական հարաբերություններ հաստատելու բոլոր ուղիները։ Հետագա տարիներին ռուս-պարսկական հարաբերությունները ավելի սրվեցին։ Մասնավորապես դեկաբրիստների ապստամբությունից հետո անգլիական զործակալները Պարսկաստանում լուրեր էին տարածել այն մասին, թե «Ռուսաստանում երկպառակտչական պատերազմ է բռնկվել երկու կայսր-եղբայրների միջև...» և որ «Պարսկաստանի համար եկել է ամենանպաստավոր պահը՝ Վրաստան ներխուժելու» և ռուսներին Անդրկովկասից վտարելու համար⁷⁶։ Ռուսաստանն այդ պահին տակավին մտադիր էր խաղաղ բանակցությունների միջոցով կարգավորել ռուս-պարսկական հարաբերությունները։ 1826 թ. փետրվարին Պետերբուրգից Թեհրան մեկնած Նիկոլայ Առաջինի լիազոր-ներկայացուցիչ իշխան Մենշիկովը, որ պաշտոնապես շահին պիտի հայտներ նոր կայսրի գահակալման և Պարսկաստանի հետ խաղաղ դրացիական հարաբերություններ հաստատելու ռուս կառավարության ցանկությունն մասին, Թեհրանում ակնառես եղավ Ռուսաստանի դեմ մոտալուտ պատերազմ սկսելու տենդագին նախապատրաստություններին։ Նա տեսավ, որ ստեղծված կացությունը դիվանագիտական որևէ դրական երաշխիք չի խոստանում իր առաքելությանը, ուստի և բռնեց դեպի հայրենիք վերադարձի ճանապարհը։ Եվ վերադարձի ճանապարհին էլ հենց հայտնի դարձավ, որ հուլիսի 16-ին 60 հազարանոց բանակով Թաղաժառանգ Աբբաս Միրզան ներխուժել է Ղարաբաղ։

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի համար ռուս-պարսկական վերջին պատերազմն էր դա, որ տեղեց քսան

75 Նույն տեղում, էջ 148—149։

76 ՏՆՄ Գեներալ Գավիլդով, Ռազմական հուշեր, Նրևան, 1942, էջ 532։

ամիս և ավարտական վավերացում ստացավ 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենշայի պայմանագրով, մեկընդմիջս վերջ տալով Անդրկովկասում Պարսկաստանի տիրապետությանը: Շահի կառավարությունը առհավետ Ռուսաստանի սեփականություն ճանաչեց ողջ Կովկասը:

Թուրքմենշայի պայմանագրի հոգվածներից հայ ժողովրդի համար հատկապես կենսական նշանակություն ունեցան երկուսը՝ հրրորդը և տասնհինգերորդը:

Ֆաթ-Ալի շահը իր հաջորդների անունից մեկընդմիջս հրաժարվեց Երևանի և Նախիջևանի խանություններից և Օրդուբադի օկրուգից: Պայմանագիրը Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին իրավունք էր տալիս իրենց ընտանիքներով ու շարժական կալքով գաղթել ռուսական տիրապետության շրջանները⁷⁷: Այսպիսով, պարսկական սատրապների և արևմտյան իմպերիալիստական տերությունների ջանքերը՝ պահպանել ու ամրապնդել պարսից բռնատիրությունն Անդրկովկասում, ճնշել հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ անցան ապարդյուն: Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսից արյունարբու տիրապետությունից և արևելահայ ժողովուրդը իր բախտը կապեց Ռուսաստանի և ռուս ժողովրդի մեծ գալիքի հետ⁷⁸:

Նիկոլայ Առաջինը 1828 թվականի մարտի 21-ի հրովարտակով Ռուսաստանին միացված Երևանի ու Նախիջևանի նախկին խանություններից և Օրդուբադի օկրուգից կազմեց «Հայկական մարզ» վարչա-տերիտորիալ նոր միավորը:

77 Տե՛ս «Договоры России с Востоком, политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПб., 1869, էջ 214—222:

78 Տե՛ս Մ. Աղայան, Հայ և ադրեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1961, էջ 58—59:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՍՐ

1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագիրը և Հայկական մարզ ստեղծելու վերաբերյալ մարտի 21-ին Նիկոլայ Առաջինի հրամանագիրը հայ ժողովուրդը դիմալուրեց տոնական խանդավառությամբ: Նշանավոր այդ իրողությունները նոր հովեր մացրին ընթացիկ կյանքի մեջ և խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ժամանակակիցների համար: Մի պահ թվում էր, թե ազգային տեսիլների մեջ ուրվագծվող Հայաստանին փոխարինելու էր գալիս ոեալ, շոշափելի Հայաստանը: Վերջապես իրականանում էր այն, ինչի համար հայ ազատագրական միտքը մաքառել էր դարեր շարունակ: Ժամանակի հայ գործիչները տակավին չէին նշմարում ցարիզմի գաղութային նպատակների և իրենց ակնկալությունների անանց անդունդը: Դեռ Երևանը դրավելուց առաջ՝ հայ ժողովրդին ազատագրական պայքարի ոգեշնչող իր հորդորներով Ներսես Աշտարակեցին ցույց տվեց իր և իր ժամանակակիցների պատրանքները: «Հայտնի է ձեզ, — կարդում ենք նրա կոչերից մեկում, — նաև Ռուսաստանի օգոստոսափառ պետության նպատակը: Նա իր հզոր բազուկը տարածեց մեր հայրենակիցների վրա ոչ այնքան իր սեփական օգտի, որքան մեր անդորրության և բարօրության և Քրիստոսի սուրբ կրոնը և եկեղեցին պաշտպանելու համար:

Այս ճշմարտությունները ակնհայտ են ձեզ... Բազմա-

թիւ բրիտոնյաների զերեւարութիւնը, ծերունիների և նրանց որդիների հոսած արշունը, Թիֆլիսի սուրբ եկեղեցիների հրո ճարակ դառնալը— այս բոլորը առաջ բերեց աստվածապահ Ռուսաց տերութեան սղորմութիւնը և կարեկցութիւնը, և նա, իրեն հատուկ մարգարիտութեամբ, առնելով մեզ իր խաղաղ հովանավորութեան ներքո, ապահովեցրել է ցայսօր որեւէ շարաքախտութիւնից»¹:

Հայաստանի քաղաքական վարդապետն համար ի՞նչ ընթացք էին ականաւում հայ ժողովուրդը և ազատագրական շարժման նրա ղեկավարները նշանավոր դեպքերի՝ ռուս-պարսկական պատերազմական դարձողութիւնների ժամանակ:

Հայ հոգևորականութեան բարձր շրջաններում և ժողովրդի ամենատարբեր ծալքերում տակաւին հօգս չէին ցնդել հայկական անկախ նահանգների, ազատված եկեղեցու, բրիտոնյա հովանավորութեան մասին պետրոսյան և եկատերինյան պատմաշրջաններից եկող հրապուրիչ խոստումները: 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ դարավոր դժոխքը թվում էր վերացված և հայ գործիչներից շատերը իրենց խանդավառ միամտութեան մեջ կարծում էին, թե ցարական զենեքալնների թեքի վրա հայկական ինքնավարութեան գաղափարներն են արշաւում գեպի Պարսկաստան:

Արեւելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից ցնծութիւն առաջ բերեց հայութեան բոլոր հատվածներում, նույնիսկ հնդկահայ գաղութում: Կալկաթայում գումարված բազմամարդ ժողովում Մեսրոպ Թաղիադյանը ճառ էր արտասանում՝ «Ո՞ր վերին իմն զօրութիւն, ազգ ազնիւ, ո՞ր աստուածահրաշ սքանչելիք, կամ որ ներքին մղումն երանութեան շարժեաց զձեզ առհասարակ ի հանդէս հասարակաց խնդութեանս, բայց եթէ անականկալ աւետիք ազատութեան աշ-

¹ Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայր 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 238:

խարհի բնիկ հայրենեաց ձերոց...»: Նա կոչ էր անում ժողովականներին. «Եկայք հիշուք ի Հայաստան, համբուրեացուք զուարճախառն արտասուօք զփրկեալ հող հայրենեաց մերոց...»²:

Հաւաքի մասնակիցները 105 հոգու ստորագրութեամբ նամակ-հանրագիր են ուղարկում Ն. Աշտարակեցուն: Նմանօրինակ իրենց նամակում մաղբասահայեքը գրում են. «Ծրանի՜ է աշաց ձերոց, երանի այնոցիկ որք տեսանեն զգալի տեսանելօք զանկարծահաս զփրկութիւն մերոցս հայրենեաց, զի եթէ միայն ի յիշատակ բերկրականին զուարճանամք մեր այսքան, քանիօ՞ն ապա և ի տեսանելն և ի վայելելն զնա արդեամբ...»³:

«Աչքերդ լույս,— գրում է նա Երևանի աղատագրութեան առթիւ հայրենիք ուղարկած շնորհավորական իր նամակում,— որ մեր քաղցր աշխարքն պարսից դառն շարշարանքիցն ազատվեց, Քրիստոսի տերութեան ներքո ընկաւ: Փառք բարերարին աստծո, որ այսուհետև ավել նեղություն չեք ունենալ, աղատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստութեան լուրն, և արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտի տարածվին:

«Իմ լավ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի որ դուք եք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագավորութեան ժամանակումն էլ չէին պատահել, զերաթեպետ և թագավորությունն յուրյանցն էր, սակայն բարբարոսություն և զուլումն սլակաս չէր: Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղոթս առնեք որ Աստված ամենաողորմած Կայսրն Նիկողայոսի աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուկ, և ամեն թշնամաց վերա հաղթող: Ապա՝ աղաչեցեք, որ նույն Աստվածըն մեր ազգին սեր, միաբանություն տա, երկար կյանք և

2 «Ցուցակ վասն ամի տեառն 1829», տպագրեալ ի գործատան մարդասիրական ճեմարանի, ի Կալկաթա, էջ 24—84:

3 Առ, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 106:

բարի հաջողութուն, որ կարենան ճանաչել թե ինչ է լավն և հետևել նմին»⁴:

Իրենց նամակում Կալկաթայի տարագիր հայերը՝ խնդակցութունից դատ հույս էին հայտնում, որ մեկ-երկու տարի անցնելուց հետո, իրենցից շատերը կտեղափոխվեն Արարատյան երկիր և ազգակիցների հետ միասին կօգտվեն այն արտոնություններից, որից օտար երկրում զրկված են իրենք: Հայերն այլևս հայրենիքից դեղերելու պատճառներ չունեն, քանզի մեծ Ռուսիան նրանց իր գիրկն էր հավաքադրում⁵:

Պատերազմի հենց առաջին տարում ժողովրդական խանդավառության տուրերային հորձանքում ձևավորված հայ կամավորական շարժումը քաղաքական վառ տենչանքների մի արդիականացումը արտահայտություն էր, որ չխամրող պորությունը դարեր շարունակ ապրում էր հայ զանգվածների տմենատարբեր ծալքերում և որոնք պոռթկացին և համակցին ողջ արևելահայությանը: Փուլթ չէր ամենեին, որ Հայաստանի իսկական ազատագրության վաղեմի ծրագիրը խուսնում էր ցարական դիվանների ամուր պահարաններում: Հայ գործիչները շարունակում էին փայտիայել կայուն այն բաղձանքը, թե պարսկահայերի ողբերգական ներկան ռուսական հովանավորության ու խնամակալության շնորհիվ կդառնա երջանիկ ու ապահով: Դարերի մշուշապատ հեռավորությունից եկող հայ ազատագրական լեգենդի մասին գաղափարը 1826 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմի շնորհիվ մարմին էր առել: Իրեն ակնկալություններով ու հույսերով ապրող անդրկովկասյան հայերի քաղաքական առաջնորդ, Աշտարակեցին մարտական հորդորներ էր անում և կոչեր արձակում ժամանակակիցներին, ոգեշնչում նրանց, թե մոռալուտ է հայրենի երկրի գարունը. «Հասալ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազա-

⁴ «Կենսագրութիւն Մեսրոպայ Դաւթեան Թաղիադեանց Երևանցոյ», հավաքեց և խմբագրեց Տ. Հովհաննէս Կ. Մկրյան, Թիֆլիս, 1866, էջ 133:

⁵ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 53, վավ. 320:

տությունը. հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնի իր վաղեմի անկախությունը. ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք Պարսից լուծը, ուրախացրեք ալեգարդ Մասիսին, մի անգամ արշուժով ներկեցեք հայրենի հողերը: ու ապա ապրեցեք ազատ... ժամ է արգեն, օ՛ն անդր... հիմա կամ երբեք»⁶:

Այդ պահին երերուն շէր Աշտարակեցու գործունեության հասարակական պատվանդանը: Անցած ուղու իր վերելքի շրջանում Աշտարակեցին գործեց հավատարմությամբ և ինքնամերժ նվիրումով, նա համաժողովրդական մեծարանքի էր արժանացել՝ իբրև ազատագրական շարժման ճանաչված ղեկավար: «Համաժողովրդական է այն շարժումը,— գրում է Լենինը,— որն արտահայտում է ամբողջ երկրի օրյակտիվ կարիքները... Համաժողովրդական է այն շարժումը, որը պաշտպանվում է բնակչության վիթխարի մեծամասնության համակրանքով»⁷:

Անցյալ դարի 20-ական թվականներին ներսեւ Աշտարակեցին ոչ այնքան մարմնացումն էր անձնական տենչանքի ու ձգտման, որքան խտացումը համաժողովրդական շարժման: Նա արտահայտում էր Երիցյանի բառերով առած՝ «Պարսից դարավոր բռնակալության» դեմ ազդային պատերազմի ելած արեւելահայ ժողովրդի շահերը: Ներսեւի հորդորներով էր, որ «...Կուրի եղերբից մինչև Արաքսի ափերը Հայք՝ հողերաւան և աշխարհական, կին և տղամարդ, մեծ ու փոքր ամենքը աշխատում էին մասնակից լինել այդ կռվին»⁸:

Դեռ այն օրերից մեկում, երբ շարունակվում էին որոտալ թնդանոթային համազարկերը և հաղթականորեն հնչում էին պատերազմի շփոթները, Թավրիզը գրավելուց հետո, ղնդապետ Լազարյանի միջոցով Աշտարակեցին առաջարկներ էր անում Պասկեւիչին՝ Ատրպատականից Արարատյան աշ-

6 Ալ. Երիցյան, նշված աշխ., էջ 268—269:

7 В. И. Ленин, *Հտ.* 22, էջ 283:

8 Ալ. Երիցյան, նշված աշխ., էջ 257:

խարհ՝ հայերի ներգաղթման համար դալիք պայմանադրվե-
մեջ հատուկ հոգւած ներմուծելու մասին: Ուշագրաւ է Լազար-
յանի պատասխանը: Մանրամասնորեն պարզելով իր տեսա-
կետը Հայաստանի սահմաններն ընդարձակելու և այն պարս-
կահայերով ու արևմտահայերով բաղմամարդ դարձնելու
մասին, զնդապետը հայտնում էր, որ այդ տեսակետին իրա-
յեկ է «կացուցել» Պասկեիչին, հաշտության բանակցություն-
ների ժամանակ նկատի ունենալու համար. «Զոր ինչ գրեալ
է իր ինձ վասն սիրելի մեր ալզին և սահմանաց Նրեանու՝ ես
նորին բարձր զերազանցութեան վասն այս խոսեալ եմ, որ
ասաց ինձ թէ՛ միտքն ու դիտաւորութիւնն իւր կայսերական
մեծութեան նոյն է. նա ես ինքն Նորին բարձր զերազանցու-
թիւնն հետեւելոց է այս բանին լաւապէս կատարել: Եւ ես իմոյս
կողմանէ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համա-
բիմ, այն է՝ որ լինիմ օգուտ ալզին մերոյ»⁹:

Հայ գործիչները զեւ պատերազմի եռուն շրջանում, հաղ-
թանակի հանդեպ հաւատ էին ներարկում ժողովրդի ամենա-
յայն զանգվածներին և սուր զնում նրանց ձեռքը՝ մաճի ու
մանգաղի, մուրճի ու համքարական դալզահի, արշինի ու
կշեռքի փոխարեն, իսկ վարդազույն ապագայի հույսերով
ժողովուրդը ամեն ինչ անում էր դուրացնելու ռուս բանակ-
ների հաղթանակը: Ն. Աշտարակեցին հավաստիացնում էր
հայ կամավորներին, թե «...Ռուսիո օգոստափառ ինքնակալի
սզորմած ուշագրությունը պսակներ կհչուան թե՛ ձեզ և թե՛
բոլոր ձեր համազգիներին»¹⁰: Ընդհուպ մինչև ռուս-պարսկա-
կան պատերազմի վերջը՝ իր ձեռն առած Քրիստոսի խաչն ու
ցարի դրոշը, Ներսէսը ռուսական բանակներին ցույց տված իր
ազակցության համար բաղմիցս արժանացաւ ոչ միայն Կով-
կասիայան բարձր հրամանատարության, այլև թագավորի
«համակրանքին ու վստահությանը»: 1827 թ. փետրվարի

⁹ Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 166, վավ. 822:

¹⁰ Ալ. Երիցյան, նշված աշխ., էջ 243:

2-ին, նիկոլայ Առաջինը շնորհակալություն էր հայտնում Ն. Աշտարակեցուն հայ ժողովրդին ցույց տված «եռանդի և անկեղծ հավատարմության» համար և հանձնարարում էր «հայտնել բոլոր հայերին մեր կայսերական բարյացակամությունը և վստահեցնել մեր կայսերական խոսքով, որ ապագայում էլ դեպի նրանց կշարունակվեն մեր առանձին շնորհները: Քանի ռուսական զահի հովանու ներքո ապահով ապաստարան գտած ձեր ժողովրդի հավատարմությունը կմնա անխախտ, մենք պարտք կհամարենք միշտ ձիշտ հող տանել նրա երջանկության և հանգստության մասին»: Ն. Աշտարակեցու և հայ աղատադրական շարժման մյուս գործիչների ռուսական օրիննապիսի Բնավ չէր բխում լոկ ռուսահալատակ դառնալու մարմաջից կամ եկեղեցական-վարչական շահախնդրություններից: Ն. Աշտարակեցին ու Գրիգոր Մանուշարյանը, Հարություն Ալամդարյանն ու Ղազարոս Լազարյանը անդրադարձնում էին այն ակնկալությունները, որոնք առկա էին ժողովրդի ամենատարբեր ժալքերում: Լեոն գեղեցիկ և միանգամայն իրականության համապատասխանող ձևով է բնութագրել Ն. Աշտարակեցուն և նրա ժամանակը. «Տասնիններորդ դարի սկզբում, այն խորհրդավոր միջոցին, երբ ժամանակը իր անողոք պահանջներն էր ներկայացնում հայերին, երբ ռուսաց տիրապետությունը նոր, ժպտուն հորիզոններ էր բաց անում, մեր հոգևորականության մեջ երևան եկավ մի նոր հերոս, որ հաջորդեց Հովսեփ Արղուիսյանին և շարունակեց նրա գործը ավելի մեծ եռանդով»¹¹:

Մտնելով ռուսական բանականների շարքերը և խանդավառված հայրենիքը պարսկական լծից ազատագրելու նվիրական դրացմունքներով, հայ կամավորական ջոկատները թշնամու դեմ անձնուրաց կռվի հերոսություն էին ցուցաբերում: Մեղ է հասել նրանց մասին դեկաբրիստ Ն. Ն. Մուրավյովի ուշադրքով մի տեղեկությունը: «...Նրանք թվապես ուժեղանում էին, — հարձում է աքսորյալ ղեկավարիստը, — և մեր հանդես դալու

¹¹ Առ, Ստեփանոս Նաղարյանց, առաջին հատոր, Թիֆլիս, 1902, էջ 11:

սլահին, հայկական առաջին դրոժինան, որ հանձնարարւած էր
 Խերսոնյան գնդի ղեկավար սպաներից մեկին՝ սլահորշէիկ
 Սումբատովին, Զալալ-Օղլիում 150 հոգով մեզ միացաւ և
 հաւատարմության երդում ընդունեց... թվում էր, թե մի նոր
 ոգի էր թևածում ողջ հայերի մեջ, որոնք հույս ունեին վերա-
 կանգնւած տեսնել իրենց թագավորութիւնը...»¹²:

1827 թվականի մայիսի 15-ին, Թիֆլիսի հայկական եկե-
 ղեցիներից մեկի հրապարակում, գեներալ Սիւլյապինի ղեկա-
 վարութեամբ տեղի ունեցած հայկական կամավորական զնդի
 երկրորդ զորահանգեսին արտասանած իր ճառում, Ներսիսյան
 դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանն ասում էր՝ «Դրոշակ այդ,
 որ այսօր վերակարգաւով զահաւոր անուն տեսնւում զբազանս
 և տուաւ զնդի ձերոյ, է առահաւատչեայ սիրոյ Աստուծոյ և
 նորա առ ձեզ: Պահեցեք զայս անդին աւանդ իբրև զբիբ
 ական»¹³: Ընդարձակ իր ելույթում Ալամդարյանը, մասնավո-
 րապէս, կանգ է առնում հայ ժողովրդի պետականութեան
 կորստյան և օտար նվաճողների տիրապետութեան տակ
 ընկնելու պատմական փաստի վրա: Հ. Ալամդարյանի դոր-
 ծոն մասնակցութեամբ էր կազմւել «Առաջադրութիւն
 հայոց նոր սարքվող զորքի համար» իր ահսակի մեջ շատ
 ուշադրաւ թուցիկը: Թե ինչքան կշանք պիտի ունենա-
 յին նոր ստեղծվող հայկական զորագնդերը՝ ոչինչ չէր
 ասվում «առաջադրութեան» մեջ: Հայտնի է, որ վրաց թա-
 գավորութիւնը վերացվելուց հետո անհապաղ ցրվեց նաև
 վրացական ազգային զորքը: Մինչդեռ ցարիզմի քաղա-
 քականութեան խուժ ու փոսերին անհաս հայ ժամանա-
 կակիցները կարծում էին, թե ապագայում էլ «ղայիմ» կպահ-
 պանվի հայոց զորքը: Հայ զործիչները գիտեին, որ սկսված

¹² «Русский архив», 1889, кн. III, էջ 95—96: Տե՛ս նաև Մ. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая, Ереван, 1956, էջ 250—251:

¹³ Ալ. Երիցյան, նշված աշխ., էջ 276 (Հ. Ալամդարյանի հիշաւ ճառի հայերէն և սուսերէն ձևադիր օրինակները պահվում են Մատենա-դարանում, Ալ. Երիցյանի արխիւ, թղթ. 159, վավ. 199):

սպատերազմը նոր զորհեր փրպահանշում մայր հայրենիքում քանակապես աննշան և նյութապես աղքատ հայ ժողովրդից, բայց «Այս ամեն զոհողությունները կկատարեն ներսես, — որովհետև առաջուց խոստումն ընդունած էր Ռուսիո տերութենեն, որ հաջողութենեն հետ հայոց ազգն ազատ պիտի լինի և անկախ իշխանություն պիտի ունենա Արարատյան դավառի մեջ»¹⁴։ Ներսեսը գտնում էր, որ ավելի լավ է միանգամից մեռնել, քան չարաշուք աղքատության և ստրկության մեջ արյունաքամ լինել։ Հարկավոր է նյութապես ու մարդկային ուժերով օգնել ոռոսական բանակին հաղթանակի հասնելու, քանզի նրա հաղթանակի օրը միաժամանակ հայ հայրենիքի փրկության բաղձալի պահն է։

Աշտարակեցին չգիտեր ինչ անուն տալ շարաքատտիկ այն հավատարմությանը, որ հայը ցույց է տվել հրկարատե դարերի ընթացքում՝ թշնամու դեմ իբրև զենք, միայն խոփն ու արորը բանեցնելով և բյուրավոր զրկանքներ ու անիրավություններ անադատունջ տանելով։

Հայոց թագավորների և իշխանների տարեգրության ձևադիր իր աշխատության առաջաբանում Գևորգ Խուբովը՝ նրեանի գրավման ժամանակ ծնված թագաժառանգ Կոստանտին Նիկոլաևիչի հետ էր կապում Հայկազյան թագավորության վերականգնման ժամանակակիցների բաղձանքները¹⁵։ 1827 թ. Արզանուիները հրապարակեցին «Հայոց արժանահիշատակ թագավորների շարքը» («Галерея достопамятных царей Армении») աշխատությունը։ Ի՞նչ էին հետապնդում նրա հեղինակները տակավին շարունակվող ոռոս-պարսկական պատերազմի օրերին։ Տրամաբանական է կարծել, որ Արզանուիները նախնիների հերոսապատում գործերով հայ ժողովրդին քաջալերելուց ու ոգևորելուց զատ, նպատակ ունեին ցարական պաշտոնական շրջաններին ցույց տալ, որ ժամանակին հայ ժողովուրդը ունեցել է ուրույն իր քաղաքա-

¹⁴ Նույն տեղում, էջ 242։

¹⁵ Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 3755։

կան իշխանութիւնը՝ արժանահիշատակ թագավորներով¹⁶։ Մահավանդ ուշագրավ է, որ զրքույկի երեան զալուն նպատակ է Մոսկւայի Հաղարյան Ճեմարանի հիմնադիր Հովակիմ Լազարեր, մի՛ մարդ, որ համենայն դեպս, այդ պահին անտարբեր չէր դեպի իր ժողովրդի բախտն ու ճակատագիրը։

Թուրքական տիրապետութիւնից ազատագրվելու ցանկությամբ էր սողորված և արեմտահայութիւնը։ Ալ. Երիցյանը պատմում է, որ Թուրքիայում «հաւանական էին թւում Պոլսո մեջ պատած լուրերը, որ իբրև թե Ռուսիան մտադիր է՝ Հայոց թագավորութիւն հռչակելու մաքով՝ խլել նաև Տաճկական Հայաստանը»¹⁷։ Մեզ թւում է, որ սրանով պետք է բացատրել հետագայում, ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ռուսական օրիննտացիայի ջերմ պաշտպան Կարապետ արքեպիսկոպոսի եռանդուն գործունեութիւնը։ Մեզ հայտնի չէ հարկավ աղգային-քաղաքական նրա նպատակամղումները, գիտենք միայն, որ նա է առաջնորդել ու ղեկավարել արեմտահայ ժողովրդի հոծ գաղթականութիւնը Թուրքիայից դեպի Ռուսաստան։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ շատ վատթարացավ արեմտահայերի վիճակը։ Թուրքերը, ռուսների կողմից Ախալցխայում ծանր պարտութիւն կրելուց հետո, ղանազան սնոտի պատճառներ էին որոնում սրի անցկացնելու էրզրումի քրիստոնյաներին, երկչուղ կրելով, թե «մի գուցե նրանք ռուսների կողմն անցնեն և իրենց գործը ավելի դժվարացնեն»¹⁸։

Իմանալով Կարապետ արքեպիսկոպոսի ռուսասիրութեան մասին, թուրքերը առաջին հերթին որոշեցին մեջտեղից վերացնել նրան։ Եվ նպաստավոր առիթը ներկայացավ։ Երբ ռուսները տիրում են Գյումրին, Կարսը և Ախալցխան և մոտենում էրզրումի մատուցներին, այստեղ է հասնում Եփրեմ

16 *Տե՛ս* «Галерея достопамятных царей Армении», М., 1827, էջ 21։

17 Ալ. Երիցյան, նշված աշխ., էջ 358։

18 Ն. Գեղամյանց, Կարապետ արքեպիսկոպոս, «Փորձ», 1876, № 1, էջ 175։

կաթողիկոսի՝ «Առաջնորդի Հայոց Կարնոյ» կոնդակը, ուր կոչ էր արվում արքեպիսկոպոսին՝ հորդորել հայերին օգնելու ռուսական զորքերին: Կաթողիկոսի կոնդակը ընկնում է փաշաների ձեռքը: Էրզրումի հայերին «Բարդուղումյան գիշեր էր սպասվում», որը տեղի չունեցավ լուկ արքեպիսկոպոսի ճարպիկության շնորհիվ¹⁹:

Էրզրումը (Կարին) ռուսներով շրջափակված օրերին էր, երբ Կարապետ արքեպիսկոպոսը մի նամակ գրեց գեներալ Պասկևիչին և մաքսատան բեռնակիրներից Ֆերման անունով մի հավատարիմ կարիճ հայի տրեխներում հասցրեց նրան: Այդ գրության մեջ արևմտահայ քաղաքական գործիչը հայտնելով քրիստոնյաների վիճակը, սխաժամանակ իրազեկ էր պահում ռուս գեներալին, թե որ ճանապարհով և ինչ եղանակով պետք է հարձակվել Կարինի վրա և դյուրին եղանակով գրավել այն: Պասկևիչը խնամքով կատարեց արքեպիսկոպոսի ցուցումները և ավելի հեշտ հասավ իր նպատակին: Չիրականացան սակայն արևմտահայերի ազատագրական բաղձանքները:

Ադրիանապոլսի 1829 թ. սեպտեմբերի 14-ի պայմանագրով ռուսներին անցան միայն Ախալցխան, Ախալքալաքը իր շրջակա գյուղերով, Գյումրին իր Փամբակ ու Շիրակ գավառներով: Էրզրումը (Կարին), Բայբուրդը և Բայազետը հաղթանակով և անհաղթաբարձիվ են թուրքիային: «Այդ դաշնագրութունը, — գրում է Եղ. Գեղամյանը, — ավելի քան մի որեիցէ ալ զըմբախտություն, մեծ հարված տվեց առավելապես հայ ժողովրդին»²⁰:

Չնայած Ադրիանապոլսի պայմանագրի յոթերորդ և տասներկուերորդ հոդվածներով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ապահովել իրեն վերադարձված շրջաններում ապրող քրիստոնյաների խաղաղ կյանքն ու հավատը, սակայն խոստումների ուժն ու հուսալիությունը

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 186:

Թուրքիայի պես բարբարոսական մի երկրում հայտնի էր հայերին: Կարապետ արքեպիսկոպոսը լավ գիտեր, որ Ադրիանապոլսի պայմանագրից հետո հայերի կացությունը Թուրքիայում շատ ավելի պիտի վատթարանար, նրանք զոհ պիտի գնային օսմանցիների վրեժխնդրությանը, ուստի «կայսերական հաճություն ընդունելով» եռանդուն այդ վեղարավորը «հրավեր կարգաց իր ժողովրդին՝ ուսս զորքերի հետ միասին գաղթել Ռուսաստան»²¹: 1830 թ. մայիսի 20-ին նա ընդմիշտ թողեց Արևմտյան Հայաստանը և 90 հազար գաղթականներով փոխադրվեց ռուսական նորագրավ մարզերը: Նղիշե քահանան գովեստով է խոսում ռուսական կառավարության՝ ներգաղթողներին ցույց տված օգնության մասին: «Ռուսաց տերությունը,— գրում է նա,— իր կողմից մեծամեծ օգնություն արավ հայ գաղթականներին»²²: Ռուսները կարելի ունին չափ ապահովում էին գաղթականներին հացով, ալյուրով, սալեր էին տրամադրում և մտահոգվում ճանապարհների անվտանգության համար:

Կարապետ արքեպիսկոպոսը լիովին համոզված էր, որ Ռուսաստանի տիրապետության ներքո հայերը թեթև շունչ կքաշեն, բայց նա ևս ազատ չէր ցարական Ռուսաստանի դերը գերազնահատելու ժամանակակիցների պատրանքներից: «Ես իբրև քրիստոնյա եպիսկոպոս,— 1837 թ. Անդրկովկաս ժամանելու ճանապարհին Ախալցխայում իջևանած Նիկողայ ցարին այսպես էր դիմում Կարապետ արքեպիսկոպոսը,— երկար ժամանակ պահպանեցի քրիստոնեությունը Տաճկաստանի մեջ, այժմ այդ քրիստոնյաներին հանձնում եմ քրիստոնյա թագավորի հայրական խնամակալությանը»²³: Նուանդուն ու հայրենասեր, սակայն քաղաքականապես թերահաս այս հոգևորականը շուրջ մեկ տասնամյակ անցնելուց հետո էլ չկարողացավ հասկանալ, որ սեփական ժողովրդի

²¹ Նույն տեղում, էջ 186—187:

²² Նույն տեղում, էջ 189:

²³ Նույն տեղում, էջ 190:

Հոգսերից «կրթւն բնկած» ռուսական միապետի հաշիւների մեջ բնաւ չէր մտնում մի բոլորիստոնյաների «հայրական խնամակալութեան» գործը:

Դեպի Անգրկովկաս առաջխաղացող ցարիզմը, սահմանամերձ երկրներում աջակիցներ ու համակիրներ հաւաքագրելու իր տրադիցիոն քաղաքականութեան համապատասխան, հայ ժողովրդին դիտում էր այն ուժերից մեկը, որ կարող էր որոշակի նպաստ բերել նվաճողական իր ծրագրերին: Մինչդեռ 19-րդ դարամուտից և, մասնավորապես, նապոլեոնյան բանակների ջախջախման ավարտից ու «սրբազան դաշինքի» ոգեշնչողի դերն ստանձնելուց հետո, ցարիզմն ընդմիշտ փակված էր համարում հայ-ռուսական քաղաքական սիրախաղի հին շրջանը: Խոստացողի ու հուսադրողի երբեմնի իր գործեակներսից չհրաժարուելով, նա այժմ էլ ջանում էր կաղմակերպել աղերսներով իր օգնութեւնը հայցող բրիտոնյաների ուժը: Երկրորդիւ նոր վիրահատումների համար, այն տարբերութեամբ միայն, որ Ռուսաստանի հովանավորութեան ներքո «Հայկական թագավորութեան» կամ «ինքնավարութեան» փոխարեն հայերը պիտի բավարարուին կայսերահպատակ դառնալու մեծագույն շնորհով: Ինչպես 1800-ական թվականների ըմբոստ վրացիները, այնպես էլ 1820-ական թվականների հայ գործիչները տակավին հասու չէին այն դիտակցութեան, որ առկա քաղաքական պայմաններում մնում էր հոժարել սեփական թագավորական ռեժիմը կամ փաղիշահի տիրապետութեւնը՝ ցարականով փոխարինելու մտքի հետ: Յարիզմը ոչ միայն վերացրեց Ռուսաստանից վասալական կախվածութեան մեջ գտնվող վրացական թագավորութեւնը, այլև դաժան հաշիւհարդար տեսաւ բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չէին «սիրում ներկա կարգերը» և ազգային պետականութեւնը վերականգնելու համար մարտակուլի էին հրավիրում ժողովրդին: Մի կողմ վանելով պատմութեան փորձը, գաղափարապաշտ ազգային այդ գործիչները ձգտում էին գտնել այն, ինչ կորցրել էին վրացիները երեք տասնամյակ առաջ:

Հայ կամավորները մարտնչում էին Երևանի, Նախի-
ջևանի, Էջմիածնի, Էրզրումի (Կարին) հայկական յուրաքան-
չյուր գյուղի համար, և նրանցից ամեն մեկը երևակայում էր,
թե հաղթանակի կամ պարտության պատճառը իր ղեկնքն է:
Մինչդեռ կամավորների գոտեմարտը արտացոլումը չէր այն
պայքարի ու նպատակի, որ նրանց գլխավերևում մղում էին
ռուս ցարն ու զենեքալները հայ ժողովրդի ճակատագիրը
որոշելու համար: Կույր հավատի ու միամտության պահերը
դեռ չէին անցել: Կամավորական շարժման ախոյաններն ու
սպասավորները տակավին չգիտեին, որ իրենք սոսկ արա-
գացում են դեպի ցարահպատակություն գլորվող հայ ժողո-
վրդի պատմության անիվը: Հետագա իրադարձությունների
լույսի տակ միայն հայ գործիչները կարողացան զանազանել
ցարական խոստումների դրական և բացասական երանգները,
լմբոնել քրիստոնեասիրական լոգոնգների գործնական
իմաստը:

Ռուս-պարսկական պատերազմի վերջին պահերին, և
առանձնապես այն ավարտվելուց հետո, Պասկևիչը միջոց-
ների խտրություն չէր դնում երկրամասից վտարելու նշանավոր
հայ գործիչներին: Միանգամայն մոռացության տրվեցին ռու-
սական բանակներին մատուցած նրանց հսկայական ծառա-
յությունները: Ն. Աշտարակեցու գործունեությունը Անդրկով-
կասում դիտվեց այլևս ավելորդ, քանզի նա իր դերն արդեն
կատարել էր Ռուսաց քաղաքականության նկատմամբ...²⁴:

Թուրքմենշայի պայմանագրի ստերագրումից ընդամենը
երեք շաբաթ անց, 1828 թ. մարտի 3-ին, կոմս Դիբելին հղած
իր նամակում գեներալ Պասկևիչը գրում էր, որ ինքը Նեֆսեի
մասին «շատ դժվարության մեջ» է, որովհետև «քաղաքակա-
նությունը (պոլիտիկան) արգելում էր «իրեն» բռնորոշվին հե-
ռացնել նրան գործերից»²⁵: Չսպասելով Դիբելի պատասխա-
նին, Պասկևիչը «շատ քաղաքավարի կերպով և ամենևին

²⁴ Տե՛ս Ա. Երիցյան, նշված աշխ., էջ 355:

²⁵ Աբր. Ջամիլյան, Հայոց եկեղեցու պատմություն, մասն Բ, Ն. Նա-
խիջևան, 1909, էջ 155:

շղիպչելով նրա պատվին» Երևանի ժամանակավոր վարչութ-
 թյան անդամությունից ազատեց Ներսեսին, իսկ մայիսի 21-ի
 թվակիր իր դրությամբ նա հանկարծակիի բերեց հայ ազա-
 տագրական շարժման գործչին: Սկսված ուռա-թուրքական
 պատերազմում հայերին «ազատագրական» պատերազմի
 հորդորներ անելու համար Ն. Աշտարակեցին պիտի մեկնե-
 ր Բեսարաբիա՝ իբրև թեմի առաջնորդ: «Իսկ ինչ վերաբերում է
 իմ Բեսարաբիա ուղևորվելու բարձրագույն հրամանին,— գրում
 էր մինչև հոգու խորքը վիրավորված Ներսեսը,— ես իմ պարտ-
 քն եմ համարում անձամբ տեսնել ձերդ պայծառասիրայու-
 թյան հետ և ընդունել ձեր խորհուրդները ի բարօրության
 հայոց ազգի»²⁶: Պատկերիչը ամեն կերպ աշխատեց չհանդի-
 պել Աշտարակեցու հետ և գրավոր անգամ չուղարկեց նրա
 հայցած «խորհուրդները»: «Իմ նպատակն է եղել,— գրում էր
 Ներսեսը հոկտեմբերի 16-ի վերջին իր նամակում,— ծառայել
 աստծուն, թագավոր կայսրին և տերությանը, և տրիտուր իմ
 աշխատանքներին և անձնվիրության՝ աղերսել իմ որբացած
 ազգի արդար սլաշտպանության մասին»²⁷: Պատասխան իր
 նամակում «արգարադատ» սատրապը նշում էր, որ կառավա-
 րությունը խտրություն չի դնում «հպատակների միջև», ինչ-
 պիսի ազգության ու կրոնի էլ նրանք պատկանելիս լինեն,
 միաժամանակ ավլացնում, որ ինքը բնավ կարիք չունի որևէ
 մեկի խրատներին՝ նորագրավ երկրի գործերը արդարացիո-
 րեն տնօրինելու մասին: «Ես չեմ հասկանում,— հարում էր
 կոմսը,— թե ինչ պատճառով հայոց ազգին դուք կոչում եք
 «որբացած»: Այդ բառը կարող է վերաբերվել միմիայն այն
 հայերին, որոնք գտնվում են պարսկական և օսմանյան իշ-
 խանության ներքո, բայց ամենայն ուսաց մեծ թագավոր
 կայսրի բոլոր հպատակներն նրան ունեն ընդհանրական
 հայր և սլաշտպան իրենց և, իհարկե, չեն կարող կոչվել
 «որբացած»²⁸:

26 Ալ. Նրիցյան, նշված աշխ., էջ 365:

27 Նույն տեղում, էջ 368:

28 Նույն տեղում:

Ո՞րն էր Աշտարակեցու նկատմամբ Պասկեիչի սկսած հալածանքի պատճառը, չէ՞ որ կարճ ժամանակ էր անցել այն պահից, երբ իր՝ Պասկեիչի միջնորդությամբ էր ներսեսն արժանացել Ալեքսանդր Նեսկու շքանշանին: Ուրեմն, Պասկեիչ-Աշտարակեցի հակամարտի պատճառը ոչ թե անձնական, այլ բաղադրական էր, մասնավանդ որ «Մի քանի անգամ տուպագրության մեջ հիշված է և այժմ էլ կենդանի տեղանատես պատմողներ կան, որ ներսեսը մինչև իր կյանքի վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում դիշեր ու ցեբեկ. թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտե, որովհետև նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Բայց երբ որ Բեսարաբիայից վերադարձավ նա կաթողիկոսական վեհ աստիճանով ու մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկեիչի և անցած դնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում՝ «Պասկեիչը ահա այստեղ է կաշկանդված»:

Իրա՞վ արդյոք Պասկեիչի գրությունն էր այդ և ե՞րբ կամ ի՞նչ առիթով էր գրած— մեզ հայտնի չէ: Գիտենք միայն, որ այդ մասին տեղյակ էին երկրիս փոխարքաները՝ իշխ. Վորոնցովը, Մուրավյովը և իշխ. Բարատինսկին: Շատերը հետամուտ էին ձեռք բերելու այդ գրությունը, բայց ներսեսը հանկարծակի վախճանվեց և թե ապա ո՞ւմ ձեռքն անցավ այդ թուղթը— ոչ ոք չի կարող ասել: Ինչևիցէ, բայց եթե իրավ կար այդպիսի թուղթ և այն էլ Պասկեիչի գրած, դա հավանական է, թեև, պնդում ենք, ոչ հաստատ: Շատ կարելի է, որ պատերազմն սկսելուց առաջ, փառքերին հետամուտ Պասկեիչը, ինքնազուլիս և առանց բարձրագույն հաճության, որեւէ խոստմունք լինի արած ներսեսին, սրան ավելի ևս ողևորելու համար: Եթե մի այդպիսի խոստմունք կար և ներսեսը պատերազմը վերջանալուց հետո պահանջում էր դրա կատարումն ու Պասկեիչը չէր կարողանում կատարել, այն ժամանակ հասկանալի է, թե ինչու էր սպարապետն այնպես զրգովում և ձրգտում հառացնել նրան Կովկասից»²⁹:

²⁹ Նույն տեղում, էջ 356—357:

Մինչհեղափոխական պատմագրութեան մեջ բաղմիցս հիշատակվող և ավանդութեան կերպարանք ստացած «Աշտարակեցու թուղթը», տարաբախտաբար, ցայսօր էլ չի հաստատվում պատմական այլ և այլ նյութերով, բայց այնուհանդերձ դյուրին է պնդել, որ այն միայն ավանդութիւնն է:

Խոսելով ռուսների կողմից Արևելյան Հայաստանի աղատագրութեան մասին, Գարրիել Պատկանյանը գրում էր, որ մահմեդական աշխարհում տանջված հայերը «Ներսէս արքեպիսկոպոսի համոզմամբ՝ ռուսաց ընդունելութիւնն արին ուրախութեամբ, և ամեն պիտոյքը ջերմեռանդութեամբ լցուցին»³⁰:

Գ. Պատկանյանը գոհ էր ռուսական տիրապետութեան բերած օգուտներից: Պարզորոշ տեսնելով այդ տիրապետութեան շնորհիվ «ամենայն իրաց և հանգամանաց փոփոխութիւնը» հայ ժողովրդի առաջադիմութեան համար, նա կրքոտ կերպով պայքարում էր հայ ազգի կաղամվորման, նրա առաջադիմութեան ճանապարհին ծառացած խոչընդոտների դեմ: Իր բանաստեղծութիւններէց մեկում հեղինակը բնութեան դարձնաբեր հակադրում էր հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքի անապահով վիճակին Թուրքիայում և հայ կյանքի զարգացման անբավարար կողմերին Ռուսաստանում: Ե՞րբ պիտի գարուն գա նաև հայ ժողովրդի համար, նա դեռ շատ պիտի մաքառի ու տանջվի իր կյանքի գարնան համար.

Գարուն հասավ, ամենայն ինչ մեջ բնության,
Ծաղկի, գարբնի երկայն ֆն խոր քմության,
Բայց այս կենոփ մեր առջև ի՞նչ այլ կա պատրաստ
Մեզ համար երբ կուգա գարուն սիրապատկաստ³¹:

Գ. Պատկանյանը մի ոտքով կառչած էր անցյալին, իսկ մյուսով՝ կապված նոր ժամանակների հետ: Ազգասիրական

30 Գ. Պատկանյան, Հայոց ազգի պատմութիւնը, Ս. Պետերբուրգ, 1863, էջ 260:

31 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 136, վավ. 21, էջ 2ա:

միտումներով նա մտաբերում էր անցյալի դեմքերն ու դեպքերը, որոնք իրենց ազդեցութեամբ պիտի օգնեին իր ժամանակի հայ հասարակութեան զարգացմանն ու ամրակայմանը։ Ն. Աշտարակեցու Բեսարարիա աքսորելու շարժառիթների մասին նա չէր խոսում և պաշտպանութեան տակ էր առնում ցարական պաշտոնական շրջանների կողմից ձեռնարկված տեսակետը իբրև համարադրություն։ Ըստ նրա, Ներսեսին ոչ թե աքսորեցին, այլ «...օսմանցոց դեմ պատերազմը հրավիրեց նրան՝ այն կողմերու հայոց ազգին պաշտպանութեան համար...»³²։

Ներսեսի դեմ տրամադրված հեղինակը ճիշտ չէր բնութագրում Պատկերիչի քննաքննությունը։ Ն. Աշտարակեցու հետ իր հաշիվները մարբելուց հետո, Պատկերիչը դավեր ու հալածանք սկսեց նաև Հ. Ալամդարյանի դեմ, մի մարդու, որ «սլաաբաստեալ էր մատուցանել զանձն ի զոհ վասն օգտի հայրենեաց և հայկազուն մանկանց»³³։ Ռուսների կողմից Երևանի գրավման լուրն առնելուց հետո, Ալամդարյանը մեծ բերկրանք ապրեց։ «Զկնի բազմադարեան ակնկալութեան,— գրում էր նա Ն. Աշտարակեցուն 1827 թ. հոկտեմբերի 12-ին,— վերջապես արար զմեզ արժանի նախախնամութիւնն երկնից տեսանել և լսել զազատութիւն տմենասիրելի հայրենեաց մերոց յնդ լծոյ տառապանաց ապառու բռնաւորաց»։ Կա՞ր ավելի մեծ շնորհավորանք, ասում էր նա, քան «զփրկութիւն Հայաստան աշխարհի յերկաթի հնոցէ անագորոյն պարսից...»³⁴։ Ներսեսին աքսորելուց հետո, Հայաստանում հալածանքի էին ենթարկվում նրա ծանոթներն անգամ։ «Ինձ աչսուհետե անհնարին է մնալ աստ առանց ենթարկելոյ զթշուառական գլուխ իմ ակնյայտնի մեծամեծ վտանգից» — գրում է Ալամդարյանը՝ Ն. Աշտարակեցուն ուղարկած 1829 թ. մարտի 15-ի նամակում։

Ըմբոստ վարդապետի բնդհարումները ցարական շինով-

32 Գ. Պատկանյան, Հայոց ազգի պատմությունը, էջ 260։

33 Խ. Աբովյան, ՆՆԺ, հտ. VIII, էջ 312։

34 Մատենադարան, Կաթողիկոսական գրվան, թղթ. 55, վավ. 210։

Նիկնեբրի հետ՝ Ներսիսյան դպրոցի և հայ եկեղեցու ինքնավարության հարցերի շուրջը հաճախ լարված բնույթ էին ստանում: 1830 թ. աշնանը էջմիածնի սինոդը, Պատկեխի թեմապետը, Ալամդարյանին՝ «Իբր խռովարար և ներսիսեան» արժանացնելով, Հաղպատ: Այստեղ հայ կամավորական զորազինվածների կազմակերպիչը լավկան տողեր էր գրում և անիծում էր իր ու իր կուսակիցների հակատառգիրը:

Յամսավերջն ապրիլի գլխառուման բացի,
 Զծինաքաղ դաշտորայս ծաղկագարդ տեսի:
 Արտասուք եռանդունք՝ զայսս իմ այրեցին,
 Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ մոտ ածին:
 Հեզուապէս դառնացան վերք վրնատ հոգոյս,
 Թմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս:
 Ափսոս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,

Մաշեցայ, բոշեցայ, մըտի խոր ի փուն,
Զլար կսկիծ հէ՛ք գերտյա արկ ի ծով անհուն:
Դըշխոյն մեծ անմահից էջ ինձ յայս տեսւեամբ,
Որպէս թէ ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ:
Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին
Գերբնապէս սփանշելօք զիս ազատողին³⁵:

Քնարերգու բանաստեղծը երկար պիտի մնար Հաղպատի վանքում, եթե չսկսվեր լեհական ապստամբությունը և Պասկևիչը չմեկներ Կովկասից։ Աշտարակեցու հրավերով Ալամ-գարյանը փոխադրվեց Բեսարաբիա և նշանակվեց սուրբ Խաչ վանքի վանահայր, որտեղ և մահացավ 1834 թվականին։

Հայ գործիչները միատեսակ շտաբան ցարիզմի հալածանքները: Եթե Հ. Ալամդարյանի ազգային-հայրենասիրական մոտիվները երևակայական աղերսներ էր հայտաբերում և այրիացած հայրենիքի հարուխյան ասպազան ռումանտիզմի ուժով ուրվագծում վերածնված Հայաստանի պատկերի մեջ,

35 Այ. Երիցյան, *հշված աշխ.*, էջ 651—652:

ասպա Ն. Աշտարակեցին ու Կարապետ արքեպիսկոպոսը իրենց վերակառուցում էին նոր պայմաններին համապատասխան: Մի ժամանակ զեղծումների դեմ աներկյուղ մաքառող, ռուս-պարսկական պատերազմների զինվորական գործակից, ռուսական պետական շահերի հետ ազգային շահերի հետամտող և այդ իսկ պատճառով էլ կռիվասպան միջավայրից հեռացված ներսեսից 30-ական թվականների սկզբին շատ քիչ բան էր մնացել³⁶: Ռուս-պարսկական պատերազմների հերոսն այժմ համոզվում էր թիֆլիսյան իր մերձավորներին, որ նորեկ ռեժիմի պայմաններում իմաստազուրկ են հայկական ինքնավարության ձիգերը:

Կախեթի 1812 թ. նշանավոր ապստամբության և 1832 թ. իրենց հայրենիքի վերականգնման հետամուտ մի խումբ երիտասարդ վրաց ազնվականների թիֆլիսյան դավադրության հետևանքների փորձով նա տեսնում էր, որ ցարիզմը նորագործվեց երկրներում թողնում էր այն, ինչ համապատասխանում էր իր պետականության ոգուն: «Լեհաստան չկարաց հակառակ կալ հզօր տէրութեան Ռուսաց և ոչ Թուրքաստան և ոչ Պարսկաստան,— գրում էր Ն. Աշտարակեցին՝ Հ. Շերմազանյանին 1832 թ. փետրվարի 27-ի թվակիր նամակում: Հեշտ է ասելն բանիւ զնա ի Մոսկով, զնա ի Պ. բուրդ և արա ալսպէս և այնպէս, այլ քաջայայտ է զի և ձագք ճնճղկաց կարողանան ճանաչել զգորութիւնս թևոց իւրեանց, և յորժամ գիտեն թէ թևք նոցա բառնան զինքեանս, յայնժամ յելանեն ի բունոց իւրեանց և թռչին, իսկ թէ պատահամբ իւրք յելանեն ի բունոց անժամանակ, յերկիր անկեալ կերակուր գազանաց լինին. միթէ՞ ես չիցեմ ըստ չափու ձագուց ճնճղկաց բաւական ի կշռել զիմ թևս՝ թէ յորժամ զօրեսցէ թռչել»³⁷: Նա գրտնում էր, որ լեհական ապստամբությունը արյան մեջ խեղդող ցարիզմը կարող է հայերի նկատմամբ ևս կատարել նույն

36 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3771—3772:

37 Ալ. Նրիցյան, նշված աշխ., մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 153—154:

հաշվեհարդարը, եթե նրանք չկարողանան զիտակցել իրենց թեքերի տկարությունը: Եթե 20-ական թվականներին, երբ Արևելյան Հայաստանը «Հայկական մարզ» հորջորջմամբ միացվել էր Ռուսաստանին ու այլևս պայմաններ չկային խաչեր ու նշաններ ձեռք բերելու համար, նա շարունակում էր իր որդեգրած ուղեգիծը և տակավին «համոզված էր, թե հայերի ազատությունը պիտի ձեռք բերվի ուս կառավարության շնորհիվ և այդ ակնկալությամբ ջանք չէր խնայում նորանվան երկրում զսպելու ցարական վարչության դեմ հայերի մեջ խմորվող տրտունջներն ու բողոքները»³⁸, ապա փոքր ինչ ուշ, տեղական նորեկ վարչության անիրավություններից սրանեղված՝ մի կողմից նա բողոքներ էր հղում ցարական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներին, մյուս կողմից հավաստիացնում ցարիզմի հայ կալանավորներին՝ հավատ քնծայել, շերկմտել կայսերական կառավարության արդարադատությունը³⁹: Ծիշտ է, Սերովբե արքեպիսկոպոսի նման⁴⁰ Աշտարակեցին պաշտպան չկանգնեց ցարիզմի լեհական դաժանություններին, բայց միաժամանակ հայերի համար ուսանելի ոչինչ չտեսավ լեհ ապստամբների մոտ: Հայերը նշված ուղիով չպիտի գնան, այն կործանարար է: Ներսեսը հրաժարվում էր ոչ միայն ցարիզմի դեմ կռվելուց (մի բան, որին նա ամենեին էլ պատրաստ չէր), այլև վերջինիս հետ բանակցելու նպատակահարմարությունից՝ «մեծ լուծյան» մեջ տեսնելով առօրյայի իմաստն ու ոգին:

Նոր կարգերի հետ կղերա-աղայական հոսանքը հաշտվողականությամբ էր համակված քնդհանրապես: Տակավին 1829 թվականի սեպտեմբերի 27-ի թվակիր տեղեկագրում

³⁸ Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք տաջին, Երևան, 1955, էջ 42:

³⁹ Տե՛ս Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 166, վավ. 571, 572:

⁴⁰ 1831 թ. հոկտեմբերի 14-ին Սերովբեն շնորհավորում է Պասկևիչի կնոջը՝ կոմսի ղեկավարությամբ լեհական ապստամբությունը ճնշելու և նրան վարչավայր իշխան կոչումն շնորհելու առթիվ (տե՛ս Կաթողիկոսական գիժան, Թղթ. 71, վավ. 176):

մեկ-մեկ նշելով Կովկասի կառավարչության հայահալած քաղաքականությունը, ցարական կառավարությունից շափավոր պահանջներ հայցող տեղեկագրի հեղինակները երկյուղ էին հայտնում, որ առանձին վրդովեցուցիչ դեպքերը կարող են հասցնել աստամբության: Մտքերը խաղաղեցնելու համար նրանք առաջարկում էին՝ կտրականապես արգելել քաղաքացիական և զինվորական իշխանություններին միջամտել հոգևոր գործերին, Աշտարակեցուն հրավիրել մայրաքաղաք խորհրդակցելու հայկական մարզի կառավարման գործի մասին և նրան կաթողիկոսացնել, Սերովբե վարդապետին խառնակչության համար հեռացնել Կովկասից և աքսորել Գրիգորիոսով կամ Քիշինև, պարտադրել Պասկևիչին լավ հարաբերություններ պահպանել Աշտարակեցու հետ⁴¹:

Հայ գործիչները ոչ միայն մեծ կարևորություն էին տալիս ամբողջական և ամփոփ հայկական տերիտորիայի ստեղծմանը, այլև ամեն ինչ անում էին հայերի ներգաղթը հաջողությամբ և ժամանակին ավարտելու համար, քանզի գիտեին, որ ազդի համախմբմամբ է միայն հնարավոր Հայկական բնաշխարհում վերականգնել ազգային ոգին և ուժ հաղորդել հայոց լեզվին: Մի բան, որ շէր համապատասխանում ցարիզմի դադլթային քաղաքականությանը, և որը տեսական ձևակերպումն ստացավ այդ քաղաքականության գաղափարախոսների Պասկևիչի և Կանկրինի նախաձեռնությամբ 1828—1836 թթ. հրատարակված «Обозрение русских владений за Кавказом» աշխատության մեջ:

Ի դեպ, Պասկևիչը պատերազմի հաղթական ավարտից հետո զրպարտում էր դադլթական հայերին, որ իբր նրանք Ռուսաստան են դադլթել՝ շլացած ռուսական ոսկուց: Բարերախտաբար, պահպանվել է գնդապետ Լադարյանի⁴² այն

41 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 63, վավ. 361:

42 Ղազարոս Լադարյանը մինչև Կովկասյան բանակում ծառայությանն ենթարկվելու թիվն ապագա զորքի մեջ էր: Գնդապետ Լադարյանին հրավիրելով Կովկասյան բանակ, Պասկևիչը հետամուտ էր մի բանի՝ ցույց տալ տեղի հայերին, թե ինչքան մեծ առավելություն ունեն Ռուսաստանում բնակ-

գրութիւնը, որում նա առարկում էր Պասկելիչի այդ զրայարտութեանը: Գնդապետ Լազարյանը հայտնում է ցարական զաղութարարին, որ Անդրկովկաս գաղթելու հայերի ցանկութիւնից գատ՝ կառավարութիւնն էլ «հաւելլալ շահույթ ունի», այլսպիս նա հազարների տեղ կոպեկներ իսկ չէր ծախսի: Ներգաղթի կազմակերպման համար: «Վստահում եմ ասել, — գրում է Լազարյանը իր նամակում, — որ դուք լըցնելով ձեր ձեռք բերած երկրները... մի վաճառաշահ և աշխատասեր ժողովրդով, տերութեան համար հարստութեան մի մեծ աղբյուր բաց արիք, որ ինչքան էլ մեծ ծախս արած լինի կառավարութիւնը ներգաղթողների վրա, ինքը հաւելլալ շահույթ ունի»⁴³: Ցանկանալով Ղ. Լազարյանին Կովկասից վտարելու համար հաւաստի կռիւնների ունենալ, 1828 թ. սեպտեմբերի 28-ին Պասկելիչը զաղտնի շրջաբերական զրեց Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերի հրամանատար Պանկրատեին, Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճաւճաւաճեին, ներգաղթի դժուր Լազարյանի օգնական, փոխգնդապետ Մովսէս Երկայնաբազուկ Արղությանին և Թեհրան մեկնող ռուսական դեսպան Ալ. Գրիբոյեդովին: Սրանցից ամեն մեկը պետք է բնութագրեր Ղ. Լազարյանի տեղն ու դերը 45 հազար սլաւոնահայերի ներգաղթման գործում: «...Հայոց մշտական զորք ժողովելու», — ինչպես նաև «իբնթագրութիւնների մեջ Ղարաբաղը և մյուս երկրները» մտցնելու վերաբերյալ՝ բնութագրերի մատակարարած տեղեկութիւնները բավարար էին, որպեսզի Պասկելիչը Լազարյանին վտարեր Կովկասից⁴⁴: Այստեղ ուշադրաւն աչն է, որ նրա հետ սերտ նամակագրութեան մեջ գտնվող Ներսէս Աշտարակեցին նույն-

վող հայերը սլաւոնահայտակ նրանց աղղակիցների համեմատութեամբ: Տեղի հայերը իրենց աչքով պիտի տեսնէին, քի ինչպիս են Ռուսաստանում հայերը նշուխապիս առաջադիմում, պատվի ու փառքի հասնում: Այդ տեսակետից Լազարյան տոհմի ներկայացուցիչը Պասկելիչի համար անզուգական քեկնածու էր:

43 Պոտտո, վերածնութիւն Հասաստանի, Փարիզ, 1904, էջ 21:

44 Տես Ալ. Երիցյան, նշված աշխ., մասն Ա, էջ 393:

սկս մեղադրվեց «սեփական շահերի մասին» շմտածելու, «երկրի վարչության մեջ խառնվելու», Մակուի խանության կցումով Հայկական մարզի տերիտորիան ընդարձակելու նըկերտումների համար:

Հաղարյան զնդասկետը, շարունակում է Ալ. Նրիցյանը, «...ազդասիրությամբ տոգորված, ներսեսի նման, հույիշտակված էր հայրենյաց ազատության զաղափարներով»⁴⁵: Հարկավ մեծանուն Հաղարյանների հայրենասեր և ազգային-քաղաքական որոշ ծրագրեր փափագող վերջին ներկայացուցիչն էր Ղազարոսը, որովհետև Անդրկովկասի նվաճումն ալարավելուց հետո, երբ ցարիզմն ալլեա կարիք շուներ հայ առևտրական բուրժուազիայի և հոգևորականության օժանդակությանը, բնական է, որ նրանք զրկվեին ալն ազգականրից, որոնցից սնունդ էր ստանում նրանց ինչոլեա քաղաքական գործուն դերը, ալնպես էլ հայրենասիրությունը⁴⁶: Այդ տոհմի ներկայացուցիչները հետագայում իրենց ազգային ծագումը հիշում էին դեթ ալն պահերին, երբ ցարիզմը կարիք էր զգում նրանց միջոցով հայ ժողովրդի շլինբին փաթաթել ալս կամ ալն կարգադրությունը կամ նույն ալդ ժողովրդին մղել դեպի արտաքին թշնամին:

Հուսախաբությունը համակում էր նաև հայ մեծատունների մշու հատվածներին:

Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացման նշանակությունը զրվատող հնդկահայերը տակավին Յկետերինա երկրորդի ժամանակաշրջանից իրենց միլիոններն էին առաջարկում Ռուսաստանին, միայն թե կայսրուհին պարգևեր հայ-ռուսական դաշնագրով խոստացած անկախությունը⁴⁷:

Ի դեմս իրենց քաղաքական գործիչների, հնդկահայերը տկնդետ հետեում էին Հայաստանում կատարվող իրադարձու-

⁴⁵ Նույն տեղում, էջ 310:

⁴⁶ Տե՛ս Վ. Գիլջան, Հաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 138—139:

⁴⁷ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3589:

թյուններին: Տակավին 18-րդ դարի 80-ական թվականների սկզբներին Շահամիր Շահամիրյանը Հովսեփ ԱրղուՅյան Երկայնարադուկին էր ուղարկում ապագա Հայաստանի կառավարչաձևի նախագիծը՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Յարիզմը մերժում է հանրապետական անկախ Հայաստան երազող հնդկահայ գործչի խիզախ ծրագիրը: Խափանվում է նաև «Որոգայթ փառացը» Ռուսաստանում հրատարակելու նրա մտադրությունը⁴⁸: Յարական կառավարության նպատակադրումների մեջ չէր մտնում ոչ միայն հանրապետական, այլև անկախ պետական վարչաձևից, ինքնուրույն հայկական պետականություն, ստեղծելու գաղափարը: Սակայն դրանից հետո էլ այդ գաղափարը չկորցրեց իր դիմացկունությունը, քանի որ այն լիովին համապատասխանում էր ժամանակի ոգուն և բխում էր հայ ժողովրդի զարգացման անհրաժեշտությունից:

Ազատագրության ձգտումը և դրա նվաճման համար ազգային միասնության դադափարը կազմում էր «Ազգարարի» հիմնական բովանդակությունը: Ուշագրավ է, որ նրա խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանը հայ ժողովրդի ազատագրության հեռանկարը կապում էր Ռուսաստանի հետ, և օտար հորիզոնների տակ գեգերող հայրենակիցներին կոչ էր անում վերադառնալ Հայաստան: «Առե՛ք ղզանձ ձեր դուք ի միաբան, զնացեք իսկոյն աշխարհն հայու, քանզի այն է ձեր տուն...»⁴⁹:

Աստանդական, «արտահալած» հայության քաղաքական ձգտումները՝ օտար ավերից վերադառնալ հայրենիք («յաշխարհ Արարատեան»), թոթափել օտարի լուծը՝ արտահայտություն է գտել 19-րդ դարի երկրորդ տասնամյակի հնդկահայ քնարերգուի «Տէ՛ր, կեցո՛ւ դու զհայս» բանաստեղծության

48 Տե՛ս Ա. Մնացականյան, XVIII դարում գրած հայ-ռուսական դաշնադրային երկու նախագծերի հարցի շուրջը, «Բաները մատենագրարանի», 1953, № 4:

49 Ա. Կալինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատոր Ա, Երևան, 1956, էջ 225:

մեջ, որ մի քանի տասնամյակ համարվել է հայ ազգային հիմներից մեկը և «Օրհներգութուն ազգային» խորագրով տեղ գտել ժամանակի գրեթե բոլոր երգարաններում.

Տէ՛ր, կեցո՛ղս զհայս
Եւ արա զնոսա պայծառս,
Կեցո՛ղս զհայս.

Զողորմութիւնդ վերին
Հանեաց ձոնել նոցին,
Զի նովիմք մարբասցին
Ապրիլ յասախ:

.

Աջովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյք զամարեա՛
Աշխարհ Արարաւեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց...⁵⁰:

Արևելահայաստանում 1828 թ. հետո, տնտեսական կյանքի կայունացումը զաղթահայերի ազգային հոգեբանությունը սնում էր «ազատ» հայրենիքում անկաշկանդ գործելու պատրանքներով: Անգլիայի զաղութային քաղաքականությունից դժգոհ հնդկահայ առաջավոր հրապարակագիրները Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայկական բնաշխարհի մեջ էին տեսնում ազգի երջանիկ ու լուսավոր գալիքի հանգրվանը: Հայրենիքն այլևս վերացական հասկացողություն չէր, այլ աշխարհագրական իր սահմաններով տեսանելի մի մեծություն: Ահա թե ինչու «գտնված» հայրենիքը դեպի իրեն էր ձրգում նաև հնդկահայ տուտրական կապիտալի ներկայացուցիչներին:

50 «Քնար հայկական», խմբագրեց Մ. Մ. Միանասրյանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 217:

Զգիմանալով անդլիական առևտրա-արդյունաբերական մազնատների մրցակցությանը, հրբեմնի տիրապետող դիրքերը դրաված հնդկահայ խոշոր առևտրականները հետզհետե նահանջում էին իրենց գրաված բարձունքներից, միանում եվրոպական առևտրական ֆիրմաներին, առկա կապիտալներն այնտեղ պահպանելու մտահոգությամբ: Հայ առևտրական կապիտալի վիճակն ավելի վատթարացավ, երբ «Անգլիան սկզբից դուրս մղեց հնդկական բամբակյա գործվածքները եվրոպական շուկաներից, ապա սկսեց Հնդկաստան ներմուծել ոլորած մանվածք ու վերջում բամբակե գործվածքների հայրենիքը ողողեց բամբակեղեն ապրանքներով»⁵¹:

Հնդկահայ փողատերերի առավել հեռատես մասը զգում էր կլանիչ ինտեգրացիայի վտանգը և միջոցներ որոնում փրկվելու օրհասական կործանումից: Ազատագրված հայրենիքը գործունեության այն տեղն էր, ուր տնտեսական բազա ստեղծելու և կապիտալները աճեցնելու մեջ էին նրանք տեսնում փրկության ելքը: Մի ժամանակաշրջան էր դա, երբ հայ կղերի հետ միասին համազգային խնդիրներ արժարժող հայ առևտրական դասը տակավին ցարիզմից էր ակնկալում դրանց լուծման կարելիությունը: Մտայնության այս ուղու վրա, հնդկահայ գործիչներից ոմանք Ն. Աշտարակեցուց շատ ավելի առաջ անցան: Այսպես, 1829 թ. հոկտեմբերի 29-ին Ն. Աշտարակեցուն հասցեագրված նամակում վաղուց ի վեր Հրեդկաստանի Սամարանդ կամ Ամարանդ քաղաքում բնակվող, մեծ կալվածների ու հարստության տեր Հովսեփ Ամիրխանյանը «տարեկան կես միլիոն ռուբլի եկամուտ դրամագլուխ կառաջարկեք..., եթե իր նախնեաց հայրենիքի ազատությունը ապահոված դիտնար»⁵²: Նշանավոր այդ նամակում հրեդկահայ մեծատունը «մեր հին հայրենիքի մեծագույն ազատչին» իր մշտական երախտագիտությունը հայտնելուց և Պարսկաստանում ու Հայաստանում իր ազգատոհմի «ազնիվ» ար-

51 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том IX, 1957, էջ 133:

52 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, էջ 3749:

յան նվիրականության մասին խոսելուց հետո, ի վերջո ասպարեզ էր հանում իր հիմնական նպատակը՝ «Յանկալի է ինն նույնպես գիտենալ, քե Ռուսիան ի՞նչ մտադրութիւն ունի մեր ազգի վերաբերմամբ՝ արդյո՞ք ինքը տիրապետելով պիտի կառավարի Հայաստանը, քե՞ պիտի դարձնէ սրան իր տերության մի առանձին անկախ մասն:

Միով բանիւլ հաղորդեցեք ինձ՝ թե ուսաց տերութիւնն ի՞նչ դիտավորութիւն ունի մեր ազգի վիճակի մասին: ...Ի վերջո՞ պարզապես խոստանում եմ ձեզ, որ մտադիր եմ, եթե միայն կարելի լինի, գնել դրամով իմ նախնայաց երկրները, այն է՝ Ղարաբաղի աշխարհը Փայտակարանով հանդերձ... վասնզի հարազատ երկրների կորուստը ինձ համար վերին աստիճանի զգալի է»⁵³: Արժեքավոր այս փաստաթուղթը, որի հայերեն և ռուսերեն օրինակները պահվում են Մատենադարանի ն. Աշտարակեցու արխիվում, Ալ. Երիցյանի կողմից բաժարար մեկնութիւն չի ստացել: Մինչդեռ դա մի հայելի է, որ անդրադարձնում է գաղթահայերի, եթե ոչ լրիւ, գոնե մի ստւար մասի մտայնութիւնը:

Նորաստեղծ Հայկական մարզը այն հաստատարան էր, որի շուրջ պիտի պարարտանար, աճեր ժողովրդի տնտեսական ու բաղադրական ինքնավար կյանքը, միավորվեին հայ հայրենիքի մասնատւած, ծվեն-ծվեն եղած շրջանները: Այսպես ուրեմն, եթե հայ կղերա-աղայական դասի ներկայացուցիչը ջանում էր Մակուն միացնել Հայկական մարզին, ապա գաղութահայ առևտրական կապիտալի ձայնատարը՝ հնարավորության դեպքում Ղարաբաղն ու Փայտակարանը, ըստ երևույթին, դրանք ևս Արարատյան աշխարհին միացնելու և հայկական ինքնավարության շրջանակները ավելի մեծացնելու նպատակադրմամբ:

Հարկավ, անգլոհայատակ Հովսեփ Ամիրխանյանին ցարիզմը չէր կարող «պատվավոր աքսորի» դատապարտել,

53 Ալ. Երիցյան, նշված աշխ., մասն Բ, էջ 509—510:

բայց «սպառիչ» ու սպանիչ պատասխան տալ — դյուրին էր նրա համար:

Ներսեսին հասցեագրած Ամիրխանյանի նամակը, երկար ճանապարհորդելուց ու Թիֆլիս մտնելուց հետո միայն, ինչպես և պետք էր սպասել, հասավ Բևաարաբիա: Ստանալով նամակը, Աշտարակեցին այն ուղարկեց Խաչատուր Լազարյանին, որ ռուսերենի թարգմանելուց հետո ներկայացրեց կոմս Բենկենդորֆին: Ռուսաստանի ներքին գործերի տնօրենը անմիջապես պատասխանեց, որ «նորին մեծությունը» Ամիրխանյանի պահանջած տեղեկություններին պատասխան կտա՝ նրա հետ անձամբ հանդիպելուց հետո⁵⁴: Խ. Լազարյանն այս պատասխանը հաղորդեց Ներսեսին, իսկ վերջինս պետք է Պետերբուրգ հրավիրեր Ամիրխանյանին:

Այնուհետև պատմությունը լուծւմ է, բայց ինչ էլ եղած լինի, մի բան պարզ է, որ Բենկենդորֆի բերանով ցարը հասկացրել էր նրան, որ Ռուսաստանի տիրապետության տակ անցած Անդրկովկասում և Հայաստանում ինքն է միայն տերն ու տնօրենը, և որ իր կայսրության մեջ պաշտոնական, ռուսական ազգային-պետական մտածողությունից յուրաքանչյուր շեղում անթույլատրելի է, հետևաբար, պետք է մերժվի ու դեն շարավի:

«Յարական կառավարությունը, — ճիշտ կերպով նկատում է պրոֆեսոր Վ. Պարսամյանը, — Հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ոչ «ամեկախ», ոչ «ամլոնոն» Հայաստան և ոչ Ռուսաստանի հարավում «բուֆերային» մի պետություն ստեղծելու նպատակը: Նա բոլորովին էլ մտադիր չէր իր հսկա պետության մեջ նոր պետություն ստեղծել, այն էլ օտարազգի: Դա հակասում էր նրա պետական սխաեմին, նրա դասակարգային և ազգային քաղաքականությանը»:

Հայկական մարզի վրա ցարական կառավարությունը նախում էր որպես կայսրության մեջ մտնող տերիտորիալ մի

⁵⁴ Նույն տեղում, էջ 511:

միավորի վրա, ենթակա թագավորի իշխանությանը, ղուրկ աղգային ինքնուրույն սեփական իրավունքներին»⁵⁵:

Յարիվմը զգուշացնում էր աղգային-քաղաքական ծրագրեր փայտաշտոպ բոլոր հայերին, որ ինքը ոչ միայն «ասածո կամքով» ստեղծված իշխանություն է «ազատագրված» երկրի վրա, այլև տիրապետող աղղի իշխանությունն է, որի համար գոյություն չունեն ծայրագավառի շահեր:

Իրենց ոգևորության շրջանում հայ գործիչները չկարողացան ըմբռնել, որ 1828 թ. մի թիվ է, որի հետ շատ հույսեր չսրտի կապել: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հարկավ պատմական առաջադիմական իրողություն էր: Այս գնահատականի մեջ ժամանակի հայ գործիչները համեմատել էին: Ռուսական կայսրության սահմաններում Հայաստանը ֆիզիկապես ու տնտեսապես ապահով, լուսավորված տեսնելու Թաղիադյանի և Աբովյանի ռոմանտիկան, Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի ու Ղ. Լազարյանի աղգային-քաղաքական պատրանքներն ունեին պատմական իրենց որոշ արդարացումը, քանի որ մահմեդական աշխարհի դարավոր անշարժության մեջ հայ ժողովուրդը ի վիճակի չէր համախմբել իր ուժերը, նոր ուղիներ հարթելու համար՝ կազմակերպվել քաղաքականապես:

Տակավին 1819 թվականին, էջմիածնի նվիրակ Դանիել Կոնստանտինովիչի հետ Հայաստանի գավառները շրջագայելիս, պատանի Թաղիադյանի առջև բացվում էին պարսկական տիրապետության տակ հեծող իր ժողովրդի կյանքի դժնդակ պատկերները: Նախընթաց արշավանքներից ու ասպատակություններից ավերված գյուղերն ու քաղաքները, ապա խաների, գյուղական իշխանավորների ու հարկահավաքների դորժադրած անասնի խժոժություններն ու հալածանքները, որոնք հայ ժողովրդի համար ստեղծել էին ստրկական պայմաններ, խորհրդածությունների առարկա են դառնում հայրե-

55 Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 138—139:

նասեր Թաղիադյանի համար: Հետագայ իր աշխատություններում Թաղիադյանը փափագում էր ուսական դեմքի օգնությամբ վերացած տեսնել մահմեդական աշխարհի գուլումը, որն, ըստ նրա, հնարավորություններ կստեղծեր ժողովրդի անսահման ազդեցություններն ու նախապաշարումները վերացնելու, նրան լուսավորելու համար:

Իրենց գործունեության առաջին շրջանում Խ. Աբովյանն ու Մ. Թաղիադյանը Ռուսաստանն ընկալում էին իբրև մի ամբողջություն՝ ուսա ժողովուրդ, ուսա կառավարիչ: Աբովյանը, օրինակ, ուսական տիրապետության մեղրամասի շրջանում, գովարտում էր, ներքողում ցարական օրենքները, ուսա շինովնիկների գործելակերպը: Պարսկա-թուրքական լծից սղատված ժողովուրդը և նրա գրողը տակավին գմայլանքի մեջ էին: Ռուսական տիրապետության առաջին տարիներին Աբովյանը անմիջորեն չէր կարող հասու լինել ցարիցմի սոցիալ-տնտեսական և ազգային քաղաքականության էությունը:

«Խնդամիտ զգացմունք երախտազեա Հայկազին յաղատութիւն հայրենեաց իւրոց» բանաստեղծության մեջ նա գովեստի խոսքեր էր ձոնում Հայաստանն ազատագրող՝ «Մեծ ինքնակալին», ողորմած կայսեր Նիկողայոսին: Մտքի հայեցողական արտածումներ կատարող Աբովյանը չէր հավատում կատարված հրաշքին.

Յերազի՜ իցեմ, ի քու՞ն, քէ յանուրջս, ա՞յս է Հայաստան.

Ժպիտ ի շրքունս, տրոփ ի սրտի ի հարց մատչէի:

Ու՞ր այն գառամեալ դեմք հայրենեաց, որ կայր ի վշտի,

Ու՞ր ողբ, սուգ և լաց հնոց ու նորոց ի մերում զնդի.

Ու՞ր դառն արտասուք, կոծ և հառաչանք աղէխարշ ձայնի,

Ո՞ւր բեկ, երաճ, ի՞նչ փարատեցան և չեն լսելի:

Մինչդեռ վարանմամբ զայս անակնկալ դիպումս խորհէի,

Յոր սիրտ իմ խոովեալ յանլոյծ խոովանս կայր

ի տագնապի,

Եւ պատգամախօսն՝ այն կենդանագիր ձերոյ դրոշակի,

Դրկեալ զՀայաստան՝ գծէր ընդ իւր և զայս

հատուած բանի:

Արի, Հայաստան, ոսկի ցամաքեալ ի հիւսսեան դաշտի,
Ընդ փշումն ի քեզ Մեծին Ռուսիայ հոգոյ կեեղանի:

Յո՛ւն կաց, բազմեաց, դուստր տառապեալ

ընդ ձայն աղշունի

Մեծ ինքնակալի, ողորմած կայսեր, Նիկողայոսի⁵⁶:

«Ազատագրւած» ժողովրդի խանդավառ բանաստեղծից տարբեր չէր միաժամանակ նվաճող երկրի աքաղաղ զավակներին մտածողության ընթացքը: Իրենց գրություններում, նամակներում ու հուշերում գեկաբերիստները հակված էին կարծելու, որ ռուսական տիրապետութունը հուժկու խթան կծառայի ազատագրւած Հայաստանի տնտեսության ու կուլտուրայի վարդաքման համար: Այսպէս, 1828 թ. իր գրություններից մեկում Ե. Լաշինովը գրում էր, թե հայերի համար հասել է վերածննդի ժամանակը, և հնարավոր է, որ մի քանի հարյուրամյակ անհանգիստ քնից հետո, Հայաստանի համար կրկին շողա գիտության, արվեստի ու գեղարվեստի ծաղկող դարը⁵⁷: Ռուսական տիրապետութունը ահա ինչ տողեր էր կորզում ազատամիտ գեկաբերիստներից: Յարիզմի տիրապետության հետեանքները իդեալիստորեն ընկալող գեկաբերիստները արդարեւ մեծարում էին հայ ժողովրդի մեջքին ծանրացող նոր ռեժիմը:

Արեւելյան Հայաստանի ազատագրման իրողությունը ինչպէս ժողովրդի, այնպէս էլ նրա ձգտումներն արտահայտող Արուլյանի կողմից ևս մի սլահ ընկալւում էր որպէս քաղաքական վերածննդի սկիզբ, նկատւում մի անհրաժեշտ շրջան հայերի՝ իբրեւ ազգ և պետականութիւն ձևավորվելու մոտալուտ գալիքի ուղիներում: Հեղինակը «Ո՛հ, դար երջանիկ», «Ո՛հ, շքնաղ գարուն» որակումներ էր տալիս իր հայրենիքի

56 Խ. Արուլյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 1948, էջ 21:

57 Տե՛ս Մ. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая, էջ 233:

համար սկիզբ առած նոր ժամանակին: Հրաշք թվացող կյանքը ուրախությամբ էր համակել անգամ հայրենիքի վշտերով գերեզման մտած անցյալի մեծ դավակների հոգիները: Անցողակի նշենք, որ 1828 թ. Մոսկվայում լույս տեսավ «Մուզայք Արարատեան» խորագրով մի ժողովածու, ուր ամփոփված էր Լազարյան սաների գրաբար բանաստեղծությունները: «Այդ ժողովածուն մի մանկական թոթովանք էր,— գրում է ակադեմիկոս Մ. Աբեղյանը,— որը ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի: Դրա մեջ արդեն երևում է, որ «մուզաները» ոչ միայն բարոյական խրատներ ու Աստվածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատվածները, այլև ոգևորվում են մեր անցյալով ընդհանրապես, ունեն արդեն հայրենիքի գաղափար, որով պարծենում են, որովհետև... պարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը»⁵⁸: Հայրենիքն այլևս բիրելիական խորհրդանիշ չէր: «Ռուսիա գոտեպնդեալ է կանգնել յոտին զանկեալն Հայաստան,— կարդում ենք «Ծրախայրիքում»,— ապաքինել զիւանդացեալն Հայաստան, և անօրինակ պայծառութեամբ ի տես հանել ընդհանուր տիեզերաց»⁵⁹: Սկսնակ բերթողների փոքրիկ այս ժողովածուն փառաբանում էր ցարիզմի հայկական քաղաքականությունը և «Հայր հայրենյաց» համարում Պետրոս Մեծին. «...զարթի՛ր աստանօր, ինքնակալը Մեծ, Հայր հայրենեաց մերոց. զարթի՛ր և հայեա՛ց ի բո զիւտ սխրալի՛ որ կայ անծախ, ի ժամանակէ և փառք նորա չէ նսեմացեալ: Զարթի՛ր և վայելեա՛ զպտուղս աշխատանաց քոյ: Նաւատորմիդն ի Քէն կազմեցեալ, չէ՛ այժմ ի վերայ Սեաւ ծովուն, չէ՛ ի վերայ հիւսիսային Ուկիւսնոսի. ու՛ր է ապա. ի վերայ Միջերկրական ծովուն, ի կողմանս արևելեան Արշիպեղագոսի, առ պարբսալօքն Կոստանդնուպոլսի, այսինքն յայնոսիկ տեղիս՝ յորս Դու բազմիցս յառէիր զաչս Քո, և կամէիր նուաճել զամբարտաւանն

58 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հտ. II, Երևան, 1946, էջ 509:

59 «Երեխայրիք ներսիսեան դպրոցին», Տփլիս, 1828, էջ 11:

Բիւզանդիա: Ո՛վ թէ, որքա՞ն Քոյդ, Մե՛ծդ Պետրոս զուարճա-
նայր սիրտ՝ եթե...

Բայց լու՛ր, մեք Քեզ որպէս կենդանույ աւետեմք. լու՛ր,
նաւատորմիդն քոյ յԱրշիպելագոսի՝ առ եզերքք Ասիոյ ՚ի
սպառ կործանեաց զօսմանցւոցն նաւահանդէս: Բարձրաթիւշ
արծիւք Թուսաց տօնախմբեալ ընուն անումքք Քով զամենայն
Արեւելս և աճապարեն յանդիման կալ պարսպացն Բիւզան-
դիայ»⁶⁰: Յարիւմի քաղաքականութիւնն արովյանական ընկա-
լումը ևս չէր զատորոշւում իշխող այս մտայնութիւնից:
«Մուտ Հայկայ ի Հայաստան և արհաւիրք երեակայութեան
նորա ի ժամ պատերազմին որ ի 26 ամին» բանաստեղծու-
թյան մեջ Արովյանը ոգեկոչում է Հայկ նահապետին, որն
Արարատյան երկրում տեսնելով ռուսներին, չի կարողանում
որոշել՝ «Թշնամիք են, թէ ընտանի»: Եվ ահա «որդիք և
թոռունք Հայկայ» պատասխանում են.

Թշնամիք քո վաղուց ի չիք

Դարձեալ՝ կորեան, անուշ մեր հայր.

Այս բաւերաւ Ռուսիայ որդիք

Եկին բերել մեզ նոր այս դար⁶¹:

Արովյանի արխիւի 81 և 84-րդ թվահամարների տետ-
րակներում պահւում են գեներալ Պասկևիչին՝ նրա ձոնած
մի բանաստեղծության երկու ձեռագիր օրինակները. առա-
ջինը 1830 թ. փետրւարի 1-ի թվագրութեամբ՝ «Պայծառա-
փայլ կոմս փրկիչ Հայաստանի, ողորմած տէր 1830 թ.
Տփլիս», փակագծի մեջ գրված է՝ «Ի վեշտասան հասակի
իւրում», երկրորդը՝ «Գովեստ առ գալուստ նորին պայծառա-
փայլութեան Կոմս Երեանու ղեներալ Ֆելզմարշալ և կալա-
լերի Իվանու Ֆեոդորովիչ Պասկևիչի»: «Առ գալուստ նորին
բարձր սրբազանութեան տեառն Կարապետի արքեպիսկոպո-
սի Վրաստանի և Տայոց» բանաստեղծության մեջ Արովյանը

⁶⁰ Նույն տեղում, էջ 36—37:

⁶¹ Խ. Արովյան, ելժ, հտ. I, էջ 61:

գովերգում էր Կարին-էրզրումից հայերի ներգաղթի կազմակերպիչ Կարապետ Բազրատունուն:

Քսանական թվականներին քաղաքականապես անփորձ բանաստեղծը երգում էր իր հայրենիքի փայլուն այն ապագան, երբ Հայաստանի ցիրուցան զավակները խմբվելով մայր երկրում, Ռուսաստանի օգնությամբ, հարուստ են տալիս Հայաստանի երբեմնի փառքին: Իբրև ժողովրդի տրամադրությունների և իղձերի երգիչ, Աբովյանն այս պահին չէր տարբերվում կամ շատ քիչ էր տարբերվում ներդրողներ ձոնող աշուղներից, որոնց քաղաքական խորաթափանցությունից զուրկ ստեղծագործությունների լեյտամոտիվը տիրապաշտ հայրենասիրությունն էր, ռուսական զորքերի մղած հերոսամարտերը կամ այդ մարտերին մասնակցած ռուս ու հայազգի զորավարներն ու զորականները:

«Ի յաղթանակ Յիցիանովի», «Յաղատովին սրբոյ էջմիածնի» և «Առ կայսրն Նիկողայոս Ա.» ոտանավորներում Սերովբե Պատկանյանը (1770—1836 թթ.) արտահայտում էր պարսկական լծից Հայաստանի ազատագրության այն մեծ ցնծությունը, որ ապրել են պատմական մեծ Վրացարձության ժամանակակիցները⁶²:

Ժամանակի հայ գործիչների համար, ռուս-պարսկական պատերազմի առաջ բերած ավերածությունները նման չէին նախընթաց դարերի տակնուվրայություններին: Ռուսական ինքնակալը, նրա գեներալներն ու բանակները աղաատություն էին բերում Հայաստանին, նրա ժողովրդին: «Իսկ այժմ,— գրում էր Մանվել վարդապետ Կյումուշխանեցին,— մինչ այցելութեամբ վերին, և բազմաչազթ ինքնակալին ամենայն Ռուսաստանեայց Նիկողայ Պալովիչին, աղատովին ժամանեալ հայրենեացն մերոց՝ խոհական կառավարութեամբ և քաջ սպարապետութեամբ պայծառափայլ Երևանու զրաֆ

⁶² Տե՛ս «Երգք Սերովբե վարժապետի Պատկանեան ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Աւետիբայ Խաղեղանց», ի Մոսկուա, 1857:

Իւան Ֆէոտրիչ Պասկևիչին...»⁶³: Հեղինակը գոհ էր, որ «Եղէ տկանատես հրաշալի աւերակութեանց քաղաքին և պարսպացն»⁶⁴:

Հայ գործիչները Նիկոլայ Առաջինի և նրա գեներալների մէջ էին մարմնավորում հայ ժողովրդի գործունքը ապագայի հանդեպ:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման նոր էտապից բխող և հայերին համակած ազատագրական խանդավառությունը հայ ժամանակակիցներն ապրեցին ամբողջութեամբ, սակայն հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի գաղութային քաղաքականությունը ի վերջո դուրս չմնաց նրանց տեսադաշտից:

Տակալին դորպատյան տարիներին Աբովյանի գրած հայրենասիրական պոեզիայից դժվար չէ նկատել, որ նրա հեղինակին հանգիստ չէր տալիս օտար պետությունների բռնությանը ենթարկված, ինքնուրույն պետականությունից զրկված և այդ պատճառով աշխարհով մեկ սփռված իր ժողովրդի աննախանձելի կացութիւնը:

Եվ քոչունք անգամ ունեն խրեանց բուն, ուր օթագայիճ
Եւ սողունք անգամ, որք ի սիրտ երկրի անվրդով հանգչիճ.

Այլ մեզ չի՛ք տեղի, չիք ուրեք դադար,
Ի վերայ երկրի, գոր ձեռք քո արար,
Սահի Հայկազունն միշտ ալեկոծեալ
Զաւակ և գտուն, զաշխարհ մոռացեալ⁶⁵:

Անգրկովկասից պոկված Աբովյանին այլևս չէր ամբքում իր հայրենիքի բարվոք վիճակը: Ռուսական տիրապետության մատին վաղեմի պատկերացումները մոլորության էին հանդում, հարկավոր էր անցած ժամանակաշրջանի և կատարված

63 «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց, արարեալ Մանուէլ վարդապետի կիրմիշխանեցիոյ ի 1830 ամի ի Սևան», Վաղարշապատ, 1871, էջ 2:

64 Նույն տեղում, էջ 3:

65 Խ. Աբովյան, Եկե, հտ. I, Երևան, 1948, էջ 69:

դեպքերի հաշվառմամբ վերանայել հին պատկերացումները։
Իր բանաստեղծություններից մեկում Արուվյանը նախանձում
էր «դառնադետ» գերությունից ազատ, Դորպատի գերմանա-
ցի ուսանող երիտասարդությանը։

Երգեցէ՛ք ասեմ երջանիկ որդիք ազատ բնութեան,
Օրհնեցէ՛ք զպատճառն՝ որ ստեղծ զձեզ ի խաղաղ երկրի,
Ուր չի՛ք գերութիւն, ո՛չ սուր կամ հարուած դառնադետ կրի,
Որով անողորմ, ազգն իմ խղնալի տանչի յալիտեան...⁶⁶։

Քայլ առ քայլ նա մերձենում էր տարիներ անց իր հա-
մար բյուրեղացած այն ճշմարտությանը, որ Թուրքմենշայի
պայմանագիրը ծանր ու անհուսալի հիվանդի ցավերը մաս-
նակիորեն մեղմող դեղատոմս էր միայն։ Արուվյանի համար
պարզ էր դառնում, որ Պարսկաստանում տառապող քրիս-
տոնյա հպատակների համար ազատություն նվաճելը երբեք
չէր մտել սեփական ժողովրդի ազատությունը ոտնահարող
ցարական Ռուսաստանի հաշիվների մեջ։

Յարիզմի գաղութային քաղաքականության քննադատու-
թյունը, կամ դժկամությունն այդ քաղաքականությունից, հայ
իրականության մեջ 30—40-ական թվականներին պատա-
հական երևույթ չէր։ Եթե 20-ական թվականներին Երևանը
զրավող ռուսական զորքերը, ցարական բանակի հայ սպա,
աշուղ Պետրոս Մաղաթյանցին (Սեյադ) ներկայանում էին
իբրև ազատարարներ և նա շարունակ Հայաստանի «փրկիչ»
նիկողայ ցարի գովքն էր անում, ապա արբեցումի պահն
անցնելուց հետո գրած իր խաղ-բանաստեղծություններում,
Հայաստանը դիմառնաբար պատկերելով այրիացած, որդե-
կաբույս մի կին, աշուղը ողբում էր նրա երբեմնի փառքի կո-
րուստը, լալահառաչ շեշտով ու թանձր զույներով պատկե-
րում հայ ժողովրդի անմխիթար վիճակը։

Մա՛յր իմ, րնդէ՞ր եմ քաց քո աշխերդ,
Կննռոտ՝ ճակատքդ, տրտում՝ ունքերդ,

66 Նույն տեղում, էջ 78։

Գեղնած՝ շրթունքըդ, քառամ՝ շուրթերըդ
Ասա՛ մի՛ գաղեր՝ յինէն ցաւերըդ:
Գիտեմ՝ երկնեցիք՝ ծանր շատ ողորմ,
Որք քեզ գոյժ բերին, և ո՛չ անտիք,
Թագուցեալ վիրաց բրժըշկութիւն չի՛ք.
Ասա՛ մի՛ գաղեր յինէն ցաւերդ⁶⁷:

Այստեղ մեզ հետաքրքրողն անցյալի գովքը չէ հարկավ, այլ այն, որ տաղասացի երգերից դուրս է մղվում ցարապաշտութեան տիրահաճ մոտիվը:

Հայկական մարզի համար 1833 թ. ստեղծված զինանշանը, որ ժամանակին դիտվում էր հայերի նկատմամբ իբրեւ ցարիվմի գթասրտութեան խորհրդանշան, մեկ տասնամյակ հետո լիովին բացասվեց, «որովհետեւ Ռուսաստանի ամեն կուսակալութիւնները կամ նահանգներն ալ մեյմեկ նշան ունեին, 1833-ին Ռուսաց տերութիւնը Հայաստանին համար ալ նշան որոշեց...»⁶⁸:

1840 թ. օրենքով Հայկական մարզի վերացումը առաջ բերեց հայ ժողովրդի գիտակից մասի քննադատական վերաբերմունքը: Նոր օրենքով ստեղծված վարչաձևը իսպառ անտեսում էր հայերի սոցիալ-տնտեսական և ազգային-կուլտուրական շահերն ու առանձնահատկութիւնները: Այս բոլորը խոր կնիք դրին Աբովյանի ստեղծագործութիւնների վրա:

Միայն կանխակալ միտումով «անհետեղականութիւն» որոնողները կարող են շրջանցել ցարիզմի ազգային-զաղութային քաղաքականութիւնը քննադատող Աբովյանի հատկապէս 40-ական թվականների ստեղծագործութիւնները՝ ընդհանրացնելով նրա զարգացման առանձին շրջանները հատկանշող իրողութիւնները՝ տարաջելով «մանկական թոթովանքները» տրամադրութիւնը նրա հետագա բոլոր ստեղծագործութիւնների վրա: «Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթական ղենքով վերակենդանացած իմ հայրենիքի

67 «Ճոռաբաղ», 1860, հատոր Բ, էջ 442:

68 «Բազմավեկ», 1843, էջ 128:

ազատագրութեան օրերին ում հոգին կարող էր այնքան կենդանի խանդավառութեամբ լինել այդ երջանկութեան հրճմանքով, եթե ոչ՝ իմը: Եւ այսօր էլ պահպանւում են ինձ մոտ, իբրեւ արբութիւն, իմ այն ժամանակվա զգացումների մանկական թոթովանքները»⁶⁹, — գրում էր Խ. Աբովյանը 1842 թվականին:

«Նախկին ժամանակները, — գրում էր նա մի այլ առիթով, — կաշին դեռ պատճառներ, որոնցով հնարավոր էր պահպանել ժողովրդի ոգին և գրավել նրան դեպի դպրոցը: Ներկա Երևանի գավառը, որ առաջ նահանգ էր, բնակահարւար կարող էր ծառայողների մի մեծ թվի. այստեղ կարող էր սակամ նա, որ ստացել էր միջակ կրթութիւն, իր համար պաշտոն և մի կտոր հաց գտնել, իսկ այժմ այդպիսիներն ուրախ կլինեին ունենալ և գրագրի պաշտոն, եթե գտնեին: Բայց սրանից, առաջ այստեղից աշակերտներ էին ուղարկւում պետական բարձրագույն դպրոցները, իսկ այժմ այդ արտոնութիւնը տրւում է միայն ազնւականներին, որոնցից ամբողջ Երևանի գավառում հայերի մեջ հազիւ մի երկու-երեք ընտանիք լինեն: Դեռ շատ ու շատ պատճառներ կան, որոնք արգելք են հանդիսանում այս երկրի լուսավորութեան գործի հաջող ընթացքին, որոնց մասին ես լռում եմ»⁷⁰:

Յարիւմի հայկական քաղաքականութեան արդյունքներից յուրովի անբավականութիւն էր հայտնում նաև Թադիադյանը: «Կես դարուց և այսօր, — գրում է նա «Ազգասէր Արարատեանում», — բովանդակ ազգ հայոց Գոգ ծերոմին Սիմէօնեանայր սիրայրեաց փափագանօք տեսանել զներսես իւր աթոռ սրբոյ Լուսավորչին հաւատացեալ թէ համագամայն ծաղկեր ազգն ամենաշառաւիղ գիտութեամբ և աշխարհին պայծառանայր արեւատիւք քաղաքականութեամբ: Եկն էհաս փափագանաց իւրոց. բայց դեռ ազգն փափագի հասանել իւրոցն և դեռ ոչ էհաս փափագանաց իւրոցն և դեռ ոչ էհաս»⁷¹:

69 Խ. Աբովյան, ԵՎԺ, հտ. X, Երևան, 1961, էջ 260:

70 Եր. Շահագիր, Դիւան Խ. Աբովյանի, հտ. I, Երևան, 1940, էջ 157:

71 «Ազգասէր Արարատեան», 1849, № 27:

Դեղնած' շրթունքըդ, թառամ' շուրքերըդ
Ասա' մի' գաղեր՝ յինէն ցաւերդ:
Գիտեմ' երկնեցիւր՝ ծանր շատ որդիք,
Որք քեզ գոյծ բերին, և ո՛չ աւետիք,
Թագուցեալ վիրաց բլծըշկութիւն չի'ք.
Ասա' մի' գաղեր յինէն ցաւերդ⁶⁷:

Այստեղ մեզ հետաքրքրողն անցյալի գովքը չէ հարկաւ, այլ այն, որ տաղասացի երգերից գուրս է մղվում ցարապաշտության տիրահաճ մոտիվը:

Հայկական մարզի համար 1833 թ. ստեղծված զինանշանը, որ ժամանակին դիտվում էր հայերի նկատմամբ իբրեւ ցարիվմի գլխասրտության խորհրդանշան, մեկ տասնամյակ հետո լիովին բացասվեց, «որովհետեւ Ռուսաստանի ամեն կուսակալությունները կամ նահանգներն ալ մեյմեկ նշան ունեին, 1833-ին Ռուսաց տերությունը Հայաստանին համար ալ նշան որոշեց...»⁶⁸:

1840 թ. օրենքով Հայկական մարզի վերացումը առաջ բերեց հայ ժողովրդի գիտակից մասի քննադատական վերաբերմունքը: Նոր օրենքով ստեղծված վարչաձևը իսպառ անտեսում էր հայերի սոցիալ-տնտեսական և ազգային-կուլտուրական շահերն ու առանձնահատկությունները: Այս բոլորը խոր կնիք դրին Աբովյանի ստեղծագործությունների վրա:

Միայն կանխակալ միտումով «անհետեղականություն» որոնողները կարող են շրջանցել ցարիվմի ազգային-գաղութային քաղաքականությունը քննադատող Աբովյանի հատկապես 40-ական թվականների ստեղծագործությունները՝ ընդհանրացնելով նրա դարգացման առանձին շրջանները հատկանշող իրողությունները՝ տարածելով «մանկական թոթովանքները» տրամադրությունը նրա հետագա բոլոր ստեղծագործությունների վրա: «Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթական ղենքով վերակենդանացած իմ հայրենիքի

67 «Ճոթաքաղ», 1860, հատոր Բ, էջ 442:

68 «Բազմավեպ», 1843, էջ 128:

արշավանքի հետևանքով քաջքայլով հայ վաճառականութ-
յանն առաջարկում էր նոր գաղթավայրեր հիմնել հեռավոր
Ավստրալիայում⁷⁴։

Մինչդեռ Ռադիստիկանը միայն բողոք էր հայտնում գա-
ղութային քաղաքականությանը, Աբովյանը լուրջ փորձեր կա-
տարեց բացահայտելու հետամնաց ու ճնշված ժողովուրդնե-
րի նկատմամբ մեծ տերությունների կիրառած շահագործման
ու բռնության ձևերի էությունը։ Իր «Ամերիկայի գյուտը» աշ-
խատության մեջ Աբովյանը ցույց տվեց արտադրության
կապիտալիստական եղանակի առավելությունները նախորդ
արտադրահարաբերությունների հանդեպ, բայց և միաժամա-
նակ խարազանեց կեղեքման ու թալանի նրա մեթոդները։

Մեծ հայրենասերներին զայրացնում էին ցարիզմի կող-
մից գործադրվող ազգային-գաղութային քաղաքականու-
թյան «նուրբ» և բռնի ձևերն ու եղանակները։ Եթե 20-ական
թվականներին Աբովյան բանաստեղծը իր երախտապարտ
ժողովրդի անսահման սերն էր երգում ցարին ու նրա զենե-
րալներին, ապա։ «Վերք Հայաստանին» գրելու նախօրերին նա
արդեն տեսնում էր, թե ինչպես «...մեկ խաչապաշտ էլ մեր
խեղճ ազգի հետն ընկած ման ա գալիս որ արինը ծծի և հո-
դին հանի»⁷⁵։ Ճիշտ է, այլևս չկային պարսկա-թուրքական
վայրագությունները, չէին հափշտակում և առևանգում, գե-
ղեցիկ աղջիկներին բռնությամբ չէին քշում խաների հարեմ-
ները, բայց միայն այս չէր այն ակնկալությունների համա-
գումարը, որ փայփայել էին հայերը։

Եթե մահմեդական տիրապետության դժոխքը Աբովյանի
գրչին տալիս էր հակապարսկական միտվածություն, ապա
ցարական գաղութականությունը նրա առջև բացում էր նոր
հակասություններ, որոնք այլևս չէին արդարացնում գրողի
երբեմնի ոռոմանտիկան ու հավատը։ Նա բողոքում էր այն

74 Տե՛ս Ա. Կաթիկյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատ-
մության, հատոր առաջին, էջ 399—400։

75 Ն. Աբովյան, Ելժ, հտ. II, Երևան, 1948, էջ 85։

քանի դեմ, որ ցարիզմը ոչ միայն ոտնահարել էր իր ժողովրդի ազգային, ինքնասիրությունն ու ակնկալությունները, այլև հալածանք էր սկսել նույնիսկ ազգապահպանման ավանդական ազդակների դեմ: «Տեսնում էի,— «Վերքի» առաջաբանում գրում էր Խ. Աբովյանը— որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ է գտնվում: Մեր ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն ակել ա մեր օրին: Հայոց լեզուն առաջս փախչում էր Կրեմլի նման...»⁷⁶: Աբովյանը սրեւ էր խրում ցարիզմի տիրապետության շնորհներով արեւցած այն «հաստափոք» հայազգիների մարմինները, որոնք արտոնչալ դիրքեր, տաքուկ պաշտոններ ձեռք բերելու համար պատրաստ էին գնալ ցանկացած ստորության: «Աստուծով հինգ տարուցը եզը,— ասում է նրանցից մեկը,— էլ ոչ հայ կտեսնիս, ոչ հայի անուն կլսես, կորչին, դրանց քոքն էլ կտրվի. հայի անումը՝ որ վրես չէր էլել, ես գիտեմ՝ թե ի՞նչ տեղ կը ճարեի, ի՞նչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կճարեի»⁷⁷:

Մեծ գրողը ռուսական տիրապետության դրական հետևանքները մի կողմ չէր վանում: «Թիֆլիսը, որ գրեթե ավաղակալին որջ է հանդիսացել լեզգիների և այլ հարևան, մինչև այսօր էլ անկուլտուրական ժողովուրդների համար, որոնք անօրինում էին նրա բախտն ըստ իրենց քմահաճույքի, վարող է իր տեսքով շատ եվրոպական քաղաքների շարքը դասվել: Լեռնագագաթները և բարձունքները հարթվում են, այգիներն ու հովիտները վերացվում և նրանց տեղ հանդես են գալիս կանոնավոր փողոցներ, գեղեցիկ, եվրոպական շինարարական ճաշակով կառուցված փառահեղ շենքեր, որոնք իրենց արտաքին շքեղությամբ և ներքին հարմարություններով գրեթե ետ չեն մնում եվրոպական տներին: Այդ շենքերից քչերն են պատկանում պետությանը, մեծ մասը մասնա-

76 Խ. Աբովյան, ԵԼՓ, հտ. III, Երևան, 1948, էջ 51:

77 Նույն տեղում, էջ 237:

վոր մարդկանց սեփականութիւնն են, գլխավորապես վաճառականների, որոնք զիտեն ջանասեր ձեռքերով և ճարպկութեամբ միացնել Ասիայի և Եւրոպայի գանձերը»⁷⁸։ Աբովյանը գիտակցում էր, որ Ռուսաստանի շնորհիւ հայ ժողովրդի երբեք մակուկը փրկվել էր մահմեդական ծովի մեջ անլուր կորչելու ահաժոր վտանգից։ Սակայն այդ վտանգի վերացումը տակավին չէր բուժում Աբովյանին մտահոգող վերքը։

«Քե մենք լսենք, թե բազի անաստված, անօրեն հողի... շամաշի էստեղ, էնտեղ գրքում կամ կաղեթում, հայի միսը ծամի, քարինք կաղաղակեն, սարերը կլկայեն, ու ամենաողորմած կայսեր հրովարտականն ու շնորհակալութիւնն, խաչերն ու նշաններն, թոշակն... ու պարգևներն՝ որ շատ անգամ մինչև էդին գլուղացին էլ ստանում էր, թող սուր դառնան էնպես կույր աչքը մտնին՝ որ հայի դադրը լավ իմանաւ և մեր արածը... չսեպցնի իր սև հոգովը, իր անհոգի շնչովը»⁷⁹։

Աբովյանագիտութեան զարգացման արդի մակարդակը հնարավորութիւն է տալիս վերանայել, ինչպես անցյալում, այնպես էլ սովետահայ պատմագիտութեան և գրականագիտութեան մեջ տեղ գտած այն կարծիքը, որի համաձայն Աբովյանի ստեղծագործութեան՝ փառապսակը՝ «Վերք Հայաստանին» մահմեդական տիրապետութեան տակ հեղ հայ ժողովրդի ողբն է և, Ընդհակառակը, նոր ռեժիմի ներքո՝ նրա կյանքի փառաբանութիւնը։ Գաղտնիք չէ իրոք, որ «Վերքը» պարսից տիրապետութեան հայակու ժամանակաշրջանը՝ առանց խնդաթյուրման անդրադարձնող մի հայելի է, որտեղից երևում է, որ վերջին խաների օրոք Արարատյան աշխարհի հայութիւնը փրկութեան ելք էր որոնում իր ծանր կացութիւնից։ «Վերքը» մարմնավորում էր ամբողջ արեւելահայ ժողովրդի ակնկալութիւնները Ռուսաստանի հանդեպ, որ գոյատեւել է, հաղթահարելով ժամանակի փորձութիւնները։ Աբովյանը այնտեղ ցույց է տալիս, որ 20-ական թվականնե-

78 Խ. Աբովյան, Ելժ, հտ. VIII, Երևան, 1958 էջ 154։

79 Խ. Աբովյան, Ելժ, հտ. III, էջ 304։

րին, հայ ժողովուրդը ռուսաց հովանու տակ էր որոնում պարսկա-թուրքական մղձավանջից ազատվելու հուսալի ուղին: Շատ ուշագրավ է այդ տեսակետից քարեկենդանի սեղանն օրհնող քահանայի խոսքերը. «Տեր աստված՝ դու մեր ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի, ընչանք մահ մի տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք»⁸⁰: Հայ ժողովրդի քաղաքական կացությունը Արովյանը նույնացնում էր «շունչը բերանը հասած» մարդու վիճակի հետ և ելքը տեսնում այն բանում, որ «ռուսաց հզոր արծիվը գա և իրանց հողն ու զավակը իր թևի տակովն անի»⁸¹: Գալիքի հույսերով խանդավառված հայ ժողովուրդը «Վերքում» անկեղծ՝ զգացմունքներ ունի Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ: Հեղինակը բարեկամական այդ զգացմունքն արտահայտել է վեպի անքակտելի մասը կազմող նրա հավելվածի՝ «Զանգիի» վերջում, Վուլգա և Զանգու գետերի գրկախառնման պատկերով: «...Մեկ ահագին շորս ջաղացի ջուր՝ մեկ բարձր բլրի տակից..., դուրս ա պրծնում... գնում Ֆրեսնու դաշտը՝ որ նրա էրված, խորովված սիրտը հովացնի էլա, Ապարանու սուրը էջմիածնին, Վաղարշապատին, Արմավիրին, Երասխին, Մասիսին պատմի..., ու տրտում Երասխի հետ Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն... գնան, Փուռն էլ մեջ անեն, իրանց արտասուքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովի սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչին, Պարսից նավերը ջախընփուրթ անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեղարի ու էն իր բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ եդ իր առաջին փառքին հասնի»⁸²: Պատմական վավերագրի համարժեք գեղարվեստական այս պատկերում արտահայտություն է գտել ժողովրդի և՛ անկեղծ բարեկամա-

80 Խ. Արովյան, ԵԼԺ, հտ. III, էջ 33:

81 Նույն տեղում, էջ 55:

82 Նույն տեղում, էջ 113—114:

կան զգացմունքը դեպի ռուս մեծ ժողովուրդը, և՛ նրա զարու-
վոր թշնամանքը՝ պարսկական կաշկանդիչ շղթաները, և՛ հե-
ղինակի փափագած հույսերը՝ կապված ռուս պետականու-
թյան հետ: Սա ոչ թե 40-ական թվականների Աբովյանի մտա-
ժողովյունն էր, այլ 20-ական թվականների հայ դորժիչների
և ամբողջ ժողովրդի լուսանշմար երազանքը: «Վերք Հա-
յաստանին» պատմություն է, հայ-ռուսական փոխհարաբե-
րությունների՝ մասնավորապես 19-րդ դարի առաջին երես-
նամյակի վիպականացված պատմությունը, որտեղ գալիքով
ոգևորված ժողովուրդը խորտակում է բռնակալի լուծը:

Իսկ վերքը գրելու պահին, այսինքն՝ 40-ական թվական-
ների սկզբին չկար այդ հավատը: Հեղինակի մոտ, ինչպես
առիթ ենք ունեցել դիտելու, արդեն բացահայտ էին «քբիստո-
նեա ու լուսավոր» Ռուսաստանից հիասթափվելու նշանները:
Աբովյանի «Վերքը» իր հայրենակիցների աչքերը բացելու,
նրանց երբեմնի ակնկալությունները իրօրյա կացությանը
հակադրելուն էր հետամուտ, և եթե անցյալին հավատարիմ
պատմավիպասանը իր ժողովրդի երախտագիտությունն էր
հայտնում ռուս ժողովրդին՝ այդ չէր հարկադրում նրան մո-
ռացության տալ իր ժողովրդի ազգային-քաղաքական նպա-
տակամղումները: Աբովյանը կարողացավ ոչ միայն պատ-
կերել բռնապետական Պարսկաստանի անօրինականության
միջավայրում հայերի թշվառությունը, այլ ներկայի և անց-
յալի հակադրությունների մեթոդով ցույց տալ ցարիզմին, որ
ի դեմս 20-ական թվականների հայ կտրիճների երևան են
եկել նոր մարդիկ, որոնք պայքարով ու կռիվով պիտի համո-
ղեն հին ու նոր բռնակալներին, որ իրենք այլևս վաղեմի
ստրուկներ չեն:

Աբովյանի ազգային նպատակադրումների այս կողմը
նկատի ունի Աշ. Հովհաննիսյանը, երբ գրում է. «Թվում է
մեզ, որ մի հայտնի չափով այդ դժգոհության արգասիքներից
մեկն է հենց «Վերքը», որի հեղինակը, անբավական չինով-
նիկների դոռող... այլամերժ քաղաքականությունից, հիշեց-
նում էր ռուս նվաճողներին նրանց «աղատարար» նպատակ-

ները, շեշտելով միաժամանակ նաև «աղդի» ծառայությունները ուսս զենքի հաջողություն գործում»⁸³:

Յարիզմի գաղութային քաղաքականության նկատմամբ Արուվյանի քննադատական դիրքավորումն ավելի ուժգին հընչեց նրա կյանքի հատկապես վերջին հնգամյակում: 1847 թ. ն. Աշտարակեցուն գրած նամակում խոսելով հայ ժողովրդի իրավագրվության մասին, Արուվյանը գրում էր, որ չի կարելի տննկատ անցնել այն ամենի կողքով, որոնց մասին քարերն էլ են աղաղակում, չի կարելի սրտում թաքցնել այն տանջող ցավը, որն զգում է ամեն մի հայրենասեր: «Ինչու՞ են խարում մեզ, — շարունակում է հեղինակը, — Կովկասի կեղծավոր լրագրերը, թե մեր ազգը փառքի ու բարեբախտության մեջ է, որ ճշմարտության օգաձայն շոխոգ է միայն»⁸⁴:

Պատմական իրադարձությունների տննդնեցները առավել ցայտունորեն ցույց տալու համար, Արուվյանը հաճախ սրում, չափազանցնում էր ուսական տիրապետության շրջանի անարդարությունները, շարաշահումները, ցարական բյուրոկրատիայի բիրտ ուժի կամայական գործողությունները: «Դահլձ պարսիկների ու տաճիկների մահակների տակ միսիթարում էր մեր սուրբ հավատը, այժմ ամենաօրհնված Ռուսաց տերության խնամքի թեերի տակ անառակությունը և անկարգությունները կեղեքում են ամեն մի տեսնող անցավորի անմեղ սիրտը միայն: Ինչու՞ վ կարող ենք աղատվել մեր այս ցավերից, ինչպե՞ս թաքցնեմ վերքերս, որոնք օրըստօրե սպառնում են նաև ազգի ամբողջ մարմինը գիշատել: Եվ ի՞նչ է այս բոլորի աղբյուրն ու պատճառը, եթե ոչ ագիությունը, որ զորեղ բռնակալության ներքո սպառնում էր, իսկ այժմ օրենքի սլաշապանության վարագույրի տակ, ինչպես անբուժելի ժանտախտ, վարակել և գրավել է ամենքի սիրտն ու հոգին:

Բարբարոսների օրերով իսկ Սիմեոն կաթողիկոսը, Պետ-

83 Աշ. Հովհաննիսյան, Խ. Արուվյան, Երևան, 1933, էջ 32:

84 Խ. Արուվյան, ՆԼԺ, հտ. X, Երևան, 1961, էջ 295:

յոս Բերդումյանը հոգում էին ծաղկեցնելու Հայոց Աթոռի վիճակը, իսկ մեծազոր Նիկողայոս արքայի և ուսաց հղոր տերության օրերին, գոմեշները և էշերը պետք է զորանան լճերի մեջ և պարարտանան մեծակառույց գոմերի մեջ:

...Որտե՞ղ է բարեբախտությունը, ո՞ւր է ազատությունը՝ իր անգին հատկության արժանի արդյունքը»⁸⁵:

Այս նամակի գրելակերպը մի պահ մեզ փոխադրում է Վրաստանում 19-րդ դարեմուտին տիրող այն տագնապալի ժամանակները, երբ նոր կարգերից դժգոհ վրաց ազնվականները ժամանակ առ ժամանակ դիմում էին ցարին, բողոքում, թե պարսիկների, թուրքերի ու լեղզիների տիրապետության ժամանակ իրենք այնպիսի ծանր թշվառության չէին հասել և Վրաստանը նմանօրինակ ճնշում չէր կրել, որքան այժմ⁸⁶: Աբովյանը դիտեր, թե Նիկողայանի դժնդակ ուժիմը ինչպես էր փակում ճշմարտախոս բերանները, ուստի և ասլում էր մոտալուտ ողբերգության տագնապալ: «Ձանուն իմ ո՛չ նշանակեմ ի ներքոյ զրոյս, այլ մեծախոհ հոգի Ձերդ վեհափառութեան մի՛ մեղս համարեսցի ինձ զարգար ամբաստանութիւն իմ, որ բղխի յազգուսէր աղբէ: Յայլ տէրութիւնս Եւրոպիոյ ուրախ լինին, որ զարդարն խօսի և խորհէ, չգիտեմ աստ որպէս, միմիայն մարթ է կազեթիւ նախատել զյանդրդնութիւն իմ»⁸⁷:

Յարական ինքնակալության կողմից Հայաստանում իրագործվող միջոցառումները Աբովյանը միանգամայն անբավարար էր համարում Երկրի արտադրողական ուժերի հետագա աճման, բնակչության մշակույթի զարգացման և ժողովրդի բարեկեցության բարձրացման համար: «Ճանապարհորդություն գեպի Անիի ավերակները» երկում հայ ժողովրդի պատմա-հասարակական կյանքի վերաբերյալ Աբովյանի խորհրդածությունները սոսկ անցյալ տալամբությունների

⁸⁵ Նույն տեղում, էջ 296—297:

⁸⁶ Տե՛ս АКАК, том II, էջ 658:

⁸⁷ Խ. Աբովյան, Եկժ, հտ. X, էջ 298:

վրա խաբսխված մտորումներ չէին: Այստեղ Աբովյանը հակադրվում էր կղերա-ազնվականական պատմագրությանը, որը ելնում էր միջնադարյան սխոլաստիկայի հինօրյա ուշխարհայացքից և ի վերջո հանգում ցարիզմի գաղութային քաղաքականության արդարացմանը: Աբովյանը փորձեց իր ժողովրդի պատմությունը պոկել նախախնամության կամքից և բացատրել ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքներով: Նա Մոստեսքյույի «Մտորումներ հռոմեացիների մեծության և անկման պատճառների մասին» աշխատության ոգով էր փորձում հերքել Անիի անկման վերաբերյալ աստվածաբանական առասպելը⁸⁸: Ոչ մի կետում Աբովյանի, ինչպես նաև Թադիսյանի ու Ալամդարյանի, ազգային հայրենասիրական սգորումները դուրս չեկան հայ ժողովրդի իրավունքների շրջանակներից և եթե նրանք տեղ-տեղ տուրք էին տալիս ազգային անցյալի մեծարանքին, ապա միայն հայ հայրենիքի գոյության կանչի ձայնով:

Պատմության բնկալման այս մեթոդով Աբովյանը ջանաց դտնել Հայաստանի պատմության ուսանելի անցյալը և մի հայտնի չափով այն դարձրեց իր ազգային հայրենասիրական հայեցողության հիմնական գծերից մեկը: «Աբովյանի ազգային-պատմական գիտակցությունն անդրադարձնում էր անցյալի մի ըմբռնում, երի մեջ ցոլանում էր նրա քաղաքական առկա արամադրությունը»⁸⁹:

Անցյալի պատմության նկատմամբ Աբովյանի հայացքը չէր ցուցադրում ներկայի հանդեպ որևէ հետադարձ միտում, այլ այդ արտահայտման մի եղանակ էր ի հայտ բերելու իր զժգոհությունը ազգային-քաղաքական արդի վիճակից.

«Խոսել Անիի մասին,— գրում է հեղինակը,— նշանակում է շոշափել Հայաստանի պատմության ամենանբերի տեղը: Այդ քաղաքի անունն անգամ բորբոքում է նույն զգաց-

88 Տե՛ս Խ. Աբովյան, *ԵԺԺ*, հտ. VII, Երևան, 1956, էջ 168:

89 Աշ. Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը*, գիրք երկ-րորդ, Երևան, 1956, էջ 508:

մունքները, ինչպիսիք յուրաքանչյուր մարդու հոգում Պալմիրը, Բաբելոնը, Կարթագենը և, վերջապես, Հռոմը»⁹⁰:

Օտար բռնադատիչները ծաղկյալ ու մեծաշուք Անի քաղաքի կործանողները, հայ ժողովրդի անկախության ոչնչացնողները եղան միաժամանակ: Անիի անկումից հետո «Յշնամական-բարբարոսական ուժերի թոհուրեոհի ժամանակ», Հայաստանի ղավակները ցրվեցին աշխարհով մեկ՝ Աստարխան, Կալկաթա, Պոլիս, Գալիցիա, Հունգարիա, Լեհաստան և Փոքր Ասիայի այլ վայրեր: Փոխվել են պատմական ժամանակները, բայց չեն փոխվել հայ ժողովրդի ոգին և ինքնատիպ գծերը, նրա ստեղծագործ և շինարար հատկությունները: «Այժմյան բարենպաստ հանգամանքներում» հայ ժողովուրդը ընդունակ է ոչ միայն վերակենդանացնելու, այլև բաղմապատկելու իր նախկին ստեղծարար առաքինությունները⁹¹, բայց դրա համար հարկավոր է հոգալ նորանվաճ երկրի բարեկարգման մասին, ընդարձակել ջրանցքների ցանցը, կառուցել ճանապարհներ, ոռոգելի դարձնել անջրդի տարածությունները, բարձրացնել տնտեսության վարման գիտատեխնիկական մակարդակը: Այսպես, եթե «մեզանում լինեի երկրագործական դպրոց և փորձված լանդ-վիրտ (գյուղական տնտեսություն վարող), այն ժամանակ Ֆրանսիական ոսկիները նույնպիսի առատությունը Վրոսսին մեր միջերբների դիմաց, ինչպիսի առատությունը այժմ դրանք հոսում են մեր տղրովների համար»⁹²: Աբովյանը բացահայտում էր ցարիզմի զաղուխյին քաղաքականությունը, նրա կառավարիչների անբարեհոգի վերաբերմունքը երկրամասի կարիքների ու պետքերի նրկատմամբ:

Ուշագրավ է, մինչև Բալավատսկու Երևանի գավառապետ նշանակելը՝ ռուս կառավարիչներին հասցեագրված

90 Խ. Աբովյան, ԵԼԺ, հտ. VII, էջ 166:

91 Տե՛ս նույն տեղում, էջ 168:

92 Նույն տեղում, էջ 136:

Արովյանի խոսքերը: «Միայն նա, ով,— ինչպես ես,— ահանա-
տես է եղել երկրի (Սարդարապատի շրջան—Ն. Ս.) ե՛ նախ-
կին բարեկարգությանը, ե՛ աշխարհի կատարյալ ամայու-
թյանը... Նա առանց վրդովմունքի չի կարող հիշել մեր ժամա-
նակներում Երևանի նախկին կառավարիչների (խոսքը պար-
սիկ խաների մասին չէ—Ն. Ս.) անհոգությունն ու անշրջա-
հաշիցութունը...»⁹³:

Յարական բանակների օգնությամբ պարսկական լծից
ազատագրված հայ ժողովուրդը և նրա գործիչները մեծ սպա-
սելիքներ ունեին Ռուսաստանից, մինչդեռ, «Բարերար
Ռուսաստանը,— հեղնում էր հեղինակը,— ժողովուրդների
ցանկության և սովորություններին հակառակ ոչ մի բան չի կա-
մենում ձեռնարկել: Միապետություն, խաղաղություն, և
կրոնի ու ազգային,— թեև հնացած, քարացած,— սովորու-
թյունների և սպրեկակերպի ազատություն, ահա՛ Ռուսաս-
տանի հայրական միջոցառումներն ու որոշումները»⁹⁴:

Նկարագրելով այն ծանր վիճակը, որի մեջ դանձում էին
վրաց և հայ ճաբաբեր Վրաստանում, Թաղիադյանը գրում էր,
որ ռուսաց պետությունը չի ջանում բեթեացնելու նրանց
գրությունը և առհասարակ վերջ տալու Կարսի անկարգու-
թյուններին: Ըստ Թաղիադյանի, ժողովուրդն ռուսվել փառք
էր ապրիս պարսիկներին, քան թե «քրիստոնէիցս ալսոցիկ
գերչաց»⁹⁵: Ավելին, ցարական սատրապները ռուս և հայ
ժողովուրդների բարեկամության և նրանց կուլտուրական
մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցներ ձեռնար-
կելու փոխարեն, բռնել են հայ ազգային-մշակութային
հաստատությունների նկատմամբ հալածանքն ու ժեղացնելու
և «տեղական լեզուները» ոչնչացնելու ուղիղիժ: «Ավազ ուսու-
ցիչ Նիկողեւիֆինը,— գրում է Արովյանը,— դեռ համարձակ-
վեց արտահայտվել ահա թե ինչպես. «Կառավարությունը

⁹³ Նույն տեղում, էջ 189—190:

⁹⁴ Նույն տեղում, էջ 183:

⁹⁵ Տէ՛ւ Մ. Թաղիադյան, Հանապարհորդութիւն ի Հայս, Կապաթա,
1847, էջ 111—113:

ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուր ուզում եք դրանց կրկին կենդանացնել ու ամրապնդել»⁹⁶։ Թե այդ տողերը որքանով էր հարազատորեն արտացոլում ցարիզմի ազգային-զաղուլթային քաղաքականությունը, երևում է տարիներ առաջ Նիկոլայ Առաջինին՝ սենատոր Հանի գրած այն գրությունից, ուր մասնավորապես ասված է՝ «... Իրենց լեզվի առաջացման, իրենց աղբատիկ գրականության և հայրենի պատմության վերաբերյալ վրաց և հայ երիտասարդությանը գիտական բնօրինակներով ուսումնասիրությունների մեջ խրախուսելով կնշանակիր... նախ՝ նրանց հրահրել գեպի անհանգստություն և հուլմունքների պատճառ հանդիսացող կեղծ ժողովրդայնության երազանքներ, և երկրորդ՝ հեռացնել այդ հիասքանչ և հարուստ հույսերով լի երիտասարդության միաձուլումը ռուս ժողովրդայնությունից»⁹⁷։ Եթե, մի կողմից, այդ մտայնությունը ճանապարհ էր հարդարում ցարիզմի ազգային-զաղուլթային քաղաքականության «դյուրին» կենսագործման համար, ապա մյուս կողմից՝ հայ մտավորականության շրջանում առաջ էր բերում անվստահություն և հոռետեսություն՝ «ներին գերեզմանցության» կողմից «խաղաղության և ապահովության» արժանացած Հայաստանում ազգային կրթական գործի նախանձախնդիր գործիչների ձեռնարկումների նկատմամբ։ Ցարիզմը խափանում էր պաշտոնական ժողովրդայնությունից յուրաքանչյուր շեղում։ «Մ. Թադիադյանը, որի մասին գուցե լսած լինեք, — Թիֆլիսից Աբովյանին հաղորդում էր Մսեր Մսերյանը, — գալով Հնդկաստանից, ջանք է դնում մի դպրոց բանալու Վաղարշապատի ավերակներում՝ հայրենիքի որդիներին լուսավորելու համար։ Հրաջք կլինի, եթե գլուխ դա, ինչպես ինքը հույս ունի»⁹⁸։ Ապագա «Ճոսքաղի» խմբա-

96 Խ. Աբովյան, ԵԼԺ, հտ. VII, էջ 196։

97 «Колониальная политика Российского царизма в Азербайджане», М.—Л., 1936, էջ 313։

98 Ե. Շահազիզ, Դիվան Խ. Աբովյանի, Երևան, 1940, էջ 474։

գիրը ճիշտ էր անշուշտ, հրաշք չկատարվեց: Յարիզմի հայահալած քաղաքականությունը և այդ քաղաքականությունն անուղղակիորեն նպաստող Հովհաննես Կարբեցին, որ կաթողիկոսական գահին բազմելու առաջին իսկ օրից լիապես դրսևորեց իր թշնամանքը՝ սակավաթիվ մտավորականության մեջ խմորվող լուսավորական գաղափարների հանդեպ, ստիպեց հայրենասեր ու դեմոկրատ դրողին, երկար դեգերումներից հետո, կրկին ծվարել հեռու Գանգեսի ափերին:

Այսպիսով, հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների երկարատև ուղին վերջում հանգեց Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին. դա ոչ 18-րդ դարի հայ աղատագրական շարժման ղեկավարների ակնկալած անկախությունն էր և ոչ էլ միացման շրջանի հայ գործիչների փափագած ինքնավարությունը: Երբ «առածո կամքով» հաստատված՝ ցարիզմի վարչական, հասարակական-քաղաքական հիմնարկները դուրս եկան ցարի, նրա ղիվանագետ գեներալների՝ փայլուն խոստումների դառն հիասթափություն: Բերող մի ծաղրանկար, ժամանակակիցներին այդ պահի միայն ակներև դարձավ, որ ցարիզմի խոստացած հայկական անկախությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ռուսական ինքնակալի բացարձակ իշխանությունը: Հայ ժողովրդի դարավոր երազանքը վերածվեց ռուսական կայսրության մի անկյունում անձի ու գույքի ապահովության մարեկու երաշխիքի: Հնից նորին անցնելու ժամանակաշրջանում հայ գործիչները որոշակիորեն արտահայտեցին պատմական բեկմանը յուրահատուկ հասարակական խավերի ձգտումներն ու տրամադրությունները: Կատարված դեպքերի էությունը հաճու դառնալուց հետո, հայ գործիչների մի խումբն ընտրեց նոր կարգերի հետ հաշտվելու ուղին: Այդ խմբի ամենանշանավոր դեմքը՝ Ն. Աշտարակեցին հետագայում ոչ միայն համակերպվեց ցարական ռեակցիայի ընթացքին, այլև փորձեց հայ կյանքի հնարավոր հեղաբեկումը կանխել պետական պաշտոնյայի բարեխոսությամբ և իշխանության դաժանությունը բողոքողից ցավագին թախանձանքներով:

Ներսեսից տարբեր չէր և Ղազարոս Լաղարյանի, Կարապետ արքեպիսկոպոս էրզրումցու, Կոստանդին Երկայնաբազուկ Արղությանի գործունեության ընթացքը:

Ստեղծված նոր իրադրություն նկատմամբ այլ դիրքորոշում ունեցան լուսավորիչ-դեմոկրատները (Հ. Ալամդարյան, Խ. Աբովյան, Մ. Թադիագյան): Աշտարակեցուց ոչ պակաս՝ 20-ական թվականներին սրանք ևս խտնդավառված էին Հայաստանում ռուսական տիրապետության հաստատմամբ և ձոներ ու ներքողներ փին գրում այդ առթիվ: Երեսնական թվականները դարձան իդեալի և իրականության տարանջաման տարիներ: Յարական կառավարությունը Անդրկովկաս և Հայաստան փոխադրեց ռուսական ֆեոդալա-ճորտատիրական իրականության հոռի կողմերը: Աբովյանը եկավ այն համոզման, որ ցարիզմը ոչ թե ազատագրել, այլ «...նվաճել է Հայաստանը»⁹⁹, իսկ ազատագրական խոստումները նրա դադարձային քաղաքականության նպատակների կենսագործման համար լոկ նախերգանք են ծառայել: Իրենց հին սլափերացումները վերանայիցին նաև Ալամդարյանն ու Թադիագյանը: Արտահայտելով ամբողջ հայ ժողովրդի տրամադրությունները, բայց չկարողանալով տալ այդ տրամադրությունների առաջ բերած որոշ հարցերի պատասխանները, նրանք հաճախ կողմնորոշվում էին դեպի անցյալը: Սակայն հայ դեմոկրատ լուսավորիչների մտորումները կորած անցյալի էլեգիան չէր: Աբովյանն ու Թադիագյանը ջանում էին անցյալը ենթարկել ներկայի կարիքներին: Ծառանալով ցարիզմի տիրապետության պրակտիկայի բազմաթիվ ազգային կոշկանդումների դեմ և ողելնչված լավ գաղափարի որոնման երազանքով, նրանք ազատության ու հումանիզմի գաղափարներ էին փայփայտում, հուսալսուովում ազատագրական շարժումներով, համակրանք տածում ազրատության ու բուրժուական շահագործման դեմ ոտքի ելած գաղութային ժողովուրդների պայքարի նկատմամբ:

99 Տե՛ս Խ. Աբովյան, ԵԼԺ, հտ. VII, էջ 169:

Աղգի երջանկության նախանձախնդիր Աբովյանի ու Քաղիաղյանի երազանքները վեհ ու գեղեցիկ էին, բայց նեղ էր իրականության հորիզոնները, դրա համար էլ այդ երազանքները առաջ բերին նրանց հեղինակների ողբերգությունը: Ընդհանուր առմամբ անառարկելի ճշմարտություն պիտի դիտել այն, որ ժամանակի հայ գործիչներին ավելի որոշակի էին պատկերանում իրենց գաղափարների պատմական իմաստն ու տեղը, քան այն ուժերը, որոնց պետք է հանձնարարեին այդ գաղափարների կենսագործումը: Իրողություն էր այս, որ 20-ական թվականների հայ ազատագրական շարժման արդյունքների վերազնահատման հարցում, նրանց գաղափարների մեջ իրական, օբյեկտիվ հակասությունից ավելի ցավազնորեն էր հնչում սուբյեկտիվ հակասությունը:

Քննադատելով ցարիզմի քաղաքականությունը, նրանք բարձր էին գնահատում հայ հայրենիքի մի հատվածի Ռուսաստանին միացման առաջադիմական նշանակությունը: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ հայ ժողովուրդը ազատվել էր ֆիզիկական խեղդիկեղման ենթարկվելու հնարավոր վտանգից և արևելյան ֆեոդալիզմին ներհատուկ աղետներից, այլև այն տեսակետից, որ Արևելյան Հայաստանը դառնում էր ազգահավաքման մի օջախ: «Մեք տեղս արմատական ծառեր չեմք,— այսպես է Քաղիաղյանը դիմում հնդկահայերին,— մեր արմատն մեր հայրենիքն ա և եթե չջանամք մի կամ միւս եղանակաւ մեր հայրենեաց երջանկութեան հաստատիլ, չէ որ մեք երջանիկ ապրեմք:

...Ով կամ երջանիկ կալ նա պիտի որ հայրենեաց երջանկութեան միտ ղնի»¹⁰⁰: Նա դատաւիտում էր էջմիածնին այն բանի համար, որ ռուսական տիրապետության ընծեռած բարիքներից ամենից շատ օգտվելով հանդերձ՝ չէր մտահոգվում ժողովրդի կենսական պետքերի մասին: «Ախ էջմիածին, էջմիածին,— հառաչանքով ասում էր նա,— նախկին աթոռ քրիստոնեութեան մերոյ, կարծեմ հասկանամս ինչ եմ ուզում

100 «Աղգանք», 1845, № 18:

ասել, այս և այս միայն թէ ահա քեզ զարուն շնորհաբեր ի ներքո հովանավորութեան ամենաողորմած կայսրութեան ուսաց. արի մի անգամ միայն գլուխ բարձրացրու և քո համորեն ուստերաց և դուստերաց արդարեւ մայր հանդիսացիր»¹⁰¹: Հարկավ, քաղաքական այս մտածողությունը ուներ իր արգարացումը, որովհետեւ ուսական տիրապետությունը քիչ թե շատ նպաստավոր կացության մեջ դրեց ոչ միայն հոգևորականությանը, այլև ողջ արևելահայությունը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմամբ նախապայմաններ ստեղծվեց հայերի ազգային կոնսոլիդացման համար, սակայն պատմական այդ իրողությամբ միայն սկսվեց, բայց չավարտվեց այդ գործընթացը, որչափ ցարիզմի գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում բաղմաթիվ խոչընդոտներ էր ստեղծում երկրի արտագորղական բռնի հետագա զարգացման, անցյալի ֆեոդալական մնացուկների վերացման, ժողովրդական զանգվածների հետամնացության լիկվիդացման առաջ և հնշում նրանց հասարակական-քաղաքական զարթոնքի ջանքերը:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 64:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ՄԻԱՅՄԱՆ ՊՐՈՐԵՍՐ ՄԻՆՉԶԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ ժողովրդի արեւելահայ հատվածի կյանքում կատարված մեծագույն հեղաբեկումը խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ոչ միայն ժամանակակիցների, այլև հետագա հայ հասարակական-քաղաքական մտքի ու պատմագրության համար: Եվ դա կույր պատահականության արդյունք չէր:

Շահական Պարսկաստանի դաժան տիրապետությունից պոկված և Ռուսաստանին միացված արեւելահայ ժողովրդի համար ստեղծվեցին տնտեսական-քաղաքական դարգացման համեմատաբար նպաստավոր պայմաններ: Վերաբնակեցվեց Արարատյան աշխարհը, ստեղծվեց բիշ թե շատ ամբողջական՝ կենտրոնացված ազգային դաշնված, բնաշխարհը դարձավ հայկական: Ժողովրդի ազգային համախմբումը հայտաբերել էր սեփական ուժի ներքին պոտենցիալ, որը զարկ էր տալիս ազգային ինքնագիտակցությանը: Խաղաղվեց հայ ժողովրդի ազգային կյանքը ֆիզիկական ոչընչացման և տարրալուծման մշտական երկյուղի փարատումով:

Չնայած Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականության բազմապիսի խոչընդոտներին ու արգելակներին, հայ ժողովրդի արեւելյան հատվածը դուրս էր գալիս

մահմեդական գերիշխանության շրջանի դարավոր թմբիրից և կատարում իր կուլտուրական առաջընթացի նշանակալից քայլափոխերը: Դանդաղորեն ծիլեր էր արձակում արևելահայ գրականությունն ու պարբերական մամուլը, աստիճանաբար ավելի բովանդակալից անդրադարձնելով կյանքի և կայքի անձեռնմխելիութունից օգտվող հայ ժողովրդի նոր կացության փոփոխութուններն ու հակասութունները:

Յարիզմի համար Անդրկովկասն ու Արևելյան Հայաստանը կենտրոնին հումուլթ մատակարարող և նրա ապրանքներն սպառողներ էին: Անդրկովկասյան հայ գյուղը՝ ընդգրկվելով ապրանքաշրջանառության ցանցի մեջ և կրելով ցարիզմի տնտեսական քաղաքականության ուժգին հարվածները, փոխում էր իր նախկին կեցվածքը: Բաղմանում էր ժանիքները սրող առևտրա-վաշխառուական կապիտալի ոգմակը, որի «հերոսները» միացած ցարական աստիճանավորների հետ կողոպտում էին ժողովրդական զանգվածներին: Անդրկովկասյան շուկան արդյունաբերական մեծաքանակ ապրանքներ ստանալու հետևանքով, խարխուլում էր արհեստավորության տնտեսական պատվանդանը: Կենտրոնի արդյունաբերության որոշ ճյուղերի հաղթանակն ապահովելու համար կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում արագացնելու համբարութունների կազմավորումը: Շերտավորվող արհեստավորության կախումը քաղաքի աղաներից գնալով ավելի էր ուժեղանում: Նրա հինավուրց կենցաղն ու սովորութունները ճեղքվածքներ էին տալիս, բեկվում էր մտածելակերպը: Արհեստավորութան մեջ ըմբոստացման տրամադրութուններ էին կուտակվում այն ամրակայվող արտադրահարաբերութունների դեմ, որի պայմաններում նա կորցնում էր հողը՝ ոտքերի տակ: Սոցիալ-քաղաքական և կուլտուրական տեղաշարժերի ու փոփոխութունների պայմաններում հանդես եկան ու ձևավորվեցին 1850—1860-ական թվականների հայ հասարակական-քաղաքական հոսանքները, որոնք և կյանքի բոլոր բնագավառների վերաբերյալ, հարկավ ոչ միշտ պարզորոշ հետևողականությամբ, ձևակերպում էին իրենց

հայացքները: Համեմատաբար կուռ մտայնություն էին ցուցաբերում երկու հակոսնյաները՝ հեղափոխական-դեմոկրատական և կղերա-աղայական հոսանքները:

Վերոհիշյալ հոսանքներից բացի՝ իրենց ուրույն դիրքավորմամբ հանդես էին գալիս և ազդային-պահպանողականները՝ հայ առևտրական կապիտալի այն շերտերի գաղափարախոսները, որոնք պասսիվ օպոզիցիայի դեր էին խաղում ընդդեմ ցարիզմի, ձգտում էին բարձրացնել հայ լուսավորչական եկեղեցու նշանակությունը, պաշտպանել նրա իրավունքներն ու արտոնությունները: Այս հոսանքի ներկայացուցիչները աշխատում էին դիմակայել ռուսական կապիտալի քայքայիչ ազդեցությանը գյուղում և պահպանել համբարական կազմակերպությունները քաղաքում:

Ձևավորվել և աստիճանաբար զորեղ դիրքեր էր նվաճում բուրժուական լիբերալիզմը, որ հնարավոր էր գտնում հասարակական կյանքի բուրժուական վերափոխման իր ծրագրերին իրականացնել առանց ցարական ինքնակալության քաղաքական կարգերի հեղափոխական վերափոխման, իրեն նպատակ էր առաջադրում պայքարել հանուն եվրոպական լուսավորության, բայց հաշտվողականության պոչը բռնելով «օրինակահություն» շրջանակների մեջ մտնելով էր մտածում տանել իր հաղթանակը:

Ռուսական տիրապետության ներքո հայ ժողովրդի կյանքում կատարվող սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերը, նրա հայրենիքի երկփեղկվածությունը անհարիր էին դարձնում պատմագիտական միասնական հայացքի տակ առնելու Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը:

Եթե կղերա-աղայական հոսանքը հիմնական քաղաքական հարցում՝ դեպի ցարիզմն ունեցած վերաբերմունքով հաշտության եզր էր գտնում լիբերալիզմի հետ, մինչդեռ միջին դասի տրամադրություններն արտահայտող հոսանքը՝ ազդային-պահպանողականները, եկեղեցու ու կրոնի հարցում հաշտության եզր գտնելով կղերա-աղայական հոսանք-

քի հետ՝ մյուս բոլոր հարցերում մի կողմից հակադրվում էր բուրժուական լիբերալիզմին և կղերա-աղայական հոսանքներին, իսկ մյուս կողմից՝ հեղափոխական-դեմոկրատներին:

Կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչները՝ փարթամացած հայ արիստոկրատիայի և բարձրաստիճան հոգևորականության շահերից ելնելով՝ աստծո և ուսական ցարի ողորմածության մեջ էին տեսնում ազգի խաղաղ կյանքը ու անվթար ապրուստը: Այդ հոսանքի գաղափարախոսները աննախապաշար հիացմուքով էին խոսում ցարիզմի ընձեռած բարիքների մասին:

«Հարազատ թագաւորք մեր,— գրում էր այդ հոսանքի մտավոր սպասարկուներից մեկը՝ Առաքել Արարատյանը,— ու առնէին մեզ զայն, եթէ լինէին այժմ մեզ իշխանք, զոր ինչ առնէ մեզ այսօր ամենաբարերար և ամենախնամ տէրութիւնն ուսաց: Հայեաց ի քեզ, հայ թագաւոր որ ո՛չ առնէր զայդ ամենայն բարիս, զորս արարեալ է և դեռ առնէ մեծ ինքնակալն կիսագնդի տիեզերիս, նախ ուսմամբ, սննդեամբ և կրթութեամբ, և ապա առատաձեռնութեամբ դրամոց, պատուոց և պէսպէս շքեղանուն արժանաւորութեամբք աստիճանաց»¹: Սակայն հարցի նման դրվածքը սրանով բնավ չէր սպառվում, բանն այն է, պատգամում էին այդ հոսանքի գաղափարախոսները, որ հայերը պետք է հավատարմությամբ ծառայեն «բարեխնամ» տերությանը: «Հայք, — Առ. Արարատյանին արձագանքում էր Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը, — յամենայն դէսյս պատրաստ են ի ծառայել թագաւորաց և իշխանաց անօրինակ հաւատարմութեամբ յամենայն անձնէ և յամենայն դօրութենէ, մինչև անգամ չխնային նաև զվերջին կաթիլս արեան, յայնժամ երբ կրօնն նոցա և աստուածապաշտութիւնն եղիցի ազատ»²: Հայերն այլևս քաղաքական կյանքի կնճռոտ հարցեր չունեն, քանզի կրօնն

¹ Առ. Արարատյան, Սխալանք վարդապետարանին կրօնի, Տիփլիս, 1858, էջ 17:

² Ս. Զալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, երկրորդ հատոր, Թիֆլիս, 1858, էջ 102:

ու եկեղեցին, որի համար նահատակվել են նրանց նախնիները, այսօր ազատ են: Ռուսաստանում հայերի համար այլևս պայքարի ու մարտիրոսացման պատճառներ չկան,— ահա կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչների մտորումների հանգրվանը:

Անցյալ դարի 50—60-ական թվականներին ցարիզմի նկատմամբ այլ դիրք էին բռնել աղգային-պահպանողականները: Սրանք նույնպես ընդունում էին եկեղեցու բացառիկ դերը հայ ժողովրդի հոգևոր ու քաղաքական կյանքում և իրենց համարում «Հայաստանեայց սուրբ եկեղեցու հարազատ» որդիներ: Սակայն «Եթե կղերա-աղայական հոսանքի համար եկեղեցու խաչվառն էր ազդության դրոշը, աղգային-պահպանողականների համար ոչ թե եկեղեցին, այլ նրանով գոտիսնդված «ազգն» էր գերագույն և ինքնագոհ հեղինակությունը: Աղգային լեզու և գրականություն, աղգային լուսավորություն և դաստիարակություն, աղգային պատմություն, աղգային ավանդություն և բարք— ահա այն արժեքները, որոնք, եկեղեցուն, նրա դավանությունն ու ծեսերին համընթաց, երաշխիք էին նրանց համար ազգի կենդանություն»³:

Աղգային-պահպանողականները մասնավորապես քրե-նագատում էին ցարիզմի անդրկովկասյան քաղաքականությունը, նշում ծանր այն դրությունը, որում գտնվում էր հայ ժողովուրդը Ռուսաստանում: Անդրադառնալով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հարցին, աղգային-պահպանողական Մարկոս Աղաբեկյանը գորշ գույներով էր նկարագրում արևելահայերի դրությունը, ընդգիմադիր կանգնում կղերա-աղայական հոսանքի այն մարդկանց, որոնք «խեղճ ու թշվառ հայոց համար» դրախտ էին ներկայացնում ցարական Ռուսաստանը: Կղերա-աղայական հոսանքի նշանավոր գեմբերից մեկի՝ Մսեր Մսերյանի հետ լատնակովելիս նա գրում էր. «Մսեր Մսերյանի ճառած և դրվատած խաղա-

3 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, դիրք և րիկորդ, Երևան, 1956, էջ 33:

դուխտներ, պերճութիւններ, բարեբաւասութիւններ և այլն, և այլն, վերացականութիւնն է Ռոսսաստանի մեջ, վասնզի հայոց ժողովրդիցան չորսնիս երեք մասը վերջին աղքատութեան մեջ են թէ հարկաց ծանրութեան կողմանէ, թէ գալառապետաց և նահանգապետաց հարստահարութեան կողմանէ, թէ ավաղակաց ասպատակութեան և դատավորաց անիրավութեան»⁴:

Աղաբեկեանը 19-րդ դարի 20-ական թվականների հայ աղատագրական շարժման գործիչների հանցապատմութիւնը տեսնում էր այն բանում, որ նրանք անզոր գտնվեցին ճարակութեան օգտագործել բոլոր պարագաները իրենց ազգի օգտի համար: Այդ գործիչներից ամենանշանավորի՝ ներսես Աշտարակեցու դիմանադիտական սխալն այն էր, գրում է Աղաբեկեանը, որ նա «Պատկեիշ, Կրասնովսկի դորապետների խառնակութեան մեջ «չկարողացալ» ոչ մնալ անկախ այդ խառնակութիւնից և ոչ բնութել այն կաղմը, որից ավելի կարելի լիներ ազգային օգուտ բաղել»⁵:

«Ուսումն հայոց պատմութեան» ձեռագիր աշխատութիւնում Աղաբեկեանը զարգացնում էր այն տեսակետը, թէ հայերի ներգաղթման գործում ռուսներից առավել մեղավոր են հայ գործիչները: Աղաբեկեանը բննադատում էր պարսկահայերի ու արեւմտահայերի ներգաղթի հայ կաղմակերպիչներին, որոնք Պատմական Հայաստանի ծաղկուն նահանգները դարձրին ամաչի անապատներ: Ըստ նրա, Ն. Աշտարակեցին կույր գործիք էր ռուսների ձեռքին, իսկ ցածրաստիճան որոշ հայ եկեղեցականներ, օրինակ, Ստեփանոս Լախիոպոսն ու Նիկողոս վարդապետը առանց հասկանալու կատարում էին նրա ցուցումները: Եթէ ներգաղթողները քաջ գիտենային, թէ ինչ կլանք պիտի վարեն ռուսաց ամենաողորմած խաղաղաբար դրոշակի ներքո, ոչ թէ իրենք, այլ իրենց կատուներին անգամ թույլ չէին տալ տեղափոխվել Պարսկաստանից Ռուսաստան: Բայց կրօնական և ազգային ազատութիւնն ստանալու

⁴ «Միւլն Ավարայրի», 1866, էջ 251:

⁵ Խ. Աղաբեկեան. Խնդիր կաթողիկոսութեան ամենայն հայոց..., Կ. Պոլս, 1865, էջ 12:

հույսը և ազատ քաղաքացիության իրավունք ունենալու տենչը և ուսանելի կողմից խոստացած արտոնությունները վայելելու ակնկալությունը հարկադրեցին նրանց անցնելու ուսսական նորագրավ երկբամասերը: Դեպի Անդրկովկաս հայերի գաղթը ունեցավ այն հետեանքը, եզրակացնում է Աղաբեկյանը, որ «Հայաստանի ամենից լավ մասը» դատարկվեց⁶:

Նշելով ցարական կառավարության բռնությունները, հեղինակը ոչինչ չէր ասում Թուրքիայում տիրող կարգերի մասին: Ի դեպ, ցարական Ռուսաստանի Աղաբեկյանի քննադատությունն այն աստիճան միակողմանի ու միտումնավոր էր, որ Ռուսաստանում ոչինչ լավ բան չէր նշմարում հայերի տնտեսական-հասարակական ապագա զարգացման համար:

Թուրքական իր օրինատացիան հիմնավորելու և Արեւելահայաստանում ուսական տիրապետության հետադիմական կողմը գծելու համար Մ. Աղաբեկյանը ջանում է առանց հիմնավոր փաստարկման հավատացնել, որ Ն. Աշտարակեցին ու նրա գործակատարները չկարողացան թափանցել դարի սկզբին Պարսկաստանում կատարվող տնտեսական-քաղաքական և կուլտուրական «խոշոր» տեղաշարժերի էության մեջ: Թագաժառանգ Աբբաս Միրզային նա ներկայացնում է իբրեւ «ներքին բարենորոգումների» մի ամբողջ սիստեմի հեղինակ, մեծ քաղաքագետ, «մահմեդական ամբոխի կրոնական հալածանքները» ղսպող և «քրիստոնեաներուն» ավելի ուժ և սիրտ տալու ջերմ պաշտպան⁷:

Մ. Աղաբեկյանի համար պարսկական «հրաշքի» իսկական էությունը տակավին 1817 թ. Ալեքսանդր Առաջինին հղած իր ղեկուցադրում, բացահայտում էր երմոլովը. «Աբբաս-Միրզան, օժանդակություն ստանալով անգլիացիներից, ամենայն հաջողությամբ աչքի բնկնող բարենորոգումներ է անցկացնում»⁸: Հարկավ, ռաղմական գործի կանոնավորումը,

6 Տե՛ս Մատենադարան, Մ. Աղաբեկյանի արխիվ, «Ուսումն հայոց պատմություն», դ. Գ, հտ. 2, երես 1964—1971:

7 Նույն տեղում, երես 1956:

8 AKAK, TOM VI, գ. 2, էջ 12:

որին ձեռնամուխ էր եղել պարսկական թագաժառանգը, ինչ որ չափով արտահայտութուն էր երկրում կատարվող տնտեսական տեղաշարժերի, սակայն այդ տեղաշարժերն այնքան տարտամ և աննշան էին, որ արևելյան երկրների տնտեսական-հասարակական կյանքի ու ռազմական գործի լավագույն գիտակ էնգելսը լիակատար իրավունք էր վերապահում իրենր ասելու, թե «Պարսկաստանում ռազմական կազմակերպության նվրդական սիստեմը պատվաստված էր ասիական բարբարոսությանը»⁹։ Այս խոսքերը մի անգամ ևս գալիս են հաստատելու, որ Ն. Աշտարակեցին և ռուսական կողմնորոշման նրա ժամանակակից սերունդը շատ ավելի բանիմաց գտնվեց, և հիշտ հասկացավ պաղուխային Անգլիայի օգնությամբ իրականացվող բարենորոգումների նպատակներն ու նրանց հետևանքները, բան հետազայում անգլիական ու ֆրանսիական քաղաքականության կողմը հակված հեղինակը։ Նրկրի վրա բռնացող արևմտանվրոսական ազդեցութունների հետևանքով նույնիսկ հետազայում Պարսկաստանը չհասավ դարգացման այն աստիճանին, որ կարողանար նախապայմաններ ստեղծել կապիտալիստական մանուֆակտուրայի և համազգային շուկայի ստեղծման համար, այլ խոսքով՝ հասունացնել նյութական այն նախադրյալները, որոնք կարող լինեին հենարան ծառայել բուրժուական արտադրահարաբերությունների դարգացման համար։ Նկարագրական չափազանցությունների մեթոդով գրված պատմագիտական իր երկասիրություններում խեղաթյուրելով անցյալը, Մ. Աղաբեկյանը լուելայն անցավ իր տեսակետին աննպաստ փաստերի կողքով։ Դժվար թե նա չիմանար, օրինակ, որ բրիտոնյանների «ջերմ պաշտպան» Աբրահա Միրզայի ժամանակ էր հենց, որ էջմիածնի աթոռի պարտքը սարգարին 13 հազարից հասել էր 18 հազար թումանի¹⁰։

Ազգային-պահպանողական հրապարակախոսը լու-

⁹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том XI, ч. I, т. 162:

¹⁰ Տե՛ս Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 589:

թյամբ էր անցնում այն երևույթի կողքով, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ, այնուամենայնիվ Ռուսաստանի շնորհիվ, հայերը հակառակ էին գնում նվաճողների կողմից դարերով պարբերացված արտագաղթ կոչվող մեծագույն շարիքին:

Աղաբեկյանին յուրովի ձայնակցում և նրա մտքերը համալրում էր Ստեփան Պերճ Պողոս-Փափաղյանցը: «Բայց 1828-ին վերջը, — գրում է թուրքոֆիլ հեղինակը, — երբ պարսից և ռուսաց մեջ դաշինք դրվեցավ, որ պարսիկը արգելք չդնեն իրենց երկրեն Ռուսաստան անցնող քրիստոնեից. սակայն բյուրավոր հայք մեծամեծ բարիք գտնելու հույսով՝ զիրենք հարստահարող և շարշարող Պարսից երկիրը թողուլ և Ռուսաստան դիմել»: Նա բարեբախտություն էր համարում, որ պարսկահայերի օրինակը տարածում չգտավ արևմտահայերի շրջանում: «Ռուսի կայսրն, — գրում է նա, — 1830-ին այսպիսի դաշինք¹¹ մալ օսմանյան տերության հետ դրավ, բայց այս դաշինքը պարսից հետ դրվածին հետևությունը չունեցավ, վասնզի մեր ազգը օսմանյան բարեխնամ տերության արտոնություններով, և աղատամիտ շնորհամենքովը միշտ խնամարկված և զոհ ըլլալով, Ռուսաց կեղծապատիր թելադրությանց ականջ չկախեց, և բարեբախտ ալ եմք, որ Աղզին մեծագույն մասը օսմանյան հպատակ կը գտնվի, որով ապահով և հաստատ պիտի մնա»¹²: Դյուրին է նկատել, որ այստեղ հեղինակը ոչ միայն շրջանցում էր պատմական այն իրողությունը, երբ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո 90—100 հազար հայեր ներգաղթեցին Ռուսաստանի նորագրավ երկրամասերը, այլև 20-ական թվականների արևմտահայերին վերագրում էր մտքեր, որպիսին նրանք չունեին այդ պահին: Հարկավ, պատմության դեմ մեղանշելու դեպքում միայն կարելի է գրել, թե արևմտահայերը հասկանում էին

11 Խոսքը Ադրիանապոլսի 1829 թ. սեպտեմբերի 2-ի պայմանագրի մասին է, որտեղ հատուկ կետ կար արևմտահայերի ներգաղթի մասին:

12 Ստեփան Պերճ Պողոս-Փափաղյանց, Դասագիրք ազգային պատմության, Կ. Պոլիս, 1862, էջ 132:

«**Ռուսաց կեղծապատիր»** խոստովանելի իմաստը և ունեին թուրքական օրինակապատիր: Այս ամենից հետո պատահական չէ միաժամանակ այն իրողության անտեսումը, որ արևմտահայերը գործուն մասնակցություն էին ունեցել **Թուրքիայի դեմ ռուս զորքերի մղած մարտերին** և իրավացիորեն մտահոգված էին, որ ռուսական զորքերի նահանջից հետո օսմանյան կառավարությունն ու թուրք փաշաները վրեժ սխտի առնեն իրենցից: «**Բայազետում**, — նիկոլայ ցարին գրում էր Պասկևիչը, — երկու հազար հայեր կովում էին մեր զինվորների շարքերում: Էրզրումում քրիստոնյա ընակչության մեծ մասը, իր հոգևոր առաջնորդի հետ, զիմավորեց մեր զորքերին: Կարսում հայերից կազմվեց մի գումարտակ և մինչև 800 հոգուց բաղկացած մի հեծելազոր, որոնք պահպանում էին մեր սահմանները հարձակումից: Այն ընտանիքների թիվը, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի: Արժանացրեք ամենաաղորմած կայսր, ձեր գթառատ ուշադրությունը դարձնելու այս դժբախտ զոհերի վրա և մի թողեք, որ օսմանյան ինքնակալությունը վրեժխնդիր լինի նրանցից այն նվիրվածության համար, որ նրանք ցույց տվին **Ռուսաստանին**»¹³:

Փափաղանցը աչք էր գոցում այն փաստերի առջև, որ զանգվածային ներգաղթի շնորհիվ լրիվ կամ մասամբ պարզվեցին Արևմտյան Հայաստանի առևտրա-արհեստավորական կենտրոնները՝ Կարինը (էրզրում), Կարսը, Բայազետը և Արդահանը՝ իրենց շրջակա բազմաթիվ գյուղերով: Նկատենք նաև, որ գաղթող արևմտահայերի նկատմամբ ռուսական զորքերի կողմից ոչ մի ճնշում ու հարկադրանք չէր գործադրվում, ընդհակառակը, թուրքական ճնշումներից, վերահաս արհավիրքներից ու ոճիրներից փրկվելու համար նրանք զանգվածորեն լքում էին իրենց հարադատ օջախները՝ դառն դատած վաստակը: «**Նթե անգամ Քրիստոսն իջնի երկնքից**, — ասում էին գաղթականները, — և մեզ թուրքերի իշխանության տակ մնա-

¹³ АКАК, том VII, էջ 830:

լու ցանկություն ներշնչեր, մենք նրա խորհրդին էլ չէինք հետևի»¹⁴։ Օսմանյան կառավարութեան «ազատամիտ շնորհներով» արբեցած Թուրքոֆիլ հեղինակը չէր սակարկում այն ճշմարտութեան դեմ, որ ռուսական տիրապետութեան ներքո «հայերը աշխույժ գործունեություն ունեն առևտրի, արհեստի և ուղղմական բնագավառներում», բայց այդ բոլորը, ասում էր նա, կատարվում էր քաղաքագիտական նկատառումներով, քանզի «Ռուսք հայոց... բնատուր ձրից վրա նայելով, Թեպետև մեկ կողմանե մեծամեծ արտոնություններ կուտային, բայց մյուս կողմանե այս մեծագործ Աղզն, որ իրեն ապավինած էր, իր մեջ ընկղմելու, և ռուսացնելու խորամանկութեան դիմեցին»¹⁵ և եթե Թուրքիայի հայը խորամուխ լինի այն բանում, որ Ռուսաստանի իր ազգակից եղբայրը հայկական դպրոցներում «Ռուսաց պատմութեանը առաջ ավանդելու պարտավորված է, քան ազգայինը, և տեղ տեղ ալ ոչ երբեք կավանդի. մեծ շնորհք մը և օսմանյան տերութեան ազատամիտ քաղաքականութեան և լուսավորութեան ու Եվրոպիո առաջադիմութեան ներընդունակ ըլլալուն արդյունքը սկստ է սեպե այգալիսի բռնութեանն ազատ ըլլալնիս, և դատողն ալ շուտով պիտի գտնե, թե ռուսն ինչ նպատակով այդ ի սկզբան աննշմարելի, բայց հետագային ծանրակշիռ և իրեն համար կարևոր սկզբունքը մուծած է հայոց դպրոցներուն մեջ...»¹⁶։

Ռուսաստանի հասցեին արված հեղինակի քննադատական դիտողութեանները, ինչ խոսք, հեռու չէին ցարական իրականութեանից։ Սակայն Մ. Աղաբեկյանի նման, Ստեփան Փափաղյանցը ևս աչք էր գոցում այն ճշմարտութեան առջև, որ Թուրքիայում վտանգված էին ոչ միայն հայ ժողովրդի դպրոցական-մշակութային կյանքը, այլև բուն իսկ ժողովրդի անձն ու ինչքը։ Նույն հենց 60-ական թվականներին, երբ աղ-

¹⁴ Նույն տեղում, էջ 842։

¹⁵ Սանվան Պերն Պողոս-Փափաղյանց, Դասադիրք ազգային պատմության, էջ 133։

¹⁶ Նույն տեղում, Առաջարան, էջ 2։

գային-պահպանողականները մեղադրանքների տարափի էին ենթարկում Ռուսաստանին, Կ. Պոլսի պատրիարքին և ազգային վարչությանը հղած իրենց մի հանրագրում, Մուշի հայերը այսպես էին նկարագրում քրդական վայրագություններին ու կողոպուտներին ենթակա իրենց ծանր ու անապահով կացությունը. «Նրկու տարի առաջ Մատնավանք կողոպտեցին ու վանահայր Պողոս վ. սպանեցին. բնավ պաշտպանություն չեղավ տեղեդ և ոչ քննություն մը ու հատուցում այս տեղեն, քանի հայեր սպանվեցան ու իրենց արյան բողբոջ մը չեղավ. Զիարաթ գյուղի եկեղեցին կողոպտեցին... իսկ այս մեկ տարվան շրջանի մեջ յոթն եկեղեցի իրարու հետևե կողոպտեցին, որոց մեկն ալ բուն Մշո միջի ս. Սարգիս եկեղեցին է, որո գոներ փակ և ինքն ամայի մնալով՝ ավերման վիճակի հասավ, ասոնք ամենքը տեղական կառավարությունը գիտե, և միշտ բողբոջներ եղած է, բայց և ոչ մեկին դատաստան ու հատուցում եղած չէ: Դարձյալ այս մեկ տարվան շրջանի մեջ հինգ վեց կնիկ հայերեն փախուցին, բռնությամբ տաճկացուցին...

Բուն իսկ Մշո մեջ հայերը ի դատապարտուց կծեծվին, հավատ ու խաչ հայհոյել տաճկաց հասարակ խոսք մը եղած է, մինչև անգամ առ և տուր ունեցողներ չեն համարձակիր իրենց պահանջը պահանջել տաճիկներեն: Աղդն արդեն իր հուսահատութենեն երես դարձուցեր փախչել Ռուսաստան, վասնզի անտանելի է խղճալաց վիճակը, արդեն բավական տներ գնացին երկրեն և գրեթե առհասարակ ամենու գաղափարը երթալն է»¹⁷:

Սակավ ուշադրավ չէ նաև էրզրումի անգլիական հյուպատոս Թեյլլորի՝ 1869 թ. գրած զեկուցագրի տեղեկությունները հայերի դեպի Ռուսաստան փոխադրվելու տենդենցի մասին:

«Ամեն տեղ այս գալառներում, — կարդում ենք զեկուցագրում, — հայերը դառն կերպով գանգատվում էին թուրք կա-

17 Գյուտ Բ. Աղանյան, Դիվան Հայոց պատմության, դիրք ԺԳ, («Հարստահարությունները Տաճկաստանում»), վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 123—124:

ռավարութեան դեմ և միեկնույն ժամանակ անշարժ գոյում էին Ռուսաստանը, բացեիքաց հայտնելով, թե որոշել են այնտեղ գաղթել...

Պետք է խոստովանել, որ հայերը դժգոհութեան համար լիովին պատճառներ ունեն, որոնք են՝ թուրք կառավարութեան իսկապես հոռի վարչական սիստեմը, հարկերի անհավասար բաշխումը, նրանց՝ ինչպես և տասանորդի՝ չափազանց անկարգ հավաքումը, արգարութեան կատարյալ բացակայութիւնը, անընդհատ կատարվող զեղծումներն ու քրիստոնյաների՝ իսլամների հետ հավասար նկատվելու մասին պահանջման բացարձակորեն անիրագործելի մնալը ...

էրզրումի վիլայեթի բնակիչները՝ իբրև ռուսաց սահմանակից, ավելի ունեն այս զգացմունքը, քան Դիարբեքիբի և Խարփուլի հեռավոր նահանգների հայերը»¹⁸։ Այս երկար մեջբերումները հետաքրքրական են այն տեսակետից, որ Մ. Լեւաբեկյանն ու Ս. Փափազյանցը անտեսում էին գալաթի հայութեանը, ի մոտո խորամուխ չէին լինում թուրքական ֆեոդալիզմի իսկական էութեան մեջ, երբ անձի ու ինչքի անապահովութիւնը, փաշայական ռեժիմը, ղանգվածների հարստահարութեան ու ճնշման տարեցտարի բազմացող փաստերը ծանր վիճակ էին ստեղծում երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։

Խնդրին այլ տեսանկյունից էր մոտենում Գ. Պատկանյանը։ Թե Աղգային սահմանադրութեան պատրանքի շրջանում և թե նրանից հետո, նա անդադրում կրկնում էր, որ զարգացման իր աստիճանով Ռուսաստանն անհամեմատ բարձր է կանդնած Թուրքիայից ու Պարսկաստանից։ Հեղինակը հենց այդ աստիճանն էլ նկատի ուներ, երբ 1828—1831 թթ. ներգաղթը համարում էր հալոց պատմութեան «աննման» էջերից մեկը։ Շուրջ 140 հազար հայերի Արաքսն ու Արածանին անցնելը

18 Սարուխան, Հայկական խնդիրն ու աղգային սահմանադրութիւնը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 145—146։ Տե՛ս նաև Blue Book, turkey, 1877, № 16, էջ 31—32։

«որքան աննման էր այն անցնելուն, երբ որ հայերը տասնևյոթը դարու սկիզբը բռնադատվեցան Շահ Աբբասի հրամանով՝ Երասխի այս երեսնն մյուս երես անց կենալ»¹⁹։ Ընդհանուր աղքատությունն ու հուսահատությունը պարսիկների օրոք աճում էին օրեցօր, հետևաբար ավելի լավ հլր չկար, քան ռուսական կայսրությունում հանգիստ ապրելը, մի հլք, որի համար նրանք երբեք չեն զղջացել։ Հակառակ սրբսիկ իշխողների ներքին խռովությունների, այժմ Արարատյան երկիրը ավելի բարգավաճ է, քան նախկին շրջանում։ Սեփականությունը պաշտպանված է, հարկատվությունը ավելի մեղմ և ավելի արդար բաշխված բոլոր խավերի վրա, օրենքի առաջ բոլորը հավասար են։ Ճանապարհներն այնքան անապահով էին, որ առևտուրը չէր կարող ծաղկել, նույնիսկ սարդարն անխղճորեն կողոպտում էր վաճառականներին։

Հայկական բնօրրանում կատարված գերեվարությունների ու թալանի մասին պատմության մատակարարած հարուստ նյութերը և իրօրյա քաղաքական կացությունը Արևմտյան Հայաստանում թույլ էին տալիս հեղինակին ասելու, որ ռուսաց տիրապետությունը «փրկավետ ազդեցություն ունեցավ Հայաստանի մի մասի վրա, ուր ոչ բարբարոս սրբսիկը, ոչ անողորմ տաճիկը, ոչ անսանձ քուրդը և ոչ նոցա շրջապատող խառնիճաղանձ ազգերը կարող են խլրտել»²⁰։ Գ. Պատկանյանը առանձնապես նշում էր «բարեբախտությունը»՝ այն առանձնահատուկը, որ ի տարբերություն Թուրքիայի՝ «Ռուսաստանի հայերու առջև չկա ոչինչ դուր փակված, և Անդրկովկասյան հայերը երկրագործությունը, խաշնարածությունը, արհեստագործությունը, վաճառականությունը իրանց մեջ տարրացնելով, արքունական ամեն պաշտոններու էլ ձեռահաս են, թե՛ քաղաքական, թե՛ ղինվորական»²¹։

19 Գ. Պատկանյան, Միջնավայր Հայոց ազգի պատմությունից, Ս. Պետերբուրգ, 1863, էջ 3։

20 Նույն տեղում, էջ 1։

21 Գ. Պատկանյան, Հայոց ազգի պատմությունը, Ս. Պետերբուրգ, 1863, էջ 270։

Հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր հետնախորքի վրա դիտված՝ Ռուսաստանում հայերի անվթար ապրուստի մասին Պատկանյանի գրած տողերը վերացական դիտումներ չէին։ Նա ելնում էր հայ ժողովրդի երկու հատվածի վիճակից և ջանում էր նրանցից մեկի փոքր ի շատն ապահով վիճակի փառաբանմամբ հուզել մյուսի վերակենդանացման խնդիրը։ «Հայը գետի այս կողմին,—գրում էր նա «Միջնավեպում»,—ազատ, ուրախ, ճոխ և երջանիկ է, իսկ գետի մյուս երեսին՝ գերիի նման՝ տրտում, աղքատ, նեղացած ու թշվառ։ Այս կողմի հայը ապրուստի համար բնավ չէ հոգս քաշում, յուր կենցաղավարության ճանապարհը համարյա թե ապահովել է. այժմ նրա ջանքը այն է, որ յուր ուտելը, խմելը, նստելը, վեր կենալը, տունը՝ կենցաղակրթության ճանապարհներով ելրոպացոց նմանեցնե, պատվավոր պաշտոններու մեջ գտնվի, տերության կամ հասարակության ծառայելով՝ յուր ազգակից հայերի վրա բարի ազդեցություններնա, քաղաքացիներու մեջ հարգ ու պատիվ ստանա, վաճառականությամբ և ազգասիրական հանդեսներով համբավ ունենա, և յուր հայ անունը պայծառացնե։ Իսկ մյուս երեսի հայը՝ ապրուստի հոգսն աչք չի բաց անում, հողադործ, մշակ, բեռնակիր, հովիվ, արհեստավոր՝ գետնափոր տներումը, որսիս թե արեգակն է փախչում, նորա առուտուրը նեղ ու անձուկ ոյրտի մեջ է սեղմած, նորա կենցաղավարությունը վշտերու և դառնության շաղկապ, և բնավ մտքն չէ անցկացնում, թե կա մի այլ կյանք, որ վալելում են նորա համազգիքն էլ, որ քան այն՝ յուր անցուցած կյանքը քաղցր է և երանավետ»²²։

Ապավինելով ցարիզմի ընձեռած բարեբախտությանը՝ Գ. Պատկանյանը մերժում էր նրա հանդեպ ժողովրդի ընդլրդումը և նրան դիմուղղում դեպի ճշմարիտ աշխատանք և հարստացում, հասարակության իրօրյա դասակարգավորումը հայտարարում ոչ միայն իրական, այլև բանական։ Հենց

22 Գ. Պատկանյան, Միջնավեպը Հայոց ազգի պատմությունից, էջ 2—3։

այստեղ էլ աղագլին-պահպանողական հրապարակախոսը ձեռք էր մեկնում լիբերալներին, առաջին հերթին Ստեփանոս Նաղարյանին (1812—1883)։

Բարձրագույն ուսումնառության տարիներն անցկացնելով Դորպատի համալսարանում, Նաղարյանը հնարավորություն էր ունեցել մոտիկից հաղորդակից լինելու հասարակական-քաղաքական այն տեղաշարժերին, որ անցյալ դարի 40-ական թվականներին տեղի էր ունենում Եվրոպայում, մասնավորապես՝ Գերմանիայում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ գոյություն ունեցող կարգերից անբավական ռադիկալ-բուրժուական տարրերը փորձում էին տիրող ռեժիմի դեմ ծառանալ՝ առաջին հերթին նշանացույց ունենալով իշխող կրոնական աշխարհայեցողությանը։ Երբեմնի պասսոք Դավիդ Շտրաուսի «Հիսուսի կյանքի» հրատարակումը փոթորկել էր ճահճացած գերմանական իրականությունը։ Այդ տեսակետից հատկապես մեծ դեր էր կատարում «Երիտասարդ Գերմանիա» գրական շարժումը՝ Լյուդվիգ Բյոռնեի ղեկավարությամբ։ Գերմանական բուրժուազիայի միջին շերտերի կրակոտ այդ ներկայացուցիչը հանդես էր գալիս բյուրգերական պասսիվությամբ, յունկերական կարգերի հետ համաձայնողական-հաշտվողական քաղաքականություն վարելու դեմ։ Հինը, ավետարանականը, հայտարարվեց անբանական, իսկ գրականությունը պիտանի էր միայն այն չափով, որ չափով մերձենում էր ժողովուրդին, արտահայտում նրա երազներն ու իդեալները։

Սակայն «Երիտասարդ Գերմանիայի» ոգին՝ ըմբոստ Բյոռնեն իր կյանքի վերջում գաղափարական անկում ապրեց և պրոպագանդում էր՝ ազատություն ձեռք բերել տիրող կարգերի շրջանակներում։

Դորպատում ծանոթանալով այն ամենի հետ, Նաղարյանը դարձավ Բյոռնեի հետևորդը՝ յուրացնելով ինչպես նրա հակաֆեոդալական, այնպես էլ տիրող կարգերի հետ հաշտվելու, ռադիկալիզմից հեռու մնալու տրամադրությունները։ Առաջին իր նշանավոր աշխատության մեջ այդ երկվությունն

էր արտահայտում նա, երբ գրում էր, թե ժողովուրդները մնայուն չեն և «ժամանակի ու տարածութեան մէջ» նրանք «առաջանում, ծաղկում ու ընկնում են կամ ընդմիշտ, կամ մի քանի հարյուրամյակ, մինչև որ մարդկային հանճարը ավելի նպաստավոր պայմաններում, նոր փայլով վերածնվում է իր դարավոր դագաղից և վերանորոգված ուժերով գնում է այն ճանապարհով, որ նախախնամութեանը նախագծել է երկրագնդի ցեղերի համար»²³:

Մահմեդական լծի տակ հայերի բազմադարյան մեռելային կյանքը և համեմատաբար նպաստավոր պայմաններում Ռուսաստանի «հանճարով» նրանց բաժին հասած նոր «բարեբախտութիւնը» դրա փայլուն վկայութիւնն է. «Տաճիկները (Նաղարջանը նկատի ունի ադրբեջանցիներին—Ն. Ս.) որպէս մահմեդականներ, դեպի Ռուսաստանն ունեցած իրենց հարաբերութիւնների մէջ թե շատ և թե փոքր միշտ կասկածելի են. վրացիք, թեպէտ չէին կարող պահել իրենց ազատ գոյութիւնը պարսիկների երեսից, այնուամենայնիւ տրտնջում են և անգոհ են Ռուսաստանից, որ սա չի բավականացել մի պաշտպանողական իշխանութեամբ, այլ ստորադրել է նրանց իր ստույգ տիրապետութեան տակ: Բայց հայերը համարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ քղատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկութիւնից, և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»²⁴:

Պարսկական բռնակալութիւնը Նաղարջանի համար խավարի և հետամնացութեան մարմնացում էր՝ «ասիական անշարժութեան» և բարբարոսութեան իսկական դրսևորում: Խզվելով այդ բարբարոսութիւնից և քաղաքականորեն Ռուսաստանի հետ միավորվելով, հայերը կուտուրական վերածնութեան հնարավորութիւն էին ստանում, կտրում իրենց կապը հետամնաց և խավար անցյալի հետ: Ռուսական տի-

²³ С. Назарян, Обозрение истории Гайкинской письменности, Казань, 1846, էջ 1:

²⁴ Սա. Նաղարջանց, Երկեր, Ա, Թիֆլիս, 1913, էջ 95—96:

բապետութիւնը Նազարյանը ողջունում էր ամենից առաջ որպէս հայերին եւրոպական լուսավորութեան ու կուլտուրային հաղորդակցող մի շավիղ, իբրեւ ասիական երկրամասը եւրոպականացնելու միջոց: «Ժողովրդի հայրենիքը, — գրում էր Նազարյանը, — այժմ ազատված է ստրկութեան լծից: Նա կապակցված է մի եւրոպական, լուսավորութեան ընդունող, տերութեան հետ. ժողովրդի բոլոր իմացական գորութիւնները կարող են այժմ ազատապէս աճել և զբաղանալ. եւրոպան բաց ու արձակ է հայերու առջև, նոքա կարող են մասնակից լինել նորա կրթութեանը և լուսավորութեանը»²⁵: Պարսկա-թուրքական դադանաբարո իշխանութեան տապալումը Արեւելյան Հայաստանում և Ռուսաստանի տիրապետութեան ներքո հայերի տնտեսական ու քաղաքական կյանքի նորմալացումը ոչ միայն ուրախութիւն պատճառեց 1820-ական թվականներին հայութեանը, այլև հետագայում սլաւոններ ստեղծեց նրանց «հոգեղեն» շարժողութեան համար:

«Հայոց ժողովուրդը, — գրում էր Նազարյանը 1876 թվականին, — յուր այժմեան վիճակի մեջ Ռուսաստանում, անտարակույս գտնվում է հոգեղեն շարժողութեան մեջ և փոքրի շատե հառաջագնում է ժամանակի ընթացքի հետ: Նա կյանքի մեջ շատ բան տեսնում է, շատ բան ուսանում կյանքից ու դպրոցից, իբրև անդամ քաղաքական ընկերութեան, որո մեջ կա օրենք, իրավունք, դատ ու դատաստան, անձնական ազատութիւն և պաշտպանութիւն սեփականութեան, մի խոսքով, քաղաքավարական կարգ ու կառավարութիւն: Հայոց այժմեան վիճակը Ռուսաստանի մեջ ցուցանում է անհամեմատ առավել թե նշովական և թե մտավոր բարօրութեան սլաւոններ, քան թե որեւիցէ հառաջընթաց օրերում ասիական անարգ, բռնակալ, ամենայն հառաջադիմութիւն ճնշող, ամենայն ազատ շարժողութիւն կաշկանդող կառավարութեան ներքո: Ռուսաստանը յուր քաղաքական կարգերի հետ միասին տարածում է ամենայն տեղ լուսավորութիւն, կրթութիւն»

²⁵ Նույն տեղում, էջ 93:

և գիտություն, որ շափով և որ կերպով ինքը այժմ կարողացած է այդ բարիքը սեփականել յուրյան փոխ առնելով Արևմտյան նվրոպայի առատաբուխ և ճոխ աղբյուրներից»²⁶:

Նաղարչանը չէր տարվում բարձր քաղաքական հեռանդկարներով, այլ գիտեր միայն, որ ռուսահայատակ հայը իրեն ապահով է զգում և պաշտպանված է օրենքի ղորությամբ: «Հայոց այժմյան դրությունը Ռուսաստանի օրենքի հավասարության տակ այնքան լավ է, — հարում էր Նաղարչանը այդ առթիվ, — որ ոչինչ համեմատություն չկա՝ մի հվրոպական բրիտոնյա տերության և մի բռնակալ ասիացի մահմեդական խառնաշփոթ կառավարության մեջ. հայը Ռուսաստանում վայելում է քաղաքացու իրավունք, ոչինչ բռնություն չէ հասնում ոչ նորա անձին, ոչ նորա բնտանիքին և ոչ նորա վաստակին. ամենը նա կարող է վայելել օրենքի պաշտպանության տակ, լցուցանելով միայն յուր պարտքը իբրև քաղաքացի մի տերության, որ նյութապես և բարոյապես անուշանում է նորան, և տալիս է ամեն մի հային նույնքան իրավունք, որքան յուր ազգին, ամենևին անխտիր, իբրև միևնույն թագավորության որդիների»²⁷:

Քաղաքական անոթը վերականգնելու հույսերից զրկված այդ գործիչը իր ուշադրությունն ամբողջումին ուղղել էր Ռուսաստանի հովանու ներքո հայ լեզվի ու կրոնի վերանորոգման ու զարգացման, հվրոպական լուսավորությունը հայելին հաղորդակից դարձնելու միջոցով հայության՝ իբրև կուտուրական համայնքի պահպանմանը: «Ռուսաստանը, — գրում էր Նաղարչանը, — կարող է ամենևին աներկբա լինել հայոց ազգի ղեպի նա անդրժեղի հավատարմության մասին... Թող մեր հայերը ճանաչեն յուրյանց մեծ բարերարի շնորհը և գործ ղնեն նորան արժանապես, ամենայն պատրաստությամբ և հոժարությամբ ընդունելով Ռուսաստանի

26 «Հանդես գրական և պատմական», դիրք առաջին, Մոսկվա, 1888, էջ 234:

27 Նույն տեղում, էջ 270:

ձեռքից եվրոպական լուսավորության պարգևը և ավանդելով յուրյանց ազգին այնպիսի կերպով, ինչպես կարող է օգտակար լինել հայերին»²⁸։ Նա պաշտպանում էր այն կարծիքը, որ հայոց փրկությունը միայն ռուսների ձեռքով է հնարավոր, և որ հայերի համար ամենալավ կացությունը կատեղծվի այն ժամանակ միայն, երբ Հայաստանը ամբողջովին ռուսական տիրապետության տակ կանցնի։

Ի՞նչ հիմքի վրա պետք է վերամիավորվեր երկրիեղևված հայությունը հարցին, Նաղարյանը պատասխանում էր՝ «քաղաքական լոյալության» և փոխօգնության մեջ մղված կուլտուր-լուսավորական աշխատանքով։ 1860-ական թվականներին հայ լիբերալ մտավորականության շրջանում ամուր նստած այս մտայնությունը՝ հետագա տասնամյակներում շատ չնչին փոփոխություններ կրեց նրանց համախոհների մոտ։ «Հայերս քաղաքական մտքով ռուսներ ենք,— պատգամում էր նա,— ռուսաց կայսրին հպատակ ենք և անդամք ենք այն տերության մարմնին և ունենք նույն օգուտն ու վնասը, ինչ որ ունի կառավարությունը ներքուստ և արտաքուստ»²⁹։

Եթե Մ. Աղաբեկյանը իր պատմագիտական աշխատություններում և հրապարակախոսության մեջ երևան էր բերում բացասական միտվածություն Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ, ապա Ստ. Նաղարյանը՝ մեծարում, ներբողում էր արևելահայ ժողովրդին դեպի եվրոպական «նիստ ու կաց» առաջնորդող Ռուսաստանին։ Դա անձնական քմայքից ելնող պատահական եղբակացության արդյունք չէր։ Աշխարհով մեկ «... ցան ու ցիր, հողմերին դարկած, բրդզված կյանքի մեջ» ապրող հայ ժողովրդի կացությունը խոր դրոշմ էր թողնում լիբերալ մտածողի քաղաքական կողմնորոշման վրա, քանզի «Մեկընդմիջտ ավերված տեսնելով ազգի՝ քաղաքական վերանորոգության ոռոման-

28 Ստ. Նաղարյանց, Երեկեր, Ա, էջ 96։

29 Նույն տեղում. էջ 334։

տիկ հույսերն ու հնարները, 40—50-ական թվականներին՝ նազարյանցը բացառապես կրոնի և լեզվի մեջ տեսավ հայերի ազգային գոյության «անոթը»: Անցյալից ժառանգած այդ արժեքների պահպանության ու վերականգնանալու մասին ազգային-կղերական կամ ազգային-պահպանողական ուղիների մեջ չէ, որ փնտրեց նա այդ ժամանակ ազգի գոյության երաշխիքը, այլ դրանց զարգացման և վերակադապարման մեջ, հիմք ընդունելով «եկրոպական լուսավորության», այսինքն՝ Ռուսաստանի միջոցով հայերին մատչելի դարձող կապիտալիստական հանրակենցաղի ու քաղաքականության սկզբունքները: Չնայած իդեալիստական ընդհանուր իր աշխարհայեցողության, պայքարի մտնելով կղերա-ազգայական սխոլաստիկայի և ազգային-պահպանողական ուսման տիկ մտայնության դեմ՝ նազարյանցն այդ պահին քայլում էր հայ հասարակական զարգացման ռեալիստական և պրոգրեսիվ շավիղներով»³⁰:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմի նկատմամբ հետաքրքրությունն առավել ուժեղացավ 19-րդ դարի 70—80-ական թվականներին: Եվ դա բնական է: Կապիտալիզմի զարգացումը փոխակերպում էր հասարակության դիմապատկերը, առաջ բերում նոր տեղաշարժեր տնտեսության, կենցաղի և բարքերի մեջ, հիմնավոր նախադրյալներ ստեղծում բուրժուական իրավակարգի հաղթանակի համար: «Եթե մի ընդհանուր հայացք ձգենք,—գրում է Լենինը,—ռուսաստանյան պետության ամբողջ կացութան վրա 1861 թվականին, ապա անհրաժեշտ է ընդունել, որ այդ փոփոխությունը եղել է քայլ ֆեոդալական միապետությունը բուրժուական միապետության վերածելու ուղղությամբ: Այդ ճիշտ է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից: Բավական է հիշել դատարանի, վարչության, տեղական ինքնավարության բնագավառում կա-

30 Ա. Զովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 96—97:

տարված ռեֆորմի և 1861 թվականի դյուստցիական ռեֆորմին հաջորդած այլ ռեֆորմների բնույթը՝ համոզվելու համար այդ դրույթի ճշտության մեջ»³¹։ Դարերով սրբագործված նահապետական ասրելակերպի քայքայման և նորամուտ բարքերի արտասուկոր ներխուժման ու հաղթարշավի մի ժամանակաշրջան էր այդ նաև Անդրկովկասում։ «Սարկուսյան ազատությունը,— գրում է Ղ. Աղայանը,— և վերջն էլ դատական վերանորոգությունը, գյուղական ինքնավարությունը, նորամուտ լուսավորությունը, երկաթուղի, հեռագիր և այլն մին մինի ետևից հանկարծ գալով՝ շլացրին ժողովրդին, մի հանկարծական փոփոխություն ձգեցին նրա նիստ ու կացի, վարք ու բարքի մեջ։ Ժողովուրդը այնպես փոխվեց մի տասն տարվա մեջ, որքան փոխված չէր հարյուրավոր տարիների ընթացքում»³²։ «Եվ ահա այսպես,— Աղայանին լրացնում է Պ. Պռոշյանը,— տասն և իններորդ դարի երկրորդ կիսաշրջանը մի ընդհանրական շտեմնված հեղափոխություն կատարեց ռուսահայոցս կյանքի մեջ, մի վերափոխական տակնուվրայություն, որ դժվար թե աշխարհի ստեղծագործությունից մինչև օրս որևէ դար սորա մի հարյուրերորդական մասը կատարած լինի»³³։

19-րդ դարի երկրորդ կեսին այլ վիճակ էր տիրում Թուրքիայում։ Կապիտուլյացիաների, եվրոպական պարտքերի ու տուրքերի տակ ընկած Թուրքիան հայ բուրժուական մտավորականությանը չէր ներկայանում իբրև տնտեսապես ու քաղաքականապես կենսունակ մի մարմին։ Եթե այստեղ հայ ժողովուրդը գտնվում էր ազգային իր նկարագիրը և դպրոցական-մշակութային ինքնավարության հեռանկարներն իսկ կորցնելու վտանգի առաջ, ապա արևելահայ ժողովուրդը երախտագետ էր դեպի ռուսական պետականությունը և հավատարմորեն ունկնդրում էր նրա թեւադրանքներին։ Դրա պատճառն այն էր, ասում էին ցարիզմին համակերպվող հայ

31 В. И. Ленин, ПСС, том XX, էջ 165—166։

32 Ղ. Աղայան, Երկեր, հտ. երկրորդ, Երևան, 1939, էջ 280։

33 Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. չորրորդ, Երևան, 1963, էջ 206։

մտավորականները, որ «Ռուսաց պետութիւնը յուր հպատակ հայոց հետ՝ ամենայն մարդասիրութեամբ վարվեցաւ: Սորա հայտնի ապացուցն է բոլոր ռուսաբնակ հայոց խաղաղ վիճակը, որք յուրանց հավատարիմ հպատակութեամբն և ճշմարիտ ծառայութիւններովը ռուսաց մեծամեծներուն սիրելի լինելով՝ ամեն աստիճանի մարդիկ՝ ամենայն ժամանակն ապելի պատվո մեջ են, և այժմ գիտութեամբ և կրթութեամբ հառաջանալու վերա են»³⁴:

Ռուսական տիրապետութիւնը առաջընթաց էր, քանզի նախքան վարչակարգի փոփոխութիւնը մահմեդականների երեսից հայերն այնքան սարսափ ու արհաւիրք էին տեսել, որ «կնուտի» հարվածներն անգամ կարող էին շատ զգալի շփուլ նրանց կարծրացած մեջքին: Հայերն ռուսներին ընդունեցին ոչ որպես բռնադատիչներ, այլ իբրև աղատարարներ, ուստի չափազանց անձնվեր և հատկատարիմ էին նրանց:

Այս առումով, Արեւելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմը առավել պոզիտիվ ելակետից էր քննում Գ. Արծրունին: Հայ բուրժուազիայի եվրոպականաձև գործունեութիւնն էր Գր. Արծրունու հոգսերի ու մտորումների մշտաբարբառ առարկան: Կրեերալ հրապարակագրողը փափագում էր հայերի քաղաքական իշխանութեան բացակայութեան պայմաններում հայ բուրժուազիայի համար ստեղծել մի ուժեղ պատվանդան, որի վրա հենվելով նա կարողանար ղեկավարող դեր խաղալ հայ հասարակական-քաղաքական կյանքի համընդհանուր ոլորտներում: Իր գործունեութեան հենց սկզբից Արծրունին գոհ էր Անդրկովկասում ցարիզմի վարած քաղաքականութիւնից: «Արդարեւ, մենք, Կովկասի բնակիչներս, ինչ դրութեան մեջ էինք ռուս տերութիւնից առաջ: Ռուսական տերութիւնը մեզ համար գիմնադրանք չի նեց, մեզ ճանապարհ տվեց համալսարաններ մտնելու: Մեր երկրի արդյունքները ճանապարհների պակասութեան

34 Հովհաննես Տեր-Աբրահամյան, Համառոտ պատմութիւն Հայոց, Ռոստով, 1880, էջ 214:

պատճառով մեր երկրից չէին դուրս գալիս: Ռուսիայի տերությունը մեզ ճանապարհներ շինեց, այժմ երկաթուղիներ կշինե: Արվեստը, վաճառականությունը, երկրագործությունը ի՞նչ դրություն մեջ էին: Վրաստանում նոքա ապահովացրած չէին շերքեղների կողմից, իսկ Հայաստանի կողմերում մահմեդականությունը յուր անշարժությամբ արգելք էր դնում ամեն աշխատանքի տարածմանը: Ռուսիայի տերությանն ենք պարտական, որ այժմ մեր երկրում աշխատանքը ապահովացրած է և կարող է առաջ գնալ: Մեզանից է կախված այժմ օգուտ քաղել մեզ տված բարերարություններից և աշխատել լավացնել»³⁵:

Արծրունու գործունեության բուռն շրջանում՝ ցարիզմի քաղաքականությունից բավարարված հայ բուրժուազիան շարունակ հիշեցնում էր իր համազգիներին, որ նրանք չպետք է մոռանան մոտակա անցյալը՝ պարսկա-թուրքական տիրապետության ծանր ժամանակաշրջանը: Ի՞նչ կլինեք մեր վիճակը, եթե չլինեք ռուսական հզոր պետության ազդեցությունը հարցին՝ Արծրունին պատասխանում էր, որ միշտ միևնույն տեղում կմնայինք, ինչպես մնացինք հինգ-վեց դար անշարժության մեջ «մինչև որ բախտավորապես հանեց մեզ մեր խոր քնից, մեր անշարժությունից, — ռուսական տերության ազդեցությունը»³⁶:

Հայ բուրժուազիայի գաղափարական սպասարկուն իր դասակարգի շահերն արտահայտելուց դատ՝ Արևելյան Հայաստանի և արևելահայերի կյանքում Ռուսաստանի խաղացած դերին պատմականորեն մերձենում էր ռեալ: «Հերքել չէ կարելի, — դրում էր նա, — որ մեր ազգը մի քանի ժամանակից սկսած հասարակապես դարգանում է, մանավանդ Ռուսա-Հայաստանի և Վրաստանի մեջ, որտեղ ռուսական տարրը եվրոպական կրթության միջոցով է դարձել»³⁷:

35 Գր. Արծրունու աշխատությունները, հտ. առաջին, Թիֆլիս, 1904: էջ 86—87:

36 Նույն տեղում, էջ 86:

37 Նույն տեղում, էջ 340:

Չպետք է անտեսել, որ այս տողերը գրվում էր մի պատմաչք-
ջանում, երբ արևելահայ բուրժուազիան խոսում էր աղգի
մեծամասնության անունից և հարց էր դնում ազատագրել
արևմտահայ ժողովրդին բարբարոսական թուրքիայի տիրա-
պետությունից:

Հայ ժողովրդի ասպզան շահկապելով Ռուսաստանում
դարգացող կապիտալիզմի հետ, Արծրունին թուրքիայի հետա-
մընաց ֆեոդալական հասարակարգը դիտում էր իբրև արգե-
լակող հանգամանք՝ Արևմտյան Հայաստանի տնտեսական ու
քաղաքական առաջողիմության համար: Եվ Արծրունին չէր
սխալվում: Անդրկովկասը ռուսական բուրժուազիայի համար
սպրանքների արտահանման շուկա չէր միայն, այլև ռուս հա-
սարակական-քաղաքական մտքի կրողն ու արձագանքողը:
Հրապարակախոսական իր հոգվածներում Արծրունին
ուսուցչի համբերատարությունը համոզում էր արևմտահայե-
րին, որ կովկասահայերի տնտեսական-քաղաքական կյանքը
շատ ավելի լավ է, քան սովթանական ռեժիմի ծանր պայ-
մաններում՝ արևմտահայերինը:

Ի տարբերություն 1860-ական թվականների արևմտա-
հայ ազգային-պահպանողականների, Գր. Արծրունին խըս-
տիվ սահմանադատում էր Կ. Պոլսի հայությունը գավառի
հայությունից: Եթե Կ. Պոլսի 300 հազարանոց հայ համայնքը
որոշ արտոնություններ է վայելում, ուր տեղական աստիճա-
նավորների շարաշահումներն համեմատաբար սակավ են,
այս գավառի հայության մարդկային իրավունքները ոտնա-
կոխ են արված, կատարյալ կամայականություն է թազավո-
րում, հայերը ճնշված են, հալածված, և եթե սյսպես շարու-
նակվի, ապա Արևմտյան Հայաստանում հայերը կանհետա-
նան այնպես, ինչպես անհետացել են հնդկահայերը:

Գր. Արծրունու նպատակն էր՝ արևմտահայերին կապել
արևելահայերի հետ, բանդել երկու հատվածները տարանջա-
տող միջնորմը և, որ գլխավորն է՝ հիմնովին փոխել արևմտա-
հայերի վերաբերմունքը դեպի Ռուսաստանը: Լոկ դրանով
պիտի բացատրել այն պայքարը, որ «Մշակը» սկսեց «Ազգա-

լին սահմանադրութեան» դէմ: Արծրունին ջանում էր ցույց տալ, որ Արեւելյան (Ղրիմի) պատերազմից հետո օսմանյան կառավարութեանը մայրաքաղաքի հայ կրօնական համայնքի ներքին գործերում որոշ զիջումներ անելով՝ փորձում է մեղցնել նրանց ռուսական օրինակապետին: Նա ծաղրում էր «Ազգային սահմանադրութեանը» իբրեւ մի մտաքաժին բան, որպէս «օգային մի ամբողջ», որ հայերին ոչինչ չի տվել, «բացի առանձին ոգևորութիւնից»³⁸:

Արեւմտահայ ժողովրդի ազատագրման Գր. Արծրունու պրոպագանդային հովիւութեան իր նախնական թուրքական բռնատիրութեան դէմ բաղկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը: Օսմանյան կայսրութեան մեջ ստրկացված բաղկանյան սլավոնների ազգային-ազատագրական շարժումը օգտագործվեց եւրոպական տերութեանների կողմից՝ իրենց նվաճողական պլանների իրականացման համար: Արծրունին ճիշտ այդպէս էլ գնահատում էր: «Արեւմտյան եւրոպան,—գրում էր նա,—միայն իր շահերի համար է միջամտում Թուրքիայի ներքին գործերին և նորից փորձում է խաղ խաղալ ճնշված ժողովուրդների գլխին, ինչպէս այդ եղել է նախկին ժամանակներում»³⁹: եւրոպական իմպերիալիստական պետութեաններից առանձնացնելով Ռուսաստանին, Գր. Արծրունին ցույց էր տալիս, որ միայն նա է, որ ոչ միայն խոսքով, այլև գործով օգնում է Թուրքիայում ճնշված ու հարստահարված ժողովուրդներին: Իսկ եթե եւրոպայում համակրութեւն կա դեպի այդ ժողովուրդները, ապա դա մասնավոր երևույթ է միայն և բնավ չի արտահայտում պետութեանների վերաբերմունքը դեպի ճնշվածները⁴⁰: Միանգամայն ճիշտ քննադատելով եւրոպական պետութեանների քաղաքականութեանը, Արծրունին ոչ մի անգամ նույնիսկ չակ-

38 «Մշակ», 1876, № 45:

39 «Մշակ», 1876, № 44:

40 Տե՛ս «Մշակ», 1877, № 59:

նարկեց այն մասին, որ Ռուսաստանի արեւելյան քաղաքակա-
նությունը հետապնդում էր Ասիայի մի մասի գրավումը՝
չնայած այն օրյեկտիվորեն խթանում էր թուրքահը-
պատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքա-
րի ծավալմանը: Արժրունին համաձայն չէր պահպանողա-
կանների հետ, որոնք հայ ժողովրդին համբերութուն էին
քարոզում և գտնում, որ հայերը սլավոնների նման չպետք է
դիմեն զինված ապստամբության: «Շատերը մեզ հավատա-
ցնում են,— գրում էր Արժրունին,— որ այդ (ապստամբու-
թյունը—Ն. Ս.) ցնորք է, լավ է համբերեն քանդվող տան
բնակիչները. տունը ինքն իրեն նորից կպահպանվի, ծոված
պատերը կուղղվեն և ժամանակով նորից կկայունանա: շինու-
թյունը: Ասում են, հայր աղա շունչ կքաշի թուրքիայում, երբ
տերութունը կլուսավորվի. մինչև երբ սպասել դրան, երբ
հրանք հերքում են լուսավորութունը, երբ հայ տարրը կոր-
չում, ռչնչանում կամ գաղթում է թուրքիայից: Երեւի այդ
կլինի այն ժամանակ, երբ ոչ մի հայ չի մնա թուրքիայում»⁴¹:
Արժրունին հրեշավոր էր համարում մտածութեան այն կերպը,
որ թուրքիան դիտելով «բարեխնամ» պետութուն, հնարավոր
էր համարում այդ պետութեան մեջ հիմնել թուրք-հայկական
պետութուն, ինչպես Ավստրո-Հունգարիան Եվրոպայում⁴²:

Արժրունին իրավացի էր, երբ չէր հավատում եվրոպա-
կան տերութիւնների արեւելյան քաղաքականութեան անկեղ-
ծութեանը, խորապես մոլորված էր սակայն, երբ մի ուրիշ
նվաճողի՝ ցարական Ռուսաստանի օգնութեամբ հնարավոր էր
գտնում ազատագրել թուրքիայի կողմից ստրկացված ժողո-
վուրդներին: Երբ 1877 թ. ճալթեյ ուս-թուրքական պատե-
րազմը, Արժրունին առանց երկար հասպտակելու գրեց. «Յան-
կանք մեր զորքերին հաջողութուն, որից կախված է Արեւելքի
ազատութիւնը, նրա բնակիչների խաղաղ, ապահով գրու-
թյունը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնյա

41 «Մշակ», 1876, № 25:

42 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1876, № 27:

ազգերի բարոյական, տնտեսական և մտավոր վերանորոգությունը»⁴³։

Ի՞նչ պետք է դառնա Հայաստանը հարցին, Արծրունին պատասխանում էր՝ քանի որ ոչ միայն ասիական քրիստոնյաները, այլև Հայաստանի մահմեդական աղգարնակչությունն էլ «զղլած է թուրքաց տիրապետությունից», ուստի շատ ավելի լավ կլինի, եթե Արևմտյան Հայաստանը միանա Ռուսաստանին, բայց եթե վիճակը այլ կերպ կարգավորվի և Թուրքիայի հայերի ցանկությունը չիրագործվի, այն ժամանակ՝ «որքան և անպատրաստ, անընդունակ լինե՞ր Հայաստանը ինքնուրույն կյանքին, ինքնավարությունը, այնուամենայնիվ լավ է, թող ինքնավարություն ստանա, քան թե նորից վերադարձած լինի թուրքաց բարբարոս, ճնշող, ոչնչացնող տիրապետությանը»⁴⁴։ Արծրունին այս դեպքում էլ հայերի միակ հույսը Ռուսաստանի վրա էր դնում, քանզի Ռուսաստանի համար, ասում էր նա, «ավելի լավ է որպես հարևան ունենալ մի փոքրիկ անկախ Հայաստան, Ռուսաստանին միշտ հավատարիմ և երախտագետ Հայաստան, քան թե Անգլիայի պես նենգավոր, եսական, հարստահարող և միշտ թշնամի հարևան»⁴⁵։ Ինչպես հայտնի է, պատմությունը հակառակ ընթացավ Գր. Արծրունու կանխատեսումներին ու տկնկալություններին։ Թուրքիան չկործանվեց և ցարիզմը անվերապահորեն բարյացակամ չգտնվեց հայերի նկատմամբ, ինչպես «անվերապահորեն» ենթադրում էր Արծրունին։

Ինչևիցէ, դավանելով ռուսական օրինետացիա, Արծրունին հաշվի էր առնում պատմության դասերը, հայ ժողովրդի մի հատվածի՝ պարսկական դեսպոտիզմի լծից ազատագրվելու և Ռուսաստանի հետ կապվելու դրական հետևանքները, ելնում էր Թուրքիայում հայ ժողովրդի իրօրյա կացությունից։ Արծրունուն հատկապես մտահոգում էր արևմտահայերի ապագան։ Նա ոչ մի լավ գալիք չէր տեսնում «հիվանդ» մարդու

43 «Մշակ», 1877, № 26։

44 «Մշակ», 1877, № 33։

45 «Մշակ», 1877, № 35։

համար, առավել ևս նրա գարշապարի տակ հեծող արևմտահայության համար: Արծրունին գտնում էր, որ արևմտահայերը Ռուսաստանի հետ կապվելով, ոչ միայն հնարավորություն ձեռք կբերեն, արևելահայերի նման, հաղորդակից լինելու համաշխարհային քաղաքակրթությանը, այլև կդառնան այդ քաղաքակրթության տարածողները Փոքր Ասիայում:

Հայ ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրների մասին մտածողության այլ ընթացք ուներ Մաթևոս Մամուրյանը: Մամուրյանը մերժում էր կովկասահայ լիբերալների ռուսական օրինակապետության և պաշտպանության տակ առնում ցարիզմի կովկասյան քաղաքականության՝ ազգային-պահպանողականների քննադատական ուղեգիծը: «Հայերը,—գրում է Մամուրյանը,—ցորենն ու ալյուրը, արյունն ու կյանքը չէին խնայեր օտար ղինվորներուն, որ իբր փրկության հրեշտակ իրեն կներկայանար... Հայ քաղաքացին իր տունը, մեծատունը իր գանձը, գյուղացին իր կալն ու կալորացն, կրոնավորն իր վանքը, պատանին իր հոգին, լեռնականն իր բազուկները կբանար ռուսաց առջև և իբրև ազատուրար զանոնք կընդուներ»⁴⁶: Ռուսական ղորքերի հաղթորշավի ժամանակ հայ ժողովուրդը խանդավառությամբ «...Ներսես կաթողիկոսին (պետք է լինի՝ արքեպիսկոպոսին—Ն. Ս.) կպատասխաներ և հայրենյաց անկախության համար ղինվոր գրվելու կերթար»⁴⁷: Սակայն պատերազմի հաղթական ավարտից ինչ օգուտ հայերին, երբ «Ներսեսի ձեռքը լոկ դաշնագիր մը մնացեր, հայ քաջեր Երևան դաշտին վրա իզուր էին ընկեր, և բնիկները միայն շղթա փոխեր էին...»⁴⁸ Կամ՝ «Թերևս չգիտես որ հայերը վերջի պատերազմի մեջ միայն օտարի համաբ արյուն թափեցին»⁴⁹— պատասխանում է Մամուրյանի հերոսներից մեկը:

46 Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 124:

47 Նույն տեղում, էջ 8:

48 Նույն տեղում:

49 Նույն տեղում, էջ 11:

«Պատրանք,— այդ առթիվ հարում է Մամուրյանը,— վասնզի Բասրեիչ՝ որ հայոց շնորհիվ Երևանքի կոչվեցավ, անոնց տրված խոստումները չպահեց»⁵⁰: Քննադատութեան Ենթարկելով ցարիզմի գաղութային քաղաքականութիւնը, Մամուրյանը սակայն քաղաքական ապակողմնորոշման օտարայն էր քաշում ընթերցողին, երբ համեմատելով ցարական կնուար պարսկական խարազանի և թուրքական թակիր հետ՝ գրում էր, թե դրանցից «առաջինը կսղաննե, երկրորդը կանդամալուծե, երրորդը կգրգռէ»⁵¹:

Սակայն ուրախալի է նշել, որ ցարիզմի կովկասյան քաղաքականութիւնից դժգոհ Մամուրյանը չէր անդիտանում մի շատ կարևոր իրողութիւն. այն, որ նա ցարիզմի գաղութային քաղաքականութիւնը չէր շփոթում Արևելքի ժողովուրդների նկատմամբ ուսած ժողովրդի կատարած առաջադիմական դերի հետ:

Յարիզմի և ուսած ժողովրդի շահերն անհարիր են և դրանք Մամուրյանի մոտ տարանջատ են:

«Ռուսիա նոր մ'է,— գրում է նա,— որմե պիտի ծնի Որմիդդ և Արհմն: Բայց Ռուսիա բուն կառավարութիւնը չէ, կառավարութիւն մը պատահական կամ ժամանակի ու ժողովրդյան հանգամանաց արդշունքն է, որ ժողովրդյան հառաջադիմութեան ու ժամանակին հետ կայլափոխի»⁵²:

Ռուսական ցարիզմը ոչ միայն իր ժողովրդին էր պահում ստրկութեան մեջ, այլև իր քաղաքականութեամբ կաշկանդում էր մյուս ժողովուրդների վարգաշման զործընթացը: Եվրոպան,— գրում էր Մամուրյանը,— «... շրջանավոր քաղաքական ու տնտեսական փոթորիկներու դատապարտված է, եվրոպա, աշխարհիս ամենեն լուսավոր համարված մասը, ընկերային հրատապ խնդիրներով տազնապելու ատեն»

50 Նույն տեղում:

51 Աշ. Հովհաննիսյան, Նայրանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 492:

52 Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, էջ 165:

կտագնապի քաղաքական ահարկու սրով մը, զոր Ռուսիա Տոմոկլէսի սուրին պես, իր գլխին կախված է»⁵³։ Մամուրյանը գտնում էր, որ ռուսական ցարիզմը հավերժ կանգուն չի մնա և որ նրա անխուսափելի կործանումից հետո ուրիշ փոխհարաբերություններ կստեղծվեն ժողովրդաշատ և ալլաւելու Ռուսաստանում։ Լուսանշմար գալիքի հեռաստաններում Մամուրյանը ուրվագծում էր նոր Ռուսիան, ուր «ալլադեն ու ալլասեն ժողովուրդները ինքնօրինությամբ պիտի վարեն, կառավարեն իրենց հատուկ շահերն տարբեր օրինաց և սովորությանց ներքե»⁵⁴։

Ազգային-քաղաքական հարցի լուծման մի ընթացք էր դա, որ շոշափման եղրեր շուներ ոչ ազգային-պահպանողականների և ոչ էլ լիբերալների մտայնության հետ։ Այդ ավելի շատ նման էր ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ պայքարող Մ. Նալբանդյանի ուղեգծին, որ ելնելով հայ և ռուս դեմոկրատիայի պայքարի հեռանկարներից՝ գալիք Ռուսաստանի հետ էր առնչում ոչ միայն արևելահայերի, այլև արևմտահայերի ազատագրության հարցը։ «Պոլսահայ լուսավորչական համայնքը» զեկուցագրում Մ. Նալբանդյանը, ելակետ ընդունելով ամբողջ հայ դեմոկրատիային համախմբելու և նրա պայքարը ռուսական հեղափոխական-դեմոկրատական շարժման հետ միացնելու խնդրից, Կ. Պոլսի ռուսական դեսպանի ուշադրությունն էր հրավիրում հայ և օտար տարրերի այն վտանգավոր պրոպագանդայի վրա, որի նպատակն էր Թուրքիայում ապրող հայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից և անջրպետ ստեղծել հայ ժողովրդի երկու հատվածների միջև։

«Հայ ազգը,—գրում էր Նալբանդյանը,—զուրկ արտաքին ամեն մի պաշտպանությունից, ենթարկված Դռան կամայականությանը, փոքր առ փոքր կանցնի (և արդեն անցնում է)

⁵³ Նույն տեղում, էջ 164։

⁵⁴ Նույն տեղում, էջ 165։

մասամբ կաթոլիկության, մասամբ բողոքականության և դրա հետ մեկտեղ կտարածվի Ֆրանսիայի և Անգլիայի բարոյական ազդեցությունը Թուրքիայում: Մինչդեռ հայերը ամբողջ Թուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին, և ի՞նչ ուս կառավարության կողմից ցույց տրվի նրանց թևկուղ և ամենափոքր օգնությունը, այն ժամանակ Ֆրանսիական և անգլիական կառավարությունները կզրկվեն նրանց վրա ներգործելու հնարավորությունից, հետևաբար և կանգ կառնի նրանց կրոնի և ազդեցության պրոպագանդը»⁵⁵:

Ռուս ժողովրդի ազատության և ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների ազատագրության հարցերը Նալբանդյանի համար անշատ հարցեր չէին, այլ մի ընդհանուր պայքարի տարբեր ճակատամասեր՝ իրար հետ սերտորեն՝ զուգորդված և միմյանցով պայմանավորված:

«Ռուսիո մեջ խմորված ազատությունը, — գրում էր Նալբանդյանը, — համարձակ կարելի է մարդկային ազատություն համարել... քանզի ոչ միայն ինքը ռուսը կուղե իր ազատությունը, այլ՝ կքարոզե թե ինչպես, Ֆինլանդիան, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է, որ ազատ և անկախ ըլլան Մեծ Ռուսիային, որպեսզի ինքը 43 միլիոն զուտ ռուսական ազգը ստուգապես ազատվի, ամեն ստրկության և ամեն բռնության սկզբունք մերժելով և իր բարոյական և նյութական ուժերը և զորությունը միմիայն իր մեջ ամփոփելով, որպեսզի երջանկություն հաշակե, հաղաբամյա գոյությունեն հոքը և հառաջանա՞ քաղաքակրթության մեջ: Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ, մեծ խորհրդով ունի...»⁵⁶: Մարդկության ազատության մեծ խորհրդի թմրանումով էր թելադրված և արևմտահայերի ազատագրման հեռանկարը Ռուսաստանի հեղափոխության հետ կապելու

55 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Մոսկվա, 1935, էջ 60:

56 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. II, Երևան, 1945, էջ 61:

Նալբանդյանի միտումը: Արևմտահայերին արևելահայերից անջատելու փորձերը Նալբանդյանը դիտում էր որպես մի լուրջ վտանգ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միավորման այն ձեռնարկումների դեմ, որ նա իր համախոհների հետ սկսել էր այդ տարիներին: Նալբանդյանը հայ ժողովրդի արևելյան հատվածի Ռուսաստանին միացման նշանակությունն ընկալում էր հայ և ռուս դեմոկրատիայի շահերի միաձուլման տեսակետից: Նա ձգտում էր ազատագրել ժողովրդական զանգվածներին ինչպես օտար, այնպես էլ սեփական նեղիչներից ու հարստահարողներից, ջանում էր հայ ազգային-ազատագրական շարժումը միացնել համառուսական հեղափոխական շարժմանը:

Վերածնության և լուսավորության գաղափարները ոգեշնչում էին անցյալի հեղինակներից շատերին, շարժում նրանց հայրենասիրական զգացմունքները և նրանք փորձում էին շատ հաճախ այդ իդեալներով շարժել հայ իրականությունը: Եվ ահա, ոգևորված դարաշրջանի գաղափարներով, անցյալ հեղինակներից ոմանք սկսեցին քրքրել հայ ազատագրական շարժման ոչ հեռավոր անցյալի էջերը և գեղարվեստորեն զգեստավորել դրանք: Ընդ որում, հաճախ ելակետ ընդունելով մակերեսային փաստերի հավաստիությունը և անտեսելով դարաշրջանը բնորոշող երևույթների համակցությունը՝ հանգում էին սխալ եզրակացությունների: Այսպես, օրինակ, սխալ ակունքից էր ելնում հայ խոշոր պատմավիդյապան Բաֆֆու վաղ շրջանի պատմավիճակագրությունը: Ի դեպ, մեր պատմագրություն մեջ համարյա չի խոսվել այն մասին, թե ինչ հայացքներ ունեւր Բաֆֆին Արևելյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելու մասին: Ավելին, լուսությունն այս մասին շատերին տրամադրել է կարծելու, թե Բաֆֆու համար այդպիսի հարց ընդհանրապես զոյւթյուն չի ունեցել: Հարկավ, Բաֆֆին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հարցին այնպիսի մեծ կարեւորություն չի տվել, որքան արևմտահայերի ազատագրական պայքարի հարցերին: Սակայն, տարբեր առիթներով նա

արտահայտել է արեւելահայերի կյանքում ուսական տիրապետութեան ունեցած դերի մասին իր կարծիքը: 19-րդ դարի 50—60-ական թվականներին նա այսպես էր ներկայացնում նույն դարի առաջին տասնամյակների Պարսկաստանի տընտեսական-քաղաքական վիճակը: «Արժանահիշատակ Ֆաթ-Ալի և Մուհամեդ շահերի տիրապետութեան ժամանակներում,— գրում էր Բաֆֆին,— եւրոպական լուսավորութեան ճառագայթները... ցոլանալ սկսան Պարսկաստանի սեւթույր վարագույրների նեղ ծակերից և քաղաքակրթութեան լույսը... Հալածեց նախնի բռնակալութեան սև խավարը»⁵⁷: Բայց ալա՛ղ, հրկար շտեկեց այդ բարեբախտութիւնը: Ռուս-պարսկական պատերազմը «...Թողեց պարսկահայոց համար մի հավիտենական ամիսոսանաց արժանի անցք, երբ պարսկահայոց մեծ մասը գաղթեցին դեպի Արաքսի մյուս կողմը, անմխիթար սուգի մեջ թողնելով յուրյանց հայրենակիցքը»⁵⁸: Բաֆֆու կարծիքով, եթե չլինեին Ն. Աշտարակեցին և զընդամենը Հազարյանը, ապա միանգամայն ուրիշ ընթացք կրստանար պարսկահայերի տնտեսական ու հասարակական կյանքը: «Հայոց պատմութեան ատյանում,— գրում էր Բաֆֆին «Սալբիի» առաջաբանում,— չեն կարող պարզ երեսներով երեւալ երկու հայազգի անձինք,—մինը՝ մի հոյակապ և արժանի հիշատակի եկեղեցական ոմն, որ շատ ուշ հասկացաւ յուր սխալը... մյուսը՝ մի փառասեփ հայ աստիճանավոր ուսաց զորքի մեջ, որ խաբւելով շքանշաններից, հազարավոր գերդաստաններ ձգեց ուսաց խորամանկ քաղաքականութեան շղթաների մեջ և թողեց նրանց մաշվել՝ քսվելով մի հզոր տերութեան երկնաքարի տակ...»⁵⁹: Նման այն քննադատներին, որոնք հեռավոր կայծը՝ հրդեհի և հազի ձայնը թնդանով իրոք մոռնելի տեղ են ընդունում, Բաֆֆին, «Սալբիին» գրելու պահին իդեալականացնում էր Պարսկաստանի այն ժամանակվա կացութիւնը: Նա չափազանց գերազնահա-

57 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. I, Երևան, 1962, էջ 56:

58 Նույն տեղում, էջ 57:

59 Նույն տեղում:

տում էր Աբբաս Միրզայի կողմից Պարսկաստանում կատարված աննշան տնտեսական ու կուլտուրական ձեռնարկումները, որից հետո «Հայոց աշխատասիրության ոգին երևան հանեց յուր վառվռուն վաստակները»⁶⁰։ Բարեբախտաբար Բաֆֆին իր կարծիքին ընդմիշտ գերի չմնաց։

Առաջնորդ սկզբունք ընդունելով «... պատմությունը առաջոք միրաժներ ունի, որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբուկյունների մեջ։ Նեղ, միակողմանի հայացքը պատմության վրա միշտ մոլորեցնում է մարդուն»⁶¹ նշանաբանը, մեծ գրողը հետագայում վերանայեց նախորդ շրջանի իր պատմագիտական համոզմունքը և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հարցը փորձեց ընկալել ռեալիստորեն։ Բաֆֆին չգրեց դուռ պատմագիտական աշխատություններ, բայց կարողացավ մշակել պատմության նկատմամբ որոշակի աշխարհայացք, իսկ մենք այդ նկատում ենք և՛ նրա պատմավեպերում, և՛ հրապարակախոսության մեջ։ Չամչյանի, Ինճիճյանի գրքերը չէին բավարարում նրա պահանջները։ «Մեր պատմագիրները չեն նկատել,— գրում էր նա,— որ բացի Թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից ու զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ... և որի հոգեկան և բարոյական հակումները արտահայտվում էին այս կամ այն հասարակական երևույթների մեջ։—Մեր պատմության մեջ ժողովուրդ չկա, կան միայն տիրապետողներ»⁶²։

Հակասություններով ու հակադրություններով լի իր ապրած ժամանակաշրջանում հաճախ իրարամբեր կարծիքներ արտահայտող Բաֆֆին ի վերջո կարողացավ ճիշտ կողմնորոշվել։ 1870-ական թվականների սկզբին նա արդեն այն համոզմունքն ուներ, թե Պարսկաստանն ու Թուրքիան դարա-

60 Նույն տեղում։

61 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. IX, Երևան, 1964, էջ 500։

62 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. VII, Երևան, 1956, էջ 6։

վոր հետամնացությամբ տառապող պետութիւններ են, դա-
ժան՝ իրենց ֆեոդալական կարգերով, սոցիալական ու անո-
քեն դատական սխտեմներով: Բաֆֆին բազմաթիւ ստեղծա-
գործութիւններում բաց էր անում անվերջ պրովոկացիաների
վարագույրը՝ դաժանորեն հշուտած այն որոգայթների պատ-
մութիւնը, որին զոհ էր գնում ոչնչի մեղսակից հայ ժողո-
վուրդը:

Բաֆֆին իր «Հարեմ» վեպում անխնա հարվածներ էր
հասցնում Պարսկաստանում, և առհասարակ Արևելքի երկըր-
ներում, տիրող ֆեոդալական-բռնակալական կարգերին:
Վեպը պատուում է ոչ միայն բռնակալության դիմակը և
բարձրացնում թանձր վարագույրի հետևում թաքնված ող-
բերգական իրականության պատկերը, այլև, ցույց է տալիս
միաժամանակ, թե ինչպես են գտնում միմյանց բոլոր տան-
ջահար մարդիկ և անկեղծորեն բարեկամանում: Բռնակալու-
թիւնը մեկ է, բայց շատ են այն ժողովուրդները, որոնց
ղավակները տառապում են նրա լծի տակ: Փրկության հույսը
սրտներում հայերն ու վրացիներն տենչում են ազատության:
Այդ մեծագույն բարիքը բերում է Ռուսաստանը: Անդրկով-
կասի և Հայաստանի միացումը Ռուսաստանին ոգևորում է
Աղա Մահմեդ խանի կողմից Պարսկաստան քշված հայերին ու
վրացիներին և նրանք ոտքի են կանգնում, թռթափում իրենց
վրայից օտարի լուծը և վերադառնում հայրենիք: «Սալբի» ա-
ռաջաբանում ռուսական զենքի հաղթական երթին նպաստող
հայ գործիչների ձեռնարկները մրող Բաֆֆին «Հարեմում» գը-
րում էր, որ անկախ Անդրկովկասում ցարիզմի վարած գաղու-
թային քաղաքականության՝ «վրացիները այլևս թագավորու-
թիւն չունեն»⁶³, այնուամենայնիւ Ռուսաստանը դրական դեր
էր կատարում վրացիների ու հայերի նկատմամբ, որովհետև
«...ռուսները մեզ նման քրիստոնյաներ են, նրանք գերի չեն
առնում և պարսիկների նման չեն թալանում»⁶⁴: Բաֆֆու հա-

63 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. I, էջ 464:

64 Նույն տեղում, էջ 465:

մար Պարսկաստանը, ինչպես և Թուրքիան, մի կորստաբեր երկիր էր, որտեղ բռնակալի երկաթե գավազանը ավելի բարբարոսաբար էր ներգործում, քան որևէ այլ երկրում: Պարսկաստանում ու Թուրքիայում հայ հպատակների աչքերից արտասուքը հրքեք չէր չորանում:

Բաֆֆին դեմ էր գնում Պարսկաստանի և Թուրքիայի իրական կացության նենգափոխողներին և գտնում էր, որ հայերի ազգային-քաղաքական ազատությունը այդ երկրներում խաթարված է:

«Հայը, եթե վայելում է ազատութուն յուր ազգային հիմնադրվածությունների մեջ,— ասում էր պատմավիպասանը 1873 թվականին,— դորանով նա պարտական է տիրող ազգի դեռ մանուկ քաղաքական դարգացմանը: Իսկ այդ ազատութունը ժամանակավոր է: Նա երկար չպիտի տևե»⁶⁵

Կրքի, ժխտման տարերքի ուժով ու մտացածին պատկերներով չէ ամենեկին, որ Բաֆֆին ցույց էր տալիս Պարսկաստանի ու Թուրքիայի ֆեոդալական իրականության բոլոր ազատելություններն ու սաբսափները: «Մի այնպիսի երկիր, որպես Պարսկաստանն է,— գրում է նա,— ուր ավազակութունը մի սովորական բան է, քիչ չէ պատահում, որ սուրհանդակները կողոպտվում են: Այդպիսի դեպքերում վաճառականը կորցնում է ոչ միայն յուր նամակները, այլև զրկվում է յուր արծաթից: Ոչ ոք պատասխանատու չէ լինում նորա կորստին, որովհետև սուրհանդակը մի պաշտոնական կամ պայմանավոր նշանակություն չունի»⁶⁶: Բաֆֆին հավատով չէր լցված և դեպի պարսկահայերի գալիքը: «Պարսկաստանի հայոց ապագան,— շարունակում էր նա,— չէ խոստանում որևիցէ միաթարական վախճան, քանի նորա գոյությունը ապահովող մի հաստատ դրություն չենք տեսնում»⁶⁷:

Բաֆֆու հոռետեսությունն ուներ ոչ միայն իրական, այլև անցյալ պատմական արդարացում, քանզի Պարսկաստանը

65 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. IX, էջ 46:

66 Նույն տեղում, էջ 63:

67 Նույն տեղում, էջ 132:

քրիստոնյա իր հպատակների նկատմամբ այնպիսի բարբարոսություններ էր կիրառում, որոնք իրենց վրա կրում էին «լոնկթամուրյան, շինդիլխանյան դարերի արյունոտ կնիքը...

Հայր Պարսկաստանում ոչինչ բանի տեր չէ. նրա կյանքը, նրա կաշքը և նրա բնատնիքը իրան չեն պատկանում»⁶⁸: Պարսկահայերը դժոխային այդ կազույթյունից ազատվելու համար մի ելք ունեին միայն՝ «... թողնել Պարսկաստանը և գաղթել դեպի ուսասց հողը»⁶⁹:

Բաֆֆին չէր հանդուրժում նաև Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող և նրա երեակայական առաջադիմությունը հոչակող, անձնական հաշիվներով կուրացած՝ բուրբայն պատմագրողներին ու հրապարակախոսներին, ովքեր գտնում էին, թե քրիստոնյա հպատակները այստեղ «համարյա կատարյալ ազատություն են վայելում»⁷⁰:

Ըստ Բաֆֆու, ընդհակառակը, ուսասցպատակ հայոց անտեսական ու հասարակական կյանքի զարգացումը իր բուրբ կողմերով բարձր է թուրքականից: «Ռուսաստանի հայր համեմատաբար ավելի բարձր է, քան թե պոլսեցին, թե իր մտավոր և թե նյութական կարողությունը»⁷¹, ուստի Բաֆֆին «Տաճկաստանի աղքատ և անկիրթ մեր հայ եղբայրներին» օգնելու առաջին «մեծ պարտավորությունը» հատկացնում էր «Ռուսաստանի հայերին»⁷²:

«Թուրքաց հայերի» ուսական օրինաւացիան ունեւ իւր բնական պատճառները, քանզի «նրանք տեսնում էին իրենց ազգակիցներին ուսական Հայաստանում ավելի բարեբախտ վիճակի մեջ, մինչդեռ իրենք օրրսւօրե մաշվում և ոչնչանում էին մի անկարգ ու նենգամիտ կառավարութեան բարբարոսութեանից»⁷³:

68 Նույն տեղում, էջ 210:

69 Նույն տեղում, էջ 213:

70 Նույն տեղում, էջ 225:

71 Նույն տեղում, էջ 478:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 487:

73 Բաֆֆի, Տաճկահայր, Թիֆլիս, 1895, էջ 41—42:

Համովելիով, որ պարսկա-թուրքական բռնապետական փարգերը անհամատեղելի են լուսավորական գաղափարների տարածման հետ, Բաֆֆին 1870-ական թվականների պարսկահայերի ու արևմտահայերի ծանր վիճակը նույնացնում էր «առաջ քան ռուսաց տիրապետությունը» Կովկասյան նահանգներում նույն ղզլբաշների կողմից տանջվող հայությունը, դրա համար էլ 1874 թվականին գրած «Ուր է իմ հայրենիքը» բանաստեղծության լիրիկական հերոսը չէր կամենում ապրել ո՛չ Պարսկաստանում և ո՛չ էլ Թուրքիայում⁷⁴։ Մինչդեռ՝ «Մեր ժամանակներից 20—30 տարի առաջ, և կառելի է ասել այն օրից, երբ ռուսները տիրապետեցին Կովկասը, հայ երիտասարդության առջև բացվեցավ մի ընդարձակ ապարեզ»։

Անհերքելի է, որ մեր մտավոր վարդապետները և ռուսների մեջ կա մի ներքին կապ— ասում էր Բաֆֆին «Հայ երիտասարդությունը» աշխատության մեջ, 1879 թվականին։

Իր «Բաֆֆին և հայ վիպասանությունը» հոդվածաշարում արևմտահայ նշանավոր արձակագիր Արփիար Արփիարյանը մեծ համակրանքով էր խոսում ռուս ժողովրդի մասին և նշա՛վակում ցարիզմի խավարամուլ քաղաքականությունը։ «Ռուսիո հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա, և ժողովուրդը կարտասանե նոցա անուններն ակնածությամբ և համակրանք։ Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է այս ղզաշմանց ու գաղափարաց տարածմանն ի Հայս։ Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող անձնավորությունք վայելում են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա։ Ռուս ազգը մին է ի նոցանէ, որք ինչքան ալ թերութեանց ենթակա լինին, բայց և այնպես հայրենեաց սերը իրենց առաքինութեանց գլխավորն է»⁷⁵։ Սա ժողովրդական Ռուսաս-

⁷⁴ Տե՛ս Բաֆֆի, «Փունջ», հտ. I, էջ 187։

⁷⁵ «Մասիս», 1884, № 3737, էջ 215։

տանն էր, որին դեմ էր կանգնած հակոտնյան՝ ցարականը: «Ռուսական կառավարութիւնը,—մի ալ առիթով գրում է հեղինակը,—որ Ասիո մեջ քաղաքակրթութեան տարածման ամենահզոր միջոցը կհստակեցնէ ինքզինք... հանդարտ և հավատարիմ ժողովուրդներն կը սարսափի» որ նորա մամուլը այսքան շարաշար կը կաշկանդէ: Սակայն չհուսահատինք քաղաքակրթութեան հաղթանակին: Մտաց արտահայտութիւններն ատեն մը ուրիշ կարմիր գույնով կը ներկին. այժմ արշան տեղ հաշորդած է կարմիր թանաքն ալ անհետ կը լինի: Բայց մինչև որ անհետ լինի, իցե թե Ռուսիո կառավարութիւնը փոխանակ խաւաքամիտ Կատարովներու, ունկն դնէր մարդկութեան ճշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներն են»⁷⁶:

Բաֆֆին, ինչ խոսք, շունեց ցարիզմի ռեակցիոն քաղաքականութիւնը բացելիքաց քննադատելու Ա. Արիիարչանի հնարավորութիւնը: Սակայն 1880-ական թվականներին, երբ ակներե դարձաւ ցարիզմի բացասական դիրքավորումը դեպի արեւմտահայերի ազատագրական շարժումը և Արեւելեան Հայաստանում քաղաքական հաշտեցում եղաւ նրա հալածական քաղաքականութիւնը դեպի հայ ժողովրդի գալուցական-եկեղեցական ինքնավարութիւնն իսկ, պաշտոնական Ռուսաստանի նկատմամբ Բաֆֆուն կրկին մղեցին 1850-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատ գործիչների քննադատական խորհրդածութիւնների ոլորտը: Այս անգամ Ղարաբաղի հայկական մեղիքութիւնների վերացումն էր ցավ պատճառում հայրենասեր զրոյին:

Բաֆֆին դժգոհ էր այն բանից, որ չիրականացան ոչ միայն Ղարաբաղի մեղիքների ազգային-քաղաքական բաղձանքները, այլև, որ հայերի արտակարգ զոհողութիւնները ռուսական զենքի հաշողութեան գործում, որեւէ արտոնյալ վիճակ չստեղծեցին նրանց համար: Այնուամենայնիւ, Բաֆֆին չէր բացասում ռուսական տիրապետութեան դրական հետեանքներ

76 «Մասիս», 1884, № 3736, էջ 196:

րը: Նա զոհ էր, որ ռուսական տիրապետութիւնը զոցեց հայերի ֆիզիկական ոչնչացման՝ դարերից եկող մշտական երկյուղը և տնտեսական ու մշակութային նշանակալից վերելք ապահովեց նրանց համար: Եվ դա բնորոշ էր ոչ միայն Րաֆֆուն:

Ռուսական տիրապետութեան դրական կողմն արձանագրող 19-րդ դարի բոլոր հեղինակներն էլ անտես չէին առնում անձի ու զուլքի ապահովութիւնը, մեծարում էին լուսավորութիւնն ու քաղաքակրթութիւնը, պրոպագանդում ու գոյութեան իրավունքի կոլման պարզում այն, ինչ հնարավոր էր ցարիզմի տիրապետութեան պայմաններում:

Հիրավի, ցարիզմը չբավարարեց, և չէր էլ կարող բավարարել հայ ազգային-քաղաքական սպասելիքները, բայց իրողութիւն է, որ Արեւելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին սկիզբ դրեց հայ ժողովրդի պատմութեան կարեւորագույն էտապներից մեկին և առաջադիմական նշանակութիւն ունեցած նրա հետագա զարգացման համար: Բաղմատանջ հայ ժողովրդի գալիքը սերտորեն կապվեց ռուս ժողովրդի բախտին ու գալիք պատմութեանը:

Առաջադիմական այդ իրողութիւնից բխող առաջին հետեանքն այն էր, որ ռուսական տիրապետութեան տակ անցած հայութիւնը փրկվեց ֆիզիկական բնաջնջման հնարավոր վտանգից և պայմաններ ստեղծվեցին հայերին համախմբելու, նրանց հոգեւոր և նյութական ուժերը միավորելու մեկ միասնական պետութեան՝ ռուսական կայսրութեան մեջ: Պարսկահայերի և արեւմտահայերի ներգաղթը դեպի Ռուսաստանի նորագրաւ մարդերը, այս տեսակետից, հայ ժողովրդի նորդարյան պատմութեան ուշագրաւ էջերից է: Հայտնի է, որ սլարսկա-թուրքական բռնակալները վաղուց ի վեր պետական քաղաքականութեան աստիճանի էին բարձրացրել հայերի արտագաղթը: Պարսիկ խաների ու թուրք փոշանների գիշատիչ քաղաքականութեան հետեանքով խիստ նվազել էր Հայաստանի բնակչութիւնը, դատարկվել, ամայացել էին Արարատյան

աշխարհի գլուղերն ու քաղաքները: Զանգվածային նախընթաց արտագաղթերը այնքան էին փոշիացրել, ցիր ու ցան դարձրել հայերին, որ ռուս-պարսկական պատերազմից հետո ներգաղթի կազմակերպման խնդիրը դարձել էր հույժ կարևոր և աշխատական, առանց որի անհնարին կլինեիր վերականգնել ավերված երկիրը. նա կմնար ամայի, դատարկ մի տարածություն և չէր կարող որևէ օգուտ բերել ոչ ցարական սատրապներին և ոչ էլ մի քանի տասնյակ հազար հայերին: Այս էր հենց մտահոգության այն առաջին դրդիչը, որ Ռուսաստանի տիրապետության տակ անցած նոր տերիտորիայի բնակեցումը իր վրա սևեռեց թե՛ կառավարության և թե՛ ժամանակի հայ գործիչների ուշադրությունը: Միատեսակ չէին անշուշտ երկու կողմերի շահախնդրությունները: Արդեն առիթ ենք ունեցել դիտելու, թե ինչի էին հետամուտ հայ գործիչները:

Յարական կառավարությունը, առաջ քաշելով նորագրավ երկիրը բնակեցնելու իր ծրագրերը, ամենևին չէր ելնում հայերի աղգային համախմբման մտահոգությունից: Նման նրպատակ նա իր առջև չէր դրել:

«Մեր սահմաններում ընկած ազատ հողերը հնազանդ, աշխատասեր և հավատով հավատարիմ ժողովրդով բնակեցնելը,—գրում էր Պասկևիչը Դիրիշին,—կարող է մեծ օգուտ բերել մեզ»⁷⁷: Յուրիզմի տնտեսական-քաղաքական շահերից ելնելով է, որ Թուրքմենշայի պայմանագրի 15-րդ հոդվածը, ռուսական կողմի պահանջով, նվիրվեց ներգաղթին: Այդ հոդվածը իրավունք էր տալիս Պարսկաստանից գաղթել ցանկացող պարսկահպատակ քաղաքացիներին՝ անարգել տեղափոխվել ռուսական նորագրավ մարզերը⁷⁸: Յուրիզմի շահագիտական նկատառումները, հարկավ, զուգադիպում էին պարսից խաների ծանր լծից ազատագրվելու և հայրենիք վերադառնալու հայ ժողովրդի շահերին: Ուստի զարմանալի չէ, որ

77 АКАК, том VIII, էջ 628:

78 См. «Договоры России с Востоком, Политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПб., 1869, էջ 222:

Պարսկաստանում ապրող հայերը մեծ դոճունակությամբ ու խանդավառությամբ ընդունեցին Թուրքմենշաշի պաշմանագրի 15-րդ հոդվածը և միահամուռ ցանկություն հայտնեցին գաղթել Հայկական մարզ:

Մեծ մասամբ հենվելով պարսկական կողմի ստեղծած մի քանի փաստաթղթերի վրա, Մ. Ախովը իր «Ռուսաստանը և հայերը» աշխատության մեջ գրում էր, որ ինքը չի կարող համաձայնել հայ այն պատմաբանների հետ (նկատի ունի Երիցյանին ու Եղյանին), որոնք պարսկահայերի ներգաղթի դորժում ցարական կառավարության կողմից ոչ մի հարկադրանք չեն տեսնում: «Պատմելով իրենց համադգինների այդ ներգաղթի մասին,— գրում է հեղինակը,— հայ պատմաբանները ասում են, թե այն տեղի է ունեցել կամավոր, առանց որևէ հարկադրանքի, բացառապես Ռուսաստանին նվիրվածության զգացումից և, ավելացնենք մեր կողմից, հավանաբար, հին հայկական հողում ապրելու հայրենասիրական ցանկությունից...»⁷⁹: Պարսկահայերի վրա բացի էջմիածնի ներգործությունից, շարունակում է նա, ճնշում է տեղի ունեցել նաև մեր զորքերի կողմից պարսկական նահանգների օկուպացման ժամանակ և այն անց է կացրել գնդապետ Լադարյանը «անհնազանդ» վայրերում⁸⁰: Ախովը վկայակոչում է Թադաթառանգ Աբբաս Միրզայի՝ Լադարյանին գրած այն նամակը, որի վերապարաշական բնույթը հերքել էր ոչ այլ ոք, քան ինքը՝ Լադարյանը գաղթող հայերի և պարսկական աստիճանավորների առերևման ժամանակ, ուր հայերը միաբերան հաստատում են, որ իրենք գաղթում են հոժար ցանկությամբ, և որ ոչ մի ուժ չի կարող իրենց հետ պահել հայրենիք վերադառնալու որոշումից, քանզի իրենք գերադասում են ուտել ռուսական խոտը, քան պարսկական հացը⁸¹: Ավելին. ժամանակակիցները վկայում են, որ ռուսական զորաբանակում տեսնելով մի

⁷⁹ М. Ахов, Россия и армяне, С. Петербург, 1897, էջ 31:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

⁸¹ Տե՛ս С. Глинка, Описание переселения армян азербайджанских в пределы России, М., 1831 էջ 125:

բարձրաստիճան զինվորականի, այն էլ մեծահամբավ Լազարյան տոհմից, պարսկահայերը սիրով ունենդրում էին նրա խորհուրդները և պատրաստակամությույն հայտնում զաղթելու Ռուսաստան: «Ազգակից մեր ես,—ասում էին հայերը զընդամենը Լազարյանին,—բարեխոս լիք վասն մեր առ բարեսիրտ ու մեծ արքային ինքնակալն համայն ռուսաց. բարեխոս լիք առ երեւելի զօրապետն նորա: Նոսիրաբերեմք զանձինս մեր ընդ հովանեաւ աջոյն Նիկողայոսի: Ուրախ եմք մեք կեալ եւ մեռանիլ ընդ տէրութեամբ նորա»⁸²:

Հայերի զաղթը խափանելու նպատակով Պարսկաստանի տէրերն անում էին ամեն ինչ, որպէսզի ձախողեն նրանց ունեցվածքի վաճառքը⁸³: Նույնիսկ անգլիական դիվանագետներն ու Պարսկաստանում զանազան անունների տակ աշխատող նրանց գործակալները դիմում էին զանազան պրովոկացիոն միջոցների՝ ձախողելու հայերի գաղթը: Նրանք հայերի մեջ լուրեր էին տարածում այն մասին, որ իբր ռուսական սահմանն անցնելուն պես հայերը պետք է կամ դառնան ճորտեր, կամ զորակոչվեն բանակ և դառնան ցամահ զինվոր կամ կաքսորվեն Սիբիր⁸⁴: Ավելին, պատմական փաստաթղթերը հաստատում են, որ Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերը ոչ թե հարկադրել, այլ օգնել և ուղեկցել են գաղթականների քարավաններին, ապահովել նրանց կյանքն ու ունեցվածքը ավազակային հարձակումներից: Ռուսական բանակի սպաներից շատերը անգամ իրենց ձիաներն էին տրամադրում կանանց ու երեխաների փոխադրման համար⁸⁵:

Անցյալի հեղինակները բարձր են գնահատել 1820-ական թվականների պարսկահայ ներգաղթի նշանակությունը հայ ժողովրդի բնօրրան՝ Արարատյան աշխարհի շենացման հա-

⁸² «Նկարագիր զաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», ի Մոսկով, 1832, էջ 104:

⁸³ *Sb'u* «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. II, էջ 171:

⁸⁴ *Sb'u* *С. Глинка*, նշված աշխ.

⁸⁵ *Sb'u* ЦГВИА, ф. ВУА, д. 978, էջ 22—26:

մար: Պատմութեան մեջ հայերի գաղթը ընդհանրապէս մերժող Պ. Պոռշյանը՝ խիստ վերապահութեամբ էր խոստում պարսկահայերի «մեծ տունդարձի» մասին: «...Հաղար ա-նեծքների ու մեղադրանքների են արժան,— գրում է նա,— Հա-յաստանից օտար երկիր և Հայաստանից Հայաստան դաղ-թեցնողները: Թուր ու նախատինք այդպիսիների հիշատա-կին»⁸⁶: Գաղթականութեան մասին Պոռշյանի բացասական դիրքավորումը չհասցրեց, սակայն, պարսկահայ ներգաղթի ժխտմանը: Ճիշտ է, այդ ներգաղթն ունեցավ այն հետեանքը, որ պատմական Հայաստանի Ատրպատական նահանգի գյուղերն ու քաղաքներն ավերակ դարձան և «հայի արշուն քըր-տինքով ծաղկեցրած ու աճեցրած այգիները գայլերի ու գա-ղանների ճանկն ընկավ... Երանի թե կամ չէին գաղթել կամ բոլորը ձգեին հեռանային իրենց երկրից»⁸⁷, բայց ինչ համե-մատութիւնն է հաստատանի կամ Հնդկաստանի գաղթականու-թեան և պարսկահայոց գաղթի միջև: «Առաջին երկուսը,— Պը-ռոշյանի բերանով խոստում էր ներսես կաթողիկոսը,— Հայաս-տանն ավերելու նպատակով եղան, նրանցից առաջ է եկել փուշ Նիկոլ եպիսկոպոսների և քաղաքագետ անգլիացիների ձեռքով կատարված կորստական փոփոխութեանները, ազգու-թեան և կրոնի կողմ գնալը և հզոր տարրերի հետ խառնվելը, իսկ սրանից Հայոց աշխարհի վերակենդանութեանը: Հայերը տարագիր ընկնելով իրենց հայրենիքից, ընկնելով անծանոթ երկրներ, օտար հողի վրա, օտար կլիմայի ենթարկված, կոր-ցրել ու կորցնում են իրենց մայրենի լեզուն, կրոնը, ազգու-թեանը և ամեն հարազատ հատկութեաններ: Այդպիսի գաղ-թականութեաններին ենք պարտական, որ մեր ազգի մեջ այժմ պառակտմունք կան: Եթե մեր ազգի մեծամասնութեանը Յոս-տանդինուպոլսում՝ օտար հողի վրա չլինեին արմատակալած, տաճկական կրոնամով իրավանց անիրավութեաններին չէին

86 Պ. Պոռշյան, Շահեն, Թիֆլիս, 1883, էջ 30:

87 Նույն տեղում, էջ 31:

ձնթարկված, կաթուղիկ և բողբոջական շահախնդիր հողեկուրականները այսօր այսքան զոհեր չէին արած և հորը որդուց, ևղբորը բրոջից հանած, տան մեջ երկպառակություն ձգած⁸⁸:

Գաղթականությունը հատկապես վատ էր անդրադառնում հայ ժողովրդի աղգային համախմբման, նրա դիմադրողականության ուժի վրա: Ինքը՝ Ն. Աշտարակեցին բոլոր տեսակի գաղթերին չէ, որ կողմնակից էր: Այսպես, նա դեմ էր Արևմտյան Հայաստանի գաղթականությանը⁸⁹, քանզի դրանով «Հայաստանի մի նշանավոր կենտրոնը՝ Կարինը իր շրջականներով դատարկվելով տեղիք տվեց թուրք և քուրդ (մենք կամկեղացիներ չէրքիզ) տարրերի բազմամասնությանը, որից մեր խեղճ ազգի մնացյալ տարաբախտ զավակները այն օրից ցայսօր ավելի և ավելի ճնշվել և ճնշվում են:

Բայց Պարսկաստանի գաղթականությունը, բայց Երևանի նահանգի հայաշատությունը մեր ազգի առաջադիմության և

⁸⁸ Նույն տեղում, էջ 92:

⁸⁹ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից և Ադրիանապոլսի պայմանագրի ստորագրումից հետո արևմտահայերի լայն հասարակախավերում ևս մեծ չափով աճել էր Հայկական մարզ և ռուսական Կայսրության մյուս շրջանները գաղթելու ցանկությունը: Եթե մինչև հաշտության պայմանագիրը արևմտահայերը ակնկալում էին, թե ռուսական բռնակների հաղթանակի շնորհիվ Արևմտյան Հայաստանը նույնպես կմիացվի Ռուսաստանին, ապա հաշտության պայմանագրի ստորագրումից հետո, երբ ռուսական զորքերի կողմից օկուպացված տերիտորիաները վերագարձվեցին Թուրքիային, նրանց մնում էր օգտվել Ադրիանապոլսի պայմանագրի այն հոդվածից, որով թույլատրվում էր թուրքական տիրապետության տակ գտնվող հայերին կամավոր ցանկությունը գաղթել ռուսական տիրապետության սահմանները: Թուրքական սիաշաների և անգլիական գործակալների հարուցած բոլոր խռնջոցներն այնտեղ ևս չկարողացան կանգնեցնել զաղթի զանգվածային հոսքը: Թուրքիայից Հայկական մարզ և Անդրկովկասի այլ շրջաններ գաղթողների թիվը մինչև 1831 թ. հասավ 90—100 հազարի: Էրզրումից և նրա շրջակայքից գաղթած 7298 հայ ընտանիքներ ընկնում են հաստատեցին Ախալցխայում և Ախալքալաքում, կարսեցի 2467 ընտանիքներ՝ Գյումրիի, Արագածի, Ապարանի ու Թալինի շրջաններում, իսկ Սևանա լճի մոտերքում, Մաղկաձորի և մասամբ Սուրմալուի շրջաններում տեղավորվեցին 4215 բալաղետցի ընտանիքներ:

լուսավորութեան համար հեռատես հայրապետը մի նոր դարագլուխ էր համարում»⁹⁰;

Պոռշյանը գոհ էր պարսկահայերի գաղթից, որովհետեւ պարսկական անողորմ ձեռքից ամայացած Արեւելյան Հայաստանի նախկին գյուղատեղերը և ավերակները «շենքերի փոխվեցան»⁹¹, սակայն դեմոկրատ հեղինակին ցավ էր պատճառում, որ գաղթականները կամ իրենց թողած գյուղերի անուններով էին անվանակոչում «իրենց նոր հայրենիքը և կամ տեղացիների տաճին համաձայն՝ պարսկական կոչումն էին տալիս», հանգամանք, որի շնորհիվ «Հայաստանի մեջ հայ գյուղերի և ավանների անունները, այդ խորթ և օտար բառերով են այժմ հայտնի աշխարհագրական քարտեզների վրա մեր նախնյաց հարազատ բնակարանները. օտարացին, բնագետը, աշխարհատեսը այսօր այդպիսի փոփոխությունների շնորհիվ երկմտում է Հայաստանը հայերի սեփականություն լինելու վրա. ուրիշ տեղերինը որ թողնենք, միայն Գառնո գավառումը միմյանց քամակից տասնավոր հայաբնակ գյուղեր կան լու կամ լի պարսկական վերջավորութեամբ,— Դավալու, Ղամարլու, Նովրուղլու, Բեդ-Ջղաղլու, Ողուրբեքլու, Բաշնալու, Զիդամլու, Աղհամզալու, Ղարհամզալու և ես ինչ գիտեմ՝ քանի տեսակ լուեր միմյանց հետեից շարած են, իսկ այս լուռտ գյուղերն հայոց են եղել և են ցայսօր»⁹²: Պոռշյանը հատկապես զայրանում էր, որ Արարատյան աշխարհի պարսիկների ու թուրքերի մի զգալի մասի՝ իրենց «անկոչ հարեանների դրացիությունից» քաշվելուց և գաղթած հայերի մարդաթափ երկրները տեղափոխվելուց հետո էլ հայ բնաշխարհում շարունակում էին գոյատևել պարսկա-թուրքական տեղանունները:

Պոռշյանը անսքող հակակրանքով էր խոսում եվրոպական դիվանագիտության դավադրական գործելակերպի մա-

90 Պ. Պոռշյան, «Շահեն», էջ 92:

91 Նույն տեղում, էջ 83:

92 Նույն տեղում, էջ 84:

սին: Ռուսական զորքերի հաղթանակը, նրանց սրբնայն առաջխաղացումը վինում էին անգլիական քաղաքագետներին նենդ գործունեության եռանդով, և նրանք սկսում էին իրենց դավադրությունները կատարել: Ռուսացներն զիստած հայերի դեմ. «Պարսիկից ոչ պակաս երկմտում էր հայերի հոժարակամ դադթականության մասին և անգլիական դիվանագիտությանը. նա էլ յուր կողմից պաշտոնապես պարսից վերատեսուչներին գործակից աստիճանավորներ նշանակեց: Սակայն տվա՞ղ, լուսավորչալ անգլիացին էլ տգետ պարսից նման խաբվեց եղվիտ քահանաներից, և նա հավատաց, թե փոքրաթիվ հայերն իբրև լրտեսներ և ռուսի շահին պահապան են թողնում Պարսկաստանի մեջ: Քաղաքակիրթ եվրոպացին կասկածական աչք ձգեց մի բուռը խեղճ ժողովրդի վերա»⁹³: Բայց իվուր էր այդ ամենը: Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո ոչ մի բան այնքան չէր մտահոգում տարագիր հայերին, որքան շուտափույթ կերպով հայրենիք վերադառնալու ցանկությունը: «...Գանձակի և Երևանու բերդերի առումը, Պասկևիչի արշավանքները, Աբբաս Միրզայի պարտությունները, Քրիստոսի խաչի հաղթանակը Մահմեդի կիսալուսնի վրա ամբողջ Ասորսպատականի ժողովրդի սրտի թելերին էր վարկում... Մի բուռ փոքրաթիվ ժողովուրդ... մեծ ուրախությունի մեջ էր: Այդ դարավեր ճնշումների տակ կաշկանդված սակավամասնությունը Ասորսպատականի հայն էր, որ եկած, հասած էր համարում յուր փրկությունի օրը և այդ պատճառով ոչինչ էր համարում այն նեղությունները, որ մի կարճ միջոց էլ կրելու էր շարանախանձ պարսիկների վրիժառությունից»⁹⁴:

Պոռչյանը ատելությամբ էր լցված բոլոր նրանց նկատմամբ, ովքեր փորձ կանեին խանգարել անդրկովկասյան ժողովուրդների խաղաղությունն ու անդորրը:

«Շամիլը Թելավումը, Թիֆլիսից մի օրվա ճանապարհի վերա, վաղն այստեղ կլինի. շիտթէ՛ ընկավ քաղաքի մեջ. Մա-

93 Նույն տեղում, 33:

94 Նույն տեղում, էջ 21:

խաթի սարի վերա լեզգու ձիավորներ են երևում, քաղաքը լըրտեսում են, դողալով պատմում են միմյանց ամեն ոք:

...եվ արդարև ի՞նչ պետք է անենք, եթե այդ անպիտան Շամիլի երևիլն ստույգ լինի և մի օր էլ Թիֆլիսը պաշարի, 500 ձիավոր Թիֆլիսի գլխին Աղա Մահմադ խանի փորձանքը կրերի...

Շամիլը երևի զրգված եվրոպական դաշնակցությունից շատ հանդգնեցավ և ուղղակի Ալազան գետն այս կողմն անցավ և հարձակվեց Մինանդալի վերա... Շամիլը բավականացավ Ճավճավաձեների զյուղն ավար տալով, նա յուր կողուստն ու գերիներն առած Ալազանն անցկացավ»⁹⁵:

Պռոշյանը հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ջերմ կողմնակից էր: Նա բազմիցս նշում էր, որ Ռուսաստանը հայերի նկատմամբ նույն դերը չէր կատարում, ինչ որ եվրոպական մյուս տերությունները: Անդրկովկասյան երկրների աստիճանական միացումը Ռուսաստանին՝ հնարավորություն ստեղծեց այնտեղ ապրող ժողովուրդներին նշանակալից քայլափոխեր անել տնտեսական ու կուլտուրական աշխույժ գործունեություն ծավալելու ուղղությամբ: Նկարագրելով ազգային ճնշումը՝ խաներին փոխարինելու հեղձ մովրդիների անխըղձությունները, դեմ արտահայտելով ցարիզմի դադութային քաղաքականությանը՝ իր բազմաթիվ ստեղծագործություններով Պռոշյանը չէր անտեսում Ռուսաստանի խաղացած հսկայական դերը Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի առաջադիմության գործում: Նոր տիրապետությունը «ռուսահայոց կյանքի մեջ մի հսկայական հեղափոխություն է կատարել» — ասում էր նա:

Ռեալիստ գրողին ամենից շատ ուրախացնում էր այն իրողությունը, որ գնալով համատարած անգրագիտությունը տեղի էր տալիս և հայր կամաց-կամաց դուրս էր գալիս խավարի թագավորությունից, իսկ «մտավոր և կուլտուրական զարգացումը, — ըստ նրա, — նախ և առաջ նյութական ապահովության արդյունք է:

⁹⁵ Նույն տեղում, էջ 235—242:

Տնտեսապէս աղքատ մի ժողովուրդ չի կարող մտաւոր և բարոյական բարձր վարդապետւմ ունենալ»⁹⁶։

Ըստ էութեան Պոռշյանի այս տողերը մի հայտնի չափով արտացոլում էին կամ մերձենում նաև կովկասյան ժողովուրդներին տրամադրութիւններին։

Հարկ է նշել, որ քաղաքական մտածողութեան բնդունակ ազդեցեանական մտաւորականութիւնը նույնպէս Ռուսաստանի տիրապետութեան տակ էր որոնում իր ժողովրդի խաղաղ կյանքի երաշխիքը։ «Թող երախտապարտ լինեն թեկուղ այն բանի համար,— մահվանից մեկ տարի առաջ, 1877 թվականին, հասարակական գործիչ Հասան բեկ Զարդաբիին գրում էր փիլիսոփա-լուսավորիչ Մ. Ֆ. Ախունդովը,— որ շնորհիվ ռուսական տերութեան հովանավորութեան, մենք մի կողմ ենք վանել անցյալում տեղ գտած մեծ հորդանների անվերջ կրկնվող արշավանքներն ու կռուպուտները և ի վերջո՝ ձեռք ենք բերել հանգստութիւն»⁹⁷։ Ախունդովի կարծիքով, առանց Ռուսաստանի կազմի մեջ մտնելու, ազդեցեանական ժողովուրդը չէր կարող դուրս գալ տնտեսական առաջընթացի 1870-ական թվականների մակարդակը, որն, ըստ նրա, անհամեմատ բարձր էր հարևան պարսկական Ասորպատականից։

Նման տեսակետ ունեւր և Աբբաս Կուլի Բաքիխանովը։ Սա ևս իր ժողովրդի կուլտուրական հետամնացութեան ամենագլխավոր արգելակը տեսնում էր արտաքին ավերիչ պատերազմների և ֆեոդալական ներքին տակնուվրայութիւնների մեջ։ «Առանձին շրջաններին տիրապետող անկախ խաները,— գրում էր նա,— ներքին երկպառակտչական պատերազմներ էին մղում իրար միջև՝ շունենալով ոչ ժամանակ, ոչ էլ միջոցներ վերականգնելու ժողովրդի բարեկեցութիւնը»⁹⁸։

Այսպիսով, բոլոր այն գրողներն ու հասարակական մտքի ներկայացուցիչները, որոնք Արևելյան Հայաստանի և

96 Պ. Պոռշյան, Երկրի ժողովածու, հտ. II, Երևան, 1954, էջ 458։

97 «Էքիբնի», 1877, № 2։

98 Абас Кули Бакиханов, Гюлистан—Ирам, Баку, 1926, էջ 163։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին դիտում էին իբրև առաջադիմություն, հաշվի էին առնում ժողովրդի կյանքում կատարվող սոցիալ-տնտեսական և մշակութային տեղաշարժերը:

19-րդ դարի հայ հեղինակներից ոչ ոք այդ պրոբլեմը այնպիսի լայն արժարժման առարկա չդարձրեց, որքան Ալեքսանդր Նրիցյանը (1841—1902): Ալ. Նրիցյանը հասարակական իր գործունեությունն սկսեց անցյալ դարի 60-ական թվականներին: Մի ժամանակաշրջան էր դա, երբ արդեն քաղաքականապես ձևավորվել էին հայ հասարակական-քաղաքական հոսանքները, բայց նա չդարձավ այդ հոսանքներից և ոչ մեկի հետևողական ախոջանը կամ գաղափարական պաշտպանը: Իր քաղաքական հայացքներով գերադանցապես նա օրորվում էր ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական հայացքների արանքում⁹⁹: Բոլոր պարագաներում հեռու մնալով արևելահայ հասարակական մտքի հեղափոխական-դեմոկրատական և կղերա-աղայական բևեռների ազդեցությունից՝ Նրիցյանը բուսական տիրապետության գնահատման հարցում սուռջ էր բերում որոշակի անհետևողականություն: Այդ անհետևողականությունն առաջանում էր այն մտայնությունից, որ ազգային տրագիդիայի և ժառանգված արժեքները քննադատորեն առաքինելու մտահոգությամբ, նա մերթ դժգոհում էր բուսական տիրապետության նորամուտ բարքերից (ընդ որում, նրա դժգոհությունը հեռու էր կալվածատիրական-կապիտալիստական կարգերի հետևողական քննադատությունից), մերթ գոհունակություն հայտնում Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական նվաճման հետևանքով հայերի համար ստեղծված անձի ու գույքի ապահովվիճակից¹⁰⁰,

99 Տե՛ս Ա. Համբարյան, Ալ. Նրիցյան («Պատմա-բանասիրական հանդես»), 1960, № 1, էջ 180:

100 Տե՛ս Ալ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք ձրկրորդ, էջ 51—52:

1860-ական թվականներին, հարելով ազգային-պահպանողականներին, Ալ. Երիցյանը իր խմբագրած «Վաճառական» թերթում բացատաբար էր արժեքավորում Հայաստանի նորդարյան պատմության մեջ Ռուսաստանի խաղաղած դերը: Մասնավորապես նա քննադատում էր ցարիզմի անդրկովկասյան քաղաքականությունը, նշում անբարենպաստ այն դրությունը, որի մեջ գտնվում էր հայ առևտրական կապիտալը: Իբրև առևտրական բուրժուազիայի շահերի պաշտպան, նա դժգոհ էր արդյունաբերական կապիտալիզմի առաջ բերող հետևանքներից, որն, ըստ նրա, «վատ» ներգործություն էր ունենում Անդրկովկասի հայ վաճառականական կապիտալի «կանոնավոր» զարգացման ընթացքի վրա:

Հակադրվելով ցարիզմի տնտեսական ու ֆինանսական քաղաքականությունը Երիցյանը տեսնում էր, որ Անդրկովկասի տնտեսական, արդյունագործական և հողագործական հարաբերությունները տենդենց ունեն մարդկանց միմյանցից անջատված գործողությունները մղելու դեպի կապիտալիստական հանրայնացում: Նա գոհ չէր, որ իրարից անջատված մանր արտադրողների ոչ մեծ արհեստանոցների փոխարեն հանդես էին գալիս համեմատաբար խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, բուրժուական վարկեր ու բանկեր: Երիցյանը ատելությամբ էր խոսում Անդրկովկասում հայտնված բուրժուական վարկերի ու բանկերի մասին: «Երբ բանկի մեջ շատանում է վեր առած վեքսիլների թիվը,— գրում էր նա,— իսկ քչանում է նաղդ փողը, էն ժամանակ... բանկը քչացնում է իր և վաճառականների միմյանց մեջ ունեցած էհտիբարը և հետևանքը լինում է առևտրական քսաստություն և կրիզիսներ»¹⁰¹: Ալ. Երիցյանը այն մարդկանցից չէր, հարկավ, որոնք տրամադիր կարող էին լինել թափանցելու կապիտալիստական վարկերի ու բանկերի երկակի բնույթի մեջ, որի մասին Կ. Մաքսը գրում էր, թե՛ «...վարկն արագացնում է արտադրողական ուժերի նյութական զարգացումն ու հա-

101 «Վաճառական», 1866, № 24:

մաշխարհային շուկայի ստեղծումը, որոնց իբրև նոր արտադրածների նյութական հիմքեր՝ մինչև զարգացման մի որոշ աստիճան հասցնելն արտադրության կապիտալիստական եղանակի պատմական խնդիրն է։ Միաժամանակ վարկն արագացնում է այս հակասության բռնի պայթյունները, ճգնաժամերը, և սրանով էլ՝ արտադրության հին եղանակի փլուզման տարրերի վերահասը»¹⁰²։

Երիցյանը մի կողմ էր վանում բուրժուական բանկերի ու վաճակների առաջին կողմը և տեսնում միայն երկրորդը։

Գործելով սկզբում վարկային կապիտալի ձևով, ռուսական կապիտալը սկսում էր քանդել, ավերել Անդրկովկասի նախկին բնատնտեսությունն ու մանր արտադրությունը։ 1860—70-ական թվականներին երկրամասն ապրում էր ֆեոդալիզմի, հին նահապետական կյանքի քայքայման և բուրժուական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջան։

Ռուսական արիստոկրատիան ցտեկանում էր տնտեսապես նվաճել Անդրկովկասը, պլուտոկրատիան՝ ուղղմ էր կողոպտել, իսկ արդյունաբերական բուրժուազիան՝ ձգտում էր հպատակեցնել նրան իր ապրանքների էժանությամբ։

Անդրկովկասի տնտեսական զարգացման այդ պատմաշրջանում՝ «...մի կողմից Կովկասը սաստիկ զաղութացման էր ենթարկվում... մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին»¹⁰³։

Ղեկավարվելով մարքա-լենինյան այն դրույթով, որ պատմական ամեն երևույթ պետք է գնահատել տվյալ պատմաշրջանի կոնկրետ իրադրության պայմաններում, լիակատար իրավունքով կարող ենք ասել, որ պարսկա-թուրքական

¹⁰² К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, издание второе, том 25, ч. I, էջ 484—485։

¹⁰³ В. И. Ленин, ПСС, том 3, էջ 594։

տիրապետութեան տապալումը Անդրկովկասում և նրա միացումը Ռուսաստանին պատմական առաջադիմական իրողութիւն էր, քանզի այն՝ անկախ ցարիզմի կողմից կենսագործվող զաղութային քաղաքականութեան, օրյեկտիվորեն նպաստեց նրա զարգացմանը:

Ռուսական տիրապետութիւնը բոլոր անհրաժեշտ պայմաններն ստեղծեց հայ վաշխառուական կապիտալի մեկուսացման և արդյունաբերական կապիտալի ներմուծման ու բարգաւաճման համար: Դժգոհ նրա այդ դերից, Ալ. Երիցյանը երանի էր տալիս Անդրկովկասում ռուսական տիրապետութեան առաջին տասնամյակներին: Ինչպես 1860-ական թվականների ազգային-պահպանողականների մեծ մասը (Մ. Աղաբեկյան, Գ. Պատկանյան, Կ Շահնազարյանց, Ստեփան Գերձ-Պողոս Փափաղյանց, Գ. Ախվերդյան, Պ. Շանշյան և ուրիշներ), Ալ. Երիցյանը ևս չէր ըմբռնում, որ ցարական ինքնակալութեան քաղաքական շահերը զգալիորեն միահյուսվում էր Անդրկովկասի և Արեւելյան Հայաստանի զարգացման հեռանկարներին. անտես էր առնում այն հանդամանքը, որ ի տարբերութիւն ֆրանսիական և անգլիական գաղութների, ռուսական գաղութներում, հատկապես Անդրկովկասում, ինչքան զարգանում էին բուրժուական արտադրահարաբերութիւնները, այնքան երկրամասն ավելի էր առաջադիմում տնտեսապես և մերձենում մայր երկրին:

Երիցյանի ժառանգութեան ուսումնասիրութիւնը բերում է այն համոզման, որ գեթ 60-ական թվականներին նա չէր պաշտպանում ցարիզմի ներքին քաղաքականութիւնը: Անդրկովկասում Ռուսաստանի առաջադիմական դերի և ցարիզմի քաղաքականութեան միակողմանի ընկալումն էլ այն պատճառն էր հենց, որ պործուեիութեան այս շրջանում նա հակված էր դեպի Բուրքիան ու Եվրոպան:

Սակայն 1870-ական թվականների վերջերին Երիցյանն այն չէր, ինչ նա էր մաքուր 60-ական թվականներին:

Բուրքիայում ազգային սահմանադրութեան հաջորդած տարտամ տարիները նրան բերին այն համոզման, որ կապի-

տուլյացիաների, եվրոպական վարկերի ու պարտքերի տակ
ամբած՝ տնտեսապես ու քաղաքականապես անկենսունակ այդ
երկրում այսուհետև հայ ժողովուրդն առավել ևս պետք է
կանգնի ազգային իր նկարագիրը խախտելու և կրթական-մը-
շակութային ինքնավարութեան հեռանկարները կորցնելու վը-
տանգի առջև:

Թուրքիայում ապրող հայերի ուղեգլխին-քաղաքական ա-
մենաչնչին հեռանկարներից հուսախաբ՝ Երիցյանը մի հայտ-
նի չափով երես դարձրեց ազգային-պահպանողականներից
և նշմարելի շրջադարձ կատարեց դեպի լիբերալիզմը: Փոխ-
վեց նաև հնդինակի քաղաքական օրին: Խաղաղության ուղղութե-
ան՝ նրան դիմաշրջելով դեպի Ռուսաստան:

1870-ական թվականների վերջերին գրած՝ «Ստեփանոս
Նազարյանցը և նորա գրական գործունեությունը» ծավալուն
իր հոդվածում բաղդատելով 1850-ական թվականների Թուր-
քիան Ռուսաստանի հետ՝ վերջինիս մասին Երիցյանը գրում
էր. «Այս տերութեան մեջ ժողովուրդն արդեն նվիրված էր մա-
սամբ հասարակական կյանքի մեջ մասնակցելու. ստեղծելով
մի նոր լուսավորություն, սկիզբն առավ մի նոր գրականու-
թյուն, պատրաստվում էին ստրուկների ազատությունը, դա-
տարանական հեղափոխությունը, գյուղա-վարչական կանո-
նադրությունը և շատ ուրիշ բարենորոգումներ, որոնց համա-
կրում և մասնակցում էր ժողովուրդը, ամեն տեղ շարժում և
կյանք էր սկսում:

Բնականաբար, Ռուսաստանի հայերիս վերաբերմամբ ա-
ռանց ազդեցության չէր կարող անցնել այդ բոլորը, ինչպես և
չանցավ»¹⁰⁴: Գործունեության երկրորդ շրջանում Ալ. Երից-
յանն ընկավ մի այլ ծայրահեղության մեջ: Ճիշտ գնահատե-
լով Արևելյան Հայաստանի ազատագրման գործում Ռուսաս-
տանի առաջադիմական նշանակությունը, ինչպես և Անդրկով-
կասն ու Պարսկաստանը «յուրյանց բարոյական ազդեցության

104 Ալ. Երիցյան, Ստեփանոս Նազարյանց և նորա գրական գործունեու-
թյունը, «Փորձ», 1879, № 9, էջ 61:

տակ նվաճելու»¹⁰⁵ Անդրիայի ու Յրանսիայի շահերը, նա սկսեց ներքուքն ցարիզմի քաղաքական նպատակամղումները:

Ռուս ցարերն անցյալում «անշահախնդրաբար ու բարնդըթաբար» հովանավորել և ապաստան են տվել հաղարավոր հայ դադթականների: Ռուսական գահին հայ ժողովրդի մատուցած անձնվեր հովատարմությունը, ջանասիրտությունն ու ծառայությունները բազմիցս վկայել ու արձանագրվել են հզոր ինքնակալների երախտագիտական հրովարտակներով:

«Անցյալ դարու ընթացքում,— գրում էր Երիցյանը,— գաղթականության շնորհիվ, այնքան բազմացավ Ռուսիո հայ հպատակների թիվը, որ հյուսիսային դահակալները յուրյանց սրտին մոտ համարեցին հայոց բարոյական-կենսական շահերն ու 1800 թվականից սկսած կարող կերպով միջամուխ հղան հեռու-հեռու պարսկական սահմաններում գտնվող էջմիածնական Աթոռի հայրապետներին ընտրություն գործում»¹⁰⁶:

Պատմական խտությունը այս տողերում խեղաթյուրված էր հարկավ: Հայ եկեղեցու գործերին ուս ցարերի «միջամուխ լինելը» բնավ չէր բխում «հայոց բարոյական-կենսական» շահերից, ինչպես հակված վր կարծելու Ալ. Երիցյանը, այլ՝ դեպի Անդրկովկաս առաջանալու նրա ռազմա-քաղաքական ու տնտեսական նպատակամղումներից:

Ռուսաստանն արդեն տիրել էր Կովկասի գլխավոր մատուցներին և հաստատակամորեն որոշել էր գրավել Անդրկովկասը և իր սահմանները տարածել առնվազն մինչև Արարսի ժայռուտները: Յարիզմի հետաքրքրությունը հայ եկեղեցու վիճակով գնալով ավելի ու ավելի գործուն բնավորություն էր ստանում, իսկ մահմեդական հսկայական զանգվածի մեջ խրված մի բուռն ժողովրդի նկատմամբ վստահությունը կորցրած հայ հոգևոր դասի ճնշող մեծամասնությունը տակավին շարունակում էր ունկնդրել պատմության փոխկանչի ձայնին, հավատարիմ մնալ անցյալի հայ գործիչների ազգային-բա-

105 Ալ. Երիցյան, Ներսես Ե. Աշտարակեցի, «Փորձ», 1881, № 3, էջ 59:

106 Ալ. Երիցյան, նշված աշխ., մասն Ա, էջ 7:

ղաքական ուղեգծին՝ ցարիզմի «ազատադրական միսիայի» հետ լծորդելով հայ ժողովրդի ազգային-քաղաքական բաղձանքները: Դեռևս Վրաստանի միացման պահին էջմիածնի կաթողիկոսական գահի համար առաջադրելով Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ, ռուսական օրիննտացիայի ջերմ պաշտպան Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի թեկնածությունը, ցարիզմը հետամուտ էր՝ պետականությունից զուրկ հայ ժողովրդի կյանքում քաղաքական դեր ստանձնած Ամենայն Հայոց կրոնապետի Աթոռը և հայ կղերին դարձնել իր նվաճողական քաղաքականության դյուրաթեք գործիքը:

Ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Պարսկաստանն ու Թուրքիան «Դավիթ-Դանիելյան» պայքարը օգտագործում էին իրենց քաղաքական նպատակների համար: Նրանցից յուրաքանչյուրը ջանում էր կաթողիկոս ճանաչել իրեն հարմար թեկնածուին, որպեսզի տեղ եղանակով ամրապնդեր իր ազդեցությունն ու տիրապետությունը Հայաստանի և հայ ժողովրդի վրա: Այսպես ուրեմն, միանգամայն քաղաքական հողի վրա էր, որ անցյալ դարի սկզբներին, դույն և հայ հոգեորդականության կամքից անկախ՝ կաթողիկոսությունը դարձավ դիվանագիտական մրցավազքի առարկա:

Ցարիզմի զաղութային քաղաքականությունից սրողման մրտայնությունը հատուկ էր ոչ միայն Նրիցյանին: Եթե Կ. Մարքսի մոտ «Պետրոս Մեծը բարբարոսաբար հաղթեց ռուսական բարբարոսությունը»¹⁰⁷, ապա Կ. Եզյանի մոտ նույն ինքը՝ Պետրոս Մեծը «մարդասիրաբար ու քրիստոնեասիրաբար» մահմեդական նեղիչներից փրկում էր հայերին ու վրացիներին: Նա եռանդուն կերպով ընդգծում էր «այն առաւելություններն ու օգուտները, որոնք բխում էին քրիստոնյա ժողովուրդներից Ռուսաստանին միացնող բարոյական կապերից»¹⁰⁸. Իբրև բարձրագույն ցարական պաշտոնակալ, ազգային-պահ-

107 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, издание второе, том 16, М., 1960, էջ 30:

108 Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, էջ II:

պանողական Եղյանը ևս սքողում էր բացարձակ այն ճշմարտությունը, որ Զմեռային պալատին մտահոգողը ոչ թե վրացիների կամ հայերի ճակատագիրն էր, այլ Ռուսաստանի պարտաբույժ դասակարգերի՝ աղնվականության ու բարձրացող բուրժուազիայի շահերը: Նա զանց էր առնում Ռուսաստանի քաղաքականությանը առն տվող հիմնական շարժառիթը՝ գըլխավոր այն գործոնը, որ ճորտատիրական տնտեսության հասունացող ձգնաժամի պայմաններում երկրի տիրապետող դասակարգին՝ աղնվականությանը մղում էր լայնացնելու իր իրավունքները: Կ. Եղյանը միակողմանի մոտեցում էր ցուցաբերում նաև հայ ժողովրդի ազատագրական ակնկալությունների պատճառները որոնելիս: Ինչպես ն. Դուբրովինն իր «Կովկասում ռուսների տիրապետության և պատերազմների պատմությունը» բաղմահատոր աշխատության մեջ ջանում էր ռուս-պարսկական պատերազմների պատճառները հանգեցնել կրոնական տարաձայնություններին (պայքար էջմիածնի կաթողիկոսական թագի համար, Ռուսաստանի և Պարսկաստանի միջամտությունը Երևանի խանության կրոնական գործերին, ռուսների ցանկությունը աղատել Դանիելին և այլն)¹⁰⁹, այնպես էլ Եղյանը 19-րդ դարի 20-ական թթ. հայ ազատագրական պայքարը պարսկական տիրապետության դեմ ներկայացնում էր իբրև նահատակություն հավատի համար: Նա շրջանցում կամ թերևս սքողում էր այն իրողությունը, որ և՛ 18-րդ դարում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները զարգանում էին, Ռուսաստանի ռազմական օգնությամբ, Հայաստանը պարսկա-թուրքական լծից ազատագրելու և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական վասալական իշխանություն ստեղծելու նշանաբանով, ապա 19-րդ դարի սկզբին ցարական կառավարությունը հայ ազատագրական գործիչների ազգային ինքնավարության ռոմանտիկ ծրագրերի փոխարեն որպես գործնական խնդիր՝ առաջ

¹⁰⁹ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, том IV, էջ 384—385:

մղեց Արեւելյան Հայաստանը Ռուսաստանի մի սովորական նահանգ դարձնելու ծրագիրը: Եղյանը զուրկ չէր հարկավազգային-պահպանողականներին հատուկ ազգասիրությունից, սակայն այդ ազգասիրությունն այն ղեղանք չէր, որի վրա կարող էր սրվել տիրող կարգերի հանդեպ նրա քննադատական միտքը: «Որպես ցարական պաշտոնյա, — գրում է ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը, — Եղյանը ցարիզմի հակաական քաղաքականության ուշիմ և բանիմաց ձայնատարներից մեկն էր և միաժամանակ՝ ազգային-պահպանողական ուղղության ուսսահայ ռանտյենների և առևտրա-արդյունաբերական մագնատների քաղաքական կոնսուլտանտն ու «սուզի և եկեղեցու» կիսապաշտոն ախոյանը Ռուսաստանում: Երկու տերանց ծառայելու մտայնությամբ՝ Եղյանը հարկադրված էր շարունակ տարուրերվել ռուս մեծապետական Սքիլլայի և հայ լուսավորչական Քարիրդայի միջև»¹¹⁰: Նա գտնում էր, որ հայ գրականության, դիտություն և հասարակական կյանքի զարգացման յուրաքանչյուր քայլը առաջ է բերում ռուսական ինքնակալի ջերմ ուրախությունը: Կ. Եղյանը հոգով բարձրաստիճան այն հոգևորականության հետ էր, որոնք հայրենիքի սիրուց վառված՝ ռուս-պարսկական պատերազմի բոցերում կրակին տվին իրենց փափագած հույսերը և ի վերջո անձնատուր եղան ցարական ինքնակալությանը և վերջինիս հավատարիմ ծառայություն մեջ տեսան տոբչայի իմաստն ու խորհուրդը, իսկ հայ հասարակական-քաղաքական կյանքի բնորոշ կողմը, բոտ Կ. Եղյանի, մարտիրոսացությունն է եղել հանուն դավանանքի և սա էլ պատճառ ու էլակետ պիտի դառնա հասկանալու և մեկնելու նրանց մերձեցումը «իշխանության և շրջապատող երևույթների նկատմամբ»¹¹¹:

Հիսնելով հայ լուսավորչական եկեղեցու ջերմ պաշտպան, Եղյանի նման, Երեցյանն էլ կարծում էր, թե կրոնը «միակ

¹¹⁰ Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա մամանակը, Երկրորդ դիրք, էջ 9:

¹¹¹ Г. Эвоа, Сношения Петра Великого с армянским народом, т. X:

փրկարար միջոցն է մեր պատմական անցյալի անջատված օղակը ձեռք բերելու համար»¹¹²:

Եվ դա պատահական չէ: Եվ Կ. Եղյանը, և Ալ. Երիցյանը պատմահայեցությամբ և հասարակական կյանքի երևույթների ընկալմամբ իդեալիստներ էին, հանգամանք, որ սակայն չբխանգարեց նրանց, որպեսզի պատմական որոշ իրողություններ բացատրեն հիզդեցով գոտեպնդված «ազգի» շահերից կամ բուրժուական ռեալիզմի դիրքերից: Նրանք Ռուսաստանն ընկալում էին իբրև մի ամբողջական երկիր՝ դերժ միջֆեոդալական ներքին խառնակություններից, գերազասում՝ ռուսական օրենքներն ու պետական կարգերը, դրանք համեմատում արևելյան երկրների հետ և մատնանշում Ռուսաստանի առավելությունները:

1880—90-ական թվականներին գրած իր աշխատություններում, ինչպես նաև «Արձագանք» լիբերալ-պոզիտիվիստական ամսագրի էջերում տպագրած հոդվածներում, Ալ. Երիցյանը շատ մեծ կարևորություն էր տալիս Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին:

«Ներկա դարուս մեջ,— գրում էր նա 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի մասին,— ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած հայ ազգի համար, որքան պարսկական խղճով գյուղի մեջ կայացրած հիշյալ պայմանագիրը: Սրա զորությունը, Հայաստանի սիրտը՝ Արարատյան աշխարհը, յուր նվիրական մայր աթոռով հանդերձ, ընդմիշտ դուրս է դալիս պարսկական լծից և մտնում քրիստոնյա տերության հզոր պաշտպանության ներքո: Տիրելով այդ սիրտը, Ռուսիան հյուրասիրությամբ բաց էր անում իր գոները այն հայերի համար, որոնք, այլևս չդիմանալով դարավոր նեղությանց, հեշտությամբ հրաժեշտ էին տալիս յուրյանց ծննդյան վայրերին և հանուն ազատության դադիթում, համախորմբով էին այս նոր ավետյոց երկրում, մոտ՝ իրենց քաղ-

112 Ալ. Երիցյան, Դարձյալ Ստեփանոս Նաղարյանցի գրական ժառանգության մասին, «Փոքր», 1881, № 5—6, էջ 249:

ցըր Մասիսին և Արագածին, յուրյանց սուրբ էջմիածնին»¹¹³:

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը Արա-
քատյան երկրում տեղի ունեցած բազում ասպատակություն-
ներից ու ղինաբախտամներից տարբերվում էր նրանով, որ նա
Հայոց ազգային պատերազմն էր «ընդդեմ պարսից դարավոր
բռնատիրությանց»:

Թեև գործունեության վերջին շրջանում Ալ. Երիցյանը՝ օ-
գիկենտացիայով լիովին դիմաշրջվել էր դեպի Ռուսաստան,
սակայն Անդրկովկասի և Հայաստանի սոցիալ-քաղաքական
զարգացման հետևանքով առաջ եկած տեղաշարժերի արժե-
քավորման հարցում չկարողացավ ազատվել նախկին հա-
յացքներից: Նա չէր ժխտում, որ նորեկ տիրապետութունը հը-
նաբավորություն ընձեռեց վաշխառուական կապիտալի մե-
կուսացման և առևտրական կապիտալի ներմուծման ու բար-
գավաճման համար: Սակայն շատ ավելի լավ կլինեք, ասում
էր նա, եթե այն դասակարգային տեղաշարժեր առաջ չբերե-
ր հայերի շրջանում, չանբարոյականացներ «նահապետական
համեստությամբ» ապրողներին ու «կոտրեք ազգիս անունը
օտարների առաջ»: Իդեալիստական պատմահայեցողությունը
թույլ չտվեց նրան վերլուծական խորք պեղումներ կատարել,
ուստի հարկադրյալ մերթ ձեռք էր մեկնում ազգային-պահ-
պանողականությանը, մերթ ցարիզմին համակերպված լիբե-
րալիզմին: «...Ռուսաց ձեռքով երկրիս մեջ մտցվող լուսա-
վորությունից և քաղաքակրթությունից, — գրում էր նա, — հա-
յոց ռամիկ և տգետ մասը, ինչպես որ այդ պատահում է ա-
մեն ազգերի մեջ էլ, ըմբռնեց և ընդունեց միայն արտաքին
փաշլը՝ ղեխությունը և անբարոյականությունը:

...Չորս տարվա պատերազմը¹¹⁴ որքան որ յուր օգուտ-
ների ունեցավ, այնքան էլ հեղափոխեց ժողովրդի նահապե-
տական համեստ կյանքը և կեղծ լուսավորություն մտցրեց
մանավանդ անպատրաստ ռամիկ հայ հասարակության մեջ:

113 Ալ. Երիցյան, նշված աշխ., մասն Ա, էջ 308:

114 Հեղինակը նկատի ունի նաև 1828—1829 թթ. ռուս-թուրքական
պատերազմը:

ներկրիս մեջ առաջ եկան արհեստական սնանկություններ, վերացավ վարկը, հավատարմությունը և խոսքի ազնվությունը, շատացան մատնիչները և բանասարկուները, երևացին կեղծ վկայականներ հորինողներ, կեղծ դրամ շինողներ և այլն»¹¹⁵։

Պատմաբանը չկարողացավ տեսնել, որ կովկասահայերի համար այդ «կեղծ» լուսավորությունը նոր դարաշրջան էր բացում, առաջ բերում նոր կարիքներ ու պահանջներ։ Նա հաշվի չէր առնում այն իրողությունը, որ ցարական բանականների առաջխաղացումը ռուսական ազնվականության և դարգացող բուրժուազիայի աչքում լոկ տերիտորիալ նվաճման նշանակություն չունի, այլ որ ռուսական բուրժուազիան տակավին ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ խորհուրդ էր տալիս կառավարությանը՝ նորապրավ երկրներում բանականների պահպանման վրա կատարվող ծախսերը մեծացնելու փոխարեն, ավելացնել նաև Արևելք արտահանվող մթերքների անվանացանկը¹¹⁶։

Տրտնջալով նորամուտ բարբրից, Երիցյանը ընդհանրապես դժգոհ էր ցարական ռեժիմից, որովհետև պարսկա-թուրքական պատերազմից ազատագրված ժողովուրդը և նրա պատմադրողը «միայն քնքուշ և բարեկամական ղդացմունքներ» կարող էր տածել նորեկ իշխանության նկատմամբ։ Մահմեդական անիրավություններից հյուծված հայ ժողովուրդը, — ասում է Երիցյանը, — սեփական փորձով գիտեր նախկին տիրողներին և տեսնում էր ռուսական պետության առավելությունները, ուստի պաշտպանում էր վերջինիս քաղաքականությունը՝ ղերծ մնալու համար այն դժողքն ընկնելու վտանգից, որից դուրս էր եկել բազում ղոհողությունների ղնով։

Այսպիսով, այն պատմաշրջանը, որի ուսումնասիրման համար Ա. Երիցյանը հատկացրեց շուրջ կես դար, ըստ էության, շատ ավելի խոր ու հակասական էր, քան այն ներկայացրավ նրա ուսումնասիրություններում, իսկ ղա մասամբ Ե-

115 Նույն տեղում, էջ 445—448։

116 *SL'u AKAK*, TOM VI, գ. II, էջ 104—125։

քիցյանի մեղքը չէր: Նրա ժամանակ հայ պատմագրութիւնը պատմութեան իմացութեան հարցերը չէր դիտարկում այնպես, ինչպես այն սկսեց կատարել հետագայում: Տակաւին քննութեան չէին ենթարկվել պատմութեան շինանյութի և շարադրանքի մեթոդի հարցերը: Իր անխոնջ աշխատասիրութեամբ Ալ. Նրիցյանը ավելի շատ նշուեց պատմութեան համար, քան կատարեց դրանց գիտական շարադրանքը: Նրա աշխատութիւններում հայ հասարակական-քաղաքական կյանքի բոլոր տեղաշարժերը պատմւում էին բարձրաստիճանի եկեղեցականների, ռուս ցարերի ու նրա գեներալների գործունեութեան շուրջը: Ուշագրաւն այն է, որ պատմութեան ու հասարակական կյանքի օբյեկտիւ օրինաչափութիւններն իդեալիստորեն ընկալելով հանդերձ (իսկ այդպիսի ընկալումը հատուկ էր նրա ժամանակակիցներից շատերին), Ալ. Նրիցյանը կարողացավ ճիշտ գնահատել պարսկական լծից Արեւելեան Հայաստանի ազատագրման պատմական նշանակութիւնը: Նրա մեթոդը փաստաթղթեր գտնելու, դրանք իրար շաղկապելու և աննշան ու երկշտ մտահանգումների մեթոդ էր: Այդ մեթոդով էր առաջնորդւում նույնիսկ Ստեփան Պալասանյանը, որ կղերական Գաբրիել Այվազովսկու հետ համագործակցելուց հասել էր առաջադիմական դադափարների տարածման անհրաժեշտութեան մտքին, տերտերական երանգի իդեալիզմից՝ մատերիալիզմի որոշ դրութիւնների պաշտպանութեանը, գրաբարը երկրպագելուց՝ աշխարհաբարի համար բեղմնավոր պայքար մղելուն: Ազգի փրկութիւնը նա փնտրում էր լուսավորութեան ու արվեստների զարգացման մեջ: Արեւելեան Հայաստանը մոսկաւոսին միացման իրողութիւնը Պալասանյանը դիտում էր ամենից առաջ երկրի ու ժողովրդի տնտեսական ու կուլտուրական զարգացման, Անդրկովկասում և Հայաստանում բուրժուական արտադրահարաբերութիւնների էվոլյուցիայի տեսանկյունից: Իհարկէ նա ևս ազատ չէր քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ռուս ցարերի «քրիստոնեասիրութիւնն» ու «անկեղծութիւնը» գերազնահատելուց: «Աւերսանդր Ա սրբուանց ցանկանում էր,— գրում էր Պալասանյանը,— հունե-

րին աղատել օսմանյան իշխանությունից: Սրբազան դաշնակցութեան խորհրդավոր ժողովներում արդեն խոսք էր եղել հույների, ինչպես նաև ուրիշ քրիստոնյա ժողովուրդների անկախութեան մասին. Ալեքսանդրը մի քանի անգամ հայտնեց իր մտքերը այդ խնդրի վերաբերմամբ, ավելի սնկեղծութեամբ խոսեցաւ մանւականդ սրբուսաց թագավորի հետ, որին յուր մտերիմ դաշնակիցն էր համարում»¹¹⁷: Կարևոր է նշել սակայն, որ ցարիզմի տնտեսական-քաղաքական շահերից անկախ՝ հեղինակը չէր ուրանում հսկայական, ձգողական այն դերը, որ ունեւ Ռուսաստանը քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայերի համար, սրոնք «պարսից դարավոր բռնութեաններից զգլած լինելով զրկաբաց բնդունեցին Ռուսաց և ամեն հարկավոր օգնութեաններն արին նոցա»:

1880-ական թվականներին Թիֆլիսում հրատարակւեց Ստ. Պալասանյանի «Պատմութիւն Հայոցը», որ կարճ ժամանակահատվածում ունեցավ մի քանի վերահրատարակութիւն: Ժամանակին մեծ համարում ունցող իր այս դասագրքում՝ Պալասանյանը բուրժուական օբյեկտիվիզմի դիրքերից բնութագրեց հայերի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականութեան ողջ գործընթացը: «Աչրի առաջ ունենալով յուր երկրի վաճառականութեան և արհեստների բարգաւաճումը,—ասում էր նա,—և յուր ապագա աշխարհակալութիւնները Ասիայում, ոտս սկստութիւնը... պաշտպան և բարեկամ հանդիսացաւ Հայոց: Ռուսաց թագավորները մեծամեծ խոստումներ տվին Հայոց, արտոնութիւններ շնորհեցին, աստիճաններ ու պատվանշաններ բաշխեցին, որպեսպի նոցա համակրութիւնը գրավեն»¹¹⁸:

Եթե Ռուսաստանը չէր ուզում վերականգնել Հայաստանի առաջիկա փառքը, ապա պարսկահայերի և արևմտահայերի զանգվածային հայրենադարձութեան շնորհիվ՝ հնարավորութիւն տվեց կրկին «նորոգել» Հայաստանը:

¹¹⁷ Ստ. Պալասանյան, Հոռաստանի անկախութիւնը, «Փորձ», 1877—1878, № 2, էջ 197:

¹¹⁸ Ստ. Պալասանյան, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 482—483:

«Պարսկական և տաճկական պատերազմների արդյունքը
 եղավ,— գրում էր Պալասանյանը,— որ Ռուսաստանը յուր
 սահմանների ընդարձակության հետ մի խաղաղ և աշխատա-
 սեր ժողովուրդ ձեռք բերեց, որ յուր խիտ ազգաբնակչությամբ
 տիրութեան արեւելյան սահմանները ասպագա ասպատակու-
 թյուններից պիտի ապահովեր և երկրի առևտուրն ու արհեստ-
 ները պիտի ծաղկեցնէր: Եվ հիրավի, հայերը իրենց նոր կա-
 ցութեան մեջ կյանքի և ստացվածքի ապահովութիւն վայելե-
 լով, սկսան մեծ եռանդով վաճառականութեան ետեէ լինել,
 որով Կովկասի առևտուրը կարճ միջոցում մեծ պայծառութեան
 հասավ: Նյութական ապահովութիւնը Հայոց միջոց ավելց
 կրթութեան հոգ տանելու, և այս կողմից ռուսահայք ավելի
 առաջադիմութիւն արին, քան Թուրքիայի հայերը՝ իրանց
 կանոնաւոր ուսումնարաններով:

Տակաւլին ներկա դարի սկզբին դուրս եկան մի քանի
 ականավոր անձինք, որոնք իրանց առատաձեռնութիւնն ու
 ազդեցութիւնը գործ դրին Ռուսահայոց մտավոր և բարոյա-
 կան կրթութիւնը հաստատ հիման վրա դնելու: Նախաձեռնու-
 թիւնը այս զեղեցիկ գործի մեջ պատկանում է Լազարյանց
 տոհմին և Ներսէս Ե կաթողիկոսին»¹¹⁹:

Ի դեպ, չի կարելի անգիտանալ Ն. Աշտարակեցու գործու-
 նութեան զնահատման հարցում անցյալի հայ հեղինակների
 մոտ գոյութիւն ունեցող ներհակութիւնը: Նախահեղափո-
 խական հայ սրատմահասարակագիտական միտքը չկարողա-
 ցավ ըստ արժանւոյն զնահատել հայ ազատագրական շարժ-
 ման նշանավոր աչք գործչին: Եթէ ոմանք գերազնահատեցին
 նրա ընդունակութիւններն ու կարողութիւնները (Ալ. Երից-
 յան, Ա. Պերպերյան, Մ. Յրմանյան, Պ. Պոռշյան և ուրիշներ),
 ապա գտնւելցին նաև այնպիսիները (Մ. Աղաբեկյան, Ս. Պերճ
 Պողոս-Փափաղյանց, Դ. Աղայան, Ե. ք. Գեղամյան, Ավ.
 Արասխանյան), որոնք Ներսէսի գրծունեութիւնից պոկեցին
 ազգային-հայրենասիրական հողը՝ նրան բաժին թողնելով

¹¹⁹ Նույն տեղում, էջ 499—500:

փառասիրական և իշխանասիրական հակումներ միայն: Նա-
խահեղափոխական հայ պատմագրության մեջ Ն. Աշտարա-
կեցու գործունեությանն անհամեմատ լայն տեղ է հատկաց-
րել Ա. Երիցյանը: Ըստ նրա, հայ ազատագրական շարժման
սակավ այն գործիչներից էր Աշտարակեցին, որոնք ժամանա-
կի «անսպասեհույության» համար չէին նվնվում և անիրական
համարում վայրկյանը, իսկ պատմական վայրկյանը Երիցյան
պատմաբանի համար 19-րդ դարի սկիզբն էր, որի շեմին հայ
ժողովուրդը կանգնած էր օտար բռնակալության շղթաները
ոտքերին:

Պատմական ճակատագրի անողոք օրենքով իր քաղաքա-
կան անկախությունը կորցրած հայ ժողովրդի կյանքի, հետա-
մնաց ավատական կարգերի, թուրքական ու պարսկական տի-
րապետության տակ հայ ժողովրդի ֆիզիկական ու բարոյա-
կան խեղիխեղումների մասին բազում փաստեր է բերում Ա.
Երիցյանը: Հայ ազատագրական շարժման ղեկը ստանձնած
գործիչը հայրենիքի փրկության ուղիները սպասում էր ոչ թե
անցյալի հերոսների աճյունների «կենսաձիր» լույսից, այլ
հին դյուցազունների իրօրյա ժառանգորդներն են կենդանու-
թյուն տալիս ժողովրդին ու հայրենիքին: «Պաշտպան հայ-
րենյաց», «ազատիչ ազգի», «բարերար հայոց» — այսպիսին
է Ն. Աշտարակեցին Ա. Երիցյանի պատմագիտական մտա-
հյուսվածքում: Խոտոր ու ոլոր-մոլոր այն ճամփաները, որով
բայել է նա իր երկարատև կյանքի ընթացքում, ծառայել է
մեկ նպատակի՝ հայրենիքի պաշտպանությանը:

Արդեն առիթ ենք ունեցել դիտելու, որ Ռուսաստանի
առաջխաղացման «ժպտուն հորիզոնների» հետ կապելով հայ
ժողովրդի ազատագրական բաղձանքները, Աշտարակեցին
հույս ուներ, թե հայ ժողովուրդը ձեռք կբերի քաղաքական
խրքնուրույնություն: Այս հարցերին անդրադառնալիս՝ քո-
ղարկված ու զգուշավոր համակրություն տածելով դեպի հայ
ազատագրական շարժումն ու նրա գործիչները, բայց անտե-
սելով ցարիզմի անդրկովկասյան քաղաքականության մեջ
տակավին 18-րդ դարի վերջերից դրսևորվող բացարձակ գա-

ղութակալության տենդենցները, Ալ. Երիցյանը ջանում էր ընդհանրացնել Ն. Աշտարակեցու գործունեության տարբեր շրջանները հատկանշող մոմենտները: Երիցյանի մոտ Ն. Աշտարակեցին աղատ է արամադրությունների ու մտքերի հակասություններից. քաղաքականության հարցերում ղեկավարելու վարդապետը (մենք նկատի ունենք նրա կապերը ֆրանսիացիների և վրաց թագաժառանգ Ալեքսանդրի հետ), նույնացված է ուստական օրինետացիայի հաղթանակի համար մարտնչող արքեպիսկոպոսի հետ՝ նրան վերագրելով ամեն տեսակ ձգտումներ: Եվ դա դարմանալի չէ: Հայ աղատագրական շարժումների պատմությունը 19-րդ դարի 70—80-ական թվականների մարզիկ շատ քիչ գիտեին ընդհանրապես: «...Նրանք գիտեին,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— որ ցարական Ռուսաստանը աղատել էր հայերին ֆիզիկական բնաջնջումից և տվել նրանց տնտեսական ու կուլտուրական վարդացման շոշափելի հնարավորություններ: Սակայն մոռացել էին գրեթե, թե ինչի էին ձգտել հայ ղեկավարները և ինչ ստացել փաստապես»¹²⁰:

Բարեբախտաբար հետադայում սկսում են հաղթահարվել նման պատկերացումները: Ցարիզմի հետամտած նպատակների և նրա գաղութային քաղաքականության շատ թե քիչ մտառու ուսումնասիրողները հանգում են այն եզրակացության, որ անմիտ ու անարժեք է բարոյական բարբառն այնտեղ, ուր երևույթների գնահատության եղակի կշռաչափը շահախնդրական միտումներն են, իսկ վերջիններիս իրականացնողները ցարական ղեկավարների փայլատակող սուրբ: Ցարական սատրապները մոռացության տալով իրենց երբեմնի խոստումները, բռնում են դրանց դրժելու և իրենց սեփական ծրագրերն իրականացնելու ուղի:

Իրական հողից կտրված պիտի համարել Գյուտ քահանա Աղանյանի այն կարծիքը, ըստ որի Աշտարակեցի քաղաքական գործչին ոգևորողն ու եռանդ ներարկողը փառասիրու-

¹²⁰ Ալ. Հովհաննիսյան. «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 4, էջ 285.

թյունն ու բարձրանալու տենչն էր, այն աստիճան, որ իբր «նա ամենևին չէր հոգում, եթե կատարվեր այդ՝ աղգի խայտառակության և Աթոռի ավերման գնով»¹²¹։ Աղանյանը բաղմիցս այն տեսակետն է հայտնել, որ հայ ազատագրական շարժման գործիչները չհասկանալով ռուսական պետության խոստումների իսկական լեյտմոտիվը՝ «...նվաճելու հայկական նահանգները և մահմեդական տիրապետության փոխարեն իր իշխանությունը հաստատելու այդ երկրում», իդուր գործիք եղան ռուսաց ձեռքին՝ նրանց այդ նպատակին հասնելու համար¹²²։ Եթե հայ ժողովրդի մեծ մասը «անդիտակցաբար» ռուսի տիրապետության ձգտումների մեջ աշխարհակալական ցանկություններ չէր տեսնում, այլ քրիստոնյաներին բարբարոսների ճիրաններից ազատելու մի վեհ գաղափար, շարունակում է հեղինակը, ապա չի կարելի նույնն ասել նրանց մասին, ովքեր ղեկավարում էին ժողովրդին և նրա ձգտումների կատարմանը նպաստում։ Նրանք բոլորը՝ սկսած Եփրեմ արքեպիսկոպոսից մինչև «այդ ամենի գլխավոր գործակատար» Ներսես Աշտարակեցին, խնայեցին իրենց նյութական ու բարոյական աջակցությունը և իշխանական ուժը «այդ ցանկությունն ի կատար ածելու համար»¹²³։

Հարկավ, Աղանյանը անտես էր առնում ցարիզմի դասակարգային վեությունն ու հայ ազատագրական շարժման առաջմղիչ ուժերի նպատակները։ Նա մոռանում էր, որ Անդրկովկասը զբաղում էր կալվածատիրական Ռուսաստանը և հետևաբար, ռուս ազնվականության ու նորեկ բուրժուազիայի շահերի պաշտպան ցարիզմը խտրություն չպիտի դնեք նպատակին հասնելու միջոցների առջև։

Ընդհանրապես մինչհեղափոխական պատմագրությունը հստակ չտվեց պատասխանն այն հարցի, թե ինչ էին սպասում ն. Աշտարակեցին և նրա ժամանակակից հայ գործիչներ-

121 Գյուտ Բ. Աղանյան, Դիվան հայոց պատմության, հտ. է, մ. 2, Թիֆլիս. 1909, էջ է—ԻԹ։

122 Նույն տեղում, էջ ԽԴ—ԽԴ։

123 Նույն տեղում։

ըր Թուսաստանից և ինչ ստացան ցարիւղմից: Եթե հայերը օգնութիւն և աջակցութիւն ցույց տային ռուսական բանակին՝ Երեւանի և Նախիջևանի խանութիւնները պարսիկներից գրավելուն, գրում է Ա. Պերպերյանն իր «Հայոց պատմութեան» մէջ, ապա վերջում՝ այդ մարդերը հայտարարվելու էին անկախ «...ի բռնակալութենէ տնօրէն խանիցն պարսից, և լինել ընդ հովանավորութեամբ ամենաբարձր տէրութեանն Ռուսաց»¹²⁴:

Պերպերյանը գրում է, որ Էջմիածնի կաթողիկոսական գահին բաղմելուց առաջ Նիկողայ Առաջինի հետ ունեցած ղրուլցի ժամանակ Ներսեսը կրկին խոսք բացեց Պասկևիչի՝ պատերազմի ժամանակ իրեն տված խոստումնաշատ թղթի մասին. «Այս յետկար և ստորագրութիւն ձեր պահեալ կայ առ իս, ո՛վ վեհափառ տէր, իբրեւ մասն սրբազան, և ոչ գիտեմ, թէ ե՞րբ լինելոց է»¹²⁵:

Հեղինակը միամիտ դիվանագետի պատասխան չի դրել Նիկողայ ցարի բերանում: «...Ես հաստատ եմ ի խոստմանս, — պատասխանում է կայսրը, — և հուսամ կատարել, զոր ստորագրեցի յանուն Աստուծոյ, և չը մնալ պարտական ազգի ձերում, և այնչափ անպարտ արեանցն հեղման, որք հեղան ի փառս կայսրութեանս: Բայց այժմեան քաղաքականութիւնն Եւրոպացւոց ընդդէմ ելանէ այսմ կարգադրութեանս, և ոչ յաջողի բնաւ, և ազգ ձեր տեսանէ վնաս յամենայն կողմանս, ուր և ցրուեալքն իսկ են: Եթէ ողորմութեամբն Աստուծոյ ի գլուխ տարայց ղԱրեւելեան խնդիրն յազատութիւն Քրիստոնէից, յայնժամ դուրս յաջողի և այդ խնդիր ձեր. ուստի պարտ է ձեզ համբերել, մինչեւ Աստուած ինքն իսկ տնօրինեսցէ, և ժամանակն յաջողեսցէ»¹²⁶:

Գրածի համաստիութիւնը ցույց տալու համար Ա. Պերպերյանը վկայակոչում է, թե այս մտքերը ինքը քաղել է

124 Ա. Պերպերյան, Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 178:

125 Նույն տեղում, էջ 283:

126 Նույն տեղում:

Ներսէսի «ձեռնասուն և հաւատարիմ աշակերտ» Թադևոս վարդապետի օրագրից, որի օրինակը, դժբախտաբար, չկա մեր ձեռքի տակ: Բայց ինչ էլ եղած լինի, ընկնելով ռուսական տիրապետութեան ներքո, — գրում էր Պերպերյանը, — արեւելահայերը «վերծան յայնչափ բազմադէտ հարստահարութեանց բռնաւորացն Պարսից, որ գրեթէ անպակաս իւրաքանչիւր ամի շնչին առիթ ինչ գտեալ, նեղէին ու շարշարէին վրնակիչ հայ ազգիս գիւղօրէից և գոմօրէից՝ ծանր և ծանր հարկապահանջութեամբ և տուգանօք, և վնասուք, եկեղեցիին, կողոպտէին և մերկացուցանէին վրնակիչս, և բազում անգամ հրձիգ տոնէին և սուրէին գտունս և զստացուածս նոցին զամենայն»¹²⁷:

Խաբաղանկով պատմութիւնը դարձած պարսկա-թուրքական ռեժիմը՝ Պերպերյանը լսում էր ռուսական տիրապետութեան հոռի կողմերի մասին, որովհետեւ Ռուսաստանը «խորթ մայր» չգարծալ իր գալիստնի տակ անցած քրիստոնյա հայերի նկատմամբ: Ահա վասիկ, գրում էր արեւելահայ նրա համախոհ Հ. Սուրենյանը՝ «...Հայերը ամենայն կողմից սկսան ուղարկել յուրեանց մանուկները Մոսկովայի և Պետերբուրգի բարձր և միջնակարգ ուսումնարանները և զինվորական դիմնապիսները կրթութեան համար: Սոքա՝ ավարտելով յուրյանց ուսման ընթացքը հայկական ընդաբօյս աջողականութեամբ, մեծ մասամբ ստանում էին վանազան պաշտոններ մայրաքաղաքների մեջ... առավել համակրելով մայրաքաղաքների գրավիչ պայմաններին»¹²⁸:

Հայ բուրժուական պատմագրութեան ներկայացուցիչներից ոմանք չեն կարողանում ազատվել իրենց դասակարգային նեղմտութիւնից: Այսպէս, դարասկզբի հայ բեակցիոն պահպանողական մտավորականութեան ձայնատար Նզիշե բահանտ Գեղամյանը, որն անտարբեր չէր գեղի հայ կյանքն ու նրա խնդիրները և արծաղանքում էր ազգը հուղող հարցն-

¹²⁷ Նույն տեղում, էջ 179:

¹²⁸ Տ. Յակոբ Սուրենեան, Հարիւրամեակ կենարար սուրբ Խաչի վերացման Մոսկովայի Հայոց եկեղեցիոյն, Ռուստով, 1879, էջ 26:

րին աղգապաշտպանության կղերական դիրքերից, այս նեղմտությունից էլ գրչահարում էր ցարիւմի հինօրյա քաղաքականությունը և նրա հաջողության երթը դուրացնող հայ գործիչներին: Ըստ նրա՝ բոլոր հայ քաղաքական գործիչները, Ի. Օրուց մինչև Ն. Աշտարակեցին և Լաղարյան իշխանները՝ մեծամեծ զոհեր են մատուցել ռուսական դիվանագիտությանը և միշտ հուսախաբ եղել իրենց ակնկալությունների մեջ: Աշտարակեցին «փոքր ի շատե քաղաքագիտական հոտառություն» չուներ և չէր հասկանում իր մասնակցությամբ կատարվող մեծ ու փոքր դեպքերը. նա նույնիսկ չգիտեր, որ «այդ դեպքերի առաջացողը, նրանց շարժողն ու պարացնողը արտաքին քաղաքականությունն է գլխովին»¹²⁹: Գեղամյանը չկարողացավ գտնել այն կապը, որ գոյություն ունի հայ գործիչների նպատակալաց գործունեության և հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների օրինաչափ վարձացման միջև:

«Հասարակության զարգացման պատմության մեջ, — գրում է Էնգելսը, — գործում են մարդիկ, որոնք օժտված են գիտակցությամբ, շարժվում են որոշ միտումներով կամ կրքերով, իրենց առջև դնում են որոշ նպատակներ: Այստեղ առանց գիտակից դիտավորության, առանց ցանկալի նպատակի ոչինչ չի կատարվում:

Գործողություններն ունեն որոշակի ցանկալի նպատակներ, սակայն արդյունքները, որոնք ելնում են այդ գործողություններից հաճախ բոլորովին ցանկալի չեն... Այսպիսով, թվում է թե ընդհանուր առմամբ պատահականությունը հավասարապես տիրապետող է նաև պատմության բնագավառում: Բայց անտեղ, որտեղ մակերեսի վրա տեղի է ունենում պատահականությունների խաղ, հայտնվում է, որ այնտեղ ինքը՝ այդ պատահականությունը ենթակա է միշտ ներքին

129 Եղ. Բ. Գեղամյան, Պատմական քաղվածքներ, պրակ 7, Բաքու, 1909, էջ 940:

ծածկված օրենքները: Ամբողջ խնդիրն այն է, որ հայտնագործես այս օրենքները»¹³⁰:

Հայ բուրժուազիայի պահպանողական հայացքներով բեռնավորված Գեղամյանը այն մարդը չէր, հարկավ, որ հասկանար պայքարի ու զարգացման այս պատմափուլիստփայտվյուցը:

Մի ալլ աշխատության մեջ տալով հայ աղատագրական շարժման անցած ուղու համառոտ ակնարկը, Գեղամյանը պատգամում էր իր քննիչություններին «մի անգամ ընդմիշտ» հետև մնալ «սրեկ քաղաքական շարժումներից, քաղաքական գործերի ու հաշիվների միջամտություններից և բոլոր սրտով ու հոգով» նվիրվել «քաղաքակրթական խաղաղ, շինարար աշխատանքի»¹³¹:

Գեղամյանն աշխատում էր վարագուրել աղղային քաղաքական իր իմաստասիրությունը և հակադեմոկրատական դադափարախոսությունը երկդիմի տրտունջներով և նույնիսկ հայրենասիրության մասին նեղված շատ զգուշավոր և միշտ քողարկված խրատներով: Ժամանակի պահպանողական շրջաններում հայտնի դառնալով իբրև դեմոկրատական հայացքների մոլի հակառակորդ, նա միշտ ասում էր, որ ինքը չի կարող ձայնակցել ռուսական օրինկոտցիան պաշտպանող հայ գործիչների ուղեգծին¹³²: «ԺԸ-րդ դարու վերջներից և ԺԹ-ի սկզբներից, — գրում էր նա մի ալլ առիթով, — հայն իր պատմական փորձված ճանապարհիցն սկսեց շեղվել, իր աչքը դիպի իր սիրուն եկեղեցին ու պանծալի հավատը վարագուրեց օտաբնորի բերած փալլուն թաշկինակով և իրար կորցնելով գտյանաշատ անտառների, սնդնդախոր ձորերի, մաշող առապարների կողմերն ուղղեց իր մոլար քայլերը»¹³³: Գեղամ-

130 К. Маркс и Ф. Энгельс, Избранные произведения, II, 1948, էջ 371:

131 եղ. Բ. Գեղամյան, Պատմության դասերը, Բարու, 1915, էջ 34—35:

132 Տե՛ս Ա. Կառինյան, Բաֆֆին և նրա ուսակցիոն քննադատը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 6):

133 «Հովիտ», 1916, № 5, էջ 65:

յանը աչք էր դոցում այն ճշմարտության առջև, որ ուսական օրինակապետն Ն. Աշտարակեցու և, ընդհանրապես, հայ ազատագրական շարժման մյուս գործիչների համար «հյուսիսային տրժվի» թևերով արտահանված և հայերին պարտադրված գաղափարներ չէին, այլ՝ պարսկա-թուրքական բռնատիրության դեմ նրանց հարգարած ազատագրական պայքարի միակ առաջադիմական ուղեգիծը։ Պատմա-քաղաքական երևույթները ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակից անջրպետված՝ բնության արատավոր իր մեթոդով նա գուռ էր բացում ինքնահակասումների և էկլեկտիկ մտածողության համար։ Պատահական չէ, որ նա մերթ գովեստի տողեր էր նվիրում ուսական տիրապետությանը և դրվատում հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց «մի քանի տասնյակ տարիների ջանքերից, տառապալից փորձերից հետո վերջապես հասավ ցանկալի օրը և հայ մեկիքների երկիրը և Արարատյան ավարհը ցանկալի գիրկն ընկան։

... Հայոց եկեղեցին իր ազատ պաշտամունքի լիակատար տերը եղավ, հայոց հայրապետներն իրենց խղճելի կացությունից ելան և արտաքին շուքով ու փայլով շողվեցան, հայ ժողովուրդը իր գույքի, պատվի ու աշխատանքի տերը դառնալով, դադարեց միայն մի պատառ հացով գոհանալ, նա հողեկան պահանջ դրաց իր աշխատանքի ավելիով ուսանիլ, կրթուիլ և կենսակրթական ճանապարհի վրա ելնել։ Ռուսական տիրապետությունը իր քաղաքակրթության շունչը փչեց հայության երեսին և հայը նրա ազդեցությամբ և նրա միջոցով սկսեց յուրացնել եվրոպական կենսակրթությունը իր բազմազան ճյուղերով»¹³⁴, մերթ վերհիշում իր այն նախորդներին, որոնք տակավին «հիսունական թվականներից սկսած, իրենց ժամանակակիցներին խրատել են և աշխատել համոզելու, որ մեր փոքրամիլ, ցիր ու ցան և տկար հայ ազգի ապագան կարելի է ապահովել այն ժամանակ միայն, երբ հայ ազգն ընդհանրապես և նրա ղեկավար շրջանները մաս-

¹³⁴ Նույն տեղում, էջ 66:

նալորապետ իրենց համար անշեղ կանոն ընդունեն անցյալի վերաբերմամբ սիրել ու հավատարիմ մնալ հայ ազգության դարավոր առանձնատկություններին, որպիսիք են՝ ազգային եկեղեցի, մայրենի լեզու, հայ գրականութուն և պատմություն. իսկ ներկայի վերաբերմամբ շարունակ և անընդհատ աշխատել և առաջադիմել ուսման և գիտության մեջ, աղհաստների և արվեստների մեջ, արդյունագործության և վաճառականության մեջ:

Մեր ազգի քաղաքական ձգտումների վերաբերյալ մեր նախորդները միշտ խրատել են հավատարիմ մնալ ամենուրեք տիրող պետության և իր վարկն ու ապագան չվտանգել ինքնամիտ բախտախնդրությամբ, քանի որ մեր աշխարհագրական և քաղաքական դիրքը այնպես է պահանջում»¹³⁵:

Նա հակակրանքով էր խոսում «համապային հոգու զոթության վրա» երկաթին գերապատվություն տալու Խրիմյանի, Արծրունու և Րաֆֆու «խնքնահնար գյուտի» մասին, որովհետև սրանք «համապային զարգացած, հասուն գիտակցության զորությունն արհամարհելով՝ միայն երկաթի մեջ որոնեցին հայ ժողովրդի ազատագրությունը, որ մեծ մոլորություն էր, իր մեծ ու չարաչար հետևանքներով»¹³⁶: Դա «Մեղու Հայաստանի» ուղղությունն էր, որ պաշտպանելով կղերականության մենաշնորհը և եկեղեցու միջոցով կառուցվող «ազգային կուլտուրայի» արժեքները, զրվատելով առևտրադրամատիրական հայ բուրժուազիայի ներկայացուցիչներին, աշխատում էր կուրացնել իր ընթերցողներին առաձգական և կեղծ դեմոկրատական հայտարարություններով: Պատահական չէր, որ «Խենթում» Րաֆֆու կողմից առաջադրվող ուսական օրինետացիայի պաշտպանությունը թշնամաբար ընդունվեց այդ լրագրի կողմից, որի աշխատակիցներն ու թրդթակիցները հերթով պայքարի նետվեցին Րաֆֆու դեմ: Ջրդտելով «խելքի բերել» Րաֆֆու միամիտ և էնտուզիաստ ըն-

135 «Հովիտ», 1916, № 6, էջ 86:

136 «Հովիտ», 1916, № 5, էջ 82:

թեքցողներին՝ Եղ. Գեղամյանը 1881 թ. տպագրեց «Խենթի» քննադատությունը նվիրված ընդարձակ իր «Իմաստասիրությունը»¹³⁷:

Առավել ևս կտրուկ ու մոլեգին դարձավ նրա ելույթը «Կայծեր» վեպի հրապարակումից հետո: Բաղմաթիվ իր հողվածներում Գեղամյանը առաջադրեց հայ ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ պահպանողական հասանքի բացասական պատգամները:

Հայ ազատագրական շարժման հարցերին նվիրված Գեղամյանի մասնավորապես վերջին շրջանի աշխատություններում խստորեն բացակայում էր իրադարձությունների վարդացման պատճառականությունը: Դրանք կառուցված էին պատմության մեխանիստական ընկալման և կիրառական պրագմատիզմի՝ գիտական առումով ամուլ և էկեկտիկ մեթոդով, ուր մասնավոր իրողությունները ապարդյուն կերպով փորձում էին սպառնալ հայ ազատագրական շարժման լուսավոր փաստերին, իսկ հեղինակի վերացական մտքի ղեզերումները՝ երևույթների պատմա-հասարակական կապերին ու օրինաչափություններին: Գեղամյանը հայ ժողովրդի ազգային-քաղաքական և ազգային-կուլտուրական զարգացման ներկան ու ապագան պատկերացնում էր հայ եկեղեցու և բուրժուական կարգերին համակերպված՝ կղերի ղեկավարությամբ, ուստի պատահական չէ հոգեկան այն խռովքը, որ երևան էր բերում նա հայ կղերի ազգային-կուլտուրական գործունեությունը խաթարող ցարիզմի քաղաքականությունն և կատմամբ:

Գեղամյանի կարծիքով ցարական կառավարության անբարյացակամ քաղաքականությունը՝ հայ եկեղեցու ու հասարակական կյանքում նրա մենաշնորհը պաշտպանող կղերական մտավորականության նկատմամբ կաշկանդել է հայ կուլտուրայի զարգացմանը: Բայց «սրանով չենք ուղում ասել,— գրում էր նա,— թե կառավարությունից որևէ փոփո-

137 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1881, № 183:

խություն, պարտքի ողևէ հատուցումն ենք պահանջում կամ խնդրում:

— Ո՛չ, քաւ լիցի:

— Ընդհակառակը՝ շնորհակալ ենք կառավարությունից այն բարիքների համար, որ 75 տարի վայելել ենք նրա հովանու ներքո՝ ի տրիտուր մեր մատուցած մեծամեծ ծառայություններին: Բայց եթե կառավարությունից որեւէ պահանջ առնելը մեզ իրավունք չենք համարում, գոնե լիակատար իրավունք ենք համարում և բաց ճակատով միշտ կարող ենք պահանջել, որ կառավարությունը մեզ ազգովին ողջակեզ (ընդգծումը հեղինակինն է—Ն. Ս.) չբերե իր այն քաղաքականության նպատակին, որ վերջին Արեւելյան պատերազմից հետո սկսել է գործադրել մեզ վրա»¹³⁸:

Գեղամյանը նշում էր ամեն կարգի ազգային-ազատագրական ու դասակարգային շարժումները, որովհետեւ որչափ հայերը հանգիստ ու խոնարհ են եղել, այնչափ վայելել են տիրողների «առատ շնորհները»:

Ըստ Գեղամյանի, մահմեդական աշխարհում հայերի անդորրը խանգարել են հատկապես նրանց ռուսական օրինաւորացիան և Ռուսաստանի արեւելյան քաղաքականությունը:

Գեղամյանը ջուր էր լցնում, առաջին հերթին, թուրք շարգարարների ջրաղացին, երբ գում էր, թե՛ «Մինչև Պետրոս Մեծի Արեւելքի վրա աչք ունենալն, Տաճկաստանի հայ բրիտոնյաներն ընդհանրապես հանգիստ և լավ էին ապրում օսմանյան գահի հովանաւորության տակ: Կրոնի և լեզվի կատարյալ ազատութիւն էին վայելում, տնտեսապես բարեկեցիկ վիճակ ունեին, առևտրի և արհեստների մեջ առաջին տեղն էին բռնում օսմանյան կառավարության մյուս հպատակների մեջ, պետական ու հասարակական գործունեության ասպարեզը նրանց համար միշտ բաց էր լինում: ... Ընդհանուր կոտորած, ժողովրդի ջարդ, քաղաքների և գյուղերի ավարառութիւն և սպերում, կանանց հափշտակում և առե-

138 Եղ. Բ. Գեղամյան, Մտորումներ, «Հովիտ», 1906, № 39, էջ 618:

վանգում, արտագաղթումն և այլ այսպիսի աղետներ՝ գոյություն չունեին Տաճկաստանում, մինչև այն օրը, երբ օսմանյան կառավարությունը ոչ մի կասկած չուներ տաճկահայերի բարեհուսություն վրա»¹³⁹:

Հայերի ռուսական օրիննության և նրա հետևանքները նույն հակադիտական դիրքերից էր քննում և Նզիր Քաֆանյան: զործրնկեր Սնդրակ Ավագյանը: Հանդուրժող չափավորություններ քննադատելով ցարիզմի ազգային-կրոնական քաղաքականությունը, նա ևս այդ «քննադատության» անվան տակ սկսեցնում էր հայ աղատագրական շարժումները:

Ռուս-մահմեդական դինարախումբների ժամանակ հայերը «կուրորեն օգնել և աջակցել են» ռուսներին: «Ահա թե ինչու,— գրում էր նա մեծ եղեռնի նախօրերին,— տասնյակ տարիներ տաճիկը մեզ հալածում, կոտորում ու բնաջինջ է ուղում անել մեր հարազատ երկրում»¹⁴⁰: Սխալ տրամաբանական այս մտակառույցը չէր կարող չանդադառնալ նաև դրան հարակցող այլ ըմբռնումների վրա: Այստեղ, Ս. Ավագյանը աննախապաշար հակակրթական էր խոսում պարսկահայերի ներգաղթի մասին: Նախքան 1828 թվականը,— հարում էր նա այդ առիթով,— խոյր եղել է Պարսկստանի ամենահայաշատ կենտրոններից մեկը: Սակայն վերջին ռուս-պարսկական պատերազմից հետո, շնորհիվ Պասկևիչի և հայ զենեհալազարյանի ջանքերի 40 հազար պարսկահայ բնաջինջ (պետք է լինի՝ 40 հազար պարսկահայեր— Ն. Ս.) թողնում են Ատրպատականը և բնակվում Շարուր Դարալագյազի շրջանում: Այդ հսկայական գաղթը, որի զրդապատճառը եղել է, իմիջիայլոց, Լազարևի կողմից պարսկահայերին տրված «ոսկյա սարերի» խոստումը, պիտի համարել պատմական Հեր և Զարեանգի համար առաջին մահացու հարվածը...»¹⁴¹: Որ

139 Նզ. Ք. Գեղամյան, Հայերի աղատագրական շարժումները ԺԺ դարում, Բաքու, 1915, էջ 420—421:

140 Ս. Ավագյան, Ազատ Հայաստան Ռուսաստանի հովանավորության տակ, «Հովիտ», 1915, էջ 19:

141 Ս. Ավագյան, Ավերակների աշխարհից, «Հովիտ», 1916, № 8, էջ 117:

պատմական իրողութիւնը այս տողերում գլխիվայր էր շէրջ-ված՝ մենք տեսանք նախորդ գլխում, ուր ոչ այլ ոք, քան ին-քը՝ հայազգի գեներալն էր հերքում հայերի հասցեին Պասկե-վիչի նետած սին մեղադրանքները:

Արժեքավորելով Հայաստանի արեւելյան հատվածի Ռու-սաստանի տիրապետության տակ անցնելու իրողութիւնը և արտահայտելով իր մոտեցումը Ռուսաստանին ու պարսկա-հայ ներզաղթին, հայ պահպանողականության ինքնատիպ և խոհուն ներկայացուցիչ Մաղաքիա Օրմանյանը (1841—1918)՝ գրում էր. «Հայեր ամէլի կրած հարստահարութիւննե-րեն կփախչէին, և ասպագա բարօրութիւն կփնտրէին և այդ մասին հուսախաբ չէին եղած, քանզի պաշտոնական վիճակա-դրութիւններն ալ, միայն Երևանի և Նախիջևանի մեջ 60 տա-րիների ընթացքին եռապատիկ անցած կցուցանեն տեղի հա-յարնակութիւնը»¹⁴²:

Օրմանյանը զերծ էր անցյալի ազգային-քաղաքական ի-րողութիւններին, դարասկզբի ռեակցիոն պահպանողական-ներին բնորոշ, կրքային ու հախուռն զնահատականներ տա-լուց: Իրրեւ պատմաբան, նա հետևողական դասավորող և վեր-լուծող էր, ուներ երեւելիներն ու անցքերը գիտելու ու վերլու-ծելու տրամաբանական մեթոդ և անաշտ եղանակ: Նա չու-նէր նաև անցյալի հայ կղերական պատմիչների նախապաշա-րոմները, կողմնակալութիւնն ու նեղմտութիւնը: Օրմանյա-նը խոհուն ու շրջահայաց էր հատկապես իրօրյա կացութիւ-նը դնահատելիս: Հայոց պատմութեան մեջ նախօրինակը չու-նեցող 1896—1908 թթ. դժնդակ տարիներին¹⁴³, երբ Թուրքիա-յում խաթարված էր հայերի ոչ միայն հանդիստը, այլև ֆիզի-կական գոյութիւնը՝ «Ինծի կմնար,— գրում էր նա հետադա-յում,— հարմար կերպերով, ճարտար դարձվածներով, հնա-րավոր միջոցներով, Համիտի հայերու գեմ ունեցած ատելու-

142 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 3581:

143 Այս տարիներին Օրմանյանը վարում էր Կ. Պոլսի հայոց պատրիար-քութիւնը:

Քյունը մեղմացնել, հալածանքները թեթևացնել, արգելքները նվազեցնել, ազգին կաշույնը բարվոքել, ներքին կազմակերպությունը պահպանել, մեկ խոսքով՝ քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիտին ուղածը չէր և երբ ես անոր կհետեւի, Համիտի հետևող եղած չէի ըլլար...»¹⁴⁴:

Նա խիստ վնասաբեր էր դիտում արևմտահայերի ապստամբական գործողությունները և մասնավորապէս անարգում գրանք ղեկավարելու հովակնություն ունեցող հայ ազգային կուսակցություններին¹⁴⁵: Իր ու Ն. Աշտարակեցու գործունէութեան նմանությունը նկատի ունենալով Օրմանյանը, երբ գրում էր, թէ Ներսէսը որքան «բռնուն ու հախուն էր» գործնական ձեռնարկներում, «նույնչափ էլ հանդարտ ու խոհական՝ պարագաները կշռելու և հանգամանքներին հարմարվելու մեջ»¹⁴⁶:

Օրմանյանի համար ամեն ինչից վեհը մայր հայրենիքն էր, հայ ժողովրդի ինքնապահպանումը, որի համար պետք է աշխատեին բոլոր հայերը՝ հասարակ համալից սկսած մինչև «վեհ պատրիարքն ու կաթողիկոսը»:

Նա հիմնականում իր աշխատությունները գրեց պատրիարքական աթոռը թողնելուց հետո, երիտթուրքերի սանձարձակ տիրապետության ժամանակաշրջանում:

Անդրադառնալով այն հարցին, որ դեպի Անդրկովկաս ցարական ղորքերի առաջխաղացման, 19-րդ դարի 20-ական թվականների համազգային ներշնչանքի այդ պահին՝ «Նիկողայոս Ա կայսրը յուր խոստումները առանձնապէս ընդարձակեց, մինչև իսկ հայերուն աչքին ինքնուրույն իշխանութեան ակնկալությունը փափուկեցուց, և այդ խոստումները երաշխավորելու դիտմամբ, պահ մը Հայկական նահանգ անուն ալ տուալ նոր տիրապետած գավառերուն», Օրմանյանը օրյեկտիվորեն շարունակում էր, որ «այդ ամենը քաղաքագիտա-

144 Մ. Օրմանյան, *Խոհք և խոսք*, Երուսաղեմ, 1929, էջ 28—29:

145 Տե՛ս Գաբրիէլ վ. Հովսեփյան, *Մազաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Թիֆլիս, 1909, էջ 25:

146 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, մասն Կրորդ, էջ 3779:

կան ճարտարությունների եղան և տիրապետությունը դյուրացնելու առաջնորդեցին: Երբ որ տիրապետությունը լրացավ և հաստատուն ձև առավ, ռուսական կառավարությունը մինչև իսկ հայոց կրոնական կամ հոգևորական գործերուն վրա ալ ազդեցություն ունենալու ձևը գտրիավ»¹⁴⁷:

Քննադատելով ցարական իշխանությունների ուխտադրությունը, ռուսական տիրապետությունն Օրմանյանը իր ողջ էությունը համարում էր ընդունելի: Նա սեպուխտորեն էր զրնահատում պատմա-քաղաքական անցումներն ու կանգառները: Քիչ չեն պատահել գեպքերը, գրում էր նա, երբ ռուսական տիրապետության ներքո սաստկացել են հայության նկատմամբ ճնշումներն ու հալածանքները, փակվել մշակութային հաստատություններն ու դպրոցները, բռնադրավել եկեղեցական դույքը, քայց տշնուամենայնիվ հեղինակը գոհ էր ռուսական տիրապետությունից, որովհետև այն համատարած մեռելություն չէր սփռում և երբեք «երևբ հարյուր հազարներու խողխողում», «մոլեռանդ խուժանի մը ձնորով խաղաղ ապրող տարբին վրա հարձակում և ջարդ», «երեսուն հազար անմեղ կյանքերու անողորմ կոտորած» չէր ստեղծում¹⁴⁸:

Օրմանյանը ազատ չէր հայ կաթողիկոսներին ու բարձրաստիճան մյուս եկեղեցականներին մեծարելու անցյալի պատմադրության իդեալիստական արատներից, բայց ի տարբերություն նրանց, նա չէր նշտվելում հայ ազատագրական շարժման գործիչներին ու նրանց ռուսական օրիննուացիան:

Ուշագրավ է, որ «կարգի ու իրադրություն» ջատագով հեղինակը ոչ միայն դժկամություն խոսք շատաց ցարիզմի հետ գործարքի մտած ն. Աշտարակեցու դործունեության երկրորդ շրջանի մասին, այլև այն դիտեց ժամանակի «իրադրության համապատասխան», խոհուն և շրջահայաց ընթացք:

147 Մ. Օրմանյան, Հայ եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 119:

148 Տե՛ս Մ. Օրմանյան, Աղբալապում, մասն երրորդ, էջ 5426:

Սակայն Օրմանյանը ոչինչ չասաց Ն. Աշտարակեցու «խոհուն և շրջահայաց» ընթացքի պատճառների մասին, այն մասին, որ Ներսեսը «... որոշ հայացքների և ուղղության տեր, կուսակցության պարագլուխ և ազդեցիկ գործիչ» էր¹⁴⁹:

Սերտորեն դաշնակցելով հայ հարուստ հողատերերի և ցարական բարձր պաշտոնեություն հետ, Ն. Աշտարակեցին տիրապետող ռեժիմի մեջ տեսալ ազդի ներկան ու ապագան, դիմադիր կանգնեց ոչ միայն նորեկ հայ աղզային-աղատագրական պայքարին, այլև լուսավորական-դեմոկրատական շարժմանը:

19-րդ դարի վերջի բուրժուական հայ տնտեսագետներից մեկը՝ Ավ. Արասխանյանը ոչ առանց հիմքի ենթադրում էր, թե «շատ կարելի է, որ Ներսես 5-ը խիստ ձգտած լինի, մի քան էլ շահել հայության համար, յուր ազդեցությունը գործ դնելով, որ շատ տեղ հայերը հին աղնավանների սերունդ ճանաչվեն՝ կառավարությունից և նոցա վրա էլ հողեր հաստատվեն, թեկուզ ի վնաս գյուղական դասակարգի»¹⁵⁰:

Հաւանաբար Ներսեսի գործունեության այս կողմը նկատի ուներ Ղազարոս Աղայանը, երբ «Մի երես մեր նորագույն պատմությունից» ուսումնասիրության մեջ գրում էր, թե Ներսես կաթողիկոսի համար աշխարհում ամենավսեմը սեփական շահի բարոյականությունն էր, նրա համար գոյություն չունեի ժողովուրդ և հոգևորականություն: Նա միանգամայն համակիր չէր Պռոշյանին, բրն իր «Կռավածաղիկ» և «Շահեն» վեպերում, ապա «Հուշիկներ» ինքնակենսագրության մեջ իդեալականացրել էր Ն. Աշտարակեցուն՝ նրան հանդես բերելով իբրև ժողովրդասեր, պարզ ու համեստ մի մարդ, որ խտրություն չէր դնում «իշխանի ու գյուղացու» միջև: Աղայանը դեմ էր քոլոր նրանց, ովքեր պատմության մեջ գերազը-

¹⁴⁹ Ստ. Մալխասյանց, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթանասունհինգամյա գոյության (1824—1899), Թիֆլիս, 1900, էջ 12:

¹⁵⁰ Ավ. Արասխանյանց, Հոգային խնդիրը Անդրկովկասում, «Մուրճ», 1893, № 4, էջ 505:

նահատում էին Ն. Աշտարակեցու դերը: Պատմությունն ինքը բազում փաստեր է արձանագրել, գրում էր Աղայանը, թե ինչպես «նա հեռացնում էր իրենից ազնիվ ու խելոք մարդկանց և մոտ քաշում շողորորթներին ու հիմարներին: Ժամանակակից ուսմանականներից ոչ մեկը նրանից գոհ չի եղել, և ամենքն էլ դժգոհությամբ են հեռացել նրանից: Նա ուսումնասեր մարդ չէր, այլ իշխանասեր. սիրում էր իշխել, տիրել, և այսքան միայն: Նրա մեջ իշխում էր իր ժամանակի թավադների ոգին, իշխանների ոգին, նրանցից մի մազի չափ բարձր չէր: Նրա դպրոցը օրինավոր կարգի տակ ընկավ միայն նրա մեռնելուց հետո, իսկ նրա ժամանակ մի կատարյալ ավազակաճոց էր, մի հակակրթության տեղի, որտեղից կարող էին միայն փախչած մարդիկ դուրս գալ և ոչ երբեք բարեկրթած: Որքան աշխատեց խեղճ Շանշյանը, որ դպրոցին տա բարեպաշտ ղեկավար և ծավալ, ներքին բարեկրթություն, բայց ներսեր Շանշյանցի առաջարկությունը ըմբռնելու չափ կրթական հասկացողություն չունեւր. նա ատում էր ուսումնականներին, և առավել ևս, եթե ուսումնականը մի վարդապետ էր»¹⁵¹:

Հիրավի, Ն. Աշտարակեցին չվարանեց հարվածներ հասցընել նույնիսկ քաղբենի հասարակության շահերի պաշտպան Գ. Պատկանյանին: «Ես լսել եմ, որ նա (Գ. Պատկանյանը—Ն. Ա.) քաղաքի մեջ տեսակ-տեսակ անկարգությունք կառաջացնե, քաղաքի կարևոր գործոց մեջ կխառնվի: Ո՞վ խնդրեց նրան, որ նա համարձակեցավ ձանձրույթ տալ Վրոնցյով կոմսին քաղաքի ապահովության մասին»¹⁵² — հարցնում էր Ներսեսը հեգեորականներից մեկին:

Սակայն, ժանրանալով Ներսեսի գործունեության միայն ստվերներ կողմերի վրա, Աղայանը մեղանշում էր պատմության առջև՝ մոռացության տալով հայ ժողովրդի ազատագրական պայքարում նրա «փերձառությունն ու վաստակը», որ

151 Պ. Աղայան, Մի երես նորագույն պատմությունից, «Հանդես գրական և պատմական», շրբորդ գիրք, Մոսկվա, 1888, էջ 275—276:

152 Մատենադարան, ձեռագիր № 8817, էջ 44 ր:

տակավին 40-ական թվականներին Գևորգ Ախվերդյանը համարում էր «անվիճելի»¹⁵³։ Նա մեկն էր հայ եկեղեցու նշանավոր այն գործիչներից, որոնց ջանքերով Ռուսաստանը հետզհետե «յուր տիրապետությունն ու հովանավորությունը տարածեց Անդրկովկասի վրա, բերելով յուր հետ կարգ ու կանոն, քաղաքացիական ու հասարակական կյանքի, ընդհանուր մտավոր վարճացման և արդյունագործական սկզբունքները։ Մյուս կողմից մեծ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմներից հետո, քսանական թվականներում, Անդրկովկաս գաղթեցին Պարսկաստանից և Տաճկաստանից տասնյակ հազարավոր հայաթև և հայախոս հայեր, որոնք ոչ միայն խտացրին հայ ազգաբնակչությունը Անդրկովկասում, այլև հայ լեզուն տարածեցին վրացացած հայերի մեջ։ Իսկ հայերին գրագիտության, ազգային գրականության և ինքնաճանաչության մեծ զարկ տվեց Ներսես կաթողիկոսը, յուր անունը կրող Ներսիսյան հոգևոր դպրոցով»¹⁵⁴։

Պարսկական տիրապետությունից Արևելյան Հայաստանի ազատագրության գործում Ներսեսի կատարած անվիճելի ծառայությունների մասին գովեստով էր խոսում նաև Գ. Պատկանյանը, բայց հայկաբան վարժապետը լռում էր, երբ անցնում էր նրա գործունեության երկրորդ շրջանին, Վորոնցովի, Հարություն Խալիբյանի և ման խոշոր հողատերերի և մեծատուն աղաների վրա հենվելու նրա քաղաքականությանը։

[Այսպիսով, դժվար չէ նկատել, որ հայ ժողովրդի նոր պատմության անցյալի մշակներից նույնիսկ ամենատաղանդավորները սոսկ ներբողել կամ կշտամբել են Աշտարակեցուն։ Նրա ստույգ տեղը արևելահայերի կեանքային զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ, հայ բուրժուական պատմագրությունը, բացառությամբ Օրմանյանի, չկարողացավ ճիշտ հասկանալ ու մեկնաբանել։]

153 Տե՛ս Գ. Ախվերդյան, Նամակներ, Երևան, 1964, էջ 146։

154 Ստ. Մալխասյանց, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթնասունհինգամյա գոյության (1824—1899), էջ 9։

Այս տեսակետից ուշագրավ է հայ լիբերալ բուրժուական պատմագրութեան տաղանդավոր ներկայացուցիչ Լեոն (Առաքել Բաբախանյան—1860—1932)։ Չկա մեր ժողովրդի պատմության մեջ մի պրոբլեմ, որին մոտեցած և իր խոսքն առած չլինի հայ պատմագրութեան երախտավոր այդ մշակը։ Հարթ ու անարգել նրա գրիչը հեղեղել է հայոց պատմության ամենատարբեր սահմանները։ Նրա թողած ժառանգությունը ոչ միայն իր ժամանակին վճռական դեր կատարեց, այլև այսօր էլ պահպանում է իր դժալի մասի անուրանալի արժեքը։

Լեոյի գիտական ուղղությունը ռեալիզմն էր, համոզմունքը կամ դավանանքը՝ լիբերալիզմը։ Նրա բոլոր նախահեղափոխական գրվածքները չէին խոտորվում այն սկզբունքներից, որոնց պաշտպանն էր Գր. Արծրունու «Մշակը»։ Լեոյի համար մարդկային հասարակության մեջ չկան հանկարծակի թռիչքներ, այլ ամեն ինչ, այդ թվում և ազգերը՝ բարձրանում են աստիճաններով։ Լեոն իր գործունեությունն սկսեց անցյալ դարի վերջին տասնամյակներին, մի ժամանակաշրջանում, երբ սխուրտիկաշյի հիմքով հասակ առած կղերա-ֆեոդալական պատմագրությունը նահանջում էր իր դիրքերից՝ տեղի տալիս պահպանողական և լիբերալ-բուրժուական ուղղություններին։ Ընտրելով վերջին ուղղությունը, նա կարողացավ զգալիորեն առաջ անցնել ոչ միայն Մ. Էմինից ու Մ. Դարազաշյանից, Բ. Պատկանյանից ու Գր. Խալաթյանից, հայադեմո Մխիթարյաններից, այլև Ստ. Պալասանյանից և Ալ. Նրիցյանից։ Լեոն այնքան էր մարսում պատմական փաստաթղթերը, որ երբեմն չէր վկայակոչում դրանց, այլ պատմում էր իբրև գրող։ Այս առումով նա կարծեք թե անմահ Բաֆֆիի զաղափարակիցն էր, այն տարբերությամբ միայն, որ Լեոն Բաֆֆու մոտ շոմինանոր վիպականն էր, ապա Լեոյի մոտ իշխում էր պատմականը։

Թե՛ կենսագրական բնույթի և թե՛ պատմագիտական իր աշխատություններում Լեոն աշխատում էր հատկապես վեր հանել հայ աղատադրական պայքարի վերջին դարերի մանրամասները։

Մինչհնդափոխական շրջանի իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Հայկական տարեգրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի» և այլն), Լեոն շատ բարձր էր գնահատում հայերի ուսական օրինակալիքի և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

«Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն,— գրում էր նա,— այլև կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության միջև: Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր ու կուլտուրական առաջադիմությունից»¹⁵⁵: Դժվար չէ գտնել ծայրը այն կարմիր թելի, որ կտրում անցնում էր հայ լիբերալ-բուրժուական պատմագրության և հրապարակագրության բոլոր հյուսվածքների միջով՝ խաղաղ տնտեսական կյանք և կուլտուրական ոգորումն: Հայ լիբերալների այս մտայնությունը մխրճվում էր այն իրադրության մեջ, որ ստեղծվել էր արևելահայ կյանքում ուսական տիրապետության շնորհիվ: Հայ բնակչության աճը Անդրկովկասում քարձրացրել էր հայերի տեսակարար կշիռը: Հաստատված խաղաղությունը, կյանքի ու գույքի համար ստեղծված անվտանգությունը, ուղմական ու վարչական նրպատակներին ծառայող պետական շինարարություններն ու մատակարարումները բարձրացրել էր հայ բուրժուազիայի ակտիվությունը: Հայ լիբերալներին ուրախացնում էր, թե ինչպես ազգայնորեն համակենտրոնացվող արևելահայությունը զարգացնում էր իր կուլտուր-ազգային կյանքը, հասունանում բուրժուական դարգացման համապատասխան ազգային-կուլտուրական կյանքի ու գիտակցության համար: Ռուսաստանը, գրում էր Լեոն, վերջ դրեց Անդրկովկասում իշխած պարսկա-թուրքական անիշխանությանը, տեղական

155 Լեո, Ստեփանոս Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 3:

ժողովուրդներին ընձեռեց անձի, գույքի, տնտեսական ու կուլտուրական զարգացման հնարավորություն, նորանվաճ երկրամասի հայկական շրջանները Ռուսաստանի հետ միացան կանոնավոր և անխափան ճանապարհներով: Նոսր բնակչություն ունեցող, տնտեսապես հետամնաց, ֆեոդալական-հաճապետական կենցաղի մեջ սուղված հայկական շրջանները ներգրավվեցին ապրանքաշրջանառության և հետըհետև զարգացող բուրժուական հարաբերությունների ուղորտի մեջ: Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց արևելահայերի ազգային համախմբման համար: Լեռնի համար հայ ժողովրդի վերջին դարերի պատմության ուսումնասիրությունը չունի մի այլ վեհ կոչում, քան ժողովրդի ազգային ինքնագիտակցության կողմնորոշիչի դերը: Ստ. Նազարյանի և Գր. Արծրունու նման ևս կարծիքն ունեն, որ ռուսական կուլտուրան բարերար ներգործություն է ունեցել հայերի ազգային-կուլտուրական զարգացման վրա: Այս առումով ուշագրավ է Գր. Արծրունուն նվիրած նրա տողերը: «Կովկասը,—գրում էր Լեոն,—նրա (Գր. Արծրունու—Ն. Ս.) առջև ներկայանում էր մի այսպիսի երևույթ: Ռուսաց տիրապետությունը հաստատել է քաղաքական խաղաղություն. երկիրը այլևս պատերազմի դաշտ չէ և նրա մեջ ապրող ազգերը միայն մի նպատակ, մի ձգտում պիտի ունենան՝ գնալ առաջագիմող մարդկության ետևից, յուրացնել եվրոպական լուսավորությունը, ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով»¹⁵⁶. Այն, ինչ Լեոն վերագրում էր Գր. Արծրունուն, վերաբերվում էր և իրեն:

Վրաստանի՝ Ռուսաստանին միացման 100-ամյակի առթիվ գրած հոդվածում նա առավել ուշիւնք ձևով երևան բերեց իր լիբերալիզմը: Ըստ Լեոնի, Ռուսաստանը ոչ թե օգուտի կամ շահի համար մտավ Վրաստան, այլ հանուն վրաց ժողովրդի «արդար» պաշտպանության, քանզի ինքը՝ Ալեքսանդր Առա-

¹⁵⁶ Լեո, Գրիգոր Արծրունի, հտ. երկրորդ, Թիֆլիս, 1903, էջ 248—249:

շինը «անարդար» բան էր «համարում ուրիշ երկիր յուրացնելը»¹⁵⁷։ Նա մեծ գոհունակությամբ էր խոսում Ալեքսանդր Սուաջին կայսրի 1801 թվականի սեպտեմբերի 12-ի հրովարտակի մասին։ «Կովկասը շատ տիրապետողներ էր տեսել,— գրում էր իդեալիստ հեղինակը Վրաստանի միացման առթիվ,—բայց նրանցից ոչ ոք այսպիսի խոսքեր չէր արտասանել։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ հաստատված էր արյունի, հափշտակությունների իրականությունը։ Տասնյակ դարերի ընթացքում այստեղ Ասիան էր բռնացած։ Ռուսաց կայսրի այս խոսքերը բոլորովին նոր էին, դեռ չլսված այս դժբախտ ու արնաքամ կողմերում... Եվ նրանք միանգամից կերպարանափոխեցին ասիական խեղճ ու խավար միջավայրի հազարամյա ճակատագիրը։

Եվ ազգաբնակչությանը մնում էր թոթափել հնություն շղթաները, գնալ առաջադիմող ազգերի և հանրամարդկային իդեալների ետևից և այսպես գտնել իր երջանկությունը»¹⁵⁸։

Հարկավ, շատ ավելի լավ կլիներ, եթե իրականային հայ ազգային-քաղաքական ակնկալությունները, բայց ստեղծված նոր կացություն պայմաններում՝ «Աղատվել պարսկական բարբարոս ռեժիմից առանց նույնիսկ պայմանների,— գրում էր նա,—այդ էլ հավասար չափով փափագելի էր հայության համար»¹⁵⁹, քանզի Ռուսաստանը «հրավիրում էր իր նոր հպատակներին խաղաղ ու հանգիստ զբաղվել կրթության, առաջադիմության և բարոյական վերածնության նըստատող գործերով»¹⁶⁰։

Լեոն այնքան էր գունազարդում ռուսական տիրապետությունը և նրա առաջ բերած հետևանքները, որ Անդրկովկասը միացնելուց հետո այնտեղ ռուսական պետական օրենք-

157 Տե՛ս «Մուրճ», 1901, № 2։

158 Ան, Ստեփանոս Նազարյանց, հտ. առաջին, Թիֆլիս, 1907, էջ 2—3։

159 Ան, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 88։

160 «Մշակ», 1900, № 92։

ներ մտցնելու և վարչութիւն կազմակերպելու ուղղութեամբ՝ ցարիզմի ձեռնարկած հարկաւ առաջադիմական միջոցառումների կողքին, նույնքան կարեւորութիւն էր տալիս նիկոլայ Առաջինի շնորհած՝ 1836 թվականի մարտի 11-ի «Հայ-լուսավորչական հովատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրութեանը» («Պոլոժենիև»)։ «Ծիշտ է,— գրում էր Լեոն,— պոլոժենիևն միմիայն լուսավորչական հայոց եկեղեցուն էր վերաբերում և միմիայն զուտ եկեղեցական հարցեր էր շոշափում, բայց և այնպէս, եթէ ի նկատի առնենք հայ եկեղեցու կազմակերպութիւնը, նրա ոգին, դա միաժամանակ ժողովրդական օրենք էր, որ ահագին ազդեցութիւն ունեցավ մեր պատմական ճակատագրի վրա, սկսած իր գործադրութեան ժամանակից, շուտ տվեց, կարելի է ասել, մեր պատմութեան անիվը»¹⁶¹։

Ըստ Լեոնի «Պոլոժենիևով» հայ եկեղեցին վերստին կենդանութիւն էր ստանում, պետական իրավական կառուցվածքի մեջ զրափում ուրույն տեղ՝ որոշ իրավունքներով, պարտականութիւններով, սեփականութիւն ունենալու արտոնութիւններով, եթէ ոչ մեծ խոստումներով ու փայլուն հեռանկարներով, ապա գոնե՝ մշակութային գործ կատարելու և առաջադիմելու համեստ հնարավորութիւններով։ «Պոլոժենիևն» հայ եկեղեցին դնում էր «թագաւոր կայսեր ամենաողորմած հովանավորութեան տակ»։ Հայ հոգևորականութիւնը եկեղեցական-դավանական հարցերում ենթարկվում էր հայ եկեղեցու իշխանութեանը։ Նա ազատ էր մարմնական պատժից, հարկերից ու տուրքերից։ Դրական զնահատելով «Պոլոժենիևի» նշանակութիւնը, Լեոն ոչինչ չասաց այն մասին, թէ ինչպէս «հայ եկեղեցու ավանդական սովորութիւնները պահպանելու ձգտումով» այս փաստաթուղթը շրջանցում էր նրա հնամենի ընտրական սկզբունքը, երբ իր հովվածներին մեկում գրում էր, թէ «թեմական առաջնորդները նշանակում է թագաւոր կայսրը հայ դավանութեան հոգևո-

161 Աս. Ստեփանոս Նաղարայնց, հտ. առաջին, Թիֆլիս, 1902, էջ 2—3։

րական աստիճանավորներին: Նրանք նշանակվում են և արձակվում բարձրագույն հրամանով»:

Հայտնի է նաև, որ «Պոլոժենիեն» իրավունք էր տալիս կուսակրոն հոգևորականներին՝ կտակել իրենց ունեցածը ըստ իրենց կամքի, մինչդեռ ըստ հնօրյա սովորություն՝ վախճանված կուսակրոնի գույքն անցնում էր եկեղեցուն: Ահա այն թերությունները, որոնց մասին հնդկահայերը բողոք ներկայացրին ցարական կառավարությանը: Անդրկովկասում ցարիզմի բոլոր ձեռնարկները դրվատող պատմաբանը շրջանցում էր այս ամենը: Իր և ոչ մի աշխատության մեջ նա այնպես էլ չբացատրեց, թե ինչպե՞ս և ի՞նչ հարցում «Պոլոժենիեն» շրջեց հայոց պատմության անիվը: Դա, ըստ էության, մի փաստաթուղթ էր, որով ցարիզմը կամենում էր սահմանափակել պետականությունից զուրկ հայ ժողովրդի քաղաքական հարցերի տնօրեն՝ եկեղեցու իրավունքները: Եթե ցարիզմի արտաքին քաղաքականությունը պահանջում էր իր հետ ունենալ հայերի համակրանքը, ապա ներքին քաղաքականությունը խուսափում էր երկրի սահմաններում, թեկուզ և կրոնական, ուժեղ միավորներ ստեղծելուց: Ցարիզմի այդ քաղաքականությունը հետամուտ էր մի սկզբունքի՝ մեծապետական սեղմումներով սպանել զպրոցական-մշակութային ինքնավարությունները կամ հրել նրանց դեպի ռուսացում:

Հայ ժողովրդի կրոնական ու մշակութային-կրթական հաստատությունների նկատմամբ ցարիզմի հալածական քաղաքականությունը ավելի ցցուն դարձավ ՏՕ-ական թվականներից սկսած և մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվեց միջև գրեթե նրա տապալումը: Ասում ենք «գրեթե», որովհետև ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հարվածների տակ այն փոքր-ինչ փոխեց իր թափը, ձևն ու ուղղությունը: Լեոն շանդրաբժավ պատմության առջև որեւէ արդարացում չունեցող ցարիզմի այդ քաղաքականությանը, մանավանդ, որ լիբերալ պատմաբանը, իր ուսուցիչներ՝ Ս. Նաղարյանի և Գր. Արծրունու հետևելով, բազում առիթներով գրել էր, թե ռուսաց

ֆայսրության սահմաններում դժվար թե գտնվեր մի ժողովուրդ, որն ավելի հավատարիմ գտնվեր դեպի ցարի գահը, որքան հայ ժողովուրդը:

Լեոն շատ մեծ կարևորություն էր տալիս դեպի Անդրկովկաս 140 հազար պարսկահայերի և արևմտահայերի գաղթին: «Երկու պատերազմներին հաջորդած երկու գաղթականությունները,—գրում էր նա,—փոխում էին հայերի ազգաբնակչական հանգամանքները: Նրանք ամուր շեշտված ազգագրական միապաղաղության և զանգվածային հոծության կերպարանք էին տալիս Հայաստանի այն մասին, որ զետեղված էր Անդրկովկասում և անվանվում էր Պարսկահայաստան: Այժմ այդ անունն իսկապես պատմական ավանդություն էր դառնում և տեղի էր տալիս ռուսական Հայաստան անվան, որ դառնում էր Ռուսաստանում սպորոզ ամբողջ հայության, ամբողջ ռուսահայ հատվածի բարոյական և քաղաքական հենարանը: Պարսկահայ և թուրքահայ գաղթականություններն ունեցան իրենց խոշոր հետևանքները դրական և բացասական կողմից»¹⁶²: Ներգաղթով ստվարանում էր հայ հայրենիքի բնօրրան Արարատյան աշխարհը, շենանում կովկասահայ գյուղերն ու քաղաքները, բայց դրանով առավել խորացվում և անջրպետվում էր հայ ժողովրդի «առանց այն էլ խիստ շեշտված հատվածականությունը»¹⁶³:

Ռուսաստան փոխադրված գաղթական հայերի տնտեսական դժվարությունների ու զրկանքների մասին պատմող բազում փաստաթղթեր կային պատմաբանի տրամադրության տակ: «...Բարի էր մեզ ծառայել օսմանցիներին,—կարդում ենք կաթողիկոսին և Ն. Աշտարակեցուն հղած՝ գաղթական հայերի բաղմամբիւլ դիմումներից մեկում,—քան այսպիսի ճորտական գրություն մեջ ընկնելը»¹⁶⁴: Ավելին, Լեոյին հայտնի էին 1829—1830 թթ. սահմանն անցնելու, գաղթա-

162 ՀՄՄՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ֆոնդ 1, ցուցակ 1, էջ 171:

163 Նույն տեղում:

164 Նույն տեղում, գործ 27:

կաններն հետագայում շարժման հարյուրավոր փաստեր: Սակայն դրանք չկարողացան ճնշել պատմաբանին, երբ վերջինս արժեքավորում էր զանգվածային տունդարձի ամբողջական երևույթը: Դրա շնորհիվ էր, ասում էր Լեոն, որ ավերված ու դատարկված երկիրը սկսեց արագորեն շինտնալ, սկսեց մեր ժողովրդի դանդաղ, բայց հաստատուն դարգացումը: Լեոն ճիշտ այն տեսակետն ուներ, որ ուսական տիրապետությունը բարեբար ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի տնտեսական զարգացման վրա: Հայերը պետք է շնորհակալ լինեն Ռուսաստանին թեկուզ այն բանի համար, որ այն «թուրքական կամ պարսկական նվաճողությունը չէր, որին հայտնի էր միայն մի հատ տնտեսական սկզբունք՝ թալանը, առանց շինարարական մեծ հոգսերի: Ցարական իշխանությունը բերում էր արևելքի բազմատանջ ժողովուրդներին կյանքի և դույքի ասպահովություն և խրախուսում էր, որ նրա հովանու տակ երկիրն իր համար մթերե հարստություններ: Նոր տնտեսական խոշոր հանգամանքն այն էր, որ Անդրկովկասը դառնում էր բավական ընդարձակ շուկա Ռուսաստանի արդյունաբերության համար»¹⁶⁵:

Միշտ չէ, սակայն, որ պատմաբանը հավատարիմ մնաց տակավին 80-ական թվականներին իր իսկ կողմից առաջ քաշած այն նշանաբանին, թե պատմաբանը սբետք է ճանաչի ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը¹⁶⁶: Հետագայում, հետհոկտեմբերյան շրջանի իր մի շարք ստեղծագործություններում, նա չկարողացավ օբյեկտիվորեն արտացոլել հայ ազատագրական պայքարի առանձին կողմերն ու առանձնահատկությունները: 1920—1930-ական թվականներին սովետական պատմագրության ավագ սերնդի տաղանդավոր ներկայացուցիչ Մ. Պոկրովսկու դրպրոցի որոշակի ազդեցության ներքո՝ Լեոյի մտածողության սահմանները, հատկապես հայ-ռուսական հարաբերություն-

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 217—218.

¹⁶⁶ Տե՛ս «Փորձ», 1883, № 19, էջ 118

ների քաղաքական հետևանքների արժեքավորման հարցում, երևույթների ու անցքերի գնահատման բուրժուական օբյեկտիվիզմից հեռացան և ավելի մերձեցան սուբյեկտիվ-իդեալիստական պատմահայեցողությանը: 1919—1920 թվականներին գրած «Հայոց պատմության» 3-րդ հատորում, հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի մասին Երևանի համալսարանում կարդացած դասախոսություններում, «Անցյալից», «Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը», «Խոջայական կապիտալ» և այլ աշխատություններում Լեոն բացասական վերաբերմունք էր հանդես բերում դեպի հայերի ռուսական օրինետացիան, հայ ազատագրական շարժումն ու նրա գործիչները:

Գտնելով, որ ցարական ռեժիմի պայմաններում «անկարելի էր պատշաճավոր խորությամբ ու խստությամբ քննադատորեն վերաբերվել դեպքերին ու գործիչներին» և որ միայն սովետական կարգերի ժամանակ է հնարավոր «անաչառ գիտական-քննադատական վերլուծումների» ենթարկել պատմությունը և այդ ճանապարհով հասնել «իսկապես թրդարև և ճշմարիտ խոսքի»¹⁶⁷, Լեոն քննադատության տակ առավ ամենից առաջ Կ. Նվյանին, որն, ըստ նրա «խնամքով» թաքցրել ու ոսկեղօծել է «ցարական և հայ կղերական քաղաքականության մեղքերը»¹⁶⁸: Հարկավ, Լեոն արդարացի էր մերժում ցարիզմին «ազատագրական միսիա» վերագրող ռուս պաշտոնական պատմագրության և վերջինիս կցան հղած Կ. Նվյանի ընթացքը, մի ընթացք, որ գերազնադատում էր քրիստոնյաներին անհավատների լծից ազատագրելու ցարական խոստումների արժեքը, սքողում ցարական առաջխաղացման բուն նպատակը:

Լեոն մեղադրում էր ցարիզմի ջատագովին այն բանի համար, որ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ մտավորականության հիմնահայացքների ստուգատեսի ու քննադատական

¹⁶⁷ Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, պրակ առաջին, Երևան, 1926, էջ 130:

¹⁶⁸ Նույն տեղում:

գրոհի պայմաններում, նա չզգաց այն կսկիծն ու արցունքները, որ անցյալ դարի 20-ական թվականների վերջում ուղեկցում էին հայ ղազվածների խինդ ու ծիծաղին:

Ճիշտ դիմակայելով Կ. Նզյանին, Լեոն սխալվում էր սակայն, երբ բացարձակ քար էր նետում Ռուսաստանին՝ շղատորոշելով Անդրկովկասը նվաճող ճորտատերերի և վաճառականության շահերի պաշտպան ցարիզմը՝ նույն ցարիզմի կողմից ստրկացված ռուս ժողովրդից: Ռուսական ցարիզմին ու նրա բյուրոկրատիային մեղադրելով հայերի քաղաքական ակնկալությունների կործանման մեջ, Լեոն ռուս ցարերի արտաքին քաղաքական խարդավանքներին աշխատում էր մեղսակից դարձնել նաև հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց թվում և Հովսեփ Արղունյանին ու Ն. Աշտարակեցուն: Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյանի մասին Նզյանի այն տողերը, թե «նա հաստատեց յուր ամբողջ հոտի գիտակցության մեջ այն դադափարը, թե հայ ազգի ուղիղ հասկացած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչմանն Արևելքում...»¹⁶⁹, Լեոն հայտաբարեց «ստրկային հպատակություն»¹⁷⁰: Նա սխալմամբ կարծում էր, թե հայ ազատագրական շարժման անցանկալի հետևանքները պետք է որոնել այն քանում, որ ռուսական «խարդախ» քաղաքականությունը ընդառաջում էր հայ կղերական «ստրկամիտ» դիվանագիտությունը:

«Դեռ հյուսիսի գործը չվերջացրած,—գրում էր նա,— ռուսական իմպերիալիզմը երեսը դարձնում էր դեպի հարավ: Որպեսզի դեմ առ դեմ հանդիպի դեպի իրեն եկող հայ կղերական դիվանագիտության:

Այս հանդիպումը մի պատահականություն չէր, անցողական մի երևույթ: Այս հաստատ հիմնավորված սկզբնավորություն էր դարավոր մի անփոփոխության, որ պիտի

¹⁶⁹ «Լույս», 1904, № 6, էջ 42:

¹⁷⁰ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, պրակ առաջին, էջ 162:

կլաններ հայ ժողովրդի կյանքն ամբողջովին, մինչև որ վերջանար 1915—1920-ի կատաստրոֆայով»¹⁷¹։ Լեոն «հլու հպատակ», «կույր գործիք», «ցարապաշտ» բառերով էր պիտակավորում հայ ազատագրական շարժման հրախտավորներին։ Ըստ նրա Ն. Աշտարակեցին «ամենքից ճանաչված և դնահատված մի լրտեսապետ էր, որ ամեն տեղից հավաքում էր տեղեկություններ և հայտնում էր Կովկասյան գլխավոր հրամանատարին»¹⁷²։

Կյանքի վերջին շրջանում Լեոյի հայտնած բացասական բոլոր արտահայտությունների էությունը կարելի է բանաձևել այսպես՝ ցարիզմը չկատարեց հայերին տված բազում իր խոստումները։ Մերկացումների առարկան և հարվածների ենթական Լեոյի մոտ ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն էր՝ վերջինիս երկդիմի քաղաքականությունը, սակայն Լեոն ավելի շատ մեղադրում, քան բացատրում ու բացահայտում էր իր մեղադրանքների հիմքերն ու պատճառները։

Սակայն, Լեոն ինչքան ակոսեր էկլեկտիկ մտածողությամբ սահմանները և սաչք փակեր պատմական իրողությունների ուղև ու խտացներ ցարիզմի «խարդախ» քաղաքականության դույները՝ հարկադրված էր խոստանալու, որ «եսամոլ ու շահամոլ» ռուսական նվաճողականությունը այնուամենայնիվ «նման չէր նախընթացներին դեթ նրանով, որ անապատի ամալություն չէր բերում երկրներին և կոտորած ու ավերում՝ նրա բնակիչներին»։ Այս նշանակում է, որ Լեոն շարունակում էր ունենալ այն խոր գիտակցությունը, որ նվաճելով Մերձավոր Արևելքը, Ռուսաստանը նրան ենթարկում էր իր ցարական ծանր ռեժիմին, բայց նվաճած երկրները ակամա ներգրավում Ռուսաստանի հզոր շարժումների մեջ՝ հնարավորություն տալիս հաղորդակից դառնալու հվրոպական մշակույթին¹⁷³։ Հարկ է մանավանդ նշել գոհունակությամբ, որ

171 Լեո, Խոչայական կապիտալ, Նրևան, 1934, էջ 218։

172 Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, պրակ երկրորդ, Նրեվան, 1927, էջ 126։

173 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մասն առաջին, էջ 162։

հայ մշակույթի այդ մեծ երախտալորը իր կյանքի վերջին շրջանում մեկընդմիշտ կտնդանց սովետական կարգերի սլաշտպանություն դիրքերում:

Իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ Լեոն բարձր գնահատեց հայ հայրենիքի բնօրրանում սովետական կարգերի հաղթանակը ոչ միայն այն տեսակետից, որ այն ժողովրդին բերեց սոցիալական ազատագրություն, այլև այն տեսակետից, որ «իսպառ ոչնչանալու վտանգը կախված էր և արևելահայության վզից, եթե Անդրկովկասը խորհրդային իշխանության տակ չմտներ և նրա Կարմիր բանակը չգար մեր երկիրը՝ ազգերի մեջ խաղաղություն և հաշտություն հաստատելու համար»¹⁷⁴:

Տակավին 30-ական թվականներին Լեոյին դիմակայող Երվանդ Շահազիզը գրում էր, որ «Ներսես Աշտարակեցու և զրա բազմաթիվ համախոհների և գործակիցների երազներն հօգս են ցնդել և անթիվ, անհամար հայ նահատակների արյունը ումպետս թափվել»:¹⁷⁵ Նշանավոր բանասերը անվերապահորեն մերժում էր Լեոյի փնչպես նախասովետական շրջանի ցարիզմի անվերապահ ներբողը, այնպես էլ կյանքի վերջին տարիների թունոտ պարսավանքը, գտնելով, որ երկու դեպքում էլ բացակայում է պատմականությունն ու գիտական դետերմինիզմը: Երվանդ Շահազիզը ցարիզմի՝ հայ ժողովրդին հասցրած վնասից զատ, առավել բաժին էր հանում ռուսական տիրապետության բերած դրական հետևանքներին, քանզի հայերը «...մեծամեծ նյութական և բարոյական նեղություններ և զրկանքներ կրելով հանդերձ ռուսների հրեհից,—գրում էր նա,—մի բռնապետական ռեժիմը փոխելով մյուսին, գոհ են եղել, որ համեմատաբար, գոնե, մի որոշ չափով հանգստություն են գտել և վայելել անձի և գույքի ա-

¹⁷⁴ Լեո, Թուրքական հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Ա, Փարիզ, 1934, էջ 5:

¹⁷⁵ Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 232:

պահովութիւնն ուստական նորահաստատ իշխանութեան ներ-
քո»¹⁷⁶;

1920—1930-ական թվականներին Արեւելյան Հայաս-
տանի Ռուսաստանին միացման հարցի շուրջը ստեղծված
սովետահայ պատմագիտական գրականութեան մեջ հիմնա-
վորվում էր այն տեսակետը, որ Անգրկովկասը և Հայաս-
տանը միացվելուց հետո ցարիզմը նորանվաճ այդ երկրա-
մասերը բերեց Ֆեոդալա-ճորտատիրական սխտեմից բխող
որոշ անխուսափելի շարիքներ, բայց Ռուսաստանը նոր
կցված երկրամասերում կոնց ու կոփեց այն զննքերը, որոնք
վերացնելու էին ցարիզմի բերած շարիքները՝ ուղի հարթելով
այնտեղ ապրող ազգերի ազատ առաջադիմութեան համար¹⁷⁷.

Սովետահայ պատմագրութեանը գիտական-քննադատա-
կան ընդգծված վերաբերմունք էր հանդես բերում հեռավոր
ու մերձավոր անցյալի բազմաթիվ երևույթների հանդեպ:
Սակայն անցյալի հավասարակշռված և հանգիստ քննութեա-
նը շուտով փոխարինելու եկավ տագնապահարույց կամայա-
կանութիւնը: Անհատի պաշտամունքի իրադրութեան պայ-
մաններում քմահաճորեն սեպտվում կամ նսեմացվում էին
հայ ժողովրդի պատմութեան շատ դրվագներ: Նման պայ-
մաններում, եթե Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին
միացման պրոբլեմի լուսաբանման գործում սովետահայ
պատմագրութեանը մի հայտնի չափով առաջընթաց տպ-
րեց, տարաբախտաբար նույն պատմագիտական գրականու-
թեան էջերից աննշան բաժին հանվեց ժամանակի ազատա-
գրական շարժման գործիչներին:

Գրեթե «արդելված գոտու» մեջ էր առնվել նաև Ն. Աշ-
տարակեցու քաղաքական թատերամուտի շրջանը: Հեղինակ-
ները նրա անունը կամ չէին հիշատակում, կամ հարեանցիո-
րեն ակնարկում էին, լավագույն դեպքում ցույց տալու հա-
մար, որ չեն ավերում պատմական իրականութիւնը:

176 Նույն տեղում, էջ 233:

177 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Արովյան, Երևան, 1933: Վ. Պարսամյան,
Ցարիզմի դադութային քաղաքականութիւնը Հայաստանում, Երևան, 1940 և
այլն:

Սովետահայ պատմագրության մեջ Ն. Աշտարակեցու գործունեության արժեքավորման ուղղությամբ ուշագրավ խոսք ասաց պրոֆ. Վ. Պարսամյանը իր «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» աշխատությունում: «Ն. Աշտարակեցու վերաբերմունքը դեպի Ռուսաստանը,—գրում է հեղինակը,— և առհասարակ նրա հերկարատե քաղաքական գործունեությունը պատմական տարբեր շրջաններում տարբեր արտահայտություն է ունեցել: Ուստի, անհրաժեշտ է պատմական կոնկրետ մոտեցում ունենալ նրա գործունեությանը, քանի որ միայն այդ նախապարհով կարելի է ճիշտ կերպով գնահատել այն, ցույց տալ նրա դրական ու բացասական կողմերը»¹⁷⁸: Սա միանգամայն ճիշտ տեսակետ է, սակայն հայ-ռուսական հարաբերությունների պրոբլեմով դբադվող սովետահայ պատմաբանները, ցավոք, առանձին պատմա-քննական հետազոտության նյութ չդարձրին ազգային-քաղաքական ուրույն հայացքների ու ձգտումների տեր այդ գործչի հակասական գործունեությունը:

Ներսեսի հերկարատե քաղաքական գործունեության գնահատման հարցում առավել գիտական է այն մերձեցումը, որ երևան է բերում «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության հեղինակը: Գտնելով, որ առանց 19-րդ դարի առաջին կեսի անդրկովկասյան իրականության սոցիալ-քաղաքական կյանքի շատ երևույթների բացահայտման, պատմական բաղմամբով հանգուցյներ ու զանազան շահախնդրական ծալքեր պարզելու անհնար է ճիշտ արժեքավորել ժամանակի գործիչներին, Ն. Աշտարակեցու քաղաքական գործունեությունը գնահատելիս, Աշ. Հովհաննիսյանին չհրապուրեցին ոչ մինչսովետական պատմագրության մեջ Ներսեսի կենսագրության վիպականացված ընթացքը, ոչ էլ սովետահայ պատմագրության մեջ հայտնված մի քանի ընդհանուր դրույթներ: Ըստ նրա, գիտական պատմագրությունը չպիտի

¹⁷⁸ Վ. Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 11:

տւրանա ինչպես մահմեդական լծից հայրենիքի ազատագրման գործում Աշտարակեցու «վաղեմի ծառայությունները», այնպես էլ Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո նրա «քաղաքականութեան կղերա-ֆեոդալական նեղմտությունն ու սահմանափակությունը»¹⁷⁹:

Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման ու նրա մղած ազատագրական պայքարի, ժամանակաշրջանի դասակարգային կոնտրաստների, հասարակաշերտերի ու հասարակական հոսանքների հոգեբանության մարքսիստական վերլուծման հետնախորքի վրա է հեղինակը առաջարկում Ն. Աշտարակեցու գործունեությունը ճիշտ հասկանալու բանալին:

Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմին բաղում առիթներով անդրադարձան նաև 20-րդ դարի առաջին քսանամյակի հայ հասարակական-քաղաքական մտքի նաև այլ ներկայացուցիչներ: Այդ մի պատմաշրջան էր, երբ առավել, քան նախորդ պատմաշրջաններում, բյուրեղացել էր այն գիտակցությունը, որ Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացմամբ հայ ժողովուրդը չազատագրվեց և չթոթափեց օտարատիրության լուծը, այլ շարունակեց ենթարկվել ցարիզմի ազգային ու գաղութային դաժան շահագործման ու հարստահարման քաղաքականությանը: Հասարակական-քաղաքական մտքի ամենատարբեր դավանանքի տեր մարդկանց ճնշող մասի համար գաղտնիք չէր և այն, որ Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության համեմատությամբ ռուսականը հանդուրժելի և առաջընթաց քայլափոխ էր: Մեր կարծիքով, հենց այդ էլ գլխավոր այն պատճառներից մեկն էր, եթե ոչ՝ միակը, որ արևելահայ բուրժուազիան և նրա մտավոր սպասարկուները «համադգային» պահանջներ չէին առաջադրում Ռուսաստանին: «Թուրքահայ դատի գոյությունը», — ասում էին նրանք, — «Ճանկաստանում ավելի քան օր-

179 Աշ. Հովնանիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 42—44: Տե՛ս նաև նույն հեղինակի հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսի» 1965 թ. № 4-ում:

հասական, կրիտիկական է» գոյություն ունեցող «հայաջինջ ունեցող շնորհիվ», իսկ Կովկասում հայն «ազատ է հիշյալ վտանգից»¹⁸⁰։ Միայն դա բավական էր, որպեսզի Բ. Աղասարյանը հայտարարեր, թե արևելահայերը պիտի հարենք կազմակերպեն կուսակցությունը և Ռուսաստանում նրա գործունեության հետ լծորդեն ազգի բախտը¹⁸¹։

Դասակարգային հարաբերությունների բյուրեղացման, բուրժուազիայի առանձին թևերի միջև եղած նախկին տարբերությունների համահարթման այդ պահին Բ. Աղասարյանի մտայնությունից քիչ էր խոտորվում հայ լիբերալիզմի քաղաքական ուղեգիծը։ Գոհ ցարիզմի ընձեռած բարիքներից կամ նրանից մասնակի բարեշտկումներ հայցող հայ լիբերալիզմի սակավապետությամբ՝ նրա համախոհները անտարբեր չէին անցնում Ռուսաստանի հետ Վրաստանի «կամավոր» միացման 100-ամյակի հանդիսավոր տոնակատարության կողքով։ Վրաց ժողովրդի պետականության կորստյան դարեկիցին ծավալուն մենագրություններ նրանք չնվիրեցին հարկավ, բայց մամուլում հրապարակած մի շարք հոգևածներում, մի ավելորդ անգամ, ակնբախ դարձրին իրենց ազգային-քաղաքական մտածողության վազքի սահմանափակությունը։

Իր տեղում, նշեցինք այդ անցքին Լեոյի տված գնահատականը։ Նույն ոգով էր արտահայտվում այդ հարցում նաև ինքզինքը «անկախական» հորջորջող Լևոն Սարգսյանը։ Ալեքսանդր Առաջինի 1801 թվականի սեպտեմբերի 12-ի հրովարտակի՝ «Հիմնել Վրաստանում կառավարություն, որ կարողանա հաստատել անձի, գույքի ապահովություն և յուրաքանչյուրին տա օրենքի համահավասար պաշտպանություն» տողերի հեղինակի մեկնաբանությունն իսկ բավարար է որոշելու համար նրա դիրքավորման լիբերալ երանգը։ «Այդ

180 Բ. Աղասարյան, Ազգի փրկության մեծ խնդիրը, Ս. Պետերբուրգ, 1908, էջ 13—14։

181 Նույն տեղում, էջ 33։

խոսքերի մեջ ամփոփւած են այն հիմնական պայմանները,—գրում էր նա,—առանց որոնց չի կարող ոչ մի երկրում գոյութիւն ունենալ խաղաղ, կուլտուրական զարգացում: Այդ sine qua non պայմաններից զուրկ էր ոչ միայն Վրաստանը, այլև նրա բախտակից Հայաստանը, ինչպես և առհասարակ ասիական բռնութեան ենթարկւած ամեն մի երկիր: Այդ պայմաններից զուրկ են դեռևս այսօր մեր հարևան Թուրքիան և Պարսկաստանը և այդ է գլխավոր պատճառը դրանց ժողովուրդների թշվառութեան և հետամնացութեան»¹⁸²:

Հիւրավի, հեղինակի նշած երկրներում 20-րդ դարի արշալույսին տակաւին այնպիսի խաւար էր թազաւորում, որոնք սովորական էին հարյուր տարի առաջ Անդրկովկասում, երբ ստեղծարար աշխատանքով շարունակւած ժողովուրդը ենթակա էր ոչ միայն ավաղակաբարոց ցեղերի մշտական արշաւանքներին ու ասպատակութեաններին, այլև սեփական իշխանավորների ու պաշտոնյաների անսահման կամայականութեաններին: «Երկրի մեջ գոյութիւն չունեւ օրինաչափ, ուժեղ կենտրոնական իշխանութիւն,—շարունակում էր հոգւածագիրը,—վրաց թագաւորադնների և ֆեոդալների անվերջ երկպառակութեաններից օգտւում էին հարաւ-արևմուտքից՝ Թուրքիան, հարաւ-արևելքից՝ Պարսկաստանը, հյուսիսից՝ Կովկասի լեռնականները: Թե վրաց իշխանները և թե հայ մելիքները չունեին կանոնավոր սպառազինւած և վարժւած զորքեր և թշնամու բանակների առջև դուրս էին բերում վատ զինւած գյուղացիների և ճորտերի անկարգ խմբեր, որոնք անկարող էին ուժեղ դիմադրութիւն ցույց տալ շատ ավելի ստւար թշնամուն: Այս բոլորից հետո դժւար չէ տեսնել, որ Ռուսաստանի մուտքը Անդրկովկասում մի փրկութիւն էր մահմեդական բռնութեան ծովի մեջ խեղդւող երկու բուռ ժողովուրդների համար: Ահա թե ինչու Անդրկովկասի բուն աշխատող քրիստոնյա ժողովուրդները անհուն բերկրանքով էին

¹⁸² 1. Սարգսյան, Վրաստանի միացումը Ռուսաստանին, «Մուրճ», 1901, № 9, էջ 218—219:

դիմավորում ռուս զորքերին, և եթե կային Վրաստանի միացման հակառակողներ, դրանք զանազան խաներ էին և թագավորազներ և ոչ դրանց ճորտերը...»¹⁸³:

Լևոն Սարգսյանը մի զգալի չափով հաղթահարել էր ռուսական ցարիզմին «ազատագրական միսիա» վերագրող ռուս պաշտոնական պատմագրության¹⁸⁴ և 19-րդ դարի 80—90-ական թվականների հայ հեղինակների մոլորությունը: «Վրաց իշխաններից և հայ մելիքներից շատերը,—գրում էր նա,—գեռ մի քանի դար առաջ դիմումներ էին անում Ռուսաստանին և նրա պաշտպանությունը խնդրում: Սակայն մինչև որ Ռուսաստանի սահմանները չհասան Կովկասյան լեռների վրթխարի պատնեշին՝ ռուսաց ցարերը առանձին նշանակություն չէին տալիս այդ դիմումներին»¹⁸⁵: Լ. Սարգսյանին ու նրա համախոհներին չէր հրապուրում Վրաստանի և Ռուսական Հայաստանի քաղաքական հեռանդկարները: Նրանք բավարար ու գոհ էին, այնքանով, որքանով բովանդակ Կովկասն այդ պահին գտնվում էր «եվրոպական քաղաքակրթության շավղի վրա» և քանի զնում ավելի էր հեռանում «իր նախկին բախտակից ասիական երկրներից»¹⁸⁶: Իսկ վրացիների ու հայերի համար, ըստ հեղինակի, ռուսական տիրապետության ամենաշոշափելի օգուտն այն էր, որ «ամեն օր կյանքի, գույքի և պատվի համար դողացող

¹⁸³ Նույն տեղում:

¹⁸⁴ *Տե՛ս* П. Будков, Материалы для Новой истории Кавказа с 1722 по 1803 год, СПб., ч. I, II, 1869. В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. I, II, IV, СПб., 1885. «Утверждение русского владычества на Кавказе», Тифлис, 1904, «Памятник времен русского владычества на Кавказе», Тифлис, 1906. И. Шопен, Исторический памятник состояния армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1897; «Закавказье в 1803—1806 годах», СПб., 1866.

¹⁸⁵ «Մերձ», 1901, № 9, էջ 220:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 221:

Թշվառ վրացիներն ու հայը վերջապես հանգիստ շունչ քաշեցին հիբրոպականաձև կառավարության ներքե»¹⁸⁷։ Ավելին, հեղինակի կարծիքով, Վրաստանի համար մի մեծ կայսրության դավառ լինելն ավելի արժեք, քան թագավորություն կոչվելու ունայն փառքը, որովհետև նրա անցյալի գահակալները միայն վեհափառության սավերներ էին՝ նստած գահի վրա, մինչդեռ իրական տերերը լեզգիներն ու ուրիշ արշավողներն էին, որոնք բռնակոխ էին անում երկիրը և համշտակում պետության հեղինակությունը։ Ավելին, ցարական «մեծահոգի» հրովարտակի նրա մեկնաբանությունից ստացվում է այն տպավորությունը, որ միայն ռուսահպատակության ադերսանք էր լավել Վրաստանի լեռներից, մի երկիր, որի վավակները սովոր էին իրենց կյանքը ղոհաբերել հանուն հայրենիքի սլաշտպանության և անկախության։

Լ. Սարգսյանը չբացահայտեց ցարիզմի սոցիալ-դասակարգային էությունից բխող այն ուխտագրությունը, որ պատմության մեջ կոչվում է Գյորգեևսկի դաշնագիր, որով Վրաստանը ընդունում էր ռուսաց կայսրի հովանավորությունը, իսկ Ռուսաստանը պարտավորվում՝ «Վրաստանի թշնամիներին իր սեփական թշնամի համարել»։

Ի դեպ, ճիշտ է մինչհեղափոխական վրաց պատճագրության մեջ տեղ գրաված այն կարծիքը, ըստ որի, Վրաստանում ռուսական տիրապետությունը շատ ավելի դժվարություններ հաստատվեց, քան Անդրկովկասի մյուս շրջաններում։ Ակադեմիկոս Զավախիշվիլին այդ դժվարությունը բացահայտում էր նրանով, որ ռուսական տիրապետության տակ անցնելու ժամանակ Վրաստանում կային երեք կուսակցություններ և նրանց գործողությունները ոչ միայն համերաշխ չէին, այլև մեկը մյուսին թշնամական։ Եթե թագաժառանգ Դավթի կողմնակիցները փաստական իշխանությունը Ռուսաստանին հանձնելու պայմաններում էին ձգտում պահպանել վրացական թագը, ապա՝ ընդհակառակը Յուլյոնի կողմնակիցները՝ հետամուտ էին վերականգնել Նկատերինա Ներկորդի հետ

¹⁸⁷ Նույն տեղում։

վրաց Հերակլ թագավորի կնքած պայմանները, որի համա-
ձայն Ռուսաստանի խնամակալությունն ընդունած Վրաս-
տանը անկախ պիտի լիներ նաև ներքին գործերում: Եվ վեր-
ջապես, կար մի կուսակցություն, որ Վրաստանի անկախու-
թյան վերացման և Ռուսաստանին լիակատար միացման
կողմնակից էր: Վերջին այս խմբավորումը շնայած փոքրա-
թիվ էր, բայց ռուսական զորքի առկայությունը նրան
դարձնում էր առաջին երկուսի համար խիստ վտանգավոր:
Ամբողջ մինչհեղափոխական վրաց կյանքին յուրահատուկ
երևույթ էր այս: Եթե Վրաստանի անկախության կորստից
մեկ հարյուրամյակ հետո էլ վրաց համարձակախոս ազնվա-
կանությունը հուշագրերով հիշեցնում էր ցարիզմին իր մա-
տուցած վաղեմի ծառայությունները «հավատակից Ռուսաս-
տանին» Վրաստանի «կամավոր» միացման գործում և առա-
ջագրում մի շարք «համազգային պահանջներ», ապա հայ
իրականության տիրող դասակարգը՝ բուրժուազիան լծորդ-
ված իր ավագ պարտնյոր ռուսական բուրժուազիային և ըն-
դորինակելով նրան պահանջում էր միայն տնտեսական գոր-
ծունեության լայն հնարավորություններ և համապատաս-
խանորեն՝ դեմոկրատական որոշ ազատություններ¹⁸⁸:

Հատկանշական էր, որ հայկական եկեղեցու ավանդա-
կան իրավունքների ջերմ պաշտպան, պահպանողական հա-
յացքների տեր Օրմանյանն անգամ հայ եկեղեցական գույքե-
րի բռնագրավման օրհնքի դեմ բավարարվեց միայն իր կրա-
վորական բողոքարկումով:

Վրաստանի պատմական անցյալի մեծագույն իրադար-
ձությունն մամանօրինակ ընկալմամբ՝ հայ բուրժուազիայի
մտավախ ձայնատարները ջանում էին դիմակայել վրաց այն
հեղինակներին¹⁸⁹, որոնք շրջանցելով 18-րդ դարի վերջերին

188 Տե՛ս Գ. Մուրդյաև, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի
տարիներին, Երևան, 1964, էջ 91:

189 Տե՛ս Ի. Джавахов, Политическое и социальное движение в
Грузии в XIX в., СПб., 1906; Ի. Эристов-Шарвашидзе, Памятная за-
писка о нуждах грузинского народа, М., 1906 և այլն:

Վրաստանում ստեղծված իրադրությունը, դիմադարձ են կատարում դեպի Վրաստանի միջնադարյան անցյալը, երբ Թամար Թագուհու ղորքը ընդարձակում էր պետության սահմանները, ներկայացնում միացման նախօրեի վրաց թագավորությունը իրրև բարգավաճ ու բարեկեցիկ մի երկիր:

Մեր քաղաքական գործիչների սխալն այն էր, գրում էր վրաց համարձակախոս ազնվականության ձայնատարներից մեկը՝ Ն. էրիսթով-Շարվաշիձեն, որ երկար ժամանակ հարարերություններ ունենալով Ռուսաստանի հետ, չկարողացան լավ ճանաչել նրա պետական կազմակերպությունն ու վարչական ապարատը: Նրանք արտոնություններ ստանալու պայմանով էին իրենց հպատակությունն հայտնում Ռուսաստանին: Մինչդեռ Ռուսաստանը չէր կարող արտոնություններ տալ, որովհետև մի ուժեղ և միավորված կայսրություն անպայման հպատակություն և միմիայն միակցում կարող էր ընդունել¹⁹⁰: Հայ իրականության տիրապետող դասակարգը՝ բուրժուազիան, երկչոտ էր, նրան սպասարկող կամ հարող մտավորականությունը՝ նույնպես: Նա բավարարվում էր ռուսական տիրապետության ու Կովկասի նրա նախկին տեղապահների հասցեին օրհներգեր ձոնելով: «Բախտի բերմամբ,—գրում էր աղգային լիբերալ հրապարակագիր Լ. Սարգսյանը,—այդ կարևոր մոմենտում Կովկասի վարչական ղեկը գտնվում էր այնպիսի լուսավոր, մարդասեր և աշխարհաշեն անձանց ձեռքում, ինչպես էին Վորոնցովը և ասլա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը: Այդ երկու փոխարքայությունների ժամանակ սկսեց վերածնվել արևելյան բռնակալությունների օրոք ավերված ու ամայացած երկիրը: Ազգաբնակչությունը աճեց, տնտեսապես կյանքը կենդանացավ, քաղաքական կարգեր ներմուծվեցին մշտական խռովությունների և արյունահեղությունների երկրում: Դարեհի և Լանկ-թամուրների ժամանակներից սկսած բռնակալ սատրապների անսանձ քմահաճույքներին վարժված ասիացիները՝ սկսում

190 Տե՛ս Н. Эрстов-Шарвашидзе, նշված աշխ., էջ 12:

էին նոր-նոր դադափար կաղմել իսկական կուսակալների մասին»¹⁹¹։

Դժվար չէ տեսնել, որ Անդրկովկասում Ռուսաստանի կատարած առաջադիմական դերը և այստեղ ցարիզմի գաղութատիրութեան առաջադրած խնդիրները կենսագործող կուսակալների գործունեությունը և Սարգսյանը չէր պատրուշում միմյանցից։ Խորամուկ չլինելով հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի պատմական դարգացման օրինաչափությունների մեջ, նա փաստորեն մերժում էր հասարակական դարգացման առաջընթացի բուն գաղափարը, իսկ փոխարենը առաջարկում՝ խոսել միայն «տիրողների փոփոխության» մասին։

Հայերի ռուսական օրինատացիան և Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը հակադիտական ծայրակետից էին մեկնաբանում հայ դաշնակցական պատմագրության ներկայացուցիչներ է. Ակնունին և Մ. Վարանդյանը¹⁹²։ Հասարակական պրոգրեսի մասին սխալ ու միակողմանի հայացքը թույլ չտվին նրանց՝ տեսնելու գաղութատիրական Ռուսաստանի ընդերքում հաստնացող հեղափոխիչ այն ուժերը, որոնց հետ օբյեկտիվորեն իրենց բախտն էին կապում Անդրկովկասի ժողովուրդները։

Ռուսական տիրապետության դնահատման հարցում միանգամայն այլ ելակետ ունի Արշակ Չոպանյանը։ Ըստ նրա, պատմությունը չի կարող ոչ անտեսել ցարիզմի գաղութային քաղաքականության նպատակները և ոչ էլ թերագնահատել ռուսական տիրապետության առաջադիմական իրողությունը։ «Ռուսն է,—գրում էր Արշակ Չոպանյանը,—որ մեծ ու բարի պայքար է սկսել մահմեդական բռնապետության դեմ. ռուսի շնորհիվ է, որ փոքր ինչ հիլրոպական կյանք է մտել Ասիայի մի ահագին մասի մեջ. Ռուսն է, որ օսմանյան պե-

191 «Մուրճ», 1901, № 9, էջ 121։

192 Տե՛ս է. Ակնունի, Կովկասյան վերքեր, հտ. 1, Ժնև, 1903։

Մ. Վարդանյան, Հայկական շարժման նախապատմություն, հտ. 2, Ժնև, 1913։

տության լծի տակ հեծող քրիստոնյա ազգություններին ազատելու նշան տվեց և նրանց ազատության մեջ ամենից էական ճիգը կատարեց: Ռուսը, անշուշտ, իր շահի համար էր այդպես վարվում (որևէ ավերակական պետություն իր այս կամ այն շահի համար է, որ այդպիսի հարցերում զոհողություն է հանձն առնում), բայց ռուսի շահերը համաձայնում էին ընդհանուր քաղաքակրթության շահերի հետ: Ամբողջ աշխարհը օգտվել է Կովկասի՝ ռուսի ձեռքն անցնելուց, ինչպես և Հունաստանի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի ազատագրումից, ռուսական պատմության պարծանքն է այդ դերը, որ կատարել է ռուս ազգը, բարձր քաղաքակրթական մի դեր, որի հետ քաղաքատնտեսական արժանի չէ ավելի հզոր և ավելի ճոխ քաղաքակրթություն ներկայացնող գերման ազգը: Արդ, Անգլիան, միմիայն իր նյութական շահերի համար, արգելեց Ռուսին շարունակել այդ դերի կատարումը: Անգլիան հռչակեց, թե թուրքը ավելի օգտակար է քաղաքակրթության համար, քան Ռուսը, և Ղրիմի ղզվելի պատերազմը սարքեց, որ քրիստոնյա ազգերը թուրքի հետ ձեռք ձեռքի տված՝ Ռուսի դեմ պայքարեցին. 78-ին, Անգլիան դարձյալ իրենից կախված ամեն ինչ կատարեց Ռուսին հեռացնելու Բալկաններից և Հայաստանից, ջանաց նույնիսկ Բուլղարիայի ազատագրումն արգելել, և հաջողացրեց՝ Հայաստանը թուրքի թաթերի տակ պահել»¹⁹³:

Ա. Չոպանյանը տարանջատում էր ռուս ժողովրդի «ընդհանուր քաղաքակրթական» դերը՝ ցարիզմի զաղութային քաղաքականության առաջադրած խնդիրներից:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրոբլեմին անդրադարձել է նաև «սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կադմակերպության» («սպեցիֆիկներ») ղեկավարներից մեկը՝ Դավիթ Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան):

Եթե Ալ. Երիցյանը տրտնջում էր ռուսական կապիտալի բայքայիչ գործունեության հետևանքներից, ապա ուղիղ քա-

✓ 193 Ա. Չոպանյան, Ռուսիա և հայերը, «Անահիտ», 1906, թիվ 3—4—5, էջ 41:

սորդ դար ուշ գրող Դ. Անանունի համար նույն այդ կապիտալը Անդրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ կարևոր նշանակություն, քանի որ այն երկրի «արհեստի ու ձեռագործի» դեմ հրապարակ հանեց բուն Ռուսաստանի և արտասահմանի գործարանների մրցակցությունը: Եթե «պարսիկն ու օսմանցին կարող էին պատերազմել և կողոպտել», ապա կողոպուտն ու թալանը ռուսի համար սխտեմ չէր, ընդհակառակը՝ «Ռուսական տիրապետությունը 300 հազար հայերի համար բերում էր քաղաքական կյանքի նոր պայմաններ: Այլևս այդ 300 հազարանոց բազմությունը սկսում էր զարգանալ միևնույն հասարակական և քաղաքական կարգերի տակ, մի առավելություն, որ գոյություն չունեի հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բզկտող մանր-մունր իշխանությունների մեջ»¹⁹⁴:

Քննարկվող պրոբլեմի վերաբերյալ Դ. Անանունի վերոհիշյալ ճիշտ մտքերի կողքին՝ մենք նրա մոտ հանդիպում ենք նաև մի շարք սխալների, որոնք հանգում են հետևյալին:

Նախ՝ իրեն մատերիալիստ ու մարքսիստ համալուրդ Դ. Անանունը ընկնում էր վոլյունտարիզմի ոստայնը, երբ հայկական իշխանական տների անկման պատճառը բացատրում էր «զարգացած և ուժեղ քաղաքներին»¹⁹⁵ բացակայությամբ:

Երկրորդ՝ սքոլում կամ սեպցնում էր 19-րդ դարի առաջին երեսնամյակի հայ ժողովրդի պատմությունը, երբ գրում էր, թե լուսավորչալ Ռուսաստանի և ավատական-ցեղապետական Պարսկաստանի բախման մոմենտին հայությունը «գլխակորույս հոտ էր և չունեի որևէ առանձին նպատակ: Նա մուրացիկ էր և նրան փրկում էին»¹⁹⁶:

Ներքո՛րդ՝ իդեալիստական էր հեղինակի այն հարցադրումը, թե ռուսական տիրապետությունից հայերը առավել բարիքներ կստանային, եթե «քաղաքական նկատումներով գուրգուրված

¹⁹⁴ Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում, հտ. I, Բաքու, 1916, էջ 10:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 2:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 107—108:

հայ և թուրք բեկերից կուլտուրական արիստոկրատիա»¹⁹⁷ ըստեղծվեր:

Զորորդ՝ Անանունը դժգոհ էր, որ «Երկրի նոր տերը խորության ոգին չմերժեց: Թուրք բեկը և հայ մեկիքը ճանաչվեցին հավասար: Ճիշտ է, թուրք բեկությունն իր ուժի շնորհիվ և քաղաքական նկատումներով ավելի էր արժանանում ուշադրության և հարգանքի, սակայն հիմնական խնդիրներում իրահավասարության սկզբունքը չէր խախտվում»¹⁹⁸: Նա աղավակող հակասություն էր տեսնում՝ ցարիզմի հայերին տված երբեմնի խոստումների և 1830-ական թվականների իրականության միջև, մոռանալով, որ այդպես էր թելադրում նորեկ իշխանության սոցիալ-դասակարգային էությունն ու երկրամասի գաղութացման նրա միտումները:

Հինգերորդ՝ Դ. Անանունը «...ողբալով հայի բախտը, ...մոլորված ու տարակուսած լինելով հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, այնուամենայնիվ, հավատարիմ լինելով մանր ազգերի իդեոլոգների տրադիցիային... աշխատում է ամենից առաջ հավատացնել, որ հայ ազգը սեպարատիստական ձրգատումներ չունի, որ նա՝ հանձինս իր բոլոր հասարակական-քաղաքական հոսանքների՝ միանգամայն լույս ու հավատարիմ է եղել միշտ ռուս պետության վերաբերմամբ»¹⁹⁹:

Եվ վերջապես, վեցերորդ, շեշտը դնելով «հայության հավաքման» պրոցեսի ուսումնասիրության վրա՝ հեղինակը տրամադիր է շրջանցելու դասակարգային հակամարտության այն պրոցեսները, որոնք բռն ընթացք էին ստանում ռուսահայերի հասարակական զարգացման այդ էտապում և ազդեցության կնիք դնում նրանց մտքի պատմության վրա:

Անհրաժեշտ ենք համարում քննարկվող պրոբլեմի առընչությամբ մի քանի խոսք ասել նաև «պատմագետի դերում» հանդես եկած Վրթանես Փափազյանի մասին, որն իր ստեղծա-

197 Նույն տեղում, էջ 149:

198 Նույն տեղում, էջ 171:

199 Ստ. Շահումյան, Երկիր, հտ. 2, Երևան, 1957, էջ 376:

դործություններում արտահայտում էր քաղաքի ու գյուղի մանրբութեան և շերտերի դեմոկրատական տրամադրությունները:

Որքան ցասկոտ ու կրքոտ էր պարսկա-թուրքական բռնատիրական կարգերի նկատմամբ Վ. Փափազյանի քննադատությունը, նույնքան դրվատական ու բարյացակամ էին նրա խոսքերը՝ կովկասահայերի տնտեսական ու կուլտուրական զարգացումն ապահովող ռուսական տիրապետության հասցեին:

«Կովկասի մեծ մասը հայաբնակ նահանգների հետ ռուսաց ձեռքն անցնելուց հետո,—ասում էր նա,—վերջնականորեն, հայերը տնտեսապես սկսեցին կազդուրվել, տեղավորվել, երկրագործության ու վաճառականության նվիրել իրենց և դարմանել բոլոր կրած անցյալ դառն նեղությունները: Նյութական ապահովությունը շուտով ստեղծեց նաև կուլտուրական (կենսակրթական) կյանք:

Իրենց նպաստավոր դրություն շնորհիվ, ռուսահայերը շատ քիչ ժամանակում ավելի մեծ առաջադիմություն սկսեցին անել, քան թուրքահայ դեռևս մահմեդական լծի տակ սմբած՝ եղբայրները»²⁰⁰:

Հեղինակն իր երախտապարտությունն էր հայտնում Ռուսաստանին մատնավորապես այն քանի համար, որ նրա հովանու ներքո Արևելյան Հայաստանը դարձել էր հայ խոշոր վանականների համախմբման կենտրոնատեղին: Փափազյանը, այս տեսակետից, պարսկահայ ներգաղթից պակաս կարևորություն չէր տալիս և արևմտահայ գաղթականությանը, որի շնորհիվ «ընդամենը մեկ սերնդի ընթացքում» շենացել էին Կովկասի գյուղերն ու քաղաքները: «1830 թվին,— հարում էր նա այդ առթիվ,— էրզրումի Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ մահմեդական տիրապետությանից քրիստոնյա սկիստության հովանավորությանն էին դիմում մոտ 90 հազար հայեր ևս:

200 Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 321:

կարսից, էրզրումից և Բայազետից գաղթողներ էին դրանք, որ տեղավորվում էին Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում:

Ռուսական Հայաստանը շենանում էր, բաղմահայ դառնում և իր ուրույն կյանքը ունենում»²⁰¹: Արևելահայերի «ուրույն կյանքի» ամենահատկանշական կողմն այն էր, որ ժողովուրդը հնարավորություն ստացավ ազատ շունչ քաշել, օգտվել երկրի ապահովությունից ու տնտեսապես շենանալ: Ավիլին, բարեհաջող պայմանները լայնորեն բաց արին երկրի դռները «արդյունագործական ձեռնարկների, առևտրական երթևեկության, այլև Եվրոպայից և Ռուսաստանից եկող ճանապարհորդների առաջ»²⁰²:

Բարձր ղեհահատելով արևելահայ կյանքում ռուսական տիրապետության դրական հետևանքները, Վ. Փափաղյանը սխալվում էր սակայն, երբ տուրք էր տալիս ռուս ցարերի «քաջալերիչ ձեռնարկներին» և իդեալականացնում ցարական օրենքները: Նա հստակ պատկերացում չունեի հասարակության զարգացման հիմնական զսպանակներին՝ արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, դասավարդային պայքարի ու նման երևույթների մասին: Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի պատմության նրա ըմբռնումը իդեալիստական էր: Եվ դա էլ նկատի ունեի Ստ. Շահումյանը, երբ «Վ. Փափաղյանը պատմագետի դերում» իր աշխատության մեջ սուր քննադատության էր ենթարկում «Բաքվի հայոց կուլտուրական միության» հրատարակությամբ լույս տեսած «Դրվագներ հայոց պատմությունից» 9 բրոշյուրները, որի կազմողներից մեկն էլ Փափաղյանն էր:

Շահումյանը ցույց էր տալիս, որ պատմական այդ զբոլակները խեղաթյուրում են պատմության իսկական իրողությունները և անհիմն կերպով գովերգում «խմաստուն ու ժողովրդասեր» թագավորներին, իշխաններին ու հոգևորականներին:

201 Նույն տեղում, էջ 317:

202 Նույն տեղում, էջ 335:

րին ու ոչինչ չեն տալիս ընթերցողի մտքին: Մինչդեռ դեմոկրատ պատմագրողը պետք է ներկայացնի ժողովրդին, քանի որ պատմության ընթացքը պայմանավորողն ու որոշողը ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ ազդեկահույզ ու էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»²⁰³: Ժողովրդի պատմությունը ներկայացնել կարողանալու համար, Շահումյանը անհրաժեշտ էր համարում, որ «գրողն ունենա քիչ թե շատ լուրջ պատմական աշխարհայացք, պատմական տեսակետ, որի օգնությամբ նա կարող լինի քննադատորեն վերաբերվել իր նյութին և իր գրքովածքով կրթական ու զարգացուցիչ ազդեցություն ունենա ընթերցողի վրա»²⁰⁴:

Այսպիսով, հետևելով մեր շարադրանքին և առաջնորդող սկզբունք ընդունելով պատմաբանին ներկայացվող Ստ. Շահումյանի պահանջը, դժվար չէ դիտել, որ մինչհեղափոխական հայ հասարակական մտքի և պատմագրության ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը, մնալով իդեալիստական աշխարհայեցողության նեղ շրջանակներում, չկարողացան հաղթահարել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոբլեմի բարդությունը: Հարկավ, նրանցից ոմանք ազատագրվել էին ցարիզմին «ազատագրական» միսիա վերադրող անցյալի հեղինակների մոլորությունից, սակայն անհետևողականությունը, լիբերալ և պահպանողական մտածողությունը նման պայմաններում, անարգել դուռ էր բացում ելակետային և մեթոդոլոգիական սխալների առջև:

Հայ պատմա-հասարակական մտքի ներկայացուցիչները միապես չէին ընկալում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական իրողությունը: Վերջինիս նրանց մեկնաբանությունը ոչ միայն տարբեր էր, այլև հաճախ ուղ-

203 Ստ. Շահումյան, Երկեր, հտ. 2, էջ 215:

204 Նույն տեղում, էջ 200:

ղակի հակադիր: Նրանք, իբրև կանոն, ելնելով իրենց դասա-
կարգային նեղմտությունից, կամ խտացնում էին ցարիզմի
դադութային քաղաքականության գույները, կամ լոկ ներքո-
ղում ուս ցարերին, սրանց տեղապահների «աշխարհաշեն»
հրամաններն ու ձեռնարկները:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոբ-
լեմի դիտական և բաղմակողմանի ուսումնասիրությունը ըս-
կըսվեց սովետական պատմաբանների կողմից: Այս ուղղու-
թյամբ դդալի աշխատանք են կատարել ՀՍՍՀ ԳԱ ակադեմի-
կոսներ Աշ. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Աբ. Հովհան-
նիսյանը, Մ. Աղսյանը, Թլթակից-անդամ Վ. Ռշտունին, պրո-
ֆեսորներ Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը և ուրիշներ:

Սովետահայ պատմաբանները պատշաճորեն են դնա-
հատում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու
պրոբլեմի լուսաբանման, մասնավորապես պատմական շի-
նանյութի պատրաստման և որոշ օբյեկտիվ եզրահանգումներ
կատարելու ուղղությամբ, մինչհեղափոխական հայ պատմա-
հասարակական մտքի ներկայացուցիչների մի մասի ջանքե-
րը: Նրանք միաժամանակ աչք չեն փակում անհետեղակա-
նության, խեղաթյուրումների, գիտության մեջ ցարական-
պաշտոնական, նեղ-ազգային մտածողության շատ հայտա-
նիշեր պահպանելու նրանց ձգտման հանդեպ:

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի ամուր
դիրքերի մյուս կանգնած և հետեղական դիալեկտիկական մը-
տածողությամբ առաջնորդվող սովետահայ պատմագրությա-
նը միայն հաջողվեց արևելահայերի սոցիալ-տնտեսական և
հասարակական-քաղաքական զարգացման օրինաչափու-
թյունների բացահայտման ճանապարհով, ցույց տալ Արևել-
յան Հայաստանը Ռուսաստանին միացնելու շրջադարձային
փրողության պատմական նշանակությունը:

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

- Աբրահամ Միրզա 12, 31, 50, 56,
119, 120, 147, 155, 160
- Աբելյան Մ. 90
- Աբովյան Խ. 16, 17, 21, 23—25,
27, 32, 33, 40, 41, 75, 87—89,
91—96, 98—108, 110, 111
- Ալամդարյան Հ. 64, 65, 75, 76,
87, 105, 110
- Ալեքսանդր Ա. 51, 55, 119, 175,
176, 198, 199
- Ալեքսանդր (վրաց թագաժառանգ)
53, 179
- Ալիշան Ղ. 17
- Ախով Մ. 155
- Ախվերդյան Գ. 166, 195
- Ախունդով Մ. 162
- Ակնունի է. 217
- Աղաբեկյան Մ. 117—121, 123,
125, 132, 166, 177
- Աղա Մահմեդ խան 49, 148, 161
- Աղանյան Գյուլտ քահանա 124,
179, 180
- Աղայան Մ. 57, 224
- Աղայան Ղ. 134, 177, 193, 194
- Աղասարյան Բ. 211
- Ամիրխանյան Հ. 84—86
- Ալվազովսկի Գ. 175
- Անանուն Դավիթ (Տեր-Դանիել-
յան) 218—220
- Աշտարեկցի Ներսիս 40, 53, 58,
60—64, 66, 71—81, 84—87,
96, 103, 109, 118, 120, 141,
146, 157, 158, 168, 177—183,
185, 191—195, 202, 205—210
- Ավագյան Ս. 189
- Ավդալբեկյան Խ. 28
- Արասխանյան Ավ. 177, 193
- Արարատյան Ա. 116
- Արզանովներ 66
- Արծրունի Գր. 135—141, 186, 196,
198, 201
- Արղուժյան Կ. Երկայնաբազուկ 119
- Արղուժյան Հ. Երկայնաբազուկ
46, 64, 82, 169, 205
- Արղուժյան Մ. Երկայնաբազուկ 80
- Արփիարյան Ա. 151, 152
- Բագրատունի Կ. — տե՛ս Կարա-
պետ արքեպիսկոպոս Էրզրումցի
- Բալավատսկի 106
- Բասբեկիշ — տե՛ս Պասկեկիշ
- Բարատինսկի 73
- Բաքիխանով Աբրահամ Կուլի 162
- Բենկենդորֆ 86
- Բերդուժյան Պ. 103, 104
- Բյոռնե Լյուդվիգ 128
- Գալստյան Գ. 97
- Գարդան (գեներալ) 51, 52
- Գեղամյանց Եղ. 67, 68, 177,
182—184, 187—189
- Գլինկա Ս. 38, 155, 156

Գրիբոնդով Ալ. 16, 38, 80

Գրիգորյան Զ. 42, 224

Դանիել 46, 47, 170

Դանիել եպիսկոպոս 87

Դավիթով Դենիս 56

Դավիթ 46, 47

Դավիթ (վրաց թագաժառանգ) 214

Դավրիժեցի Աս. 27

Դարեհ 216

Դիրիշ 71, 154

Դիւրյան Վ. 81

Դուալա 41

Դուրբովին Ն. 29, 170

Եգյան 24, 155, 169—172, 204, 205

Եղիշ քահանա 69

Եկատերինա Երկրորդ 81, 214

Երեցյան Ալ. 29, 43, 59, 62, 63,

65, 67, 71, 72, 76, 77, 80, 81,

85, 155, 163—168, 171—175,

177—179, 196, 218

Երմոլով 55, 119

Եփրեմ կաթողիկոս 23, 24, 67, 68, 180

Ջամինյան Աբր. 71

Ջելինսկի Ս. 29

Էդով Գ. — տե՛ս Եգյան

Էմին Մ. 196

Էնդելս Ֆ. 18, 36, 37, 84, 120, 165, 169, 183, 184

Էրիսլով-Շարլաշիձե Ն. 215, 216

Բաղետս վարդապետ 182

Բամար թագուհի 216

Բաղեազյան Մ. 23, 30, 59, 87, 88, 96—98, 105, 107, 108,

110, 111

Բելլըր 124

Ինճիճյան Ղ. 27, 28, 147

Իվանենկո Վ. 29

Իռանիսյան Ա.—տե՛ս Հովհան-նիսյան Ար.

Լազարյան Խ. 86

Լազարյան Ղ. 62—64, 79—81, 87, 110, 146, 155, 189

Լազարյաններ 81, 90, 156, 177, 183

Լազարև—տե՛ս Լազարյան Ղ.

Լազարև Հ. 87

Լանկթամուրներ 216

Լաշինով Ն. 89

Լենին Վ. Ի. 62, 133, 134, 165

Լեո (Աուաբել Բարախանյան) 14, 20, 25, 60, 64, 196—207

Լուալ Ըոբերտ 25

Խաղեղանց Ա. 92

Խալաթյան Գր. 196

Խալիբյան Հ. 195

Խերմյան Հ. 186

Խուրով Գ. 66

Կանկրին 79

Կատրովներ 152

Կարապետ արքեպիսկոպոս էր-զրումցի 67—69, 77, 91, 92, 110, 221

Կարբեցի Հ. 109

Կարինյան Ա. 82, 89, 184

Կլումոշխանցի Մ. 92, 93

Կոստանտին Նիկողանիշ 66

Կրասովսկի 118

Կուչակ 29

Հախորյան Հ. 15, 16, 31,

Համբարյան Ա. 163

Համիտ 190, 191

Հայկ նահապետ 91

Հան 108
 Հասան բեկ Զարդարի 162
 Հասան խան 17
 Հարֆորդ Զոնա 51, 52, 54
 Հարսաճառուկեն 32
 Հերակլ Թաղավոր 53, 54, 215
 Հովհաննիսյան Ար. 49, 224
 Հովհաննիսյան Աշ. 4, 22, 31, 43,
 78, 102, 103, 105, 117, 133,
 142, 163, 171, 179, 208—210,
 224
 Հովսեփյան Գ. 191
 Հուսեյն Ղուլի խան 12, 15—17,
 24, 28, 30, 31
 Դուկաս կաթողիկոս 46
 Զավճավաձե Ալ. 80
 Զավճավաձենիս 161
 Մաղաթյան Պ. 94
 Մալխասյան Ստ. 193, 195
 Մալկոյմ 49
 Մամադ խան 50
 Մամուրյան Մ. 141—143
 Մանուշարյան Գ. 64
 Մարկով Ֆ. 29
 Մարքս Կ. 18, 29, 37, 49, 84,
 120, 164, 165, 169, 184
 Մեդուկ 29
 Մենշիկով 56
 Միանուարյանց Մ. 83
 Միխայիլ Նիկողանիչ 216
 Միրզա-Շեֆի 51
 Մխիթարյաններ 196
 Մկրյան Հ. 61
 Մնացականյան Աս. 82
 Մոնտեսպյո 105
 Մորիս Զեմա 15
 Մորից ֆոն Կոցերու 16, 31

Մսերյան Մ. 108, 117,
 Մուհամեդ շահ 146
 Մուստաֆա խան 54
 Մուրադյան Դ. 215
 Մուրավյով Ն. 64, 73

Յուզեֆովիչ Տ. 57
 Յուլյոն 214

Նաղարյան Ստ. 64, 128—133,
 198, 201
 Նալբանդյան Մ. 143—145
 Նապոլեոն 48—51
 Ներսես—տե՛ս Աշտարակեցի Ներսես
 Ներսես Ե (5-րդ) կաթողիկոս—
 տե՛ս Աշտարակեցի Ներսես
 Ներսիսյան Մ. 65, 89, 224
 Նիկողայ Առաջին 56—58, 60, 64,
 69, 88, 89, 92—94, 104, 106,
 122, 156, 181, 191, 200
 Նիկողայ Պավլովիչ—տե՛ս Նիկոլայ
 Առաջին
 Նիկոլ հալսկոպոս 157
 Նիկոլոս վարդապետ 118

Շահ Աբբաս 27, 126
 Շահադիյ Եր. 96, 108, 207
 Շահամիրյան Շ. 82
 Շահնաղարյանց Կ. 166
 Շահումյան Ստ. 220, 222, 223
 Շամիլ 160, 161
 Շանշյան Պ. 166, 194
 Շերմաղանյան Հ. 77
 Շմավոնյան Հ. 82
 Շտրասս Դ. 128
 Շոպեն Ի. 12, 15, 17, 19, 26, 28,
 29, 31, 33, 35—39, 41

Զամչյան 147
 Զոպանյան Ա. 217, 218

Պալասանյան Ստ. 175—177, 196
 Պանկրատե 80
 Պասկևիչ 62, 63, 68, 71—73, 75,
 76, 78—80, 91, 93, 118, 122,
 142, 154, 160, 181, 189, 190
 Պատկանյան Գ. 74, 75, 125—127,
 166, 194, 195
 Պատկանյան Ս. 92
 Պատկանյան Ք. 196
 Պարսաժյան Վ. 86, 87, 208,
 209, 224
 Պետրոս Մեծ 43, 90, 169, 188
 Պերպերյան Ա. 177, 181, 182
 Պոկրովսկի Մ. 203
 Պոլոս վանահայր 124
 Պոստոն 80
 Պոռշյան Պ. 134, 157, 159, 161,
 162, 177, 193

 Զալալյանց Ս. 116
 Զավախիշվիլի Ի. 214, 215
 Զավախով Ի.—տե՛ս Զավախիշվի-
 լի Ի.
 Զաֆար 20
 Զհանշահ կարակոյունլու 12, 13

 Թշառնի Վ. 224

 Սարգսյան Լ. 211—214, 216, 217
 Մարության 125
 Սերովրե արքեպիսկոպոս 78, 79
 Սերովրե վարդապետ—տե՛ս Սե-
 րովրե արքեպիսկոպոս
 Սեֆի շահ 9

Սիմեոն կաթողիկոս 103
 Սիսյադին 65
 Սմիտ 41
 Ստեփանոս եպիսկոպոս 118
 Սուլթան Մուրադ 9
 Սումբատով 65
 Սուրենյան 182

Վարդանյան Մ. 217
 Վորոնցով 73, 194, 195, 216
 Վուլֆ 53

Տեր-Արրահամյան Հ. 135

Բաֆֆի 145— 153, 186, 196

Յիցիանով 28, 51, 92

Փափաղյան Վ. 220—222
 Փափաղյանց Ստ. Պերճ-Պողոս
 121—123, 125, 166, 177

Քեր-Փորթեր 26

Օգորոդնիկով Պ. 15
 Օլիվին 48
 Օրի Ի. 183
 Օրմանյան Մ. 77, 81, 84, 177,
 190—193, 195

Յաթ-Ալի շահ 16, 50—52, 57, 146
 Յիլադեֆին 107
 Յրեյան Մ. 15

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի վոխարեն	5
Գլուխ առաջին.— Արևելյան Հայաստանի տնտեսական և քաղաքական կացությունը Ռուսաստանին միացման նախօրյակին	9
Գլուխ երկրորդ.— Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ժամանակի հայ զործիչների զնահատմամբ	58
Գլուխ երրորդ.— Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պրորլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ	113



ՆՈՐԱՅՐ ԲԱԳՐԱՏԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
НОРАЙР БАГРАТОБИ ЧАРУХАНЯН

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ՄԻԱՅՄԱՆ ՊՐՈՐԵՄԸ ՄԻՆՉՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր

Ժ. Մ. ԱԳՈՆՑ

Նկարիչ

Կ. Կ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Ս. Կ. ԶԱԲԱՐՅԱՆ

ՎՋ 03720

Պատվեր 277

Տպաքանակ 4000

ԽՀԽ 1354, Հրատ. 3569: Հանձնված է արտադրության 19/VII
1971 թ., ստորագրված է տպագրության 21/XII 1971 թ.: Տպագր.
14,37 մամուլ, հրատ. 9,9 մամուլ, պայման. 12,1 մամուլ: Թուղթ

№ 1, $84 \times 1081/32$: Գինը 1 ո. 23 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան,
Բարեկամության 24:

ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220048244

